


0580

I.

4



1901.

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային ու Միջազգային

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ՏԵՐ-ՏԵՐԻՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNÉ ENCYCLOPÉDIQUE

PROPRIÉTAIRE, DIRECTEUR ET RÉDACTEUR

Armén Loussinian

„Հառեփիդակ“ (مجموعه علوم) فزه تهسك
صاحب امتياز مديري و تحريري درسعادته
مرجان چارسوده ۷ ه نومرولى مارقاريان كتيبخانه سنده
آرمن لوسينيان

Ե. ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ.

LIBRAIRIE V. MARKARIAN
Constantinople, Rue Mirdjan, N. 57

ԹԻԻ Ա.



ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԷՖ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

ՑՊԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ
Կալաթա, Գուրշունլու խան, քիւ 7


Կայսերական Յոբէլեանն եւ Գահամարձումը.—Մենք առ մեր Ընթերցողներ.—
Պատմութիւն փիլիսոփայութեան.—Իմաստասիրական դասընթացք.—Հոգեբանութիւն.
—Պատմութիւն Յոյն դրաղիտութեան.—Պատմութիւն Լատին դրաղիտութեան.—Պատ-
մութիւն Մանկավարժութեան.—Բնագալոծցի.—Փրէօպէլ եւ Մանկապարտէզը.—Արիւ-
տոտէլ փիլիսոփան ձի կ'ըլլայ, Հնդկուհին ալ վրան կ'հեծնայ.—Ընդհանուր Ազգաց եւ
Անոնց Բաղաքակրթութեան պատմութիւնը.—Մարդկութեան ծագումն ու Զրհեղեղը.
—Չինական առածներ.—Մարդուն անկիզելիութիւնը.—Գիտական, արհեստական ու
բժշկական դեղագրեր զգեստեղինաց. Միսի. Արգանակի. Յօգացաւի. Հարբուխի. Մըն-
դարար ու խնայողական հացի. Պիրա շինելու. Վիրաւորումի.—Կարկինոս (քանսէր-
ինճիթմէ պէնի) սոսկալի հիւանդութեան նորագիւտ դարմանը.—Չինաց պատմութիւ-
նը.—Պօէրներն իրենց ծագումէն ց'մեր օրեր.—Նոր գիւտը. Անթել Հեռաձայնը եւ Հե-
ռաձայնագիրը.—Սաղմոս' ի' սնար Շիրմին Ազգ. Մեծ Բարերար Սերովբէ Կիւլպէնկ-
եանի (արձակ բանաստեղծութիւն).—Վսեմ. Պ. Պառնասեան էֆէնտի.—Գովըն ուսուց-
չին, առ Հանճարեղ Ուսանուհին իւր Լուկիա Պ. Պառնասեան (արձակ բանաստեղ-
ծութիւն).—Հեռագիրն եւ անոր գիւտի կամ հնարքի պատմական ծագումը.—Հիմէն-
եան Գեղօն՝ Տիար Վահրամ Յ. Մարգարեանի Հարսանեաց Հանդիսին.—Վաճառակա-
նական. Վարկն ու Դրամատունները.—Բաղաքական Տնտեսագիտութիւն.—Գիւղա-
տնտեսական. Երկրագործին ամիսները.—Գեղածիծաղ Մանկութիւն (բանաստեղծա-
կան) Ն. Թորոսեան.—Ազգագրական. Էկին գաւառի նախապաշարումներուն. Վ. Սա-
րգեան.—Վիպական. Գաւառական գորովը.—Ազգային. Սամուէլեան եւ Էգնայեան
գերդաստանաց նուիրատուութիւնները.—Ձայնակ. (քերդուած) Մեյքոն Յ. Յովսէփ-
եան.—Պէրպէրեան Վարժարան Տիկին Զարուհի Ռ. Յ. Պէրպէրեան.—Ողբ ի վերայ
Մահուան Ազգային Մեծանուն Բարերար Էսսեան Յովհաննէս էֆէնտի.—Բժշկական.
—Լ. Բէօսէլէճեան.—Գրաբարի Մրցումը, Հայր Եղուարդ Հիւրմիւզի հետ Տր. Տ. Ե.
մրցակից :—Ազգ. նամականի.—Ծննդատօն Վեհ. Կայսեր.—Ամենապատիւ Մաղաքիա
Օրմանեան Սրբազան Պատրիարք եւ Պատրիարքարանը. Մեծն Փաթիհ եւ Հայոց Պատ-
րիարքութիւնը. Մայր Դիւանը եւ Դիւանապետը Տիար Բարթող Թէլեան.—Նշանա-
խօսութիւն Տէր Մատթէոսեան Ասատուր էֆէնտի եւ Օրիորդ Զգօնուհի Մ. Շարապ-
խանեանի :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ Ազգային եւ Միջազգային

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԳՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ՏԵՐ-ՏՆՕՐԷՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԼ ՀԱՄԻՏ ԽԱՆ ԲԻ
ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆԸ
ԵՒ

ՆՈՐԻՆ ԳԱՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ

Ամիսներէն առատահունձին և պատմաբանօրէն նշանաւորացունին՝ Օգոստոսի մէջ, Սամանեան Օգոստոսին կայսրութեան միլիոնաւոր հպատակները մրցեցան, սկսեալ ապարաններէն մինչեւ հիւշեակը, պետական զրահաւորներէն մինչեւ

*Հայաստանի Հանրապետության
Սահմանադրության
Հիմունքներ
ՀՀ Սահմանադրության
Հիմունքներ
ՀՀ Սահմանադրության
Հիմունքներ*

ձկնորսին մակոյկը, Մայրաքաղաքէն մինչեւ գաւառացիներն վրանարնակ վաչկատունը, ցերեկը՝ արտասովոր ցնծումներով խանդավառ ու տօնական խրաճանքներով արբելիւ, և գիշերը՝ աստեղատանց պէս պայծառագեղ լուսավառութեամբ զարդարուած, երգերու, ծափերու, էկեյցէներու որոտուն ձայներով և ամէն ազգի լեզուէ բղխած օրհնութեանց աղապակներով՝ փառաբանելու, սիրոյ և երախտագիտութեան մի քան զմի փայլուն ցոյցերով պատելու համար իրենց սիրեցեալ վեհապետին Արքայութեան Գահնէ հինգ ամեակն և Անոր Գահաւարձի նոր վերադարձը:

Թուրքիոյ ամէն ազգի հազարաց հազար հպատակներուն հետ՝ նմանապէս աշխարհի բոլոր վեհապետներ՝ իրենց թանկագին նուէրներով և աւելի թանկագին իրենց վեհափառական ձեռագիր Ուղերձներով ու հեռագիր Շնորհաւորականներով փութացին բաժնել Յոբելար փատիշահին արժանի հանրային պատուոյ ու սիրոյ ցոյցերուն մրցումը:

Օսմանեան Դեսպաններն ալ՝ բոլոր օտար վեհափառութեանց Ստաններուն մէջ՝ իրենց նշանաւոր վեհապետին ազգային թէ միջազգային համակրանքի ու մեծարանքի փայլուն ցոյցերը, այլևայլ արտասովոր հանդէսներով, խնջոյքներով, պաշտօնական շքեղ ընդունելութիւններով այնքան ընդհանրացուցին, որոնցմով կարծես նոյն ցերեկ և նոյն գիշեր, բոլոր աշխարհք թուրքիացաւ և թուրքիան տիեզերացաւ:

Թուրքիոյ ամէն ազգի Հասարակութեանց հետ՝ և Հայ Ազգը՝ իրեն Դուռնունքներով Պոլսոյ մէջ, Ամեն Ս. Պատրիարքը, Գաւառաց մէջ, Գեր. Ս. Առաջնորդ Հայրերը. Դպրոցաց մէջալ՝ Ուսուցիչներն ու Ուսուցչուհիները. Եկեղեցեաց, Վարժարանաց, Վանքերու մէջ, նոյնպէս և Արտասահմանի բոլոր Հայերն ալ իրենց կրօնապետ Հովուաց հետ՝ արժանավայել պատուով շնորհով ու երախտագիտական զգացումներով հաւատարմական տիրասէր ցոյցերով, մեծացուց ու բարեբանեց Յոբելար ահեղազօր Արքան:

Նաև Հայ Մամուլը՝ ինչպէս ամէն նոյնպէս և այս՝ տարի փայլեցաւ իր էջերուն մէջ վեհ. փատիշահին Անուան և Անոր Շնորհաց նուիրած ներբողներով, Անոր աշխարհաշէն Գործերուն ու ամէն սեռի նշանաւոր Արարքներուն յիշատակումներովը. հասարակաց թարգման հանդիսանալով իրենց Ազգին ու Ազգայնոց առ վեհ. Կայսրն տաժած շնորհապարտ զգացմանց ու հաւատարմագոյն ծառայութեանց:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ևս, ազգային զգացմանց ու մտածմանց հանրային թարգմաններէն մին՝ ընդհանուր Ազգին հետ, Հայ Մամուլն հետ, և իւր ընթերցողաց հետ, կ'ծափահարէ Մեծազօր փատիշահին ինքնակալութեան գերերջանիկ Յոբելեանն և Գահամբարձման նոր Ամագարձը, աղաղակելով ԱՐՔԱՅ, ՅԱՒԻՏԵԱՆ ԿՍՅ:

Մ Ե Ն Ք

ԱՌ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

Ինչպէս արդէն մասնաւոր Յայտարարութեամբ ծանուցած էինք, մենք անձամբ անձին ստանձնած ենք մեր թերթին Տնօրէնութիւնն ու Խմբագրութիւնը, զոր երկու տարիէն աւելի վարեցին մեր բարեկամներ, իրենց կրցածին ու գիտցածին չափ: Շնորհակալութիւն իրենց ջանքերուն որով աշխատեցան թերթիս զարգացմանն ու տարածմանն համար՝ եսք մենք՝ դեռ չի բոլորած մեր խմբագրական անդրանիկ շրջանը՝ բժշկաց բացարձակ հրահանգներէն հարկադրւած էինք մտաւոր ամեն սեռի աշխատանքէ արդիւնւած ու ձեռնթափ մնալ, մինչեւ ցլիակատար կազմութեամբ մեր խանգարեալ առողջութեան, զոր այսօր վերստին գտած եւ ի վիճակի ենք լուրջ ու տոկուն կամքով յարատեւել, մեր փափաքանաց հակառակ՝ ճակատագրական անակնկալներու բերմամբ, ցարդ ընդհատուած մեր գրական գործունէութիւնն ու կեանքը:

Այսու եւս յաջողած կը լինինք տալ գոհացումն այն ջերմեռանդ փափաքանաց ու խնդրանաց՝ որով վաղուց հետէ՝ մօտէն թէ հեռուններէն՝ մեր համակիր բարեկամներ, նամանաւանդ Ն. Շահնազարեան Վարժարանին մեր վազեմի ու սիրելի Ընկերներ, Պոլսոյ, Գաւառաց եւ Արտասահմանի մեր գունդագունդ սիրական Աշակերտներն ու սիրասուն Աշակերտուհիք, մեր Պատուարժան Պաշտօնակից Ուսուցիչներն ու Պատուաւիպ Ուսուցչուհիք կ'առաջարկէին մեզ՝ որ մենք անձամբ հրատարակենք մեր Հանրագիտակը՝ իր տիտղոսին ու նշանակութեանն աւելի լայնօրէն համապատասխանող խմբագրական ուղղութեամբ, համեմատ այն ծրագրին, զոր մեր Առջինիկ Շրջանի Առաջին թուով յայտարարած ու ձեռնարկած էինք:

Բիւր շնորհակալիք ամենուն ալ, գրով թէ բերանով յայտնած իրենց աղնիւ զգացմանցն ու ազնուական մտածմանցն համար՝ որով թէ կ'պատուէին, թէ կ'խրախուսէին, աւելի կ'սրէին ու կ'ոգեւ որէին մեզ մեր մասուցանելիք գրական խոնարհ այլ ծանրանուր ծառայութեանց մէջ:

Հանրագիտակն՝ հիմնելու մեր նպատակն էր արդարեւ, պարբերական ձեւի մը տակ, մաս առ մաս ընթերցողաց հաղորդել մարդկային ընդհանուր մտքին՝ սկիզբէն ցայսօր, այլ եւ այլ դարերու մէջ, զանազան ազգաց քով, արտադրած հանրօգուտ յղացումները, իմացական շարժումները. ամփոփել, հանրացնել համաշխարհային ծանօթութեանց ամբողջութիւնը, մեր կարողութեան ներածին չափ. իրեւ նախափորձ մը հանրագիտական հրատարակութեանց օր քան զօր աւելի տարածմանն ու զարգացմանն ի նպաստ:

Այս տեսակ բազմաբիրտն աշխատանքի մը ձեռնարկելու բուն շարժառիթը թէեւ բազմաճղի՝ այլ կրնայ վերածուիլ մէկի, այն է զգացական եւ աւելի իմացական ուղղութեան ու կրթութեան մը վարժեցնել մտքերը:

Մին եղած ենք եւ մենք անոնցմէ. որք՝ անձկանօք իրենց դպրոցական վարժութեանց դասընթացքը աւարտելէ յետոյ՝ ուսանողի գրասեղանէն երկիւղած դողութեամբ մը ու կարմրող հպարտութեամբն ուղղակի կը բարձրանան Ուսուցչի արարչական Բեմը: Մին անոնցմէ՝ որք՝ 30 տարիներէ ի վեր՝ ազգային մանկանց ու մանկուհեաց մտքերուն կ'մննտորեն ու կ'սպարապետեն, 30 տարիներէ ի վեր ծանօթ են իրենց կառուցած շէնքին մէջ մի տկար ու զօրաւոր կողմերուն. Հոգեբան իմաստասէրի մը նման մանրագին խուզարկութեամբ ուսումնասիրած, համարած են անոնց հոգեկան կարողութիւնները, կշռած անոնց ըզնդին մէջ մի հիւլէն: Վարդապետ բժշկին չափ կ'ճանչնան իրենց մտքի զաւակներուն զգացմանց, մտածմանց ու անոնց գործոց խօթանիշն ու առողջանիշը, քիմիագէտի մը պէս տարրալուծած են անոնց միտքն ու հոգին, անոնց բոլոր երեւութներուն ու շարժումներուն մէջ. միանգամայն ընկերաբանի մը, պատմագիտի մը փորձառու հմտութեամբը, բարոյագիտի մը լրջութեամբը, թուագիտի մը ճշտութեամբ հասու են իսկ միջավայրին այն այլ եւ այլ սեռի տպաւորութեանց, բարոյական, նիւթական պայմաններուն, որոնց յոռի թէ բարի ազդեցութիւնքն ու հակազդեցութիւնք ներշնչած ներգործած են իրենց հասուցած սերունդին վարուց, բարուց, սովորութեանց, ճաշակին զգալու, մտածելու, դատելու կերպերուն, ա-

նոնց փափաքի, յոյսի, իտէալներուն, անոնց աւանդական, դաւանական սկզբանց, համոզմանց ու գաղափարաց Հանգանակին վրայ: Մին անոնցմէ՝ որոնք երեսնամեայ աղգային կեանքին հոլոված բոլոր տեսարաններուն ներկայ, միջամուխ, եւ անոր ամեն հանրագուտ շարժումներուն քայլ առ քայլ ընթացանկից եղած՝ խելամուտ են թէ՛ խոշոր դարերու նաւաբեկումներէն, փոթորիկներէն, հեղեղներէն մաղապուր զերծուած ժողովրդի մը բեկորներէն հազիւ մուրալով գուրալով քով քովի բերած՝ այնքան խանգաղատանօք ա՛յնչափ վարդազոյն յոյսերով, ծիրանի փափաքներով կարած, կարկտած ու կերտած Ազգի մը մտային շէնքը ինչպէս նորոգելու ու վերստին շէնքի շնորհքի բերելով վերակազմելու է: Մարդը կողով մը կամ տիկ մը ոսկոր ու միս չէ: Մարդը միտք է: Կ'ուզե՞նք որ մարդը բարի ըլլայ, նախնական բարի կրթութեամբ օժտելու ենք միտքը, անոր հոգեկան կարողութիւններն ընտիր դաստիարակութեամբ մը պատուաստելով:

Մեր հոգիները, մեր միտքերը, մեր սրտերը, մեր կամքերը կրթող, վարող հաստատութեանց մէջ գլխաւորներն են եկեղեցին, Վանքը, Դպրոցը, Ազգային Մամուլն ու ազգային Գրչութիւնը: Ինչպէս ամեն նոյնպէս եւ մեր Ազգի քաղաքակրթութեանց սերմաբանն ու տարերքն են ասոնք: Սակայն կըրցանք այնքան տարիներու մէջ մեր կրթական, վարչական պարտքերը կատարել այնպէս ինչպէս որ կատարել պէտք էր: Նախապաշարմամբ ծնած ու երեւակայութեամբ ոնած ժողովուրդ մը, տգիտութեան հոմանիշ անապարծութեամբ ու յաւակնոտութեամբ արդէն լեցուն՝ սկսանք մեր մտքի ընտիր ընտիր ընդունակութիւնները, ձիրքեքերը, առանձնայատկութիւնները, մեր ազգային յատկանիշ նկարագրերը՝ որոց հանդիսատես եղած են՝ սկիզբէն ցայսօր՝ ամեն դարեւ ամեն ազգ-ջանացինք դէպ լաւագոյն անդրբարեշրջելու տեղ՝ ի չարագոյն անդրյոռեշրջել, ուժացնել, խորթացնել զանոնք, սկսեալ Եկեղեցական Բեմէն, Դպրոցի Գրասեղանէն՝ մինչեւ մեր տուններու սեմն ու ներքնասեմնակը, մինչեւ չուկայի խանութն ու խանութպանները, եւ ասոնցմէ վեր՝ ու գերազանցօրէն վեր՝ մինչեւ մեր մամուլն ու մեր գրականութիւն. որ մտքերու գերագոյն Մագիստրոսներն ու վերին Մարաջախտներն են:

Եկեղեցւոյ ամպլիոններէն մեր սուրբ ու սրբազան Հայրեր՝ իրենց նախորդ Ս. Հարց ու ոսկեբերան Հայրապետաց նման՝ մեզ՝ ժողովրդոցս՝ Աստուածը, Յիսուսը, Մարգարէները, Առաքեալները, կտակարանները, սուրբերն ու սրբուհիները քարոզելու տեղ, Հաւատոյ, կրօնքի սրբազան սկզբունքները, յաւիտենական ճշմարտութիւններն եւ անոնց խորհուրդները բացատրելու փոխարէն, հակառակ իրենց կոչման ու պաշտօնին, յաճախ աշխարհական կամ դիւանագիտական տրիբուններու, հռետորներու դերերն ստանձնեցին, միստիգական, մէղաֆիզիգական անմարսելի անճառելիներով բթամացուցին հաւատացեալները. եւ եկեղեցին յաճախելու, Ս. Գիրք լսելու, կարդալու ի մանկութենէ անտի տածած սէրն ու իրձն արմատախիլ ցամքեցուցին, չորցուցին, եւ ասով ժողովուրդէն շատերը Բաղբերաներու, Միսիօնարներու ընկելու զարանները թափեցան, կրօնական անտարբերներ ըրին: Ժողովուրդ մը դատապարտուած է փլչիլ ու կորնչիլ երբ իրեն հոգւոյն ուղեցոյց ու ղեկավար չունի կրօնքն ու հաւատքը: Հեթանոսներն իսկ ըսին՝ թէ անպարիսպ քաղաք տեսած ենք, բայց անկրօն, անհաւատ ազգ տեսած չենք: Փա՛ռք ու պատիւ մեր դաս մը հազուագիւտ եկեղեցապաշտպան եւ քաջ հովիւ կրօնականաց եւ անոնց հոգեշունչ քարոզներուն. որոնց շնորհիւ՝ Ազգային դաւանութիւնն իր Հաւատոյ Հանգանակն անխախտ պահել կը շարունակէ: Վանքերը՝ Լուսաւորիչներու, Նարեկացիներու, Ներսէսներու, Ծնորհալիներու, Լամբրոնացիներու տաճար ու օթեւան ընելէ աւելի՝ յաճախ շատ տեղեր անճարակ խոտաճարակներու այրեր դարձան: Շատ մ'Առաջնորդներ քիչերու նման՝ իրենց հօտին քաջ՝ հովիւը չկրցան լինել: Նոյպէս նուազ արդիւնաւոր եղան մեր շատ դպրոցները, որ մեր նորահաս մտքերուն ծնարանը, ծաղկաստանը պիտի լինէին: Մանուկ հոգիները հոն կրթելէ աւելի կ'ուտեցինք: Ուսուցիչներէն շատերն իրենց թեթեւօղիկ ու վեր ի վերոյ հասկաքաղած հմտութեամբ վարակեալ տարափոխիկ սկեպտիկեանքներ, բեսըմիստներ, սկոլաստիկոսներ, սուփեստներ եղան, եւ իրենց ցաւագար մտքերուն ախտին միգրոպները սերմանցին իրենց ուսանողաց մատղաջ հոգիներուն մէջ, եւ հոն ծնած հրըշ-

տակներուն տեղ՝ խոգերու փորը մտնելիք եւ ծովը հոսելիք դեւեր ստեղծեցին: Մեր գիտնոց, բանասիրաց, գրագիտաց Դասերը՝ որ մեր մտքերուն մեծ լուսաւորիչները եւ մեր գեղեցիկ դպրութեանց ոսկեբերաններն էին. բացի մէկ քանի պատուաւոր ու արդիւնաւոր հեղինակներէ ու թարգմանիչներէ. տեղաւոր վէպերով, լպիրշ գրքերով, սիրամոլական երգերով, մտքի, սրտի քերդուք միմասական քերդուածներով խանգարեցին ճաշակը, լկտի շարիվարիներով, վրան բաց թատերախաղ զաւեշտներով, խառնակեցին ազգային ոգին: Տնական յարկերը, անհատական բարքերը, հասարակաց մտքերը, վիպական, թատերական սրահներու վերածեցին, այլանդակ, այլադաւան, օտարամոլ վարքերու, սովորութիւններու խորթ պատուաստովն ու ախտերովը վարակեցին: Եւ րոպական ամենազգի կեդրոններէ հասան գիտնականներ, վարպետներ եւ իրենցմէն շատեր, անոնց շինիչ, բարոյացուցիչ սկզբունքներէն հմտութիւններէն եւ ընդօրինակելի լաւութիւններէն աւելի՝ յոռի խել մը խելառ ու խնէշ անթեւեթեալ սնութիւններ բերին եւ մեր մէջ օտարին թեթեւութեանց հետեւելու կապկական սկզբունքները, խեղճիւնալու, չփանալու խտրողները զօրացուցին, սկսեալ ձեռքի ցուպէն մինչեւ կզակին ցից ու ցուցանք մօրուքը: Մազ մնացած է որ մեր երիտասարդներէն ոմանք՝ իրենց քոյրերուն մազերն ալ իրենց ճիւղն ի վար կախեն, Լուզովիկոս ԺԴի դարուն բանաստեղծներու, փիլիսոփաներու, գեղարուեստագէտներուն դիմազուրկ ուրուականներն ու խրտուիլակները մեզ պատկերելու ծանծաղամտութեամբ: Բարգենք ասոնց վրայ նաեւ մեր Ազգային բուն Հայ մամուլն զուտ ազգայինէ աւելի միջազգային օտարոտի գոյն ունենալը, որով Անգղիացիէ. Ֆրանսացիէ, Գերմանացիէ, Չինացիէ ձորոնցիէ, աւելի՛ նոյն ազգերու լուրերովն ու խորհրդածութեամբը անոնցմէ աւելի նախանձախնդրութեամբ ամեն օր մեր մտքերը կ'զբաղեցնէ: Քաղաքակիրթ Հայուն մը համար՝ անշուշտ օրապահիկի՝ ջուրի, հացի պէս անհրաժեշտ բան մ'է ազգային օրութեթ կարդալը, խուլ ու կոյր կամ բրտի կաւի պէս համրածայն չլրլալու համար: Սակայն օտարամոլներու չափ Ազգայինը մոռնալու է: Գիտնալով որ այս տարիքով մեր մտքին փրկիկած տունը վերաշինել ճգնիլը, Պէնէ-

լուպէին կտաւը կրկնել է մտածեցինք մեր թերթին տալ այն տեսակ ուղղութիւն մը. որ չատ մը իմաստուն բարի, առաքինի Հայոց փափաքածին պէս, ազգային միտքին խարխուլ չէնքը նորոգելու նպատէ չնորհիւ Գիտութեանց, Դպրութեանց եւ Արուեստից լաւ հասկցւած աւելի ընդարձակ բազմակողմանի տարածման: Ուսմանց մէն մի ճիւղի վրայ գրուածք չորս էջեր կամ երկերկու թերթեր պիտի գրաւեն ամբողջ, եւ ամեն տեսակ ճիւղի վերաբերած ուսմանց էջերը՝ բացի թերթին ընդհանուր թիւէն՝ զատ զատ թիւեր պիտի ունենան. որպէս զի ի վերջոյ՝ ուղղը ամսաթերթին մարմինէն զատելով այլ եւ այլ ուսմանց վրայ ճառող թերթերը զատ գիրքեր կարենայ կազմել դիւրաւ:

Հանրագիտակի մէջ ներմուծած մեր այս նորոյթը թէեւ ունի կարգ մը խմբագրական տպագրական դժուարութիւններ. որոնք սակայն ընթերցողաց հաճոյք ու զիւրութիւն պատճառած լինելու ներքին գոհունակութեան առջեւ, կ'հեշտանան:

Հանրագիտակի Դ. Շրջանի սոյն առաջին թիւէն կրնան դատել ընթերցողները թէ՛ որքան յաջողութեամբ պիտի կարենանք հասնիլ մեր եւ ամենուն նպատակին: Կ'ուսամ թէ՛ ընթերցողներն եւս մեր այս նիւթական ծանրաբեռնախառնանքը պիտի քաջալերեն ու թեթեւցնեն իրենց նիւթական ու բարու յական ծանօթ աջակցութեամբը:

Եւ ո՛չ ոք հեղինակութեան մը բացարձակ տէրն է: Նաւին չէնքին մէջ՝ նաւապետին ու նաւաստուոյն հետ, ատաղձագործն ալ, դարբինն ալ, աշխարհագիրն ալ, աստեղագէտն ալ, գիտունն ալ, ուղեւորն ալ իրենց մասերն ունին: Ամեն քաղաքակրթական զարգացմունք իրենց ծագումն ու առաջգիմութեան սերմերը կ'ընդունին իրենց նախորդաց քաղաքակրթական զարգացումէն: Ներկայ Քրիստոնէական դարն իր քաղաքակրթութիւնը կ'ստանայ Հռովմայեցիներէ. Հռովմայեցիք զայն կ'պարտին Յունաց, Յոնք իրենց ուսուցիչ ու վարպետ ունին Եգիպտացի, Հնդկաստանցի, Պարսիկ, Բաբելոնացի, Ասորեստանցի, Քաղդէացի, Փիւնիկեցի իմաստունները: Մարդկային մտքին ամեն դարու զարգացումները շարունակութիւն են անցեալ քաղաքակրթութեան՝ որպէս օղակները՝ շղթային. որոնք հետզհետէ, դարէ դար, սերունդէ սերունդ, նորանոր կատարելութեամբ կ'բարդաւածին, եւ ընդհանուր մարդկութեան հասարակաց կայուածն ու հարստութիւնը կը կազմեն: Հանրագիտակ եւս իր պարունակութեամբ սոյն քաղաքակրթական առաւելութիւնները ի վերաշինութիւն հանրային քաղաքայեալ մտքին՝ պիտի ջանայ՝ ըստ իւր կարեւաց, հայթայթել իւր Ազգին ու Անոր Զաւակաց:

ՄԱՍՆԱԻՈՐ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեծ. Միհրան էֆ. Բիւրքճեան՝ Սղամ-պուլի եւ Հանրագիտակի արդէն աշխատակից, որ թէ պետական եւ թէ Աղգային պաշտօնական շրջանակաց մէջ, նոյնպէս Աղգին Գրագիտական, իմրագրական, Ուսուցչական, Կրթական, Վարչական ամեն Մարմնոց ծանօթ է, անոնց ամենուն իր մատուցած բոլորանուէր ծառայութեամբք: Նա մանաւանդ վերջերս Պոլսէ Գաւառաց Աղգ. շատ մը վարժարաններու 6000էն աւելի նուիրած այլ եւ այլ գիտական, պատմական, դասական գրքերովը, իւր հանրասիրական զգացմանց պերճախօս նոր ապացոյց մ'աւելի ընծայեց: Մեր վաղեմի ու սիրելի բարեկամ Միհրան էֆէնտին հաճած է շնորհել մեզ իւր Աջակցութիւնը, եւ մեզ ընկեր եղած է, դիւրացնելու համար թերթիս խմբագրական, վարչական այլ եւ այլ կարգի գծուարութիւնները: Միհրան էֆէնտի Բիւրքճեան իւր ընկերական ու բարեկամական Աջակցութիւնը թէ մեզ թէ ընթերցողաց համար, շնորհակալութեան նոր առիթ մ'ըլլալովն հանդերձ թերթիս աւելի կանոնաւոր հրատարակութեան եւ աւելի բարեւոքման տեսակէտովն ալ նոր երաշխիք ու հաւաստիք մ'աւելի է: Ինքն արդէն, անբասիր հաւատարմութեան, լիակատար վստահութեան, անխոնջ աշխատասիրութեան, անվատ գործունէութեան փայլուն ապացոյցներ տուած է: Կ'վայելէ հանրային ու ժողովրդական համարում ու համակրանք, եւ լիովին կարող է մեզ ներկայացնել ամեն տեղ, ամեն բաժանորդի ու բարեկամի քով: Սրտաբուխ շնորհակալք. ամեն անոնց որոնք Հանրագիտակի սոյն նորոգ Ծրմանն ողջունել եւ քաջալերել կանխեցին. թէ նամակներով, թէ իրենց բաժանորդութեամբ, թէ յօգուածներով եւ թէ գործակալ աջակցութեամբ ու թղթակցութեամբ: Պոլսէն, Գաւառէն թէ Արտասահմանէն:

Հանրագիտակի բազմի իւր սովորական նիւթերէն, պիտի ճոխացնէ մասնաւորապէս արհեստագործական, երկրագործական, առտնին բժշկութեան, վաճառագիտական, գիւղական ու քաղաքական տնտեսագիտութեան, իրաւաբանական՝ մանկավարժական, Ազգագրական, Վիճակագրական, Հնախօսական եւ ասոնց յարակից ուսմանց ու գիտելեաց բաժինները, այլ եւ այլ ազգաց նորանոր Գիտերը, Հրաբաններն եւ անոնց գործնական ու տեսական կիրարկութիւնները հաղորդելով: Հանրագիտակի իւր այսքան բազմաճիւղ հրատարա-

կութեամբն որքան աւելի քաջալերուի նիւթապէս. նոյնքան աւելի պիտի բազմապատկէ իւր ծաւալը՝ մինչեւ կրկնապատկելու չափ. առանց իր սովորական գնոյն վրայ ո' եւ է յաւելուած մ'ընելու:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ Գաւառագիտութեան ճիւղըն ալ խնամօք պիտի մշակէ, շնորհիւ իր Գաւառական իմաստուն թղթակցաց, ժիրաժիր Գործակալաց, մեր գաւառացի բազմախումբ հանճարեղ Աշակերտաց, եւ բազմաթիւ Ուսուցիչ բանասէր պաշտօնակցաց, մեր տաղանդաւոր գրագէտ ու լեզուագէտ բարեկամաց հմտալից, ծուծաւոր գրուածներուն:

Անձնիւր Գաւառի, Գիւղի թէ Աւանի մեռելոց, Հարսանեաց, տոներու, աւանդական հանդէսներու, արարողութեանց մէջ գործածական մաղթանքները, ռամկական ղուտ հայ երգերը, գովքերը, լացերը, — ծերունեաց բերնէն քաղելով — ծները, մասնաւոր ասացածները, օրհներու, անիծելու, յատկաբանութիւնները՝ առանց փոփոխման, նոյնպէս տարւոյն այլ եւ այլ եղանակաց մէջ անասնաբուծի, պտղաբերքի, վարուցանի վերաբերեալ գործերու, գործիւններու, գործաւորներու ու մշակելու տեսակները, իրենց յատուկ ու մասնաւոր բառերովը, արարողութիւնովը, ազօթքներովը հանդերձ, վերջապէս այս եւ ասոնց նման հին, աւանդական ու հետաքրքրական, մասնագիտական հմտութիւնները, սովորութիւնները պիտի վիճակագրեն: Հանրագիտակի ամեն դասու, ամեն խորհողի, գորողի, ուսանողի խմբագրածները, արձակ թէ ոտանաւոր, անխտիր՝ պիտի հրատարակէ: Ռիայն թէ՛ երբ կ'տեսնենք որ՝ գրուածքը թերթիս մարմինէն դուրս հրատարակուելիք գործք մ'է, յայնժամ՝ Գրողին հետ՝ զատ պայման պիտի կնքենք, թերթին կից՝ այլ անոր մարմինէն անջատ պիտի հրատարակուի: Անխտիր կերպով ո' եւ է գրուածքները՝ գրաքննութեան ներածին չափով, հրատարակելու մեր բուն նպատակն է, ապագայ գրողներուն ի գիտութիւն՝ մեր ժամանակի գրողաց ամեն գոյներուն, անոնց տկար ու զօրաւոր կողմերուն մէկ համայնապատկեր պայծառ հայելին հաւատարմաբար աւանդել: Բոյր գրողք ալ մոռնալու չեն սակայն Հայրագիտակի տաճարին ճակատը դրօշմուծ սա արձանագրութիւնը: Ո'վ որ ջուհի միտք, ջոճի մտաւոր այս դոմենն ցերս:

Հանրագիտակի յոռաջաբանն ու վերջաբանն է սա Նշանաբանը՝

Կանթեղ մ'եմ, կ'պալառիմ լուսաւորելու համար: Մաղթենք, բոլոր բարեկամաց ու ընթերցողաց հետ՝ որ այս կանխեղ իսպառման լուսավառ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

Շարունակութիւն — տես «Հանրագիտակ»
Ա. տարի, քիւ 1, էրես 14.—քիւ 2, էրես 24:

Ինչպէս արդէն բացատրուած է, փիլիսոփայութիւնը գիտութեանց գիտութիւնն է. ատոր պատմութիւնը մարդկային մտքին պատմութիւնն է: Ըստ որում բուն մարդը միտքն ինքն է. այսինքն միտքն է բուն իսկ մարդը. ապա փիլիսոփայութիւնը՝ իբրեւ գիտութիւն ու իբրեւ պատմութիւն. ո՛ւղղակի մարդուն գիտութիւնը, բոլորովին մարդուն պատմութիւնն է, նկատելով զայն (մարդը) իր հոգեկան ու մտաւոր կարողութեանց մէջ, եւ զանոնք վարող դրութեանց ու զաւանութեանց հանգէպ:

Փիլիսոփայութիւնն է որ իր զեկովը կամ խելքովը կ'վարէ մարդկային ընկերութիւնները: Ինքն է որ կը յօրինէ բոլոր գիտութիւնները, կ'զտէ բոլոր ճշմարտութիւնները, եւ զանոնք խուզարկելու, գտնելու, տարածելու համար կ'հնարէ միջոցներ: Նպատակին կ'հասնի նա միշտ. բնական ուժերու պէս, Աստուծոյն իրեն նախագծեալ բնական ծրագրոյն համեմատ: Մարդ՝ գիտուն թէ տգէտ, փիլիսոփայութեան գերին է. փիլիսոփայութիւնն ինքն է որ իր ուզածին պէս կ'չինէ, կ'ձեւէ մարդուն հոգին, միտքը, սիրտը, գործքը, կամքը: Փիլիսոփայութիւն մը հիմնովին փոխուելուն պէս, մարդկային ընկերութիւններն ալ հիմնովին կ'փոխուին: Փիլիսոփայ մ'էր Պուտտա, Պրահմաի հակառակ: Առաջինը քանգեց երկրորդին շինած աշխարհն ու ընկերութիւնը: Փիլիսոփայ էր Մովսէս, քուրմերուն ներհակ, որ մոգական կեղծիքները խայտառակեց, ջնջեց անոնց բազմաստուածութիւնը, Որէնին երկրպագունոր աշխարհն ստեղծեց, ինչպէս Աւետարանը Բրիստոնեայ տիեզերքը հեղինակեց, հեթանոս աշխարհին տեղ՝ որ փլաւ: Մարգարէն ալ, Առաքեալն ալ, Աւետարանիչն ալ փիլիսոփաներ էին, որոնք իրենց ուզածին պէս յօրինեցին իրենց քարոզած ժողովուրդին հոգին ու կամքը, իրենց գիտցած կերպովը վարեցին մեր զգացումները, կիրքերն ու ձիրքերը: Ո՛ր մարդ, ո՛ր ժողովուրդ որ զուրկ մնացած է

փիլիսոփայական գիտութենէ. եւ չէ աշխատած իմաստասիրական հմտութիւններով ճշխացնել իր միտքը, իր չոր ու ցամաք տգիտութեան մէջ կոնծած, թոռմած, կործանած է: Պատմութեան ուսուցիչները՝ ինչպէս նաեւ պատմագիրները մինչեւ այսօր կ'սորեցնեն իրենց աշակերտներուն, կ'վարդապետեն իրենց ընթերցողներուն թէ՛ շատ մը հին զօրաւոր ու մեծանուն ազգեր՝ ինչպէս են Բաբելացի, Ասորեստանցի, Եգիպտացի, Կարգեղոնացի, Փիւնիկցի, Հռովմայցի կոչուածները, կամ թէ ուրիշ Հնդ-եւրոպական այլ եւ այլ անուններով երբեմն ճանչցուած՝ ու այժմ անհետացածները, կորսուած են: Այս ուսուցիչներն եւ այս պատմիչներն իրենց դասերն եւ իրենց վարդապետութիւններն այդքան սխալ ուղղութեամբ պիտի չ'աւանդէին՝ եթէ փիլիսոփայութեան պատմութեանը լաւ ուշ դրած լինէին: Մեր փիլիսոփայական տեսակէտին համեմատ, այդ ազգերը չէ թէ կորան, որպէս կ'կորի մարդը մեռնելով, կամ ծառը չորնալովը կամ կրակը մոխիր դառնալովը: Այլ ըստ որում փոխուեցան անոնց միտքը շինող փիլիսոփայութեան հիմունքը, իրենք ալ փոխուեցան, եւ եղան վարդապետած փիլիսոփայութեան ժողովուրդը, ինչպէս Սաւուղը եղաւ Պողոս, մտքին հետ՝ անունն ալ հեթանոսութենէ Բրիստոնեութեան փոխուեցաւ: Կրօնքներն ալ փիլիսոփայութիւններ են, եւ արդէն առաջին անգամ փիլիսոփայութիւնը կրօնքի ձեւին տակ աշխարհ եկած՝ մարդոց քարոզիչն եղած է: Առաջին փիլիսոփան է՝ որ առաջին աստուածաբանը կամ դիցաբանը, առաջին բանաստեղծը, առաջին օրէնադիրը, առաջին մարգարէն, առաջին առաքեալը, առաջին վարդապետը, առաջին վարժապետը, առաջին գիտունն եւ զո՞ւրք է եւ պիտի լինի: Յարգենք փիլիսոփաները, կարդանք զանոնք

* * *

Փիլիսոփայութիւնն ապա մարդուն եւ մարդուն մտքին պատմութիւնն է:

Ենթադրենք թէ՛ փիլիսոփայութիւնը մարդկային միտքը վարելու գործոյն մէջ հասաւ այնպիսի եզրակացութեան մը՝ որով մարդիկ երկու դասերու կամ տեսակի բաժնուեցան, անոնցմէ մին՝ հրամայելու համար, եւ միւսը՝ հնազանդելու համար շինուած: Իսկոյն պիտի տեսնենք թէ մարդերուն կէսը

տէրեր, եւ միւս կէսը գերիններ դարձած են: Ենթադրենք թէ, օր մ'ալ փիլիսոփայութիւնը մարդկային միտքը վարելու, չինելու առաջին խիստ կերպը, բանաձեւը կամ հաւատոյ հանգանակը մեղմացնելով զոհանայ յայտարարել թէ՛ մարդկային ամեն ընկերութեան մէջ՝ պէտք է մարդոց մէկ մասը մտածել բազմութեան համար, եւ միւս մասը աշխատի մտածող դասին համար: Եւ ահա պիտի ունենանք իմացական ամենէն աւելի ալլանդակ ազնուապետականութեանց հանդէպ՝ մշտատեւ տգիտութեան մատնուած անասնամիտ մարդերու երամակները: Ինչպէս Չին Մանտարիններու, Հնդկի Պրահմաններու, Պուտտայականներու եւ ասոնց նման հին թէ նոր առանձնաշնորհեալ իմացական դասակարգերու հանդէպ՝ մարդկային մնացեալ ստուարաձեռն ռամիկ ու աշխատաւոր դասերու ոչխարամիտ խուժանը: Սակայն ի՞նչ բանէ, ո՛ւրկէ կ'ըզխի փիլիսոփայութեան այս հրաշագործ հզօր ոյժը, որով մարդկային ազգի եւ անոր այլ եւ այլ ընկերութեանց մտքերը ուղածին պէս կ'կարողանայ ձեւել, չինել, եւ ուղած կաղապարին մէջ ձուլել: Այս գերազանց ոյժը իր մէջ չէ: Այլ ան կ'կայանայ այն ճշմարտութեան մէջ, որ՝ ամեն դարու մէջ եւ ամեն դարու համար, մարդկային մտքին ամենէն աւելի բարձր բացատրութիւնն է: Փիլիսոփան, ըստ ինքեան, անհատապէս բան մը չէ, սակայն եթէ կարողացաւ իր գաղափարներն ընդհանրութեան ընդունելի ընել տալ, այդ գաղափարները կ'սկսին իսկոյն իրողութիւններու, գործերու փոխուիլ:

Տրիբուն մը, պետական մարդ մը, եւ մտազէտ մը չի՝ կրնար արդեօք փիլիսոփայի դերը կատարել: Ո՛չ. կրնան կարեւոր նորոգումի մը գրօշակիրը լինել, բայց իրենց գործը՝ միշտ սահմանափակ՝ չի կրնար ամբողջ մարդկային ընկերութեան մը կազմակերպութեան շէնքը հիմնովին ձեւափոխել: Ասոնք կ'գործեն մասնաւոր ճշմարտութեան մը անունով, մինչ զեռ, փիլիսոփան կ'խօսի յանուն նոյն իսկ բո՛ւն ճշմարտութեան, յանուն ճշմարտութիւններու այն ամբողջութեան, որ ազգերու հոգւոյն պէս է: Կրնան հակառակիլ տրիբունի մը, անոր անաջարկած մասնաւոր առարկային նկատմամբ՝ կարծիքի տարբերութեամբ, բայց չ'ոգովուրդ մը չի

կռուիր իր ընդունած ու սովորած փիլիսոփայութեան դէմ, մինչեւ որ անոր տեղ ուրիշ մը չի յաջորդէ, զի ընդունած ճշմարտութեան հետ կռուելովն ինքն իրեն հետ հակասութեան մէջ պիտի գնէ, եւ որովհետեւ՝ փիլիսոփայական գրութեան մը մէջ, ամեն ինչ իրարու հետ կապուած է, անոր հետեւանքներէն մին՝ մերժելովը ուրացած կ'ըլլայ անոր բոլոր սկզբունքները, եւ իր սեպհական հաւատալիքներուն ամբողջ շէնքըն ալ կործանած: [*]

* * *

Ըսինք թէ փիլիսոփայութեան գլխաւոր պաշտօնն է սորուիլ մարդուն եւ անոր միտքին վերաբերեալ գիտութիւնը, հետեւաբար հմտանալ բոլոր ընկերական գիտութեանց որ մարդը սորուելու գիտութենէն կ'ըզխին անհրաժեշտօրէն, եւ այս գիտութիւնն ու հրմտութիւնը կրնանք ստանալ էակին վերաբերեալ ընդհանուր գիտութիւնը սորուելով եւ մարդկային հոգեկան կարողութիւնները ու մէթոտները ճանչնալով. բայց փիլիսոփայութիւնն իր այս պաշտօնէն դատ՝ ունի նաեւ ուրիշ աւելի կարեւոր պաշտօն մ'ալ, այն է կործանել այն հաւատալիքները, համոզումներն ու գաղափարները, որոնք այլեւս իրենց հանրային օգտակարութիւնը կորսնցուցած ու ընդհանուրին զարգացման ալ պարզապէս խոչընդոտ արգելքներ դարձած են: Վուրդէր թէպէտեւ՝ իբրեւ իմաստասէր՝ փիլիսոփայած չէ էակին ընդհանուր գիտութեան, հոգեբանութեան եւ մէթոտաբանութեան վրայ, սակայն բոլոր փիլիսոփայ հեղինակներու կարգին մէջ մեծ ու կարեւոր

[*] Մեր Կրօն. Ժողովն ալ՝ Հաւատոյ իմաստասիրութեան այս օրինակ տեսակէտով է որ կ'մերժէ ամուսնալուծումը, զի ամուսնութիւնը մեր Եկեղեցւոյ, Կրօնքին ու հաւատքին գոյութիւնը կազմող խորհուրդներէն է. անոնցմէ մին քակելը Կրօնական ամբողջ շէնքը կործանել է. նամանաւանդ որ մենք Կրօնական Ազգ մ'ենք. մեր Կրօնքին մազին իսկ մատով անգամ դպչելը մեր ազգային գոյութեան արմին մատնիչի տապաւնով զարնել է: Կրօնական Ազգերը պէտք է պահպանողական լինին: Յոռի ամուսնութիւնները դարմանելու, բարեփոխելու միակ միջոցն է լաւ ամուսիններ պատրաստող կրթութիւն մը ու դաստիարակութիւն մը տալ մեր մատաղ սերունդներուն. որոնցմէ պիտի ելլան ապագայ հայրերն ու մայրեր:

տեղ մը գրաւեց. իր մեծ ու կարեւոր գործն եղաւ քննադատել ու քանդել հին փրիստփայութիւնը, որ թէեւ մեծամեծ ու կարեւոր ծառայութիւններ մատուցած էր երբեմն, սակայն այլեւս սկսած էր մարդկային առաջ-դիմութեան արգելք ըլլալ: Ասով թէեւ փրիստփայական նոր դրութիւն մը չ'ստեղծեց, սակայն հարկեցուց խորհողները, որ մարդկային միտքը վարելու, զայն ձեւելու, չի-նելու համար, նոր ուղղութիւն մը յորինեն: Կոռեցաւ հին փրիստփայութեան հետ մար-մին առ մարմին, մինչեւ անոր յետին մնացոր-դը, ոչ միայն անոր դպրոցին մէջ, այլ նաեւ նոյն իսկ կրօնքին մէջ, որ իւր սրբազան շու-քին ու պաշտպանութեան քողին տակ, սը-նուցած, մեծցուցած, ծածկած էր հին փրի-ստփայութեան վատթար վարչութենէն մը-նացած կարգ մը յետադիմական եւ մարդ-կային մտքին զարգացման խափանարար գաղափարներ: Վոլդէր չէ թէ կրօնքին, չէ՛ թէ հաւատքին սրբազան ու յաւիտենական ճշ-մարտութեանց դէմ այնքան խօսեցաւ, զա-նոնք հիմնովին արմատախիլ ընելու համար, այլ կոռեցաւ կրօնքի ու հաւատքի անու-նին կամ անոնց քողին տակ դեռ գործող հին փրիստփայութեան հանրաժողով-ներն ու մոլորումներն իսպառ սպուռ ջնջելու համար:

Շատ աղէկ ըմբռնելու է սա կէտը թէ՛ կրօնական վարդապետութիւնները փրիստ-փայական ճշմարտութեանց, իմաստասիրա-կան հաստատութեանց խորհրդաւոր ու մեղ-մացուցած աւանդութիւններու հիւսք ու շարք մ'են: Կրօնքին մշտնաւ էր որ, ինչ-պէս վերը յիշատակած է, հին ատեն փրի-ստփայութիւնն ընդհանուրին մատչելի եղած է: Սակայն ինչ պայմանով կատարուած էր իմացական այս խորհրդաթաղանթը գործը-այն պայմանով որ իմաստասիրական ձեռ-նարկութիւններն, իմացական ճշմարտու-թիւններն այլաբանութիւններու փոխուին, եւ փրիստփայական ձեւաբանութիւնները չի-նովի աւանդապատումներու վերածուին: Փրիստփայութիւնը մարդկային մտքին այն բարձրագոյն գիտութիւն էր որ կ'հայթա-թէր կմախքն ու ոսկերոտիքը, ամեն ինչ որ տոկուն ու տեւական էր, բայց բանաստեղ-ծութիւնն էր որ կ'գործէր ու անոր զգես-տեղէնը, միան ու մորթը կ'չիւնէր, կ'հագուե-ցնէր:

Եւ բանաստեղծական ու երեւակայական այս վառ, չպարուն, հմայուն արտաքնայար-գար սեթեւեթներուն մէջն էր նամանա-ւանդ որ կ'կեդրոնար ու կ'ներգործէր դիցա-կան կամ կրօնական վարդապետութեան ուժը: Բանականութիւնն իր միայնակ ու մերկ վիճակին մէջ շատ ցուրտ կ'երեւի, եւ հանրութիւնը հրապուրելու, վառելու հա-մար չի բաւեր, բայց երբ ան կ'միտնայ, նոյն իսկ այլանդակօրէն փոխակերպուելով հան-դերձ, երեւակայութենէ՝ ծնունդ առած բարձրագոյն ու շլացուցիչ յղացումներուն հետ՝ իւր ուժն անդիմադրելի եւ յաղթական կ'հանդիսանայ: Երբ աւելցնենք միանգամայն բանականութիւնը հասարակաց հասկնալի եւ մատչելի ընելու համար՝ գործուած այս հրապուրիչ ծպտումներուն վրայ, հին փրի-ստփայական դրութեանց այն գլխաւոր սխալ-ներէն մին, որով մեղանչեց ու զառաժեցաւ, իր մերժող, արտաքսող, մենամուղ ոգւովն ու գրութեամբ, այսինքն իմացական իրերուն ու երեւոյթներուն մի միայն մէկ կողմը դիտել եւ բոլոր միւս կողմերն ու մասերը ոտորա-գասել, զանց առնել կամ ուրանալ ուղեւորը:

Հին փրիստփայներուն առած այս սխալ քայլերուն հակառակ, կրօնքներն՝ ընդհան-րապէս՝ ինչ որ ընդունեցին փրիստփայութե-նէն, ամենէն աւելի ազադակող հակառա-կութիւններու մէջ մոլորելը յանձն առնե-լով իսկ, զայն ընդլայնեցին, ամբողջացուցին, կամ դէժ բոլորովին ի բաց նետեցին իրենց ստացած փրիստփայական այն չափազանց այլանդակութիւնները՝ որոնք յաճախ խիղ-ճերը ըմբոստացնելով կ'զայթազեցնէին:

Այս տեսակետով կրօնքները պահեցին իրենց դիրքը գերազանցօրէն բարձր քան այն փրիստփայութիւնները՝ որոնցմէ քաղած էին իրենց գլխաւոր վարդապետութիւնները. եւ այս պատճառաւ ալ, անոնց մահերէն յե-տոյ՝ դեռ իրենք չարունակեցին ապրիլ: Այս իմացական ետեւութիւն մէկ բացառաւ որի-նակն ակներեւ ունինք: Երկար ատենէ ի վեր հոգեկանութիւնն այլեւս գաղաւթ է ներգործելէ, նիւթական շահերու վարդապե-տութեանց անձնատուր ներկայ մարդկու-թեան վրայ՝ իւր խորապէս տպաւորիչ սղ-ղեցութիւնը, սակայն քրիստոնէութիւնը՝ որ իր ձեւին մէջ այս գրութեան խորհրդանշան պատկերացումը կամ ցոլացումն է, թէպէտեւ

իր ուրիշ նախկին կորովին մէջ աչքաւն պահած չլինի, եւ հիմունքը դեղեւումներ ունենայ, սակայն պիտի մնայ կանգուն ու տեւական, մինչեւ որ աւելի զարգացեալ փիլիսոփայութիւն մը՝ անոր սպառած վարդապետութիւններուն տեղ, ընդհանուր մարդկութեան ընդունելի նոր հաւատալիքներու ամբողջութիւն մը հաստատէ:

Փիլիսոփայութիւնն ու կրօնական վարդապետութիւնն իրենց ծագման մէջ իրարու հետ միացած եւ միմիանց հետ խառնուած լինելով, չի կարողացան միաքալ ու հաւասարազօր նկրտումներով զարգանալ, առանց իրարու դէմ յարձակողական խիստ պայքարներ մղելով զիրար տկարացնելու: Եւ այս դիմամարտ հակառակութեան երկու պատճառ կային: Առաջինն էր այն նողկանքն ու ատելութիւնը, զոր դիցաբանական անհնթեթ ու աւելորդապաշտ գեղեցկացումները կը ներշնչէին ամեն բանէ առաջ՝ մարդկային միտքը հրահանգելու՝ լուսաբանելու պաշտօն վարող մարդերուն: Երկրորդն էր կրօնական վարդապետութեանց հեղինակներու կողմանէ հասարակաց մտքին ընծայուած այս դիցաբանական այլանդակ շնորհումները՝ երբ մանաւանդ թէ խորհող դասեր միշտ մինչեւ ծայրայեղութեան կ'տանէին այլանդակ եւ անմիտ հետեւանքներն իսկ այն սկզբունքներուն որոնք անգամ կ'հաստատուած, արամատացած էին: Երբ ասոնց վրայ աւելցնենք միանգամայն թէ՛ իշխող փիլիսոփայութեան քով՝ որուն ժողովրդական թարգմանն ու բացատրութիւնն էր կրօնքը, ամեն վայրկեան հետզհետէ կը ծնէին նորանոր փիլիսոփայական դրութիւններ, եւ այս իմաստասիրական ազանդներուն վարդապետներն ալ ստիպուած էին ի հարկէ մարտնչիլ միանգամայն թէ՛ այն դրութեան դէմ՝ որուն տեղն իրենցը հաստատել, առաջ քաշեցնել կուգէին, եւ թէ՛ այն վարդապետութեանց դէմ՝ որոնք ծագումն առած էին մարտնչած ու փոխելու գլուխ դրութենէն:

Փիլիսոփայութիւններու եւ կրօնքներու մէջ եղած կապերն իրարու հետ աչքաւն սերտ առնչութիւններով միացած են. որ կարելի չէ այս երկու բաներէն միոյն վրայ խօսուած ատեն՝ միւսին վրայ չի խօսելը:

Այսու ամենայնիւ կրօնական վարդապետութեանց նկատմամբ միայն այն ատեն

պիտի խօսուի, երբ հարկ լինի յիշատակել այն բաները զորս առած են փիլիսոփայական այլեւայլ դրութիւններէն, եւ լաւ եւս հասկցնելու համար այն հզօր ու խորին ազդեցութիւնը՝ զոր ներգործած են մարդկային մտքի զարգացման վրայ:

* * *

Փիլիսոփայութեան պատմութիւնը նոյն իսկ փիլիսոփայութիւնն աւելի լաւ հասկնալու ոգտին կ'ծառայէ:

«Առէն պարկեշտ մարդու համար ամօթալի պիտի ըլլար, կ'ըսէ Պոսիէ, մարդկային սեռը չի ճանչնալու չափ տգէտ ըլլալը»: Ո՞չ ապաքէն ա՛լ աւելի ամօթալի պիտի համարուէր իմաստասիրական մարդու մը, գիտուն, բան գիտցող մէկու մը համար՝ մարդկային մտածումը չի սորված լինելու չափ տգէտ լինելը: Անցած է այլ եւս այն ժամանակը՝ որ փիլիսոփայութեան պատմութեան մէջ հակասութեանց ու այլանդակութեանց հիւսք մը միայն կը տեսնուէր: Հիմայ աւելի քան երեք լաւ հասկցուած է թէ՛ տարօրինակ ու օտարոտի կարծիքներու, անբանաւոր ու անմիտ դրութեանց ցոյնն մը չինելը: հաճոյք զգալ ցուցնելը՝ Մօնդէյնի պէս, թէ չի կայ իմարութիւն մը որ իր պաշտպանը չունենայ, թէ առ առաւելն փիլիսոփաներու անձնական միջոգէպնելով խելուած պատմութիւնն ընելը չի նշանակեր թէ՛ իր մեծ գծերուն մէջ մարդկային մտածման պատմութիւնը եւ մարդկային մտքին զարգացումներուն շարունակութիւնը մատենագրած կ'ըլլայ մարդ:

Իմաստասիրութիւնն իր լայն պատկերին ամբողջութեանը մէջ տեսնելու է, որ կարենայ անկէ քաղել պէտք եղած լոյսը նոյն իսկ յոգուտ փիլիսոփայութեան:

Այսպէս՝ չէ թէ իր ճղճիմ ու ամուլ մանրամասնութեանց մէջ, այլ իւր էական, հիմնաւոր գծերուն մէջ սերտելով սորվելովն է որ փիլիսոփայութեան պատմութիւնը կրնայ նոյն իսկ փիլիսոփայութեանց ճշմարիտ զրպոյցն ըլլալ:

ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԴԱՍ Ա.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ.
— ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԴԱՍԱՒՈՐՈՒՄԸ. — ՀՈԳԻՑՆ ԵՐԵՔ ԵՐԵՔ
ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Հոգեբանութեան առարկան. — Գիտակցութեան իրաց երեք խումբերու դասաւորումը. — Առաջին խումբ, Գործունէութեան իրք. — Երկրորդ խումբ, զգացական կամ զգածական իրք. — Երրորդ խումբ, իմացական իրք. — Հոգւոյն երեք կարողութիւնները. — Ի՞նչ ըսել է կարողութիւն. — Կարողութեանց իրարու հետ ունեցած յարաբերութիւնները. — Դաստիարակութիւնը մշակելու է երեք կարողութիւններն ալ. — Հոգեբանական ամբողջ կեանքին տեսարանը. — Իւրաքանչիւր կարողութեան զարգացումին մէջ երեք աստիճան կամ երեք երեւում (phase). Եզրակացութիւն:

Հոգեբանութիւնը գիտակցութեան միջոցաւ, մարդկային հոգւոյն, ու անոր կարողութեանց, մեր զգացմանց, մեր մտածմանց, մեր կամաց, մեր գործող, անոնց պատճառներուն ու արդիւնքներուն, անոնց ծագման, կազմութեան ու բնթացից գիտութիւնն է: Մարդկային հոգին աշխարհք մ'է:

«Մարդն էակ մ'է ծփուն ու զանազան», կ'ըսէ Մոնդէյն, մարդն եւ իւր հոգին արգարիւ նման են կիրքերու, ձիւքերու, զգածումներու, փափաքներու, յոյզերու, խորհուրդներու, յիշատակներու, բնազդումներու, նախատեսութիւններու, թելադրումներու, սովորութիւններու, գաղափարներու, ծանօթութեանց մշտածուփ ուկէան մ'է: Անհատն անհատ, եւ նոյնիսկ միեւնոյն անհատին մէջ, օրէ օր, վայրկեանէ վայրկեան, հոգեկան երեւութներու, շարժումներու տեսարանը կ'փոխուի. կ'զանազանի մարդը՝ իր հոգւոյն ու մարմնոյն, իր մտքին, սրտին, կամքին գործերուն, վիճակին ու երեւակայութեան յարափոփոխ շարժումներուն հետ:

Հոգւոյն երեւութները՝ թէպէտեւ իրարմէ շատ զանազան, եւ հիմնովին կամ արմատովին մէկ մէկէ որոշ՝ կ'տարբերին անոնք մարեկի գոյներով միայն այլ եւ այլ պարագաներու մէջ: Ահա խառնափնդոր քաւոր, զատելու, զտելու է զայն: Գիտութիւնը ներմուծանելու է կարգը, լոյսը, միութիւնը ըստ երեւութին այս անկարգ, տարազնաժամ պատկույն մէջ:

ԵՐԵՔ ԽՈՒՄԲԻ Կ'ԴԱՍԱՒՈՐՈՒՆ ԳԻՏԱԿ-ՑՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹՆԵՐԸ:

Հոգեբանութիւնը՝ իրրեւ գիտութեանց գիտութիւն, կը զաստորէ սերտած իրողութիւնները: Դասաւորել ըսելով՝ կ'հասկնանք իրրեւ, երեւութներու բազմապատկութիւնը միութեան մը վերածել ճշգրտորէն. կարգաւորել առարկաներն իրենց հիմնական տարբերութեան եւ իրենց նմանութեան համամատ:

Արդ՝ բոլոր այն երեւութներն ու իրողութիւնները, որոնց տէրն ու ենթական կ'լինի հոգին, որոնց թափն է գիտակցութիւնը, որքան ալ մշտաշարժ ու զանազան լինին, իրենք ինքնին յայտնի լինելու չափ իրապէս կ'որոշուին իրարմէ, եւ, թէպէտ եւ իրականորէն անբաժանելի՝ կ'կազմեն երեք որոշ ու տարբեր խումբ: Ո՛ր ատեն ալ քըննութեան ենթարկենք խիղճը կամ գիտակցութիւնը, կ'գտնենք հոն երեք սեռի այս իրերն ու երեւութներ՝ իրրեւ իրար խառնուած, միանգամայն միացեալ ու որոշ, իրապէս անբաժանելի եւ բնութեամբ իրերաց մէջ անվերածելի, այսինքն ո՛չ մին միւսին բնութիւնը կրնայ ջնջել, եղծանել կամ իւրացնել:

Ա. մարդ կ'շարժի, կ'գործէ հազարումէկ կերպով. եւ զանազան ատօրեան ազդուութեամբ կամ գործունէութեամբ, ուրեմն մարդ կրնայ նախ գիտել իր արարքները, զի անով է որ իր գոյութիւնն ի՛յայտ կուգայ, անով է նա մանաւանդ որ յայտ մեր գնահատելի արժէք մը կ'ունենայ:

Բ. մարդը կ'պտտի. իր զգացումներն անթուարկելի են, իր սիրտը հազարումէկ կերպերով յուզւած. այլ յուզուիլը գործելէն միշտ տարբեր ուրիշ բան մ'է. նոյնիսկ երբ մին առանց միւսին չի կատարուիր:

Գ. մարդը կ'մտածէ. եւ մարդը նստանաւանդ իր մտածումովը մարդ է: Մտա-

ծուր կ'ստանալ բազմաթիւ որոշ ու զանազան ձևեր, գործունէութեան ու զգացողութեան ձևերէն ալ տակաւին շատ աւելի զանազան. սակայն արդեաւ ամենայնիւ միտածման բոլոր սեռերն ունին իրենց հասարակ, իրենց յատուկ գծերը, որոնցմով կրնանք չի շփոթել մտքին աշխատութիւնը զգացումին ու գործքին կամ գործունէութեան հետ:

Մեր այս գաղափարներն աւելի հաստատուն կերպով ընթանելու, աւելի յստակօրէն բացատրելու համար օրինակ մը տանք:

Մայր մը կ'տեսնէ իր զաւակը խոր անդունդին նայող գոհալէժի մը եզերքին վրայ, իր առաջին շարժումն է խոյանալ դէպ որպէս, բռնելու համար զայն, որպէս զի զերծեցանէ սպառնացող վտանգէն, ահա գործքը կամ գործունէութիւնը: — Ի սիրտ թունդ կենէ մեծ յուզումով՝ ի տես այս վտանգին, ահա՝ զգացումը: — Վերջապէս կ'սորհի այն ազէտարեր հետեւանքներուն վրայ՝ զորս պիտի պատճառէր տղուն անկումը, ահա՝ մտածումը:

ԱՌԱՋԻՆ, ԽՈՒՄԲ. ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԵԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ. — Այսպէս առաջին անգամ տեղի կունենան գործունէութիւնները, ըլլայ բնազդումէն, ըլլայ կամքէն, ըլլայ սովորութենէն առաջ եկած կամ թելադրուած, բայց միշտ մեր ներքին կեանքին, մեր հոգեոյն գործունէութեան արտաքին մէկ ցոյցն են: Բոլոր այս երեւութիւններն ի միասին կ'կազմեն հոգեբանական իրողութիւններու առաջին խումբ մը:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ. — ԶԳՈՅԱԿԱՆ ԿԱՄՋԳԱՆԱԿԱՆ, ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ. (faits sensitifs ou affectifs): — Մասքո միանգամայն կ'տողորուի համակրանքի կամ հակակրանքի. հաճոյքի կամ վշտի, փափաքներու, երկիւղներու, յոյսերու զգացումներով կամ զգացողութիւններով (sentiments ou sensations): Զգածողական (affectif) համակ այս կեանքը խառն է գործունէութեան հետ. բայց անոր չափ յայտնի իր որոշ պատկերն ունի գիտակցութեան մէջ. Այս կարգի իրողութիւնները կ'ազմեն երկրորդ դաս մը:

ԵՐՈՐԴ ԽՈՒՄԲ. Իմացական (intellectuel) ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ. Իրողութիւններու ուրիշ խումբ մ'ալ կայ վերջապէս, դարձեալ իրենց զէնքով որոշակի յայտնի, թէպէտեւ նախընթացներուն հետ միացեալ. Իմացական

իրողութիւններն են ասոնք, այսինքն մտածումին, իմացակամութեան (intelligence) երեւութիւնները: Մտքի բոլոր գործողութիւնները՝ որոնք կ'ընկերանան զգայնութեան շարժումներուն, եւ կ'ազդեն մարդուն գործունէութիւնը, կ'կազմեն այս երրորդ խումբը:

ՀՈԳԻՈՅՆ, ԵՐԵՔ ԿԱՐԳ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

— Արդ՝ հոգին, այս երեք կարգ իրողութեանց համաձայն՝ երեք կարողութիւն ունի:

Զգացական իրողութեանց համար՝ զգակամութիւնը. գործքերու (actes) համար՝ գործունէութիւնը (activité). որ, չափահաս ու խելահաս մարդուն համար. կամք կամ կամեցողութիւն (volonté) անունը կամ նշանակութիւնը պիտի ունենայ. իմացական իրողութեանց համար, իմացականութիւնը:

Բայ տեսնենք թէ ինչ ըսել է կարողութիւն (faculté) կոչուած այս ռաբը:

Թէ ի՞նչ է ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ. — Կարողութիւն. — գիտակից գործունէութեան (activité consciente) այսինքն հոգեոյն զգալու, իմանալու, կամելու, գործելու մասնաւոր, որոշ, տեսական ու բնական մէկ ձեւը, եղանակը կամ վիճակն է: Կարողութիւնը հոգեբանական կեանքին համար՝ այն է ինչ որ է յատկութիւն մը՝ անկենդան մարմնոց (corps bruts) համար. ինչ որ է պաշտօնը՝ գործարաններու (organ) համար: Բնագիտական կամ ֆիզիկական յատկութիւն (propriété) ըսելով կ'հասկնանք, որոշեալ պարագաներու մէջ ինչ ինչ երեւութիւններ ընծայելու համար՝ եւ է մարմնի մը ընդունակութիւնը (aptitude): ամեն անգամ որ միեւնոյն մարմնը կ'զրուի միեւնոյն պայմաններու մէջ, միեւնոյն երեւութիւններն առաջ կուգան, այսպէս կակղած երկաթը (fer doux) հոսանքի մը ազդեցութեան տակ մաքնիսանալու յատկութիւնն ունի: Պաշտօնը կ'նշանակէ աստիճան մը աւելի գործունէութիւն. աս այն յատկութիւնն է զոր ունի կենդանի կամ գործարանաւոր հիւսուածք մը (un tissu vivant ou organique) ինչ ինչ գրգռիչներու (excitant) ազդեցութեան տակ որոշեալ կերպով մը ներգործելու համար. ինչպէս ֆզային նեարդներու պաշտօնն է կրծկի, գեղձերու (glandes)՝ թորել (sécréter). արտադրութիւնը, մարսողութիւնը, եւն, պաշտօններ են է՝ ուրեմն. Կարողութիւնը աստիճան մը ալ աւելի գործունէութիւն կը նշանակէ. մարդկային հոգեոյն վրայ գործելու հիմնական կերպն է ան:

Բայց ինչպէս որ բնախօսութեան (physiologie) մէջ նոյն տէրը, նոյն ենթական է որ կ'մարտէ, կ'չնչէ, եւն, նոյնպէս ալ հոգեբանութեան մէջ, նոյն տէրը, նոյն ենթական է որ կ'սիրէ, կ'զգայ ու կ'մտածէ. ինչ ըսել կուզուի ուրեմն երբ կըսեն իրողութիւններու այս երեք սեռն երեք որոշ կարողութիւններու կ'համապատասխանէ:

Կարողութիւններուն բնծայելու չենք իրական կեանք մը.

Կարողութիւնը էակ մը չէ. չի խարուինք լիզուին ձայնէն. որով յաճախ կ'բերուինք նկատել իբրեւ առանձին բան մը ինչ որ մասնաւոր բառով մը կ'անուանենք. վերացումներն իրացնելու համար, այսինքն վերացեալ բաները դիւրըմբռնելի ընելու մօտ՝ զանոնք՝ թանձրացեալ բաներու պէս մարմնացնելու, իբրեւ շօշափելի իր, տեսանելի առարկայ հերկայացնելու համար:

Բայց եթէ կարողութիւնները իրական բաներ չեն, բոլորովին բացարձակ զուտ կեղծիքներ ալ չեն: Անոնք կան. գոյութիւն ունին, մտքով մը, եթէ ոչ ուղածնուս չափ պիտի չի կարենայինք համրել զանոնք: Ասոնք բնութեամբ որոշ, բնական, անվերծանելի (անջնջելի) հոգեբանական դասակարգեր (catégorie) են, որոնցմով մեր հոգեբանական կեանքին երեւութները այլ եւ այլ մասերու կամ խումբերու կ'բաժնուին: Այս կերպով է որ մեզմէ իւրաքանչիւր ոք հոգեկան երեք կարողութիւն ունի. բայց այս երեքը կ'կազմեն մի միայն էակ մը՝ ես: Ես կ'զգամ, ես կ'մտածեմ, ես կ'գործեմ, բայց ես լիկ մէկ եւ նոյն ենթական եմ, այն Եսը՝ որուն գիտակից գործունէութիւնը մերթ ընդ մերթ կամ միեւնոյն ատեն այս այլ եւ այլ ձեւերը կ'առնու:

ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — գործելը հիմնական կարողութիւնն է. վասն զի գործելն է բուն կեանքը, եւ կեանքէն աւելի նոյն իսկ լինելն է. լինել. էապէս ա՛յս է գործելը: Մարդուն համար՝ մասնաւորապէս, գործունէութիւնն է վարուց բուն ընթացքը, մտադրութիւններու եւ արարքներու ամբողջութիւնը. կա՛յ ասորմէն աւելի բան մը որ կարողանայ յորինել մեր յատուկ բնաւորութիւնը եւ մեր ճշմարիտ արժանիքը՝ կը դատենք սովորաբար մարդերն իրենց գոր-

ծելուն համեմատ, եւ որովհետեւ մեր սորուած ուսման գլխաւոր նպատակն է մեզ միջամուխ ընել գաստիարակութեան գիտութեանը, ո՛չ ապաքէն գաստիարակութեան ճշմարիտ, գլխաւոր առարկան է, բերել հասցնել իր ազդութեամբ առաջնորդածներն այն վիճակին եւ այն կարողութեան, որով կարենան ըլլել ինչ որ պէտք է: Ահա՛ւստիկ թէ ինչո՞ւ համար պիտի սկսինք գործունէութեան ուսումնէն:

Բայց եթէ մարդ բնութեամբ անզգայ եւ անշարժ ըլլար, պիտի չի գործէր երբեք, զգայնութիւնը գործունէութեան զսպանակը, շարժիչն է. մարդ կ'գործէ ի տես բարւոյն, ուժովն այն հրապոյրին՝ որով կ'բերուինք ընել այս կամ այն բանը: Մարդկային կեանքին մէջ՝ ո՛չ ապաքէն սիրտն է մեծ շարժիչը, գաստիարակութեան առարկան ալ վարքն ու բարքը կանոնաւորելովն հանդերձ, զգացումները կազմելը, զգայնութիւնը դէպ ճշմարիտ բարիք դարձնելն է:

Վերջապէս մարդուն մէջ շատ կանուխէն իմացականութիւնը կ'միջամտէ նպատակաւոր կերպով. գիտութեամբ վարելու, ուղղելու համար գործունէութիւնը դէպ բարին որուն կ'ցանկայ զգայնութիւնը: Տրուած ըլլալով բարին առ որ կ'ձկտինք, իմացականութիւնը կ'որոնէ, կ'ննարէ առ այն հասնելու միջոցները. ապա կ'ընտրէ կ'բաղադրէ ու կը կարգադրէ զանոնք վախճանին դիմելու նպատակով. ահա իմացականութեան յատուկ գործն ու սեպհական նշանը:

Գործել ինչպէս որ կ'զգայ. եւ, հետաւորած կամ ցանկացած բարւոյն համար. յետոյ մտածել գործելու համար. այսինքն իմացականութեամբ իր գործերն ուղղել. Կարձառատորէն՝ ա՛յս է մարդկային բովանդակ կեանքը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄՇԱԿԵԼՈՒ Է ԱՅՍ ԵՐԵՔ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — ինչ որ կ'իշակէ, կ'զարգացնէ իմացականութիւնը ու, սու մն է, կամ յատկապէս բնած կրթութիւնը (instruction), որուն միջոցաւ մարդ կ'ստանայ հարկաւոր ծանօթութիւններն ու գիտելիքները. բայց լիակատար գաստիարակութեան առարկան է ամբողջ հոգւոյն մշակումը, անոր բարեւոք զարգացումը: Այս առարկան իմաստով մը ուրեմն եռապատիկ է. բայց որովհետեւ հոգեկան երբեակ կարո-

ղուծիւններն այնպիսի կերպով մը իրարու հետ շաղկապուած են որ անկարելի է զանոնք տրոհել կամ իրարմէ զատել, դաստիարակութիւնն իր հիման մէջ շատ պարզ է. կազմել միանգամայն կամքը, սիրուը եւ իմացականութիւնը. մէկ խօսքով՝ չինել մարդր: Երեք կարողութիւններն արդարեւ իրարու հետ այնպէս սերտ կապուած, միացած են, ինչ որ ընենք անոնցմէ մին զարգացնելու համար, հարկաւորապէս կ'ջղուենայ. կ'ազդէ միւս երկուքին վրայ: Ամէն ինչ որ կ'ընենք մարդուն վարքը, բարքը բարեփոխելու համար, շուտով անոր իմացականութիւնն ու անոր զգացումները կ'օգտուին: Ընդհակառակն սրտէն կու գայ յոյսն առ իմացականութիւն. եւ հոռոյն՝ առ կամք: Ո՛վ չի գիտեր թէ, զպրօցին մէջ անգամ, իմացականութիւնը շահագրգռելու ընտրելագոյն միջոցը զգայնութիւնը յուզելն է: Վերջապէս չի պիտի տատամանք հակառակը պնդել Հէրպեր Սթենտէրի սա հանրածանօթ տարադասան կարծիքին (paradox, հասարակաց կարծիքին հակառակ կարծիք րոնել է), որ կ'ըսէ թէ՝ կրթութեամբ սրտին ու նկարագրին վրայ ներգործելու մասժումը ընդունան ու եղջիւրուաքաղական գաղափար մ'է. պիտի ապացուցանենք թէ մօթին մշակումը զօրեղապէս կ'ազդէ բարոյականութեան վրայ:

Հոգեբանական կեանքին ամբողջ տեսարանը.— իւրաքանչիւր կարողութեան զարգացման մէջ երեք աստիճան կամ երեք ելուստ (phase).— Ձեռնարկենք հիմայ զանոնք իրենց ստորաբաժանմանց վերածել: Կը գտնենք թէ հոգւոյն երեք կարողութիւններն իրենց բարգաւաճման մէջ, կառնուն երեք ձեւ: Որոնք կ'երեւին հետեւեալ պատկերին մէջ:

ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

1.— Բնածին, անգիտակից, Բնագոյում (անասնական կեանք):

2.— Գիտակից, խորհրդածեալ, անձնական, կամք, կամեցողութիւն (մարդկային կամք):

3.— Ստացեալ, սովորութիւն, ունակութիւն. (անկում դէպ անասնականութիւն կամ բարձրացում դէպ գերազոյն կեանք):

ԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ

1.— Բնածին, բնագոյային. Գալստական հակամիտումներ ու պետքեր:

2.— Խորհրդածեալ, գիտակից, անձնական. զգացումներ, յուզումներ:

3.— Սովորութեան, ունակութեան երեւում. կիրքեր (ազնիւ կամ ստորին):

ԻՄԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1.— Բնածին, նախնական գործողութիւններ ու կարողութիւններ. (սկզբունքներ, բանականութիւն):

2.— Խորհրդածեալ, ուշադրութիւն, մտաւոր որոնումն (elaboration) ծանօթութեանց.

3.— Երեւում սովորութեան, ունակութեան. յիշողութիւն կամ յիշատակ, գուգորութիւն գաղափարաց:

Բացատրենք այս պատկերը. գործունեութիւնը, ըսինք. անգիտակից է, կամ խորհրդածեալ է, մենք կ'ունենանք յայտնաբերուած, Բնագոյումը, որ կենդանական կամ անասնական կեանքին աւելի որոշ նշանը կամ նկարագիրն է: Հոգեբանական գործունեութեան յետին ծայր խոնարհ ձեւն է: Գործունեութիւնը կրնայ ըլլալ յետոյ գիտակից, խորհրդածեալ, այն ատեն մարդ կ'գործէ ազատօրէն. այս է յատկապէս մարդկային կամքը կամ գործունեութիւնը ըսուածը, որ կ'չինէ մարդուն մէջ անձնականութիւնը: Վերջապէս բնագոյէն դէպ յատակ խորհրդածեալութիւն բարձրանալէն յետոյ, մարդ կ'ձկտի, կ'բերուի, իրողութեանց ուժէն կամ զանոնք կրկնելու հարկէն ստիպեալ, վերստին դառնալ ինչալ արդէն կատարած գործերուն մէջ, այսինքն սովորութիւն կամ ունակութիւն կոչուած երկրորդ ընտելեանը գերին ըլլալ: Ունակութիւնը կամ սովորութիւնը բնագոյումին հման տեսակ մը գործունեութիւն է, միայն թէ բնածին ըլլալուն տեղ ստացական է. կրնայ, մեր կամաց ուղածին պէս գործածութեան համեմատ, դէպ աւելի ստորին վիճակի կամ դէպ աւելի բարձրագոյն կեանքի մը հասցընել մեզ:

Զգայնութիւնը իրարու հաղորդակից երեք երեւում ունի, զատարարակութիւնը, ինչպէս գործունեութեան համար, ինչպէս իմացականութեան համար, նոյնպէս զգայնութեան համար ալ միեւնոյն նպատակն ունենալու է. առնել մարդն իր բնական վիճակին մէջ. բարձրացնել զայն լիովին ինքն իր տէրը ընելու. անձնիշխանութեան աստիճան եւ

(Շար.)

ԴԱՍԸՆԹԱՅՔ ՕՏԱՐԱԶԳԻ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՅՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

1.—Մատենադարաններուն կենսագրութիւնները:

2.—Անոնց գլխավոր գործերու վերլուծումն ու փնտառատութիւնը:

3.—Իւրաքանչիւր հեղինակի հանճարին մէկ գնահատումը:

4.—Միեւնոյն սեռի գրուածներու Հեղինակաց զուգակշիռ բաղդատութիւնը:

ՆԱԽԱԳԻՐՈՒՆԵՐ

ՅՈՒՆԱՅ ԾԱԳՈՒՄԸ: Յոյներն իրենք զիրենք կ'ընչէին տեղածին կամ ինքնածին (autocthon) այսինքն իրենց բնակած երկրին մէջ ծնած: Այս անգրէածնութեան համեմատ՝ հռոմայեցիներն առասպել մը իբր թէ Բրէստոսէ 16 դար առաջ՝ պատահած ջրհեղեղէն ազատեցան միայն Թեսաղիոյ Դեկալիոն թագաւորն եւ իր Փիւրրոս անուն կինը:

Այս երկուքը՝ այր եւ կին, իբրեւ նոր Ադամ եւ Եւա, կամ իբրեւ նոր Նոյ նահապետ եւ իր Նոյեմգար կինը, սկսան վերստին մարգարեակ ընել երկիրը, քարեր նետելով, Դեկալիոնի նետած քարերը մարգերու՝ իսկ Փիւրրոսին նետածները կիներու գոյափոխեցան: Ասոնց Հելլէն զուակն իր անունովը Հելլադա կոչեց բոլոր Յունաստանը, եւ ծրնաւ երեք զաւակ. ԴՐՐՈՍ, Դորիացիներուն հայրը. ԵԻՈՂՈՍ, Եւոդիացիներուն հայրը. ՔՍԻԹՈՍ, որ ծնաւ երկու զաւակ, ԱՔԷՈՍը՝ Աքէացիներուն հայրը. եւ ՅՈՒՆ, Յունիացիներուն հայրը: Յոյներն այս ծննդաբանութիւնը հնարեցին իրենց ազգին չորս ցեղերու, եւ իրենց լեզուին չորս ճիւղերու բաժանումը մեկնելու համար:

Յոյներուն ճշմարիտ ծագումը չատ մօթին է: Արդի գիտուններն այնպէս կ'հաւատան թէ Յոյներն ալ սերած են ԱՐԻԲ կոչուած ազգէն՝ որ երկրագործ ու խաշնարած ժողովուրդ մ'էր, որ անգրապատմական ժամանակներէ ի վեր՝ կ'ապրէր Հնդկաստանի եւ Պարսկաստանի մէջտեղ: Յոյներուն բուն նախահայրերը կարծուած Պեղասգները՝ արիական ցեղէն, առաջիններն եղան որ Ասիէն Յունաստան գաղթեցին. եւ ասոնց թո-

ղած նշանաւոր հետքերն են կիկլոպեան կոչուած խոշորալէմ յիշատակարանները: Մեր թուականէն առաջ՝ ժերգ դարուն Պեղասգներու գաղէն չորսը երեք հարիւր տարի յետոյ, Դամալիս եւ Կեկրոպոյ Եգլապոցիները Յունաստան չուեցին եւ հոն, առաջինը Արգոսի մէջ. եւ երկրորդը՝ Աթէնքի մէջ, գաղութներ հաստատեցին: Կապուս փրահիկեցին Աթէնքի միջնարեղը կառուց, եւ Փիւնիկեան այլեհգիմը ներմուծեց: Հելլենները՝ որ նահապէս նոյն ժամանակները՝ Ասիայէն գաղթող ժողովուրդի հատուած մ'էին, նախ բնակեցան Յունաստանի հիւսիսակողմը: Այս վերջիններն հետզհետէ իրենց հպատակեցուցին բոլոր երկիրը. եւ զայն իրենց անունովը կոչեցին Հելլադա, եւ չորս ցեղերու բաժնուեցան. որ ծանօթ են Աքէացիներ, Եւոդիացիներ, Յոնիացիներ եւ Դորիացիներ անունով:

Բ.

ՅՈՒՆԱԿԱՆ ԼԵԶՈՒԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Այժմեան լեզուարանները կամ բանասէրները երեք գլխաւոր ընտանիքներու կ'բաժանեն լեզուները: Ա. Արիական ընտանիքը. Բ. Սեմական ընտանիքը (Փրահիկերէն, Եւրայերէն, Արաբերէն, եւն.): Գ. Գուրացեան ընտանիքը (Դոնկուգերէն, Մոնկոլերէն, Թուրքերէն, եւ ընդ): Արիական լեզուն Արիներուն խօսածն էր, որ կ'ընչէր նաեւ վետական. զի վետականը, կամ հնդկներուն որդազան մատենները, այս լեզուով գրած՝ եւ անորմէ մեզ աւանդ մնացած հնագոյն յիշատակարաններն են:

Վետական կամ Արիական լեզուն նախնական տիպն է Հնդ-Եւրոպական լեզուներուն, որոնք վեց խումբերու կ'բաժնուին. Ա. Սանսկրիտ, որ Հնդկաստանի մէջ կը խօսուէր. Բ. Զենտերէնը կամ հին Պարսկերէնը. Գ. Յունարէնը ու Լատիներէնը. Դ. Գերմանական լեզուները. Ե. Սլավերէնը. Զ. Կելտերէնը կամ Պրեթոներէնը:

Յոյներն եւ Լատիներն իրարու եղբայր ազգեր են: Իրենց լեզուներու ազգակցութիւնը միեւնոյն ցեղէն իրենց սերելուն ալ ապացոյցն է:

Սակայն Յունարէնն ու Լատիներէնը թէպէտեւ քոյր լեզուներ, չատ մը մեծ փոփոխութիւններ, յեղաշրջումներ կրեցին Յունաստանի եւ Իտալիոյ մէջ խօսուած այլ եւ

այլ ազգի գաւառաբարբառներու խառնուրդներէն: Չորս գլխաւոր տարրեր են որ կը կազմեն յունական լեզուն, Պ. դասգետն տալը, եգիպտականը, փիւնիկեանը, Կրետականը իրանականը կամ Պարսկականը:

Գ.

ԳԱԻԱՌԱՐԱՐԱՌԱՌՆԵՐԸ

ԿԱՄ ՌԱՄԿԵՐԷՆՆԵՐԸ

Յունաստանի բազմաթիւ ռամիկ ժողովուրդները շատ մը գաւառաբարբառներ կամ ռամկերէններ կը խօսէին, Արիստոտէլ ասոնց թիւը կ'հասցնէ մինչեւ երկու հարիւրի: Բոլոր այս այլ եւ այլ ռամկերէնները կ'վերաբերէին չորս գլխաւոր գաւառաբարբառներու: Լեոդակացի, Դարիակացի, Յոնիակացի եւ Ատտիկեացի:

Ա. Եւդակացի որ պարզ եւ մեր հին կործարարառնի նման՝ խեցքեկ, կարծկեկ է, իր ցեղի գաւառաբարբառներուն մէջ ամենէն աւելի նախնական լեզուին շատ քիչ կը նմանի, եւ այս է որ ամենէն աւելի լատինական լեզուին նմանելու մերձաւոր տարրեր կ'պարունակէ: Եւոդերէնը կ'խօսուէր Բէոլլոթիայի, Թեսաղիայի, Լէսպոսի, եւ փոքր Ասիայի յոնիական դաղթականութեանց մէջ: Աղկէոս եւ Սափով այս աւգառաբարբառով գրած են:

Բ. Դորիակացի՝ որ աւելի ուժեղ եւ աւելի ընդարձակ է, կազմուած է Եւոդակայէնէն, կ'խօսէր Պելոպոնէսի, Կարիայի, Սիկիւրիայի, հարաւային Իտալիայի մէջ: Աղկիման, Սիմոնիդէս, Պինդար, Թէոկրիտէս իրենց գրական գործերով հռչակաւոր հանդիսացուցին այս լեզուն:

Գ. Յոնիակացի՝ որ գաւառաբարբառներուն մէջ ամենէն աւելի հեշտալուրն ու քաղցրահնչիւնն է, կ'խօսուէր փոքր—Ասիայի ծովեզերքներուն վրայ. Չմիււնի, Եփեսոսի, Կողոփոնիայի, եւ Արչիպելագոսի կղզիներուն մէջ: Այս յունարէնը երկու թուական ունեցաւ իր կազմակերպութեան մէջ. նախ կազմեց Հոմերի եւ Հեցիոգի զիւղագնորգական լեզուն, յետոյ ծնունդ տուաւ Հերոդոտի ներգաշնակաւոր արձակին:

Դ. Ատտիկեակացի, իր նախնական կազմութեան մէջ գրէթէ մէկ ատորարածանում էր Յոնիէրէնին. որուն շատ կ'նմանէր Պէրիկլէսի դարուն մատենագիրները տունն անոր աւելի սեղմ, աւելի հաստատուն հանգամանք ու նկարագիր մը, իրենց հանձարին շնորհիւ, Ատտիկիէնը յաղթանակեց բոլոր միւս գաւառաբարբառներուն եւ յունական մատենագիրներուն ընդհանուր ու հասարակ լեզուն հանդիսացաւ:

Եսքիդէս, Սոփոկլէս, Էւրիպիդէս, Արիս-

տոփան այս լեզուով գրեցին իրենց ողբերգական մեծ գործերը, նմանապէս այս լեզուով խօսեցան ու գրեցին Հելլադաի մեծ ճարտասանները, Դեմոսթէն, Էսքինէս, Եւրիպիդէս, այս էր պատմաբան Թուկիդիդէսի եւ Քսենոփոնի լեզուն, ինչպէս եւ Պլատոնի ու Արիստոտէլի եւ ուրիշ ասոնց նման նշանաւոր Յոյն հեղինակներու լեզուն:

Մեծին Աղէքսանդրի աշխարհակալութեանց ատեն յունական լեզուն Արեւելքի մէջ տարածուելով կորուս իր մաքրութիւնը եւ աղաւաղեցաւ: Այն ատեն կաղմուեցաւ Մակեդոնեիկը որ Ատտիկեիէնին աղաւաղումն էր: Երբ Աղէքսանդրիան Յոյն գրականութեան կամ դպրութեանց գլխաւոր կեդրոնն եղաւ, հոն ալ կաղմուեցաւ նոր յունարէն մը, որ նմանապէս Ատտիկեան հելլենիէնին ուրիշ մէկ աղաւաղումն էր. եւ որ կոչուեցաւ Աղէքսանդրեան յունարէն: Վերջապէս, Ստորին-Կայսրութեան օրով, Կոնստանդինուպոլիսն ունեցաւ ու կաղմեց իրեն յատուկ յունարէն մը, Բիզանդեան գաւառաբարբառ, որ այս օրուան հոռմերէնը (հոռմերէնը) կամ նոր յունարէն կոչուածն է: Ինչ որ է մեր այսօրուան Պոլսոյ Աշխարհաբարը Ս. Մեսրոպայ եւ Ս. Սահակայ դարու Արաբատեան գրաբարին բաղդատմամբ. նոյնն է նաեւ այսօրուան յունաց հոռմերէնը կամ արդի յունարէնը բաղդատմամբ Պէրիկլէսի դարու ընտիր Հելլենիէնին:

ՅՈՅՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Գրական եւ արուեստագիտական հանձարին հայրենիքն է Յունաստանը, իր մէջ բովանդակած, որդեգրած է բոլոր գիտութիւնները, բոլոր արուեստները մշակած, ամեն սեռերէ գլուխ—գործոցներ յիշատակ թողած: Ով որ դպրութեանց ու մատենագրութեանց ուսմամբը կ'պարապի, Հելլադաի մեծ մարդոց իւրաքանչիւրին մէջ ողջունելու է վարպետ մը եւ ընդօրինակելի տիպար մը: Կատարելիութիւնն այնքան յառաջ մղեցին Յոյները, որոնք կերպով մը արուեստին զատիարականներն հանգիստացած են:

Յունական գրականութիւնը՝ ի սկզբանէ անտի՝ ընդարձայ, ազգային հանգամանք ու նկարագիր մ'ունեցաւ իրեն յատկանիշ, եւ ամեն սեռերու մէջ մեծ ճոխութեամբ փայլեցաւ:

Ա. Իւրնաբոյս (original).—Յունական գրականութիւնը այլոց նմանութեամբ կամ հետեւողութեամբ չի յօրինուեցաւ: Այս ժողովուրդին մէջ, արուեստագէտը, գրագէտները ամեն ինչ իրենց յատուկ խորքէն, իրենց իսկութենէն քննարկեցին. արտադրեցին: Նրմանեցան, հետեւեցան աւելի բնութեան քան օտարներու, որոնց հետ այնքան ատելութեամբ կ'վարուէին, որ բարբարոս կ'կոչէին:

իրենցմէ դուրս գտնուած օտարազգիները կը տեսնուի նաեւ թէ Յունաստանի մէջ յաջորդաբար ծագեցան, ծագեցան գրական բոլոր սեռերը, զից նուիրեալ օրհներգները, տաղերը, զից ազգայն ընծայուած հագներգութիւնը, քնարական բանաստեղծութիւնը, թատերգութիւնը կամ դուաներգութիւնը, պատմութիւնը, փիլիսոփայութիւնը, ճարտասանութիւնը, Այս ամենքն ալ իրենց բնական կարգով իրարու յաջորդած են, ամենքն ալ ունին իրենց մասնաւոր պատմութիւնը եւ իրենց աստիճանաբար առաջիմական բարձրաձուլները, անոնք կ'ընին, կ'աճին, կ'աւարելութեան կը հասնին: Ո՛չ լատինական եւ ո՛չ մի ուրիշ ազգի ո՛ր եւ է գրականութիւն այս կերպով եւ այս ընթացքով ծագած ու զարգացած չեն:

Ուրիշ ազգաց գրականութեան մէջ, գրական մէն մի սեռ մարդկային մտքի բնական բարեշրջման մը պէս երեւան չի գար, այլ նմանողութեան կամ հետեւողութեան առաւել կամ նուազ կեղծ ու չինովի տարաբնուութեան մը պէս բան մ'է:

ՅՈՒՆԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Վեց թուականներու բաժնել կարելի է յունական գրագիտութիւնը:

Ա — Առասպելական թուականը. նախապատմական ժամանակներէն մինչեւ Տրովական պատերազմը (1270, նախ քան Յ. Բ.):

Բ — Դիւցազնական թուականը. Տրովական պատերազմէն մինչեւ առաջին Մէսէնական պատերազմը (1270?—743):

Գ — Աթենական թուականը. Մէսէնական առաջին պատերազմէն մինչեւ Ազէքսանգրի մահը (743—323):

Դ — Յունական — Աղէքսանդրիական թուականը. Ազէքսանգրի մահէն մինչեւ Յունաստանին Հռովմէական գաւառի մը վերածումը (323—246. Ն. Յ. Բ.):

Ե — Յունական Հռովմէական թուականը. Յունաստանին Հռովմէական գաւառի մը վերածումէն մինչեւ Հռովմէական Կայսրութեան բաժանումը (146 նախ քան Յ. Բ. — 395 յետ քան Յ. Բ.):

Զ — Բիւզանդեան թուականը. Հռովմէական Կայսրութեան բաժանումէն մինչեւ թուրքերուն ձեռք Կոնստանդինուպոլսին առումը (395—1453):

1. — ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ

Նախապատմական ժամանակներէն մինչեւ Տրովական առումը (1270 ? նախ քան Յ. Բ.):

Ա. — Այս բուականին յատկանիշը. — Դից, առասպելաց, սրբազան աւանդապատումն:

Իսկ թուականն է առաջինը, Կրօնական ներկարագիր մը ունի իրեն յատկանիշ: Առաջին բանաստեղծները, որք Այէտ (երգող) կ'կոչուին, քուրմեր են, առաջին բանաստեղծութիւնները զից նուիրեալ օրհներգներ, տաղեր են:

Յոյներն աստուածադուցին բնութեան երեւոյթներն եւ զանոնք արտադրող ուժերը: Քերդոզներն հնարեցին հազարամէկ առասպելներ: Յօրինեցին աստուածներու ամբողջ նուիրապետութեան դասակարգ մը. որուն թագաւորն եղաւ Արամազդ. զիք եւ զիցուհիք իրարու հետ ամուսնացան, իրենց պատմութիւնը խառնեցին մարդոց պատմութեան հետ. եւ իւրաքանչիւր աստուած հասարակ մահկանացուներու հետ ունեցաւ իր արկածները: Արամազդ ճամբորդեց Արկադիա, պատժեց Լիկայոյն բռնաւորը. եւ վարձատրեց Փիլէմոնն ու Պոկիսիան. անոնցմէ վայելած ասպնջականութեան համար, Արտէմիս մարդոց սորուհեցուց երկրագործութիւնը, Նեպտոն կամ Պոսիդոն եւ Ապոլոն կառուցին Տրովազա քաղաքին պարիսպները: Ապոլոն արածեց Տէմպէի գրախտավայր ու հելտաւէտ հովտին մէջ Ադմէտի երամակները եւ սրինգ ամէլ սորվեցուց հովիւներուն: Դասախօսեց ինեակ Մուսաներուն որք Պաուս, Հելիոն, Պիւդոս լեռներուն բարձունքը կ'ընակէին: Շրջակայ բոլոր վայրերը բանաստեղծական յիշատակով մը նուիրական հանգամանք զգեցած էին: Հոն Հիպոկլիէին ակը կ'ըզիէր, Պէգասի սմբակին ներքեւ: Հոս լուսակարկաչ կ'հոսէր Կասգալիոյ աղբերակը, որուն արծաթափայլ ալեակները բանաստեղծական ներշնչումներ կ'ընծայէին:

Բ — Գլխաւոր Այէտները. — Աւանդութիւնն այս թուականի Այէտներէն միմիայն մէկ քանիններուն անունները պահած է. անոնց գոյութիւնն ալ յաճախ տարակուսելի եղած է: Աստուծոյ գլխաւորներն են Լիւսոս, Եւմոլպէ, Մուսա, Ամփիոն, Որփէոս, Լիւկիէն Օլէն, որ ապոլոնական բանաստեղծութեան ներկայացուցիչներէն մին է, եւ որ, ասորմէն զատ, վեցչափեան (hexamètre) ոտանաւորին յօրինողներէն մին կ'համարուի:

ՈՐՓԷՆՈՍ[*] ԺԴրդ կամ ԺԳրդ դարուն մէջ ապրած կ'երեւի: Ասոր համար կ'պատմուի թէ՛ Ապոլոն իր ձեռքով ասոր տուեր է քնարը: Մուգաններն իրենց գասերովը զինք կրթիւր են: Ասոր քնարին ձայնէն կ'կաղէին, կ'զսպուէին իրենց կատաղութենէն թէ վայրի գազանները, ի՞նչ դուժ եւ ի՞նչ գորով կ'չարժէին ծառերը, կոհակներն ու ժայռերը: Որիէտո զեկավարեց Արգօ անուն նաւը, որով Արգօնաւ:

[*] Կիկերոն կ'ըսէ թէ՛ Արիստոտէլ Որփէոսն երբեք գոյութիւն ունեցած չէ, կ'վարդապետէր:

ւորդները ոսկեգեղմն աշխարհակալելու համար գէպի՝ Կողքիօի կողմերը արշաւեցին: Քաղաքակրթեց թրակացիները, գծօխքն իջաւ իր սիրական ամուսին Եւրիդիկէն հօնէն ազատելով նորէն աշխարհք բերելու համար: Եւ կատաղի բազում հիններ զինքն փառատելով սպաննեցին: Վերգիլիոս իր մշակականաց մէջ, եւ Օվիտէս իր կերպավորութեանց մէջ, հնարած կամ առաջ բերած են որիքեական այս աւանդապատումը, առաջին մարդերու վրայ բանաստեղծութեան ազդած ու ներգործած քաղաքակրթիչ գորութիւնը ցուցնելու համար:

Որատիոս ալ՝ իր բանաստեղծական կամ քերդողական արուեստ անուն գրքին մէջ այս ազդեցութեան պատկերը գծած է. «Իարդերը, կըսէ, անտառներու մէջ ցիր ցան ու թափառական կեանք մը կ'վարէին. աստուածներու նուիրական թարգման մը, Որփէոս, սպանութիւններէն սարսափելու երկիւղը եւ իրենց խեղճ ու պզգալի անունդէն գանելու զգուանքը ներշնչեց անոնց: Այս պատճառաւ, կ'ըսեն, թէ՛ վայրի առիւծներու, գազանաբարոյ վագրերու կատաղութիւնները մեղմացնելով կ'ողորբէր: Թէքէ քաղաքին հիմնադիրը՝ Ամիրիոն՝ անոր քնարին ձայնովը կ'քալեցնէր ժայռերը, եւ անոր ձայնին քաղցրութեամբը զանոնք կը տանէր ուր որ ուզէր»:

Իրեն իմաստութեան առաջին գործն եղաւ որոշել մասնաւորին չահը ընդհանուրին օգուտէն. սրբազանը անտարբէն, բարուց ապականութիւնը արգիլել. գծել ամուսիններու պարտաւորութիւնները. քաղաքներ կառուցանել, օրէնքներ քանդակել, փորագրել կաղնիներու վրայ: Ներշնչուած բանաստեղծներն այսպէս իրենց երգերուն փայլուն անուն մը եւ փառք մը աւելցուցին» (Արուեստ քերդողական. տես. 391.):

Գ.—Դիւցազներգակ Ալիտները. — Կրօնական Այէտներուն յաջորդեցին դիւցազներգակ Այէտները. որք կ'գովարանէին դիւցազուններու քաջագործութիւնները: Ամենէն աւելի ծանօթներն են Թամիրիսը, Փեմիոսը, Տեմուրագոսը: Ասոնք Քերդող եւ երգիչ էին միանգամայն: Մեր հեթանոս հայոց Գողթան Երգիչներուն եւ քրիստոնեայ Ասողիկներուն (աշուղ) նման, քաղաքէ քաղաք ժուռ կուգային, պալատներու մէջ ընդունելութիւն կ'գտնէին. կ'երգէին խնջոյքներու մէջ կիթաօին, փանդիոնն ու բամբուռն ձայնին հետ ընկերացնելով իրենց ձայնը, աւելի ուժով նուազելու համար: Միջին դարու Դրոսպատոսները՝ Պրանսաի հարաւակողմը՝ Օսեան լեզուովը եւ Դրովիկները՝ հիւսիսակողմը կամ Բիգարտիաի մէջ, Օսեան լեզուովը՝ հիւսիս Այէտները կ'սխալեցնեն:

2.—ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ

Տրովական պատերազմէն մինչեւ, առաջին Մեսէնիական պատերազմը (1270—743).

Այս դարուն գրական յատկանիշը՝ Տեսնեցաւ որ նախորդ դարուն մէջ շատ մը կարեւոր գէպքեր իրարու յաջորդեցին. Արգոնաւորագ աշաւանքը (ԺԴրդ դարուն). որոնք մեզ կ'իշխեցնեն կարգ մը պատմական ծանօթ անուններ, որ կ'հոչուին Հասոն, Մէդէոս, Պէլոս, Որփէոս, Հերքիւլէս, որ ինք եւս նշանաւոր է գործած այն մեծամեծ ու յանդուգն քաջութիւններովը. — ընդդէմ Թէբէի եօթն իշխանաց կոիւր, որ՝ դժբախտ Ներպոսի երկու որդւոց՝ Էդիոկլէսի եւ Բոլիսիկէի իրարու դէմ տածած նախանձու ատելութեանց պատճառաւ արծարծուեցաւ: Յետոյ ԺԴրդ դարուն Տրովադաի անմահ պատերազմը ծագեցաւ: Այս գէպքերը, իրենց հեռաւորութեան մէջէն դիտուելով բանաստեղծներու երեւակայութեան մէջ կ'իշխուին: Դեռ թատրոնները գոյութիւն չունեցած՝ դիւցազներգակ բանաստեղծները դանոնք գեղեցկացուցին ամենէն աւելի հրաշալի կեղծիքներով. այդ գէպքերն ի գլուխ հանող մարդոց մէջ չէ թէ պարզ ու հասարակ մահկանացուներ այլ եւ զիք, զիցուհիք, զիւցազներ, կիս-աստուածներ խառնուեցան:

Ալիտներուն յաջորդեցին Հագներգուները, (Բափսոս որյունարէն րափիթո կ'կարեմու օտի երգ բառերէն բաղկացած է): Կ'շրջագայէին քաղաքէ քաղաք ապուշ կրթելու չափ զօայլեցնելով Յունաստանը իրենց դիւցազնական պատմեականներով: Շատ մը Բափսոսներ անշուշտ հագներգեցին, Հոմերոսէն առաջ, այն պատմական գէպքերը զորս ինքն իրեն ներբողանօք հոչակած է, բայց զանոնք բոլորն ալ գերազանցեց իր անմրցելի հանճարին փառքովը: Հոմերիտեանը՝ կամ Հոմերական անունով կոչուած շատ մը աշակերտներ երեւան եկան Յունաստանի մէջ: Երկրորդ թուականը Հոմերական կ'հոչուի, զի նոյն դարու ամենէն մեծ բանաստեղծն է Հոմերոսը. եւ դիւցազնական, զի այն դարուն երգուեցան դիւցազուններու քաջագործութիւնները:

[*] Հոմերիտեանները կ'ապրէին Քիոսի մէջ: Կ'կազմէին ընտանիք (դենոս) մը. որուն շատ մը անդամոց զբաղումն էր դիւցազնական բանաստեղծութիւնը մշակել: Ասոնք են, ըստ Պ. Գրուազէի, որոնք շարագրեցին կամ խմբագրեցին իլիականն ու Ոդիսականը: Ի վերջոյ այս երկու Բերդուածներու հեղինակութիւնն ընծայեցաւ Հոմերոսի, որ անոնց մէջ ամենէն ծանօթն էր, եւ որ ճշմարտապէս ինքն էր յօրինած անոնց զլխաւոր երգերը:

ԸՆԹԱՑՔ ՕՏԱՐԱԶԳԻ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

1.—Մատենագիրներուն կենսագրութիւնները:

2.—Անոնց գլխաւոր գործերու վերլուծումն ու ֆինանսատութիւնը:

3.—Իւրաքանչիւր հեղինակի հանճարին մէկ գնահատումը:

4.—Միեւնոյն սեռի գրութեան շեղիւնակաց զուգակշիռ բաղդատութիւնը:

ՆԱԽԱԳԻՐՈՒՆՔ

Ա

ԼԱՏԻՆԱՑ ԾԱԳՈՒՄԸ.—Ինչպէս շատ մը մը հին Աղգաց՝ նոյնպէս եւ Լատիններուն ազգային ծագման վրան ալ խաւարումը կը տիրէ: Գիտուն պատմաբաններ կ'կարծեն, թէ Իտալիայի բազմամարդութիւնը կազմող ցեղերէն շատերը՝ կ'վերաբերէին արիական ցեղին, եւ իւր թէ անոնք նախապէս կեդրոնական Ասիայի մէջ հաստատուած ըլլան:

Հռոմէ քաղաքին հիմնարկութիւնէն առաջ՝ հոն հաստատուած այլ եւ այլ մանր մունր ժողովուրդները հինգ խումբերու կը բաժնուին:

1.—Իլլիրիացիները կամ Պեղասգները. Ասիական եկած. 2.—Իբերացիները. որոնք կեդտացիներուն ձեռք Սպանիայէն վտարուած էին. 3.—Օմպիրիացիները, որոնք կեդտական Գաղիայի բնիկներն էին. 4.—Ետրուրացիները, որք հաւանականօրէն Դերմանիայէն ելած հոն հաստատուած էին. 5.—Բնիկները (aborigènes) որոնք տեղւոյնի (autochthon) կ'աւանդէին իրենք զիրենք: Այս վերջինները կը համարուէին Ոսկ կամ Ոսկեանք (եւ կամ մեր Եղիշէ Պատմագրին յիշած Ասքը). Մարսք, Սաբինեանք, Լիւկանեանք, Կամպանեանք եւն Այս Բնիկ կոչուածները՝ հակառակ իրենց այն պնդումին՝ թէ իրենք Իտալիայի հողին վրայ ծնած են. իրենք ալ Ասիական եկած էին: Բոլոր այս ցեղերու խառնուրդէն կամ ձուլումէն եւ զլխաւորապէս բնիկներէն առին Լատիններն իրենց ծագումը: Իրենց անունը Լատին կոչուեցաւ Լատինոս անունով թագաւորէն, որ՝ աւանդութեանց համեմատ, իւր Լավինիա դուստրը կնութեան տուաւ:

Էնէասի Միեւնոյն աւանդութեան համեմատ՝ Էնէասն հիմնած է եղիւր Հռոմէ քաղաքը, Իւրիստոսէ 754, առաի առաջ: Ըրդ դարուն՝ Քսէ առաջ, առաջին Լատին ցեղերու հաստատուելէն վերջը: Յոյն գաղութներ բնակութիւն հաստատեցին Իտալիայի հարաւային կողմը, Մեծ—Յունաստանի մէջ, Վերջապէս՝ 587ի առեւնները Յ. Քէ առաջ՝ կեդտերը՝ Պելլոպոնէզի առաջնորդութեամբ, եկան բնակեցան Այսրալպեան Գաղիայի մէջ, Իտալիան այսպէս երեք մասի բաժնուած եղաւ, 1.—Բուն Իտալիան, 2.—Մեծ Յունաստանը, 3.—Այսրալպեան Գաղիան:

Բ.

ԼԱՏԻՆ ԼԵԶՈՒԻՆ ԾԱԳՈՒՄԸ. Լատիներէնը Յունարէնին նման կ'վերաբերի Արիական կամ Հնդ—Եւրոպական լեզուներու ընտանիքին. ինչ ինչ Լատիններէն ու յունարէն բառերու իրերանմանութէն ապացուցուած է լեզուական այս ազգականութիւնը:

Բայց արիական լեզուն Ասիական Իտալիա գաղթած ատեն՝ տեղւոյն այլ եւ այլ օտար ժողովուրդներուն խօսած լեզուներու հետ խառնուելով ազաւազեցաւ: Լատին լեզուն կազմելու նպաստեցին զլխաւորաբար երկու լեզուներ. 1. Իլլիրիական կամ Պեղասգեան լեզուն. 2. Ոսկերու կամ Ոսկեան լեզուն: Իլլիրիական լեզուն մեծ ազգականութիւն ունի Եւրոպական զաւառաբարբառին հետ՝ այս լեզուն մէջ Լատին եւ Յոյն բառերն իրարու շատ կ'նմանին:

Սանակրիայէն կ'սերի Ոսկ կամ Ոսկեան լեզուն որ արիական լեզուներէն մին է: Աւելի վերջին ատեններ, Ետրուրեանքն ու Յունարէնը ներգործեցին նաեւ Լատիններէնին վրայ իրենց ազդեցութիւնը, ներմուծելով հոն նորանոր բառեր՝ եւ ինչ որ՝ ուրիշ կողմանէ՝ կ'ապացուցանէ Լատին եւ Յոյն լեզուներու ազգակցութիւնը, այն դիւրութիւնն է որով բառ մը մէկ լեզուէն միւսին մէջ կը կ'փոխադրուէր:

«Նոր բառերը», կ'ըսէ Որատիոս, ապահովաբար կ'որգեգրուին եթէ յունական աղբիւրներէ գտն թեթեւ փոփոխութիւն մը կրելով:

Գ.

ԼԱՏԻՆԵՐԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ:

1.—Նմանողութիւնը կամ հետեւողութիւնը

Հատին գրագիտութեան յատկանիշ նկարագիրն է. ինչպէս ինքնաբոյս հանգամանքը Յունարէնին նկարագիրն է:

Կը տեսնուի նաեւ թէ՛ Յունականին մէջ երեւցածին պէս, լատինական գրագիտութեան մէջ, գրական զանազան սեռերը յաջորդաբար չեն երեւիր իրենց բնական կարգովը, դէպ ի՛ մտաւոր բարեշրջում դիմած:

Հռովմաի մէջ՝ բանաստեղծութիւնն սկիզբն առաւ թատերգութեամբ. որ Յուներէն փոխ առնուած էր: Յետոյ երեւեցան դիւցազներգութիւնն ու քնարերգական բանաստեղծութիւնը, բայց Վերգիլիոս, Որատիոս, Կատուլլոս բարձրաձայն հռչակեցին թէ՛ իրենք Յուներուն աշակերտներն ու հետեւողներն են: Զարտասանութիւնը, ճշմարիտ է թէ գոյութիւն ունէր Հռովմաի մէջ, դեռ Յոյն Սոփիստներն հոն հետեւողութիւնը չի դասախօսած, սակայն երբ բարձրագոյն աստիճանի կատարելութեան հասաւ, Կիկերոն, Հորտենսիոս եւ Անտոնինոս Ատտիկեան ճարտասաններու շաւղէն ընթացան:

Կեսար ճարտասանականին մէջ ինքզինքն ինքնաբոյս ցցուց՝ պատմութիւնը մատենագրած ատեն. բայց Սալուստիոս եւ Տիտուս Լիվիոս Հերոտոդոսի ու Թուկիդիդէսի հետեւեցան: Փիլիսոփայութիւնն ալ՝ գրագիտութեան պէս, ինքնաբոյս հանգամանք չունեցաւ Հռովմաի մէջ: Հռովմէական հանճարն՝ ամեն բանէ առաջ՝ գործնական էր եւ կը փնտռէր օգտակարը (1): Միակ կէտը՝ որուն մէջ լատինական միտքը ճշմարիտ կերպով ստեղծող ու ինքնաբոյս հանդիսացաւ, իրաւագիտական օրէնսգրութիւնն է. հռովմէական օրէնսգիտութիւնը քաղաքակրթեալ ժողովուրդներէն շատերը վարելու կարող գիտութեան տիպար օրինակն է:

Ամենամեծ Հատին մատենագիրները Յուներուն նմանողներ եղան, այլ՝ անոնց բոլորովին հետեւելով հանգերձ՝ գիտցան տալ

(1) — Հռովմայեցիները Յուներէն նուազ արուեստագէտ էին: Վերգիլիոս կ'իտոտովանի այս ճշմարտութիւնը: «Անտարակոյս, կ'ըսէ Հատին բանաստեղծը, ուրիշներ պիտի գիտնային կամ կարենային աւելի ոգեւորել մարմարն ու պղինձը, եւ աւելի պերճախօսօրէն պիտի ջատագովէին . . . : Բայց դուն, Հռովմ, քու փառքդ պիտի գնես աշխարհքը կառավարելու գիտութեան մէջ» (Լեւեական, գիրք 2րդ, 847):

իրենց գործերուն մասնաւոր եւ իրենց հանճարին սեպհական դրօշմ մը. իրենք ալ իրենց կարգին վարպետներ եւ ընդօրինակելի տիպարներ հանդիսացան:

2. — Լատինական գրագիտութիւնը՝ որովհետեւ նուազ ինքնաբոյս էր, Յունականէն աւելի նուազ ալ ազգային ու ժողովրդական եղաւ: Հայրենիքի փառքերէն նուազ ներշնչուեցաւ, կատարեալ կերպով մ'ալ չի պատկերացուց ժողովրդին հաւատարմները, բարքերը, սովորոյթները, աւանդութիւնները. գրեթէ մշակեալ մտքերը եւ հելլենական դպրութեանց ներհուն հմտութեամբ զարգացողները միայն զայն ընթերցան: Թատրոնն ալ՝ որ Աթէնքի մէջ այնքան մեծ կարեւորութիւն ստացաւ, շատ քիչ գնահատեցաւ Հռովմաի մէջ:

Ժողովուրդն ու ասպետներն իրենք իսկ խեղկատակներու ու սուսերամարտիկներու տեսարանները նախամեծար կ'համարէին թատերական ներկայացումներէն:

3. — Լատինական գրագիտութիւնը Յունականին չափ գրեթէ ճոխ հանդիսացաւ: Լատին հելլենական գլուխ-գործոցներն այս պատմութեան մէջ պիտի ուսումնասիրենք: Լատին լեզուն թէպէտեւ Յոյներու լեզուէն նուազ ճկուն, նուազ բանաստեղծական, այսու ամենայնիւ մտածման բոլոր գոյները, գաղափարներու բոլոր ձեւերը բացատրելու համար գերազանց գործիք մ'էր: Այս գեղեցիկ, կորովի, հակիրճ ու հատու լեզուն, հրամանատարութեան համար յօրինուած, կը պատշաճէր արքայ-ժողովուրդին: Իր ընդոճին կարճառոտութեան ու ճշգրտութեան վրայ հետզհետէ աւելցան միանգամայն ճոխութիւնն ու պարբերութեանց ներդաշնակաւորութիւնը:

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հինգ թուականներու պիտի բաժանենք Լատինական գրագիտութիւնը:

Ա. — Թուական. Հռովմի հիմնարկութեան ցվախճան առաջին Պուլիկեան կամ Փիւնիկեան պատերազմին (754—242, Ն. Յ. Բ.):

Բ. — Թուական. Պուլիկեան առաջին պատերազմէն ցման Սիդղաի. լատինական լեզուին կազմաւորութիւնը (242—677, Ն. Յ. Բ.):

Գ.—Թուական, Սիդդաի մահեն մինչեւ Օգոստոսի կայսերական գահակալութիւնը (78—30. Ն. Յ. Ք.) լատինական արձակին հաստատութիւնը:

Դ.—Թուական, կայսրութեան հաստատութենէն ց'մահ Օգոստոսի (30 տարի. նախ քան Յ. Ք. 14 յետ քան Յ. Ք.): Օգոստոսի դարը. լատինական գրագիտութեան ոսկեդէն դարը:

Ե.—Թուական, Տիբերիոսի իշխանութենէն ց'անկումն Արեւմտեան կայսրութեան (14-475 յետ Յ. Ք.): լատինական գրագիտութեան ապականումը:

ԱՌԱՋԻՆ ԹՈՒԱԿԱՆ

Հռովմի հիմնադրումէն ց'վերջ առաջին Պոնտիկեան պատերազմին (734—242 Ն. Յ. Ք.)

Հռովմայեցիները՝ հինգ դարերու տեւողութեան մէջ. ներքուստ՝ ընտանի պառակտումներով խռոված, արտաքուստ աշխարհակալութեամբ զբաղած, չի մշակեցին ո՛չ արուեստները, ո՛չ դպրութիւնները: Գրագիտական այլ եւ այլ սեռերու մէջ քանի մը սնկոպար, ճաշակազուրկ, աննշան եւ հազիւ յիշատակութեան արժանի հատուկ կոտոր գրութեամբներ արտագրեցին:

1.—Իբրեւ փնարեղբայական բանաստեղծութեան նմոշներ: Կ'գտնենք Արվայեան (դաշտային) եղբարց երգերը, Սայեան եւ Նեմեան երգերը:

Արվայեան (դաշտային) եղբայրներ ըսելով կ'հասկցուէր, երկոտասան քուրմերու դպրոց մը զոր Հռոմուլոս հիմնած էր: Իւրաքանչիւր գարնան վերադարձի ատեն. դաշտերու (Arva դաշտ) մէջէն հանդիսաւոր թափօրով անդատան պտտելու պէս հասարակաց հանդէս մը կ'կատարէին, Աստուածներէն հունձքերու առատութիւնն հայցելու մտքով. «Լարբեր, (թերալիք. ընտանի դիք). մեզ օգնութեան հասէք» եւ կ'վերջացնէին երեք հնդ գոչելով, յաղթութիւն:

Այս երգը ցարդ անհասկնալի է:

Նույն Մարտի տասեւ երկու քրմերէ միաբանութիւն մը հաստատած էր. Անսիլներու այսինքն պղնձէ սրբազան ասպարներու պահպանութիւնն ստանձնելու համար. զի Հռովմ քաղաքին ճակատագիրը այս ասպարներու պահպանումէն կախումն ունէր: Այս քուրմեր կ'կոչուէին Սայեանք: Պիւտարքոս կ'ըսէ թէ այս անունը առնուած է այն կայծիւններէն, զորս քուրմերը կ'կատարէին երբ Մարտ ամսուան մէջ, թափօրով կ'բերեն այս վահանները: Լատիներէն salire բառը ֆրանսերէն saut եւ հայերէն կայծիւն. կաքաւում բառերուն իմաստն ունի: Քուրմերն Մարտի այս թափօրը սարքած ատեն, կը հագնէին ծիրանի պարեգօտ, սուրերու պղնձէ լայն երախակալներ կախած, պղնձէ սաղա-

ւարտը գլուխը դրած, կ'հնչեցնէին Անսիլները. անոնց բախողելով իրենց վաղակներուն (կարծոտը) տափակ կողմով:» Ասոնց երգերն ալ Արվայեան երգերուն նման անիմանալի են

Նեմիաները դամբանական երգեր էին, զորս կ'նուագէին ի' պատիւ վախճանեալին թէ անոր յուզարկաւորութեան ատեն, թէ յուզարկաւորութենէ յետոյ՝ մեր՝ Հայոց՝ մեռելոց համար մեծարած հոգոց հացին նման, տրուած հացկերոյթէն վերջը: «Իբայց հեռացուցէք յուզարկաւորութենէս, կ'ըսէ Որատիոս, Նեմեաները, սուգն ու կոծը»: Իր մէկ քերդուածին մէջ:

2.—Նիէպուր կ'պնդէ թէ՝ Հռովմի առաջին դարերու պատմութիւնը ազգային զիւցաղներգութեանց շարք մ'է, այս գիտուն գերմանացին փորձած է, իր ներհուն հմտութեան շնորհիւ, որոշել նիւթն այլ եւ այլ բանաստեղծութեանց, որոց հատակոտորները Տիտիոս—Լիվիոսի մէջ գտնել հաւատաց. Բայց Նիէպուրի ենթադրութիւնը ճշմարտութիւնէ հեռի անհաւատալի է: Հիմերն երբէք խօսած չեն Հռովմի այս կարծեցեալ նախնական զիւցաղներգութեանց մասին:

3.—Յեսասնեան երգերուն եւ յաղթանակի երգերուն մէջ կ'գտնենք հռովմէական երգիծաբանութեան առաջին օրինակները:

Յեսասնեան երգերը երգիծաբանական տրամախօսութիւններ էին. զորս կ'նուագէին երկրագործները, հունձքերէն յետոյ կատարուած տօներուն մէջ. «Միացած իրենց վաժակակից պարտասեալ ընկերաց, իրենց դաւակաց, իրենց հաւատարիմ ամուսնոց, կ'ըսէ Որատիոս, կ'ողոքէին Երկիրը՝ իբրեւ զո՛ր յաշտ առնելով անոր խող մը, եւ Սիլվէնը՝ անտառաց եւ դաշտաց աստուածը, անոր կաթ ընծալ յելով . . . : Ֆէսսանեան պակչոտ շուայտու թիւնն ու աներեսութիւնն այս սովորութեան միջոցաւ մուտ գտնելով, տարածեց տրամախօսական ոտանաւորներով, լկտի լպրջանքներն ու ռամկական նախատանքները, երգիծաբանութիւնը երես առնելով շատ հեռուն գնաց, նախատուողները գանգատեցան եւ օրէնք մը դրեցաւ: որ կ'արգիլէր պատուհասի սպառնալիքով անուանարկող, վատահամբաւող երգերով ո՛ր եւ է անձ մը հարուածելը»:

Յաղթող սպարապետը յաղթանակի հանգիստով դէպ ի' կապիտոլ գնալուն ատեն՝ զօրքերն իրենց երգերով անոր կ'ընկերանային. երկու խմբերգակ կարգերու բաժնուած, անոնցմէ ոմանք զօրավարին գովասանքը կը տարփողէին. ուրիշները իրենց երգիծաբանական ոտանաւորներով ամենէ աւելի կարծր ու խիստ ճշմարտութիւններն ի լուր անոր կ'հնչակէին:

Կ.—Երգիծաբանութիւնները, Ատելլաները,

երգօտները թատերական բանաստեղծութեան առաջին փորձերն եղան Հոռովի մէջ:

Ֆեստանիան երգերը փոխելով ծնունդ առաւ երգիծաբանութիւնը (satir. լատիներէն satiras, խառնուրդ) Այսպէս կոչուեցան այն գրական գործեր՝ որոնց մէջ ոտանաւորն ու արձակը, երաժշտութիւնն ու պարը խառնուած կ'գտնուէին: Տիտիոս — Լիվիոս սակէս կ'ըսեցաւ որ այն տեսակ գրութեան ծագումը Հոռովը ճարակող ու սրածող ժամատախտին բնաւոր սաստկութիւնը միջոցաւ համար, ետրուրիաէն խեղկատակներ, ծաղրածուներ բերուեցան: Այս ծիծաղաշարժ դերասանները սրինգի ձայնով կը խաղային առանց երգելու ոչ ալ մնջնակատակութիւն ընելու: Պատահիներն ու երիտասարդներն անոնց օրինակին հետեւիլ եւ անոնց ձեւին նմանիլ սկսան շուտով, եւ անուպայ, անտաշ ոտանաւորներով իրարու աներես ծաղրանքներ ընել, ուղղել, ինչպէս կ'ընեն Եսէնեան երգերով: Ուրիշ բանով բացատրենք, ետրուրիացիներու պարին կաքաւին միացուցին Ֆեստանիան երգերը: Այս գիտար կատարելագործուեցաւ, հոռովա. յեցի Խաղիւղներու, խուրիւր կազմուեցան եւ զաշնակեցին միլամախստ եղանակով երգիծական խաղեր, սրինգի եղանակներու վրայ յարմարեցան երգով մը, եւ երգին գեղգեղանքի ելեւէջներուն յարմարեցնելով իրենց մարմնին անդամոց ձեւերն ալ, հասարակաց պարկեշտութիւնը գայթակղեցնելու չափ, (Տիտ — Լիվ, գիրք. 7-րդ գլ. 2-րդ):

Ատելլաներն իրենց անունն առին Կամպա. խիստ Ատելլա քաղաքէն ուր ծնունդ առին եւ այս խաղերը ի սկզբան՝ տօնավաճառներու, պաշարներու հրապարակին վրայ հուպիտեն. ըրու (օգգապազ, մէյտան օյունու) խաղցածին նման բան մ'էր, յետոյ վերելք խօսուած երգիծաբանական գուսաներգութեան հետ խառնուեցան, եւ այսպէս ուրեմն փոխուեցան ճշմարիտ զաւեշաներու: Ատելլաներն եղան միանգամայն ճշմարիտ հոռովաձեւական կատակերգութիւնը:

Այս զաւեշտախաղը ներկայացնելու համար՝ կ'պատրաստէին կատակերգական ծրամար՝ մը կամ կարգացոյց մը, զոր ո՛ր եւ է թուով անձեր կ'գործադրէին իրենց յատուկ խեղկատակ զուարճաբանութեամբն եւ յանպատրաստից ըսած խօսքերով: Այս անձերը կ'պահէին միշտ նոյն անունը, նոյն նկարագիրը (թապիլթը) կամ քնաւորութիւնը, կը հագնէին նոյն միօրինակ զգեստը (գոստիւմ), կ'համապատասխանէին այսինքն գրեթէ նման էին comédie italienneի անունով Թիպար տիպերուն. որք այնքան ծանօթ են Առլըզէն, Բոլիշինէլ, Բանդալոն, եւն. անունով:

Հոն թատերական բեմին վրայ կ'տեսնուէր

միշտ Մագգոսը՝ սապատող, ճաղատ, որկորածէտ եւ վեհերոտ կամ վատասիրտ. Պիպպոն (ուռուցիկ այտեր)՝ մակարոյժ, շատակեր եւ տխմար: Փապպոսը՝ ագահ ու զիրահաւան, միշտ խարէութեան զոհ եղած. Տոսսեմոսը՝ շաղակրատ, խորամանկ եւ տխմարները խաբող: Մանտուգոսը՝ մարդակեր, շատակեր հրէշը որուն լան բերանը զինւած էր երկար ու ցից ակռաներով. խուրիւր խրտուխակ ճիւղը այս էր: Լոմիւսը՝ մարդակեր ճիւղողուէն գերը կ'կոտորէր: — Հոռովայեցի բոլոր տղաները հոգի կուտաին խաղալու համար Աղելլաները, որոնց լիտի ու ծիծաղելի գերերու շատ վարժուած էին եւ կրնային շատ յեղողութեամբ կատարել անոնց գերերը, առանց իրենց անպատուութիւն համարելու, ոչ ալ իրենց քաղաքացիական իրաւունքը կորսնցնելու: Հիմիւս Աղելլաները քիօզէկներն են:

Երգօտը՝ այսինքն Ելքը, վերջաբաժնը, Ողիլլաներու տեսակէն ծիծաղաշարժ փոքրիկ մաս մ'էր, զոր կ'խաղային Հոռովայեցի տղաները թատրոնին բեմին վրայ գուսաներգական ներկայացումներէն վերջը, այս փոքրիկ կատակերգական արարուածով կ'վերջանար տեսարանը:

Լատինական արձակին առաջին յիշատակարանները տուպ անգրէր են, այս տեսակէն Սկիպիոնեանց վերաբերեալները մասնաւորապէս նշանակելի են. վերտաւութիւնները՝ Տուղիոսի նաւ-յաղթանակի կճեայ սիւնին վրայ քանդակած կամ փորագրուած կը համարուէր Բ. Բ. է առաջ՝ մինչեւ 261 թուականը. մէկ քանի դամբանական ներքողներ կամ ճառեր ալ պահուած են, սակայն պատմիչներ զայն այլափոխած են. յաղթական տախտակներ, սիբիլեան գրքեր, լիմոնեանց գրքեր, քրմապետներու գրքեր եւ Մագիստրոսներու գրքեր:

Քանի մը օրինաց ալ բնագրերու Այս յիշատակարաններէն շատերը կորսուած են այսօր:

Մեծ տարեգրութիւններն եղան հոռովաձեւական պատմութեան առաջին աղբերակունքը: Ամէն մէկ տարի՝ վեհապետ — դենպետը կ'արձանագրէր ձերմակ տախտակի մը վրայ կարեւոր գէպքերն ու իրողութիւնները, յետոյ անոնց առանձին հաւաքածուն կ'արձանագրէին մեծ տարեգրքեր:

Պապիրիոսի ձեռք հաւաքուած արքայական օրէքները (պապիրիական իրաւունք) երկուտասան տախտակներու օրէնքներովն հանդերձ կ'կազմէին հոռովաձեւական օրէնսդրութեան առաջին տարերքը կամ սկզբունքը. որ այնքան հոշակաւոր լինելու նախասահմանուած էր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

Մ Ո Ւ Տ Ք Ը

Մանկավարժութեան Պատմութիւնը՝ Դաս-տիարակութիւն կամ Հասարակաց Կրթութիւն կոչուած գիտութիւնն ու արուեստը ծագկեցնելու համար, սկիզբէն ցարդ՝ եղած ջանքերուն յիշատակութիւնն ու բովանդակութիւնն է, եւ իրեն առարկայ ունի նախ նոյն ինքն մանկավարժութիւնը, որուն օգտին ու զարգացմանը կ'ծառայէ:

Մանկավարժութիւն ըսելով կ'հասկնանք այն գիտութիւնը՝ որով իմացական եւ բարոյական կարողութիւնները մշակելով կ'կրթեն, կ'կազմեն մարդը, եւ զայն կ'հասցնեն այն հասուն վիճակին, յորում կարող կ'լինի ապրած միջավայրին մէջ վայելած իրաւունքներն օգտակարապէս գործածել եւ ունեցած պարտքերը լիովին կատարել, լաւագոյն կեանքը վարելով առաքինաւալու, երջանիկ ապրելու համար:

Սոյն պատմութեան ընթացքին մէջ կարգաւ պիտի տեսնենք թէ՛ հին, միջին, նոր կամ ժամանակակից դարերու մէջ, գլխաւոր մանկավարժներ կամ դպրոցի մարդեր, գիտուններ, իմաստասէրներ ինչ ջանքեր ըրած, ինչ գաղափարներ յղացած, ինչ վարդապետութիւններ ու սկզբունքներ մատենագրած, ինչ մէթոտներ ու եղանակներ յօրինած, ուսանողաց կարգապահութեան յատուկ ինչ հրահանգներ ձեւած, կրթական ինչ յայտագիրներ ծրագրած եւ դպրոցական ինչ կազմակերպութիւններ ունեցած են, եւ թէ անոնցմով ինչ զարգացումներ կամ յետադիմումներ, ինչ օգտակար կամ վնասակար արդիւնքներ ու հետեւանքներ արտադրած են, մասնաւորապէս՝ անհատին, եւ ընդհանրապէս՝ մարդկային ընկերութեան նկատմամբ:

Այս տեսակէտներէն առաջնորդուած՝ պիտի ուսումնասիրուին թէ՛ այն կրթական վարդապետութիւններ որոնք կ'վերաբերին այս կամ այն ինչ պատմական շրջանին. եւ թէ՛ անոնք՝ որք այս կամ այն կրթական հեղինակին ու ժողովուրդին յատուկ են:

Մարդ, որ աստիճան իմացական զերազանցութեամբ ալ օժտուած լինի, միշտ իր

ժամանակին մարդն է եւ անոր ազդեցութեանց ենթակայ:

Մանկավարժը չէին կրնար այս հոգեբանական օրէնքին առջեւ բացառիկ դաս մը կազմել:

Հնգիկ մանկան ու մարդուն միտքը չի նող Պրահման կամ Պուտտան. Դեդին ցեղին (Զին) մեծ դաստիարակը Կոնփիւկէոս, Պարսից կամ Մարաց Զրադաշտը, Բաղդէացուց ուսուցիչ Օհաննէսը, Եգիպտացուց Մեծրայիմը, Կադմոս, Լիկուրգոս, Սոդոն, Մովսէս, Յիսուս, այս կամ այն Մարգարէն թէ Առաքեալը, միշտ իրենց ատեն տիրող սկզբանց ու վարդապետութեանց ներկայացուցիչն ու վերանորոգիչն հանգիսացած են: Ռապլէն ու Մոնդէյնը ԺԶ դարու խօթանիչն ունին իրենց մանկավարժական մատենագրութեանց մէջ: Ֆէնէլոն եւ Ռուսօ ԺԷրդ եւ ԺԸրդ դարերը կ'ըսեն իրենց դաստիարակութեան մատենաներուն մէջ, ինչպէս Բէսպալոնցին, Ֆրոպէլ, Սքէնսէր եւ այլք իրենցը՝ իրենց գործոց ու դրութեանց մէջ:

Այս ժողովրդամարդ ու մանկավարժ վարդապետներուն կրթական դաւանութիւններն ու քարոզած դաստիարակութեան հանգանակը ներշնչուած են ու կախում ունին նաեւ իրենց ստացած բարոյական ու փիլիսոփայական դաւանութիւններէն՝ իրենց ծծած սկզբունքներէն, եւ երբեմն ալ իրենց վարած կենցաղէն կամ ապրիլու կերպէն: Հետեւապէս Մանկավարժախօս Մատենագրին մէջ՝ նկատողութեան կ'առնուին փիլիսոփան, բարոյախօսն եւ մարդն առանձին անհատապէս իրաւամբ կ'յաւելու Պ. Բ. Վէնսան, որ հըմտօրէն ուսումնասիրած եւ համառօտած է հին թէ նոր բոլոր մանկավարժաբան իմաստասիրաց սկզբունքները, գաղափարներն, անոնց կրթական դրութիւններն իւր Պատմութիւնը Մանկավարժութեան անուն հմտալից գրքին մէջ, որուն համաձայն՝ եւ մենք մեր ընթերցողաց պիտի հաղորդենք Դաստիարակութեան Պատմութիւնը, զոր մեր Հեղինակն ալ քաղած է Մանկավարժութեան Բառարանէն:

Նոյն պատմական ընթացքին մէջ ծրագրուած Մանկավարժագէտ հեղինակաց գործերը պիտի վերլուծուին, քննելով անոնցմէ իւրաքանչիւրին կրթական կարծիքները, սկզբունքներն ու վարդապետութիւններն ընդ-

հանուր տեսակետով, եւ ի վեր պիտի հանուին ինչ որ հեղինակները գրած ու աւանդած են ֆիզիզական, իմացական ու բարոյական դաստիարակութեան նկատմամբ. պիտի նշանակուին ուսուցման այն մէթոտները զորս նախընտրած են, դպրոցական կարգապահութեան հրահանգներն ու կանոններն որոնց հպատակեցնել կ'ուզէին ուսանողները, եւ վարժարանական այն ծրագիրները զորս սահմանադրած ու առաջարկած են:

Նմանապէս՝ որոշակի կերպով պիտի ճշգրտի թէ՛ պատմական մէջ մի շրջանի դաստիարակութիւնն ու հասարակաց կրթութիւնն ստացած ու հասած այլ եւ այլ աստիճաններուն մէջ, ինչ որ կ'իշխէր, եւ ո՞րքան առաջդիմումներ իրագործուած են. նշանակելով հանդերձ ու ճշդելով միանգամայն՝ կարելի եղածին չափ, այն արդար բաժինը որ կընծայուի թէ պատմական մէջ մի շրջանի եւ թէ նոյն շրջանի մէջ ապրող անձները մանկավարժաբան հեղինակի, խորհողի կամ ո՛ր եւ իցէ կրթական ու դպրոցաւէր մարդոյ:

Թէեւ Մանկավարժութեան պատմութիւնն իւր շարունակութեան մէջ ընթերցողները պիտի տեսնեն թէ՛ ինչ որ այսօր — երէկ ալ, տակաւին վաղն ալ — մանկավարժական նորութիւններ կը կոչենք ու պիտի կոչենք, արդէն անոնցմէ չատերը հիներէն մտածուած են: Նորերն յաճախ իրենց նախորդաց կրթական գաղափարները, մէթոտներն ընդլայնելով՝ բարեփոխելով, վերանորոգելով, ինչ ինչ բարւոքումներ, — երբեմն ալ՝ զանոնք փոխանակ բարելաւելու, ալ՝ աւելի յոռեղջելով, տարբեր գոյնի վերածելով, իբրեւ նոր դրութիւն, առաջ քշած են: Թէեւ անուրանալի է թէ մեծամեծ առաջդիմումներուն ռահվիրայ ու պատճառ հանդիսացած են նոր ընկերական գիտութեանց ու հմտութեանց շնորհիւ, հետզհետէ նորանոր մանկավարժաբանք: Այսու հանդերձ՝ հիները միշտ կ'իշխեն թէ իրենք եղած են նորերուն վարպետներն ու ուսուցիչները, ինչպէս հայրերն ու մայրեր ծնողքն են իրենց զաւակաց:

Մանկավարժութեան պատմութիւնն ընդհանրապէս կ'սկսի այն Ազգերէն որոնք ունին իրենց որոշ պատմութիւնը կրթական գործոց մէջ, եւ հետեւապէս, Պ. Վենսանի ընդունած սկզբան համաձայն, կ'սկսինք Հելեն-

ներէն, Հռոմայեցիներէն, Երրայեցիներէն, Քրիստոնէութենէն եւ կ'շարունակենք մինչեւ մեր օրերը, ուր՝ բազմաութեամբ հիներուն, անհամեմատելի զարգացումներ իրագործուած են դաստիարակութեան՝ այն է մանուկը կրթելու, մարդը կազմելու գիտութեան ու արհեստին մէջ:

Անուրանալի է նաեւ թէ Յոյնք իրենց քերականը կ'սորվին Փիւնիկեցիներէն, ինչպէս իրենց փիլիսոփաներն ու պատմագիրները Եգիպտոսի Քուրմերէն եւ Մեհենական զրպրոցներէն կ'քաղեն իրենց հմտութիւնը: Կեկրոպսը Նեզոսի հովտէն կ'բերէ Թաղէսի, Պիւթագորայ, Սոկրատայ, Պլատոնի, Արիստոտէլի փիլիսոփայութիւնը, Պեղասպեանք ալ Հնդկաստանէն կ'բերեն հոն իրենցը: Թէ յայտնի է նաեւ որ Մովսէս Փարաւոններու ապարանքը սնաւ, Քրմաց դպրոցներն ուսու, եւ «լի էր ամենայն գիտութեամբ Եգիպտացւոց»: Դանիէլ Քաղզէացւոց կամ Բաբելացւոց Արքունիքը մեծցաւ ու դաստիարակեցաւ Աքրահամու, Յովսեփայ, Յակոբ Նահապետի, Մովսէսի, Յոյն իմաստասիրաց նման՝ Յիսուս ալ այցելեց եւ քնակեցաւ Եգիպտոս: «Եգիպտոսէ կոչեցից զորդի իմ»:

Ըսել կ'ուզենք թէ մարդը կրթելու, զարգացնելու մենաշնորհ մի միայն այս կամ այն ազգին, այս կամ այն հեղինակին, այս կամ այն դարուն, կրօնքին, կամ իմաստասիրութեան մենավաճառն ու գործն եղած է: Մարդիկ ինչպէս միեւնոյն մարդոց շարունակութիւնն են, նոյնպէս մէջ մի մարդոց մտքերն ալ մարդկային ինդիանուր միտքին շարունակութիւնն ու անոր ամբողջացուցիչ մասերն ու կոտորակներն են: Ի՞նչ կրիմայի, ո՞ր միջէօրէականի տակ, ո՞ր լերան քով, ո՞ր ծովու, գետի մօտ, ո՞ր դաշտի կամ անապատի մէջ ալ քնակի մարդ, ո՞ր Աստուածը կամ Աստուածուհին, ո՞ր զիւցազնը կամ Նահապետն իրեն նախահայր ունեցած լինի, եւ ինչ վիճակ կամ անուն կրէ: Մէկ խօսքով՝ ինչպէս չառաւիղներ ո՛ւր ուրեք ալ ճառագայթեն միեւնոյն արեւուն լոյսերն են, նոյնպէս ալ մարդկային լուսարար միտքերը ուր ուրեք վառին ու վառեն, միեւնոյն Արարչին պարգեւած իմաստութեան ցոլացումներն են: Տաղանդը, հանճարը ո՛չ հայրենիք, ո՛չ սեռ ունի: Մահկանացուներն ամեն՝ Ազգ

թէ մարդ, միեւնոյն աղբիւրին ակունքէն բոգ-
խած, միեւնոյն հոսանքին առուններն ու կո-
հակներն են, կ'երթան ուր ուրեմն ընկղմիլ ու
միանալ հասարակաց ովկիանոսին մէջ: Բա-
ցարձակ գիտութիւնն ու յիսկատար հեղի-
նակութիւնը մի միայն Աստուծոյ յատուկ է,
մարդոց գիտութիւնն ու հեղինակութիւնը
յարարերական, բաղդատական եւ ընդ միշտ
կատարելագործելի է: Սակայն ինչպէս ծովուն
մէջ՝ ամեն երկրէ հոսած գետի կոհակը՝ եւ
ամեն տեղ ծածկող երկնքէն կաթած անձ-
րեւի կայլակն ունի իր բաժինը ծովուն մէջ,
նոյնպէս եւ ամեն ազգ ու մտածող մարդ
ունի իր բաժինը, մեծ թէ փոքր, ընդհանուր
իմաստութեան, ու զարգացման մէջ մի սեռի
ծագման, շարժման ու շարունակութեան մէջ:
Մեր Ս. Մեսրոպ Հայրապետը Հայոց գրերը
կատարելագործելով, Աղուանից եւ Վրաց
գրերն ալ յօրինելով, Մարդկային իմացական
ընդհանուր բարգաւաճման ու մանկավար-
ժութեան ոչ ինչ նուազ օգնեց քան Կաթմոս,
որ Յունաց շնորհեց Փիւնիկիան ալբէնգիւր:

Նմանապէս Ս. Լուսաւորիչ, Տրդատ, Վը-
ռամչապուհ, Ս. Սահակ, Մեծն Ներսէս, եւ ա-
սոնց նման Սաղաւարտի ու Գալիստի տէր Ա-
րանց այր եւ Հարանց Հայր՝ մեր ոստանիկ
նախնիք, վարժարաններ հաստատելով վան-
քերու եւ Հայ ամեն Ստաններու մէջ Սխողոբա-
լից արուքայրը հեգել տալով, անոնց մտաց
հերկն հերկելով, անոնց իմացական հէնքն հի-
նելով, ոչ նուազ Մանկավարժական արդիւ-
նաւոր գրերը կատարեցին, եւ մեր այսօրու-
ան ունեցած ազգային մտաւոր զարգացման
օգնած են իրենց գրական երկերովը, Վաղար-
շակ իր օրէնսդրութեամբ ոչինչ ընդհատ քան
Հռովմէական կայսրներ նպաստեց մարդկային
քաղաքակրթութեան:

Խորենացին՝ գրեթէ Հայ Հերոդոտ մ'է
ընդհանուր Ազգաց հին պատմութեան հան-
դէպ, եւ յաչա Հնդ-Եւրոպական նոր ու նշա-
նաւոր պատմագիտաց: Որպէս Պրոյերոս՝ (Պա-
րոյր) հին ու նոր ճարտասանութեան զարոյցաց
բեմին վրայ՝ ինչպէս եւ Դաւիթ ԱՆՅԱՂԹ՝ փի-
լիսոփայութեան Ակադեմիայի ու Ճեմարանին
մէջ՝ աստուածաբեալ բանին ու արարչական
մտքին յիշատակելի, անմոռանալի գրօշակիր
ու հրամանատար են ու պիտի մնան: Ընդ-
հանուր մարդկութեան հետ, եւ մենք պիտի
շարունակենք պարծենալ անոնցմով, որպէս

Յոյնք ու Լատինք կ'պարծին Դէմոսթէնով,
Պլատոնով, Արիստոտէլով, Պլատինոսով, Կի-
կերոնով, Սենեկայով: Զի՛ փոյթ թէ մեր բազ-
մատութեան եզրերն համեմատին իրարու
հետ՝ որպէս մէկը բազմապատկ թւոյ մը հետ
բաւ է թէ ընդհանուր շղթային մէջ օղակ
մ'ալ մենք ունիք:

Մանկավարժութեան պատմութիւնն ա՛մ
բողջացնելու համար, հին թէ նոր բոլոր ման-
կավարժական կարեւորագոյն Հեղինակու-
թիւններէ քաղուելով պիտի աւելցունեն նաեւ
այն հատընտիր մասերը կամ հատուածները
միայն, որոնց մէջ ամփոփուած, խտացած
են սեղմօրէն մատենագրին բուն ոգին,
վարդապետութեան բովանդակութիւնը, եւ
որոնք միայն ծառայած ու նպաստած են ա-
ւելի մանկավարժութեան գիտութիւնն ու
արուեստն արդի ծաղկեալ ու նրբացեալ վի-
ճակին հասցնելու, եւ կ'կազմին այժմեան
մշակեալ դաստիարակութեան հիմունքը, ծր-
րագիրը, գարոցական կազմակերպութիւնը,
դասաւանդութեանց եղանակները, ուսուց-
ման նոր ու արդիւնաւոր մէթոտները, ու՛մ-
պէտ ու անմարսելի համարելով անոնցմէ ու-
մանց ամբողջին վերձանումը մեր ընթերցո-
ղաց համար: Նա մանաւանդ այս յաւելուա-
ծոյ քաղուածոյքն ընտրուած, առնուած են
մանկավարժական գիտութիւնը կատարելա-
գործելու համար մտածուած այն հեղինակու-
թիւններէն, որոնք քիչ տարածուած են եւ
չատերէ կարդացուած չեն: Թէեւ մենք ալ
ունինք մեր լուսահոգի Իսէքճեանները, Տիկին
Մատակեանները, ինչպէս գեռ քաջողջ Մա-
մուրեանները եւ Պերպեանները, եւ ա-
նոնց լուսաշաւիղ ընթացից մրցորդները:

Այս կանխաբան բացատրութեամբ, բա-
ւականէն աւելի կ'հասկցունին արդէն Ման-
կավարժութեան Պատմութեան կարեւորու-
թիւնը, անոր հետաքրքրական ու շահագրգիռ
առուելութիւնները: Բանի որ ընթերցողը՝
ոչոյն պատմութեան շնորհիւ, բաց աչքով դի-
տելու չտի մերկօրէն կ'տեսնէ մանուկը մարդ
ընելու, անոր միտքը փթեցնելու կերպերը
ճիշտ այնպէս, ինչպէս օր մը երկրին վրայ, Ա-
րարատի կաւէն Աստուծոյնչովը մարդն ստեղ-
ծելու կերպը տեսն հրատակներն երկնքէն:
Կարի ուշադրութեամբ հետեւինք մանուկնե-
րը դաստիարակելու, մարդ յօրինելու Պատ-
մական գիտութեանը, գիտնալով որ՝ մանու-

կէն է որ օր մը պիտի ծնի ու լինի հայրն ալ, մայրն ալ, կրօնական պետերն ալ, արհեստաւորն ալ, գրագէտն ալ, վարժապետն ալ, բժիշկն ալ, փաստաբանն ալ, բանաստեղծն ալ, գիւտագէտն ալ, որոնք պիտի վարեն Ազգերն ու ժողովուրդները, եւ մեր երջանկութեան կամ ապերջանկութեան պատճառ, միջոց, գործիք եւ գործաւորը պիտի լինին Մանուկէն կ'սկսի մարդկութիւնը, որպէս կուտէ մը կ'սկսի ծառը որ անտառը կ'կազմէ:

Կարգանք ապա մարդ ընելու գիտութեան՝ Մանկավարժութեան-Պատմութիւնը:

Թէ որ աստիճան կարեւոր է, որքան ուրիշ ազգաց նոյնքան եւ առաւելապատիկ Հայոցս համար՝ կարգալ եւ մեծ ուշադրութեամբ կարգալ սոյն պատմութիւնը, բաւական է ուշիմ ընթերցողին դիտել թէ, անոր կարեւորութիւնն զգալու եւ զգացնելու համար՝ Ազգային թէ համազգային մասնով՝ օր նոր՝ մանկավարժական դասագիրք նոր՝ հաստատուող հրատարակութիւններ նոր՝ հազարաւորներով, հարիւրաւորներով կ'ողողեն գրպոցները, գրատունները, ընթերցող Հասարակութեան սուներն ու թանգարանները:

Եւ սակայն ցարդ լոյս տեսած մանկավարժական մականունուած գործերը փաստ մ'աւելի են թէ՛ պէտք ունինք Մանկավարժական խնամեալ ու բազմակողմանի հիտութիւններու, երբ հաշուոյ մէջ գնենք ոս քըննադատելի կէտը նա մանուսանդ թէ՛ աւելի շատ ու շատերն անոնցմէ, որոնք՝ իբր մանկավարժ՝ կ'դասախօսեն, կ'մատենադրեն, պաշտօն կ'ստանձնեն ու կ'վարեն մանուկներ կրթելու, մանկան միտքը ծաղկեցնելու, մարդը կազմելու համար, եւ սակայն դեռ քանինք կրնանք համրել մեր նախաձեռնի մանկավարժներուն մէջ՝ որոնք՝ ներուի մեզ ըսել, իրենց կրթած մանուկէն աւելի իրենք մանկավարժական դասախօսութեանց պէտք ունին: Եւ այս պէտքը լրացնելու համար է որ մեր Ուսումն. Խորհուրդը վարժապետանոց կ'փնտռէ՝ նշանաւոր մանկավարժներու յատուկ Անունները, համրիչ համրելու պէս, չրթունքին վրայ հողովիլը, անոնց անուանի գործերուն՝ այս ինչ կամ այն ինչ Օրաթերթին, Հանգէսին մանկավարժական յօդուածոց, կամ մէկ իմաստուն մանկավարժին խօսակցութեան մէջ, անոր ճառելու ատեն, բերնէն

թռած մէկ պատգամը, առածը, պարբերութիւնը, թութակի պէս թատերական հետեւողութեամբ մը, գոց ընելով, եւ իւր դասին, դասագրքին նշանաւոր յարմարցնելը մանկավարժական հիտութիւն ունենալ չի նշանակեր, կամ մանկավարժ լինելու հափ բաւական յանձնարարական ու վկայական չի համարուիր: Ահա՛ Հանրագիտակ՝ վարժապետանոց մէկ իր այս կարգի յօդուածներովը, եւ բարեկամ խորհրդատու կամ կրկնիչ մէկ, թէ մեր ուսանողաց թէ մեր ուսուցչաց համար՝ Թէեւ անուրանալի է որ՝ այսօր Հայ ուսուցչաց, ուսուցչուհեաց, հրատարակչաց մէջ ունինք աշխատասէրներ, որոնք իրենց համեստ գործերովն իսկ իրաւունք ունին պարծենալու թէ՛ մանկավարժական ուսմանց ծանօթ են, եւ սիրող, սերտող են լուսաւորեալ ազգերու մանկավարժական հեղինակութեանց, ուսումնասիրութեանց, եւ անոնց ոճով, ուղղութեամբ ու ոգով հայերէն աշխատասիրութեանց: Մենք, Հայքս, ինչպէս եւ մեզ նման շատ մը ազգեր, քաղաքակրթութեան, առաջգիմութեան մէն մի ճիւղերու մէջ զարգացեալ ազգերու լուսագոյն եւ ընտրելագոյն օրինակաց, անոնց տիպար ուղղութեան հետեւելու, անոնց գերազանց միտքը, կրթական մեծ ոգին իւրացնել, ազգայնացնել ջանալու ենք: Յոյները՝ որոնք այժմեան Եւրոպայի մտաւոր զարգացման, անոնց գիտութեանց ու արուեստից մայր ու դահեակն եղած են, Եգիպտացիներէն դաս առնել չէին ամաչել: ոչ ալ յաղթական Հռոմը պարտեալ ու գերի Յոյներն իրեն դաստիարակ ու վարպետ ընտրելու համար չէր կարմրեր: ԺՆՐդ դարու դասական հեղինակները, Պէրիկլէսի, Աղէքսանդրի, Օգոստոսի դարերուն դասական հեղինակներն ընդօրինակելէ, անոնց նմանելէ չէին քաշուեր: Իրարու հետեւելով հանգերձ՝ զիրար ընդօրինակելով, իրարու նմանելով, իրենք ալ իրենց կարգին հետեւելի, ընդօրինակելի եւ նմանելի տիպար հեղինակներ կ'անդիսանաին: Մեր ոսկեղէն դարու հեղինակներն ալ օտար հեղինակները թարգմանելով, անոնց հետեւելով մեր մտքին ծնողքն եւ մեր լեզուին հեղինակներն եղան:

Էր եւ մենք ամաչենք լուսաւորեալ ազգաց օրինակներուն հետեւելով, անոնց ճոխ ու բեղմնաւոր մտքերը, մեր մտաց չքաւոր շտեմարանը լեցնելով, մեր հիտութեանց պաշարները բազմապատկելէ, եւ մեր կարգին՝ մենք ալ օր մը այլոց նախաձեռնի եւ ընդօրինակելի տիպար լինելու համար աշխատելէ, ինչպէս, որ թէ՛ անցելոյն թէ՛ ներկային մէջ ապացոյցած ենք մեր այս բնարոյս յատկութիւնները, մէկէ աւելի պարագաներու մէջ, մէկէ աւելի ազգերու մէջ, մէկէ աւելի պատմական շրջաններու մէջ: (Շար.)

ԲԵՍԴԱԼՈՒՑԻ

ԱՌ

ՍԻՐԱԿԱՆ ՍԱՆ ՄԵՐ ԽՈՐԷՆ,

ՏԻԱՐ ՄԻՂԱՆ ԷՍՊԵՐԵԱՆ

ՏԱՂԱՆԴԱՌՐ ՏԵՕՐԷՆ-ՈՒՍՈՒՑԱՍՏԵՏ ԱԶԳ. ՈՐԲԱՆՈՑԻՆ
Ի ՍԵՐԱՍՏԻԱ

Վերջացած դարու առաջին քառորդէն ըսկսեալ արդի մանկավարժներուն մէջ՝ Բես-դալոնցին (1746-1827) եթէ ոչ ամենէն մեծագոյնը՝ կրնանք ըսել թէ ամենէն աւելի հոշակաւորագոյնն է։ Գոմէնիոսի եւ Ռուսօի աշակերտ, առաջնոյն աւելի ճշմարիտ շարունակողը եւ երկրորդին մտածմանց աւելի իմաստուն թարգմանը։ Թերեւս աւելի ճշմարիտ է ըսել թէ՝ ոչ միայն եւ ոչ միւսին աշակերտն է, վասնզի ինքն զօրեղապէս ինքնաբոյս տաղանդ մ'է իր մանկավարժական վարդապետութեանց եւ մտավարժական մէթոդին կողմանէ. եւ եթէ երկու վարպետներուն աշակերտ կ'երեւի, պատճառն այն է թէ՝ ինքն անձամբ իւրովսանն յղացած է ինչ որ անոնց մէջ կ'գտնուի լաւագոյն ու ընտրելագոյն, ի պէտս մանկավարժական բարենորոգմանց։

Առաջնոյն ոչ անդորրութիւնը ոչ ալ պայծառամտութիւնն ունի. ոչ ալ երկրորդին սքանչելի տաղանդը՝ բայց անձնուիրութեան եւ առաքնութեան կողմանէ կ'գերազանցէ Գոմէնիոսը, եւ Ռուսօն աւելի կ'տածէ սէրն արդարութեան ու իրաւանց։

Բայց ինչ որ զինք կ'դասէ առաջին կարգին մէջ ի՛ շարս անոնց որք իրենք զիրենք մանկութեան բարեկրթութեանը նուիրած են,

Իր գործոց ոլտն է այն։ Բեսդալոնցին ինչ որ կ'չղանայ, կ'մտածէ անմիջապէս ի գործ դնէ միանգամայն։ Նոյն իսկ յաճախ իր գործքէն է որ կ'մնին իւր մանկավարժական յղացումները։ Մարդկային ամեն նիւթական ու բարոյական տառապանաց կենթարկի ու կը տոկայ։ Համադրուած է թէ՛ իր միտքն ու սիրտը մշակելովը միմիայն պիտի կարողանայ իւր տառապանքները նուազեցնել։ Անմիջապէս գործին կ'ձեռնարկէ, առանց ճշտօրէն գիտնալու թէ իր նպատակին պիտի հասնի։ Կ'երթայ, կ'երթայ միշտ բաղխելով հազար

ու մէկ դժուարութեանց։ Ո՛չ յոգնիլ, ո՛չ վրհատիլ գիտէ. իւր մէն մի անկումն ու ձախողանքն իր բարձրացման նոր սանդուխ եւ նոր յաջողութեան մը դափնին կ'լինին. իւր մէն մի սխալանքն իրեն համար նորանոր ճշմարտութեանց թափանցելու նոր խթան ու նոր դաս մը կ'լինի, որով տակաւ խռտաւ կ'յօրինէ, կ'կազմակերպէ այն նշանաւոր գործը որ թողած է. ոչ ոք իրմէն աւելի մտքէն անցածն անմիջապէս գործադրելու գերազանցութիւնն ունեցած է։ Կ'ուզէ հիմնել նախնական դպրոցը, աղքատաց դպրոցը, եւ կ'հիմնէ, առանց դանկ մը հասոյթի, նման Վէնսան Տըլարոյի, որ մարդասիրութիւնը հաստատութեան վերածեց, հիմնելով (1576-1660) Գրուքետի Բոյքերու (Soeurs de la charité) եւ lazariste կոչուած Ղազարոսեան կրօնաւորաց աղքատախնամ ու հիւանդադարման միաբանութիւնները, որուն անհունապատիկ արդեանց շնորհիւ մարդկութիւնն այսօր կ'պարտի իւր անթիւ տառապանաց բարձունքն ու արթնումը։ Բեսդալոնցի Մարդասիրութեան կողմանէ կ'համեմատի Գթութեան Բերց եւ Ղազարեան ուխտերու անմահ հեղինակ եւ երիցս սրբազան կրօնականին, որ Յիսուսեան կամ Լոյսոյցի հիմնարկութենէն մարդկային ընդհանուր սեռին հասած չարեաց ու աղէտից օպիդանին եղաւ եւ ամոր միակ զեղթափը։ Զի անոր շնորհիւն էր որ ընկեցիկ տղաքները (enfants trouvés) բարերար ծնողքներ, հայր, մայր, դպրոց, կրթութիւն, գործ, ապագայ եւ ընկերութեան մէջ պատուաբեր դեր ու դիրք ունեցան եւ կ'ունենան դեռ աշխարհի չորս կողմերը։[*]

[*]—Աստուած իմ ո՛ւր էր թէ մեզ ալ տայիր, մեր կրօնականաց մէջէն ալ յարուցանէիր, որպէս երբեմն ժայռերէն Արարհամու թոռներ, եւ անապատէն Ռովսէսներ կ'յարուցանէիր, եւ կամ կաթոլիկ կղերականներէն զրկէիր մեզ լոկ նոր Վէնսաններ, որոց առաւել քան երբեք պէտք ունինք որբանոցներու այս նոր Արշակաւանին մէջ, ուր շատ մը կրօնականներ վանքերու նկուղներուն կամ իրենց տան անկիւններն իրենց շուքին ու շուքորդներուն հետ կենակից կամ մեռելակից են. մինչդեռ իրենց ներկայութեան ու աջակցութեանց կարօտ այնքան

Բեսդալոնցիին եւ Վէնսան, երկուքն ալ միեւնոյն առաքինութեան զգալմամբն ու մտածմամբ, մարդկութեան սիրովը, սոգորուած են: Անոնք չեն վերաբերիր եւ ոչ մէկ զարոցի: Ամեն զարոցէ վեր ու շատ գեր ի վեր են: Անոնց սէրը չէ՛, այն՝ որ կ'կարեկցի, այլ այն սէրը՝ որ կ'գործէ, եւ Բեսդալոնցիին կ'հայթաթէ, կ'ապահովէ բախտի անժառանգ. ներուն, լքեալներուն մաքի ճարակը, որպէս Վէնսան երաշխաւորած էր անոնց մարմնոյն ճարակը: Բեսդալոնցի ճարտարախօս մտաւնադիր մը չէ. եւ իւր մտածումներն այնքան պայծառօրէն չեն բացատրւած իւր խրթնամիտ ու մթին գրութեան մէջ. ուր կ'պակսին գրադրատական կանոնագրիտութիւնն ու պերճաւան հմտութիւնը:

Բեսդալոնցիին լաւ ճանչնալու համար պէտք է զայն տեսնել իր աշակերտաց մէջ, ուսումնասիրել, սերտել զայն իրեն հաւատարիմ թարգման, աջակիցն ու շարունակորդն եղող աշակերտացը գործոցն ու կենացը մէջ: Հոսլոկ կ'արձանագրենք, իր հակիրճ կենսագրութեան հետ, նաեւ իր այն սկզբունքները՝ որոնք տալիս են զինքն արդի արդիւնաւետ մանկավարժական մէթոտներն ու վարդապետութիւններն յորինելու մեծ գործին:

Հանրի Բեսդալոնցի ծնած է Յիւրիխ, 1746 Յունւար 12. իւր հայրը ծագմամբ բրնիկ Իտալացի. արհեստովն ալ վիրարոյթ, երիտասարդ հասակին մէջ մեռաւ, եւ Բես-

իսեղձեր կան գաւառաց մէջ: Արդեօք Պոլսոյ մէջ հանգստապատու ծամող մեր կրօնականները Աւետարանին աջն հովիւներն են որք իրենց հօտին ցօր լեռը ձգած եւ մէկ մոլորեալը փնտռելու եկած թուխ նստեր են Պոլիս: Մեր կրօնականներն ամուսնալուծման դէմ են, սակայն ամուսնալուծման էն խոշոր ու աչք պատուող օրինակն իրենք կուտան: Ըստ եկեղեցական խորհրդոց ու կարգաց՝ ուխտեալ, պատկեալ են, Եպիսկոպոս կամ վարդապետ, ձեռնադրւած կամ քահանայ օժտած, եկեղեցւոյն, դիւղին, քաղաքին, գաւառին ու վանքին վրայ: Էր հետը պատկեալ իրենց եկեղեցիէն թողած կ'քաշուին ու իրենց այրի հոտը երեսի վրայ կը ձգեն:

տալոնցիին կրթութեամբ այրի մօրը խնամօք: Անճարակ տղայ մ'էր, իր անձին քիչ խնամածու, անհոգ, թափթիւած, տարտղնած, ինչ որ շատ մը հօրէ որը մանուկներու յատուկ է. սակայն ծայր աստիճան զգայուն էր եւ միշտ իր նեղութիւնը մոռնալով տառապեալին օգնութեան հասնելու բնական բերում մ'ունէր:

Հակառակ իր այս անճարակ ու անփոյթ բնաւորութեան, հակառակ իւր երազական ու ցրուամիտ հանգամանաց, ոչ նուազ նշանաւոր յատկութիւններով օժտեալ տաղանդաւոր աշակերտ մը հանդիսացաւ Բեսդալոնցիին: Շատ կանուխէն սկսաւ ապացուցանել պարտաճանչութեան սէրը եւ աղքատաց ու հարստահարելոց հաստատամիտ ու կորովակամ կուսակից լինելը:

Ատեն մը կրօնական լինելու մտադիր եղաւ, բայց չի յաջողեցաւ, ուղեց դիւանագիտական ասպարէզը մտնել ու պետական մարդ ըլլալ. ասոր համար սկսաւ իրաւագիտական ուսմամբ պարապիլ: Զի յարատեւեց իր այս մտադրութեան մէջ ալ: Միտքն եկաւ սա գաղափարը թէ՛ ժողովուրդին բոլոր թըլուառութեանց աղբիւրը տգիտութիւնն է, եւ ուխտեց ուսուցիչ ըլլալ: Գտած էր իր կոչումը, եւ, այս ատենէն սկսեալ՝ ոչ ինչ չի պիտի ջնկրկէ զինքն իր նպատակէն. որուն հասնելու համար չի պիտի կասեցնեն զինք ոչ բախտի փուլը, ոչ թշուառութիւն, ոչ մի տեսակ զրկողութիւն. պիտի մարտէ մարդոց ամեն կարգի անիրաւութիւնները. բայց բան մը կարող չի պիտի լինի զինք վհատեցնել, չի պիտի դադրի գործելէ, մինչեւ որ մահն իր կեանքին վերջ տայ: (Շար.)



ՖՐԵՕՊԵԼ

ԵՒ

ՍԱՆԿԱՊԱՐՏԵՂԸ

ԱՌ ԿԱՐԻՆԵՐՈՅՐ ՏԻԿԻՆ. Մ. ԷՍՊԵՐ
ի Աեբաստիա

Գերմանիայի հին թագաւորութեան թիւ-
րէնժ նոտանգին Օպերվէսպախ քաղաքը ժը-
նած է Յրէտպէլ. 1782 Ապրիլ 21: Մայրը կա-
նուխէն մեռաւ: Հայրն ու մօրեղբայրը՝ եր-
կուքն ալ ջերմեռանդ բողոքական Պատուե-
լիններ, կրթեցին զինք մինչեւ իր 15 ամեայ
տարիք. հասակ՝ յորում գեռ միայն թուաբա-
նութիւն, աշխարհագրութիւն եւ քիչ մ'ալ
լատիներէն գիտէր: Իւր կենսագիրներ կը
պատմեն թէ եղական, ձախաւեր, երկչոտ,
միտտիգական ձկտումներով, եթերային հովե-
րով օրօրուն, անդիականէն աւելի անդիա-
կանին երազներովն՝ ապրող տղայ մը:

Ոչ մի կրթական մարդ չունեցած է ար-
դարեւ կեանք մ'աւելի խռովայոյզ, ո'չ ալ
աւելի աստանդական, եւ ոչ ոք քան զինք
աւելի կ'իշխեցնէ Բեադալոնդին, որուն հա-
մոզեալ, հաւատացեալ աշակերտը մնաց
ց'հուսկ չունչ կեանքին, առանձին ինքնա-
գլուխ դպրոցի պետ եղած ժամանակն իսկ
իւր տարօրինակ նկարագրին նման ալ այ-
լանդակ դաստիարակութիւն մ'ստացաւ, եւ
իւր այս կրկին ազդեցութեան վերագրելի է
անշուշտ ինչ որ իւր մէթոն երբեմն ունի իր
մէջ ճշմարտապէս արտակերպոն (excentrique)
այսինքն ընկալեալ սովորութեանց հակառակ
մտածում կամ կարծիք:

Տասնեւհինգամեան, աշակերտ մտաւ ան-
տառապահի մը քով, սովորելու համար ծառ
մշակել, երկրաչափութիւն եւ անդաշտիու-
թիւն: Երկու տարի միայնակ կ'աշխատի,
երկրաչափութեան ու բուսաբանութեան պա-
րագելով հանդերձ:

1799ին. ուսանող էր Իէնայի Համալսա-
րանին մէջ, ուր կ'մնայ երկու տարի. — Իէնայի
Ալմանեախ այն քաղաքներէն մին է, որուն
մօտ Պոնաբարդ Բրուսիացւոց յաղթեց 1806-
ին: Իէնա անունով Փարիզի մէջ. կամուրջ
մ'ալ կայ որ champs-de-marsը seine գետին
աջ եզերքին կ'կցորդէ-1808-1810 չինուած:

Իէնայի յաղթութեան յիշատակը մշտնջենա-
ւորելու համար, Երբ վաղերւօր մէջ Պոնա-
բարդի յաղթական փառքին արեւը մարը
մտնել կ'երթար Ա. Հեղինէ կղզին. ուր ընդ-
հանրապէս Մեծն Բրիտանիա օդափոխութեան
կ'յղէ իրեն դէմ եղջիւր ամբարձող նշանաւոր
ռազմավարներն անոնց տալու համար իմաս-
տասիրական մեծ գասը: Ասով հասկցնել կու-
ղէ թէ՛ ովկիանոսէն սորվեցէք կատարել,
իրփրիւ, բայց ձեր սահմանէն դուրս չենել
ալ ձեր եզերքի կակուղ աւաղին վրա ցա-
նել ձեր կատաղութեան փրփուրները. թէ
Անգղիան ժայռն է անխարխար, որուն դէմ
բաղնողն ո'վ որ ալ լինի, նախասահմանած
է փշրուիլ, Պոնաբարդէն սկսեալ մինչեւ Քը-
րոնժէ եւ անոնց նմանները: — Պլլիսէր Բրու-
սիայի զօրապետը 1814ին՝ Նաբուլէոնեան
զօրութիւնը ջախջախող միացեալ բանակովը
Փարիզ Զմտաւ յաղթական, ուսկից կործանել
այդ կամուրջը, որ կ'իշխեցնէր Բրուսիական
պարտութիւնը: Լուգովիկոս ԺԼԻԳ արգիլեց
1870ին Բրուսիայիք այդ Իէնայի պարտու-
թեան վրէժն էր զոր լուծեցին Սէտանի մէջ
Գ. Նաբուլէոնէն: —

Յրէտպէլն այդ պատմական քաղաքին մէջ
ալ երկու տարի ուսանող եղաւ 1799:

1801էն 1802, կալուածի մը դեր-անօրէնի
պաշտօնը կ'ստանձնէ. յետոյ երեք տարուոյ
չափ, հետզհետէ անտառավաճառի գործա-
կատար, եւ պաւերիական ատաղձատան մէջ
պաշտօնեայ, երեւելի կալուածատիրով մը
քով քարտուղար կ'կարգուի, միշտ յամառ
աշխատող, անխոնջ ընթերցող, իւր կրթու-
թիւնը կատարելագործելու համար ամեն
չարքաչ կեանք վարող: 1805. ճարտարապետ
ըլլալ կ'ուղէ. եւ վերջապէս՝ Կրաւնէր Ման-
կավարժին կրթական հաստատութեան մէջ
վարժապետ կ'կարգուի ի՛ Փրանգֆորթ:

Այս թուականին մէջ կ'հաւատայ թէ գը-
տած է իր կոչում, որպէս կ'վկայէ առ իւր
եղբայրն ուղղած հետեւալ նամակը:

«Չարմանալի բան, ո՛րքան հաճոյալի են
զբաղումներս:

Առաջին դասը զոր աւանդեցի, ինձ այն-
պէս թուեցաւ թէ, մինչեւ հիմայ ուրիշ գոր-
ծով երբէք զբաղած չեմ, եւ թէ ծնած եմ
միայն այս գործին համար. . . . Երբ դասերս
կ'աւանդեմ, ինքզինքս կ'գտնեմ, սովորական
բացատրութիւնս գործածելով, բուն իսկ իմ
տարրիս մէջ:»

Բեադալոնցիի հոչակն այն ատեն իր գէ-
նիթն հասած էր: Յրէօպէլ այնքան կ'սիրէր
իւր ներկայ պաշտօնը որ անկարելի էր հռ-
չակաւոր վարպետը տեսնելու, անոր դասա-
խօսութեանց ունկնդիր լինելու չի փութալ:
Յրանքֆորթէն հետիտն գնաց մինչեւ ի վէր-
տոն, ուր տան եւ հինգ օրի չափ Բեադա-
լոնցիի մանկավարժական դասախօսութեանց
հետեւեցաւ: Ի վերտոնէն Յրանքֆորթ վե-
րադարձաւ իսանդալաու հիացմամբ գիտուն:
Քիչ ժամանակէն յետոյ՝ հրաժարեցաւ կրաւ-
նէրի քովէն, երեք երիտասարդաց մասնա-
ւոր դասախօսութեան պաշտօնն ստանձնելու
համար. եւ անոնց հետ ի միասին հաստատ-
ւեցաւ Բեադալոնցիի դասախօսած տեղը,
Ի վէրտոնի մէջ, 1808-1810:

Կրկին Յրանքֆորթ վերադառնալէն տարի
մը յետոյ՝ իւր ուսումը ամբողջացնել խորհե-
ցաւ. եւ կէօթէնկի մէջ բնակութիւն հաս-
տատեց Համալսարանի դասուց հետեւելու
համար: Այս տեղն ալ թողուց 1812. եւ Պէր-
լին եկաւ հոն շարունակելու, աւարտելու
համար իւր ուսումնը: Հոս ալ գալուն պէս,
1813-1814ին՝ ընդգէմ Պոնաբարդի միացեալ
դաշնակից զօրաց բանակին կամաւոր գրե-
ցաւ: Լանթթալի եւ Միտտէնտորֆի հետ
որոնք իրեն առաջին աշակերտերն ու իրեն
ամենէն աւելի գործօն աշխատակիցները պի-
տի լինէին: Կրնանք ըսել թէ Միտտէնտորֆ
Յրօպէլի համար այնքան օգտամատոյց եղաւ
որքան Քրէօդի՝ Բեադալոնցիին համար:

Պատերազմէն վերջը՝ Պերլինի հանքաբա-
նական թանգարանին օգնական պաշտօնեայ
կ'կարգուի. հոն կ'դասաւորէ քարերն ու բիւ-
րեղները, խնամօք կ'հսկէ անոնց հաւաքա-
ծոներուն լաւագոյն պահպանութեանը. մի-
եւնոյն ատեն կ'շարունակէ բնական գիտու-
թեանց, լեզուարանութեան եւ փիլիսոփա-
յութեան ուսումններու մշակումը:

Երեք տարի յարատեւեց մնալ սոյն պաշ-
տօնին մէջ, եւ միաքը դրաւ ինքն ալ Բէս-
դալոնցիի նման ուսուցիչ մը, մանկավարժ
մ'ըլլալ: 1816ին իրագործեց իւր ծրագիրը:
Թողուց Պէրլինը նոյն իսկ այն պահուն՝ երբ
Ստոգոլմի մէջ հանքաբանութեան ուսուցչի
բեմն իրեն ընծայել առաջարկած էին, եւ
1817ին, հաստատեց Քիլհաուի մէջ Դաստիա-
րակութեան գերմանական ընդհանուր հաստա-
տութիւնը (l'institut général allemand d'éduca-

tion), Լանթթալի եւ Միտտէնտորֆի ընկե-
րակցութեամբ: Քիլհաուի մէջ հաստատուած
ատեն գրեց Մարդուն դաստիարակութիւնը
անուն իր գիրքը:

Յրօպէլ՝ 1816էն 1829, Քիլհաուի իւր հաս-
տատութիւնը վարեց կէս յաջող կէս ձախող
ընթացքով մը, բայց Բեադալոնցիին չափ լա-
ւագոյն կերպով հմուտ ու փորձառու չէր
իւր հաստատութեան վերաբերեալ վարչա-
կան, տնտեսական գործերուն, հետեւապէս
հիմնած հաստատութիւնն ալ տակաւ առ
տակաւ ինկաւ: Պարտաւորեցաւ զայն ալ
թողուլ: 1831ին, Զուիցերիա մեկնեցաւ, յանձ-
նելով իւր տունն իր բարեկամաց հոգածու-
թեան: 1831ին Վարզվոլի մէջ, մեծ դպրոց
մը հաստատելու անօգուտ փորձէն յետոյ,
Վիլիզաուի մէջ կ'հաստատէ թաղային դպրոց
մը, 1833, Հոն մնաց մինչեւ 1835: Այս թու-
ակնին էր որ հրաւիրեցաւ ի՝ Պիւրկտօֆ,
վարելու համար որքանոց մը: Այս ատենին
մէջ ծնաւ իր մէջ Գոմէնիտսի մտածումը իրա-
գործելու յարմար գաղափարը: Բեադալոնցիին
սիրելուն չափ Գոմէնիտսին ալ ջերմ համակիր
էր Յրօպէլ, գաղափարն էր տղայոց նախնական
մանկութեան համար՝ մասնաւոր դաստիարա-
կութիւն մ'ստեղծել: Այս գաղափարն այլեւս
Յրօպէլի ուղեղն ամբողջ գրաւած, չի պիտի
թողու զինք՝ անով տոգորւած, վարակեալ
է: Տարօրինակ գաղափարներ գլխուն մէջ կը
լիստան, եւ ամենէն աւելի արտառուց ու եղա-
ջերուաքաղական ծրագիրները կը յղանայ,
կ'որոճայ ըզեղին մէջ:

Յրօպէլը տարօրինակ ծրագիրներէն մէկն
ալ, Ամերիկա երթալ էր, հիմնելու համարնոր
քաղաք մը, ուր պիտի իրականացնէ իւր
մարդասիրական յաբօփիները:

1836ին, պարզեց իւր խորհրդին յատակա-
գիծը գրուածքի մը մէջ, որուն տիտղոս կու-
տայ սա այլանդակ վերնագիրը. «1836 տա-
րին կը պահանջէ կեանքի վերանորոգում մը:
Կը թողու յայնժամ Պուրկտօֆն ու Զուիցերի-
ան, ուր կրցաւ երջանիկ ու յաջող կեանք
մը վարել, եւ Պէրլին կ'ուգայ»:

Փախուկ գիւահարի մը, խենդի մը գործն
էր այս՝ կերպով մը. սակայն մայրենի դպրոցը
կամ ապաստանարանի սրահը, որպէս յաճախ
կոչած են, (ինչպէս մենք ալ կոչած էինք
ընտելարան, ծաղկոց կամ տան դպրոց, եր-
բեմն ալ վարպետ տունտուն) վերջապէս ման-
կապարտեզը պիտի ծնանէր այս խենթի փա-
խուստէն, որպէս նախնական դպրոցը ծնաւ
Սղանծի յիմարութենէն: (Շար.)

ԱՌԱՅՆԵՐ ՈՒ ԱՌԱՄՆԵՐ

ԱՐԻՍՏՈՏԷԼ ԶԻ Կ'ԸԼԼԱՅ

ՀՆԴԿՈՒՀԻՆ ԱԼ Կ'ՀԵԾՆԱՅ

Faire le cheval d'Aristote:— Արիստոտելը ձի ընել, տեսակ մը խաղ է, որուն մէջ խաբւողը ձիուն մը չորքոտանի ձեւը կ'առնու, տիկին մը չալակը կ'հեծնէ, կինը չալկողը պարտաւոր է ժուռ գալ խաղացողներու շրջանակին մէջ՝ ուր մէն մի խաղացող կարգաւ կ'ողջագուրէ տիկինը: Խաղու մէջ խաբւելուն համար դուած սոյն ապաշխարհանքն անշուշտ տեսակ մը ակնարկութիւն է այն խորհրդաւոր սովորութեան, որուն համեմատ, աւազապետի հարկատուն կամ պարտեալ իշխան մը իւր մեծին կամ յաղթող իշխանապետին ոտքը կ'իյնար, սանձ մը բերանը դրած եւ համետ մը կռնակը շալկած: Պատմութիւնն այս հնագրեան տմարդային սովորութեան բազմաթիւ օրինակներ կ'ընծայէ՝ սկսեալ Եգիպտոսի, չարաբաստիկ Փսամէտիգոսի զաւակէն, զոր Պարսից առաջին թագաւորին որդին Կամբիսէս՝ Երկուրի մը դանդաճաւանդը բերանն անցնել տալով չարաչար պատժել հրամայեց, մինչեւ Hugues de Chalons անուն կոմսը՝ որ Նորմանտացոց բանակին գէմ կուելու իր անկարողութիւնը ճանչնալով կամ խոստովանելով, գնաց գտնել սոյն բանակին հրամանատար երիտասարդ Ռիչարտ կոմսը, եւ, ի՛նչան հպատակութեան՝ անոր ոտքը գլորեցաւ ձիու համետ մը կռնակը շալկած:

Արիստոտելը ձի ընել կամ խաղալ բացատրութիւնը հիմնուած է յետագայ պատմութեան վրայ:

Արիստոտէլ փիլիսոփային աշակերտը Մեծն Աղէքսանդր՝ Հնդկաստան արշաւած ատեն՝ իւր վարպետն ալ հետն իմիասին տարած էր:

Մեծն Աղէքսանդր ծաղկատի ու գեղանի հնդկուհւոյ մը կ'սիրահարի, եւ կ'սկսի մեղկանալ ու աշխարհակալական ընթացքը կասեցնել: Իր սպայակոյտն ու բանակն ալ կը սկսին տրտնջալ, սակայն անոնցմէ եւ ո՛չ մին կ'համարձակի ընդհանուր զգուհութիւնն յայտնել անարկու Միապետին:

Արիստոտէլ յանգիմանեց Աղէքսանդրը, ըսելով թէ չի վայլեր աշխարհակալի մը որ

սիրոյ համար փոքրին ասպարէզը լքանէ ու մեղկանայ աղջկան մը մահին մէջ: Սէրը անբան անառնաներու յատուկ է, եւ սիրայ գերի եղող մարդը ուրիշ բան չեն ըներ բայց եթէ թող կուտան որ երթայ վայրի անասնոց հետ արածի: Այն տեսակ յանգիմանութիւն մը՝ ներելի անշուշտ նոյն ատենի բարոց համար, որ մեր ժամանակի բարքերէն տարբեր էր, իւր մեծ տպաւորութիւնը ներգործեց Աղէքսանդրի վրայ, եւ խօսք տուաւ, իւր բանակին տրտունջն ու զայրութիւնը մեղմելու համար, այլ եւս չի յաճախել իւր տարփուհեղձ քով, սակայն չունեցաւ քաջութիւն Հնդկուհին իր քով յաճախելէ արգիլելու: Պրահմանի եւ Պուտտաի դեղանի թոռուհին լալագին վազեց եկաւ առ Աղէքսանդր, հասկնալու համար անոր զինք լքանելուն պատճառը, եւ իմացաւ թէ Արիստոտտէլն է: «Է՛ ուրեմն, ինչո՞ւ համար Տէր Արիստոտէլը կ'նեղանայ ամենէն շատ աւելի բնական ու ամենէն աւելի սրտի անոյշ բերումի մը դէմ, գոչեց Նէ: Ձեզ խորհուրդ կուտայ որ բնաջինջ ընէք պտտերադովդ այն մարգերն որոնք ձեզ եւ ոչ մի չարիք հասուցած չեն, եւ ձեզ սիրող սիրելուն համար կ'պարտաւէ: Կատարեալ անմտութիւն մ'է աս, եւ անշուշտ լպրջանք մը, զոր օրինակելի պատիժով մը վարձատրելու է. եթէ ինձ ներէք, ես կուտամ իրեն արժանաւոր այդ պատիժը: Իրեն դիկտատոր սիրահարը չի հակառակեցաւ ծրագրին, եւ այս վայրկեանէն սկսեալ հնդկուհին ամեն միջոց ու հրնարք բանեցուց հմայելու, հրապուրելու համար փիլիսոփայն: Գեղեցկի մը ուզածը գրաւած է ի՛ գիրս երկնից դպրութեան. կրնէ հին առած մը, իմաստութեան այծենակած վահանը (égide) չի կարողանար անոր յաղթական նետերէն պաշտպանուիլ: Սիրային հաճոյքներու ծերունի գրաքննիչն իր մեծատուն ուսաւ այս դասը, իւր սիրան յանկարծ կնահաճոյ հրնարքներու բոյն մը դարձաւ, եւ իր Ստոյիկեան բարոյականին դէմ ըմբոստացաւ Եպիկուրեան կամ Ափրոդիտեան հեշտութեամբ վարակեալ: Ի՛ գուր Արիստոտէլ կ'փորձէ սիրաբերել սկսող սիրային կրակը մարելու համար ինքզինքն ուսմանց տալ, իզո՞ւր Պլատոնի դասերն իրեն օգնութեան կ'կոչէ: Հիմնալի գեղեցկութեամբ բոցավառ դէմք մը միշտ կուգայ, կ'արձանանայ անդադար իւր աչաց առջեւ, եւ առ ինքն կ'յանկուցանէ, կ'մագ-

նիսէ իւր բոլոր խորհրդածութիւններն որոնց մով գրաւիլ եւ մոռնալ կ'երազէ զինք խաղը ընող այս սիրտ-խաղը Վերջապէս հասկցաւ որ Պղատոնի բոլոր դասերն ու ուսմունքն անկարող էին զինք պաշտպանել այսպիսի բռնաւոր ու իշխանական կրքի մը դէմ. իւր նրբամիտ ոգին յայտնեց իրեն որ լաւագոյն միջոցն է թողուլ զինքն որ յաղթուի այս կրքէն, ալ ուրիշ ճար՝ ճարակ չէր մնացած։ Սոյն ատենէն սկսաւ բոլոր գրքերն ալ մէկ-դի նետել եւ միայն գեղանի ու մատաղատի հնդկուհւոյն հետ գաղտնի մտերմական տեսութիւն մ'ընելու միջոցներն ու հնարքը գըտնելուն տւաւ խելքն ու միտքը։

Օր մը երբ Սէյյանի գրախտուհին մէնիկ ու միջիկ կ'զգնար նազելաճէմ, տատրակի մը պէս մանտրուքալ, կայսերական պարտիզին մէջ, ծերունին Արիստոտէլ վագեց անոր ոտքն ինկաւ, սրտաշարժ ու սիրաբոյր յայտարարութիւն մ'ուղղեց առ Նէ։ Կախարդուհին կեղծեց չի հաւտալ նախ որպէս զի կրկնել տայ զայն նորէն։ Անձնասիրութեան վայելանքն երկարելու այս կերպն այն ատենի գեղեցիկ սեռին սովորութիւնն էր։ Չքնաղուհին վերջապէս պարտաւորուած լինելով պատասխանել անոր քծնողանաց՝ ըսաւ թէ, չեմ հաւտար զիս սիրելու դ այդպիսի արտասովոր ցոյցին, մինչեւ որ համոզիչ ապացոյցներով զիս չի հաճեցնես—Ի՞նչ ապացոյց որ պահանջես, հրաւայէ պիտի տամ ձեզ։ Ըսաւ մեր իմաստասէրը գեղուհւոյն ծնգանցն ու քղանցքին պլուսած։ «Է՛, ուրեմն, պէտք է հիմակուհիմայ քմաճոյք մը գոհացնես։ Ամեն կին իր քաբքիս (քէլֆ) ունի։ Լիւդիոյ Օմֆալիա թագուհւոյն քմաճոյքն էր դիւցազնի մը իլիկ մանկ տալ։—Այս թագուհին իր սիրոյն գերին ըրած էր Հերքիւլէսը, որ կնկան պէս անոր ոտքին քով նստած կ'մանէր, կը կարէր, կ'կարկտէր։ Լիւդիոյ Կրետոս թագաւորը՝ Հերքիւլէսի եւ Օմֆալիայի ամուսնութենէն ծնած է։ Ըստ գիցարանից—«Իմ հաճոյքս ալ է փիլիսոփայի մը կոնակը նստիլ ու զայն ձիւղարել։ Այս պայմանը կարելի է ձեզ համար խնդութիւն համարուի. սակայն խենթութիւնն իմ համար սիրոյ լաւագոյն ապացոյցն է»։ Փախաքածիդ պէս թող ըլլայ ըսաւ Տէր Արիստոտէլէսը։ Այս պայմանիդ մէջ զարմանալու բան մը չիկար։ Չարամիտ աստուածը որ էլ մը կաքաւողի պոյափոխեց,

կ'ըսէ առածը, կրնայ փիլիսոփայ մ'ալ չորքոտանի փոխակերպել։ Եւ ահա մեր ծերունի մօրուանին՝ Տէտե Արիստոտէլը՝ հաստը կոնակը նետած, սանձն ալ բերանն առած, չորս ոտքի վրայ չոքած, սիրուն ու աղւոր Հնդկուհին ալ կոնակին վրայ հեծած, երկու ոտքերն երկու կողմէն վար կախած։ «Մե՛ն, Արիստոտէլ, երիվարս, տե՛ն ըսելով կը մորակէ, կ'խարաղանէ փիլիսոփայ ձին, հոս հոն ամեն կողմ կ'վաղղնէ քառատրոփ ու սալամբակ՝ Կրիվարի մը պէս։ Եւ մինչդեռ ասոյն անդին վաղվգելէն չորքոտանի փիլիսոփային չունչը հատած, հոգին բերանն եկած, ակոսն կ'սեղմէ, հեծելուհին սոյն պարագային յարմարած սիրային փաղեքեակ (lau) մը կ'եղանակէ ուրախ զուարթ։ Վերջապէս երբ ազէկ մը կ'հոգնի, Նէ տակաւին կ'մտրակէ զայն եւ կ'վարէ . . . գուշակեցէք ո՛ւր, Նէ, կ'վարէ ուղղակի դէպ Աղէքսանդր՝ որ դաւարազարդ թիւտի մը մէջ պահուած գաղտուկէն կ'դիտէր այս զուարճալի տեսարանը։ Նկարագրեցէք, եթէ կրնաք, Արիստոտէլի շուարումը, երբ միայեւոր՝ քահ քահ խնդալով մը ապագարձեց (յանդիմանել) զայն սա կերպով։ «Օ՛ վարպետ, իրօք դո՛ւն ես զոր կ'տեսնեմ այս այլանդակ ու անճոռնի կաղմուածքին մէջ, մոռցա՞ր ուրեմն ինձ քարոզած բարոյականդ, հիմայ պէտք է ձեզ զրկել արժեւում»։ Այս ծողրալի պարտաւանք անպատասխանելի կ'թուէր։ Սակայն ճարպիկ մարդն ամեն բանի պատասխան ունի։

—Այո՛, ես եմ, կ'ընդունիմ ըսածդ, պատասխանեց փիլիսոփայն շտկուելով, երկու ոտքի վրայ կեցած։ Թող այս վիճակը՝ յորում զիս կ'տեսնես, ծառայէ՝ քեզ սիրոյ դէմ ինքզինքդ զգուշացնելու։ Սէրն ի՞նչ վտանգներ չ'սպառնար քու երիտասարդութեանդ, երբ կրցաւ իր իմաստութեամբն այնքան հոշակաւ ծերունի մը այսպիսի ծայրայեղ յիմարտութեան մը վերածել»։

Այս դասն առաջինէն աւելի լաւագոյն էր։ Աղէքսանդր այս խրատին անսալ ցուցուց, եւ խոստացաւ անոր վրայ խորհրդածել ծաղկահասակ հնդկուհւոյն քով։ զինք կը կշտամբէին թէ խելքն հոն կորսնցուցած էր, հոն վերստին գտնելու էր զայն։

Թէեւ յաջողեցաւ այս սիրախտէն բուժուիլ, կ'ըսեն, բայց աւելի ժամանակին քան դասին աղբեցութեամբը ժամանակը՝ սիրոյ արտէն վարակեալներն ընտցնելու համար, շատ բան գիտէ աւելի քան Արիստոտէլը։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑ ԵՒ ԱՆՈՆՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

Ա.Ն. ՏԻԱՐ ՎԱՂԱՄ Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ազգային Առաջնակարգ ու համընթաց
գրավանդակ, 'ի Կ. Պոլիս

ՄՈՒՏՔԸ

Մարդկութեան սկզբնաորումները ընդհանուր էութեանց ծագումներուն պէս, այնքան քիչ ծանօթ են, եւ անոնց վերաբերող վաւերական ու պատմական ստուգութիւնք այնքան հերքելի ու քննադատելի, որ մարդուն ծագման խնդիրն աւելի փխրութեամբ է քննարկուած քան պատմութեան հարց մը կ'առնայ։ Թէպէտեւ այն գիտարարներն ու առարկայի խնդիրն առ այժմ ո'չ քննութեան ո'չ ալ վիճարանութեան պիտի ենթարկենք, սակայն կ'ըսենք ինչ որ հարկաւոր է հասկըցնելու համար թէ ինչ է այդ խնդիրը, եւ նշանակել անոր կարելի եւ ընդունելի լուծումը։

Մարդկութիւնը ջուխտէ՞ մը սկսած է, կամ թէ սկիզբէն ի վեր ծագած է աւելի կամ նուազ թուաւոր անհատներէ՞, որոնք երկրագնդին այլեւայլ կողմերը ցրուած ու յօրինած են այսօրուան մեր ճանչցած ու գիտցած այլեւայլ ազգերուն բունն ու նախնիքը։ Այսինքն թէ՛ աւելի պարզօրէն խօսելու համար, ինչպէս ամէն անասուն, իր ծառը, ինչպէս ամէն ծով՝ իր ձուկը, ինչպէս ամէն կլիմայ իր երկրի բերքն ու իր երկնքին թռչուններն ունեցած է, այնպէս ալ՝ այլեւայլ անհուն, անսահման ծովերով, անանցանելի անապատներով, անթափանցելի անտառներով, լեռներով, գետերով, անկողնելի ճանապարհներով իրարմէ բաժնուած ցամաք երկրներն ու կղզիները կամ ովստիները բնակող այլեւայլ գոյնով ու զինով ժողովուրդներն ալ՝ զատ զատ, իրենց Ազանն ու Եւան ունեցած են, թէ ատոնք ամենքն ալ միեւնոյն զոյգ մը մարդէ առաջ եկած են, եւ յետոյ անթիւ դարերու հոլովումներէ վերջը՝ աճած, բազմացած, իրարմէ զատուած, գնացած, իրարմէ հեռի այդ զանազան կող-

մերը բնակած ու զատ զատ ազգերու ծնունդ տուած են։ Կամ թէ արդեօք մարդկութիւնը՝ երկրագնդին վրայ տարածուած, բազմալոյս է մէկ զոյգ մարդէ, ճիշտ ինչպէս գալտաթաղով (տալտրոմա) կամ պատուաստով պարտէզի մը կամ անտառի մը այլեւայլ ծառեր՝ ծառէ մը կարելի եղած է սկսիլ ու բազմանալ։

Թէ այդ նախնական մէկ զոյգը, կամ զոյգերը, իրենց զգացողութիւններէն ու պէտքերէն զատ, ուրիշ առաջնորդ, ուրիշ թելադրող չ'ունեցած՝ ինքնածին, ինքնաբեր կերպով զարգացած, բարդաւաճած են, թէ Աստուած նախ զանոնք իր մասնաւոր հագործութեամբ խնամարկած, պաշտպանած է։ ուղղակի կերպով զանոնք օժտած, ընծայած է անոնց՝ մասամբ մը՝ թեւարկու օգնութիւններ ու գործելու միջոցներ, զորս իրենց սերունդները գտած ըլլան ընկերական վիճակին կամ պայմանին մէջ։

Այս տեսակ են այն երկու մեծ խնդիրները՝ որոնք պատմութեան սկիզբը կ'ներկայանան ամէն հասուն խորհողի ու ներհուն ընթերցողի, եւ որուն լուծումը հարկ է լաւ կերպով ըմբռնել, քաջ իմն հասու լինելու համար մարդկութեան ունեցած բնթացքին։ Արդ՝ այս լուծումը տարակուսելի չէ ամէն անոնց համար որոնք կ'հաւատան Աստուծոյ, մարդկութեան հասարակաց գործին մէջ ժողովրդոց ստաջիմութեան, լուսաւորութեան, անոնց համերաշխութեան։

Բայց մարդք զոյգէ մը առաջ եկած են, եւ այս զոյգն ալ Աստուծոյ ընդունած է անմիջապէս մարդկային կեանքին անհրաժեշտ նախնական գիտելիքներն ու ծանօթոյքը, զորս այն ատենէն կամ անկէ ի վեր՝ գաստիարակութեան շնորհիւ, որդի ի հօրէ ժառանգելով շարունակած ու զարգացուցած են յայսօր։

Շատ խօսուած է վայրենի մարդուն համար, սակայն իրապէս վայրենի մարդը գոյութիւն ունեցած չէ եւ ոչ ուրեք։ Վայրենի կոչւած ժողովուրդները կամ մարդկային ցեղերը քաղաքակրթութեան յետին կամ նուազ բարձրացած աստիճանի վրայ գտնուող մարդոց խումբեր են, որոնք երկրագնդին ուրիշ կողմերը հաստատուած քաղաքակրթական զարգացումներուն հաղորդ կամ մասնակից եղած չեն։ Եւ որոնցմէ շատերը ո'չ միայն

աւելի գործօն ժողովուրդներէ վերջը ծագած, ետ մնացած են, այլ կ'երեւին անոնց անկման վիճակի մը հասած, եւ իրենց բուն նախնիքներէն աւելի յետեւալ ու ստորին կացութեան մը մէջ գտնուած: Եթէ մարդուն սկիզբը վայրենի վիճակն եղած լինէր, կամ մարդ վայրենի վիճակի մէջ՝ անասնոց պէս կղզիացած ապրելով սկսած լինէր, անըմբռնելի կ'լինի յայնժամ թէ ինչպէս պիտի կարենար հասնիլ երբէք ընկերական վիճակին: Պայմանադրութեամբ կամ պայմանաւոր ընկերութիւն մը հաստատելու համար, հասարակաց լեզու մը ունեցած լինելու էր:

Արդ՝ իրարմէ զատուած, կղզիացած մարդեր ինչպէս պիտի կարենային հասարակաց լեզու մը հնարել: Եւ, աւելին կայ ըսելիք, մարդ ինքն իրեն, իր մասնաւոր իմացական կամ հոգեկան կարողութեանց հետ առանձին մնալով, ինչպէս պիտի կարողանար երբէք լեզուն հնարել. վասն զի, ամեն շարունակեալ մտածում, ամեն խորհրդածութիւն, իմաստասիրական ամեն ձեռնարկութիւն խօսքին, խօսողութեան գործածումը կ'պահանջէ. նոր լեզու մը, որքան ալ պարզ լինի կամ ենթադրուի, կարելի պիտի չլինէր որ՝ առանց խորունկ խորհրդածութեանց եւ առանց իմաստասիրական շատ մը մտածողութեանց, հնարուէր: Բարբառը հնարելու համար, ուրեմն արդէն զայն ստացած լինելու էր: Բաց աստի, բնութեան մարդն ո՛րեւէ պիտի գտնէր բաւական խելք ու հասողութիւն, հասկնալու, նախատեսելու, հայթայթելու համար, ընկերական կարգին բարիքները, ո՛ր պիտի գտնէր իր բնազդումներն ու իր կրքերը հասարակաց օգտին համար գոհելու հարկաւոր, անձնուէր կամքը:

Ժ. Ժ. Ռուսօ՝ մարդոց մէջ անհաւասարութեանց ծագման վրայ խօսած ճառին մէջ, պերճասուն կերպով կ'նկարագրէ այն դժուարութիւնները որոնք անկարելի կ'ընեն բնական կամ վարենի վիճակէն ընկերական կեանքի մը, վիճակի մը մարդուն անցքը, եւ իւր իմաստասիրական բանադատումէն սա կ'իշխուի որ, եթէ բնական վիճակը գոյութիւն ունենար երբէք, տակաւին շարունակելու էր:

Ասկէ զատ՝ ապացուցուած է որ չէր կրնար այս վիճակին մէջ ապրիլ: Ոչ միայն մանուկը երկար տարիներ իր ծնողաց շարու-

նակեալ խնամքներուն պէտք ունիլ այլ եւ չափահասն իսկ եթէ զրկուած մնար իւր նմանեաց ընկերութենէն, եթէ դադրէր ընդունելէ իմացական այն հաղորդակցութիւնները, որոնք կ'անուցանեն, կ'հասունցնեն իւր մտքին եւ իւր ղեղին գործունէութիւնը, յայտնի պիտի լինէր թէ իր կարողութիւնները պիտի բխանային, պիտի ջնջւէին: Իր ըզեղային գործարանները պիտի խաթարուէին, եւ, անբան անասունի մը պէս ապրելով, հակառակ իւր նախատեսմանեալ ճակատագրին, անասունէն աւելի ինչպական ստորին վիճակի մը ենթարկուելով վերջապէս մարդ պիտի կրէտանար, (անբանաշաղու առտիման տմարդանալ): Այս վիճակին մէջ եկած ինկած կամ յոնգած են այն մէկքանի անձերն ու անհատներ, որոնք՝ ալեւայլ դիպուածներու բերմամբ՝ դատարարականութեան ու ընկերական կեանքին բարիքներէն զրկեալ մնացած են:

Ընկերական վիճակն է ուրեմն մարդուն ճշմարիտ բնական վիճակը, եւ մարդն ընկերականութենէ զուրկ ու դուրս, ապրած չէ: Պէտք է ընդունիլ ուրեմն թէ՛ Աստուած բացառիկ կերպով մը առաջին մարդուն հաղորդած է առաջին ընկերութիւնն հաստատելու հարկաւոր նախադիտելիքները, այսինքն իւր Արարչին ծանօթութիւնը, ընտանիքի բարոյական օրէնքները, արտաքին աշխարհին վրայ ազդեցութիւն բանեցնելու առաջին միջոցները: Մինք չի գիտենք թէ մարդ արտաքին ուսմամբ մը ընդունած ըլլայ այս ծանօթութիւնները, կամ թէ զայն ունէր, ստացած էր Արարչին ձեռքէն ելած ատեն, սակայն եթէ ընդունած չըլլար, ընկերութիւնն ալ պիտի չկարենար ծնունդ առնուլ: Նախնային ծանօթութեանց այս բացառիկ հաղորդութիւնն արարչութեան գործէն աւելի տարօրինակ կամ արտասովոր բան մը չ'է:

Արդ՝ մարդուն ւտեղծութիւնն ու բանալն անկարելի է. երկրաբանութիւնը անաւարակութեան երկար շրջաններ հոլոված է, մարդկային սեռը գոյութիւն ունենալէն առաջ, եւ թէ մարդը՝ մեր մոլորակին վրայ կենդանի էակաց մէջ՝ վերջին եկողն է, բազմատական կազմագիտութիւնը (anatomie) եւ հոգեբանութիւնը կ'ապացուցանեն թէ մարդը՝ մենք՝ օրակ-կուղան կապիկներէն եւ եր-

կականցող փոկերէն (phoque) սերած չ'ենք։ Որպէս կապկասէրն Տարվին՝ իր նման տարազաւաններու հետ, վարդապետելու ելաւ, իրմէ առաջ ֆրանսացի հին գիտունի մը նմանօրինակ մէկ կարծիքն ինքն աւելի ընդլայնելով ու անբանաւոր դրութեան մը վերածելով։ Արարչութեան գործոյն մէջ գիտական ամենամեծ ստուգութեամբ աստուածային միջամտութիւնն արդէն հաստատուած լինելով, ոչինչ կ'արդիւն քալ մ'աւելի առնուլ եւ ընդունիլ, ներհակ նախապաշարմանց հակառակ թէ Աստուած չի բաւականացաւ ստեղծել մարդը՝ իբրեւ հոգի եւ մարմին, այլ թէ հայթայթեց անոր միեւնոյն ատեն միջոցներ որոնք հարկաւոր էին իր նպատակն այս աշխարհի մէջ ի' գլուխ հանելու համար։ Այս առաջին արդիւնքը մեզ կ'առաջնորդէ երկրորդի մը, այն է թէ՛ մարդկութիւնն սկսած է ջօւլստէ մը։ Ընդունելու ենք թէ գերագոյն իմացականութիւնն երբէք անօգտակար դործ մը չ'ըներ, արդ՝ իբրեւ միայնակ ընտանիք մը, ընկերութիւնն հիմնելու պաշտօնովն օժտուած՝ կ'բաւէր օրըստօրէ ծաղկելովը ծնունդ տալու ցեղերու, ազգերու եւ տիրոջ մարդկութեան։ Բանաւոր է հաւատալ թէ Աստուած նախնական զոյգ մը միայն ստեղծած է։

Ասկէ զատ՝ երբ ի' նկատի առնունք թէ մարդկութիւնը կ'կազմէ մարմին մը որուն բոլոր անդամներն ալ զիրար շղթայօրէն կ'կցորդեն, թէ անոնցմէ ոմանց ձեռք արտադրած չի կայ բարիք որ առաւել կամ նուազ օգտակար չի լինի այլոց, կամ չարիք՝ որ անմեղներուն ալ չի վիճակի։ Թէ բոլոր մարդիկ, բոլոր ժողովուրդները հասարակաց դործոյ մը գործաւորներն են, գործ՝ որ դարերէ ի'վեր հետզհետէ առաջդիմաբար կ'կատարուի, եւ որուն նպատակն է կազմել եզբայրակցաբար մարդկութիւնը, եւ, իբրեւ տէր ու վեհապետ, զայն բազմեցնել երկրագնդին վրայ։ Հասկնալի է թէ Արարիչն ուզած է, բնական ազգակցութեան կապիւրու միջոցաւ, ապահովել հոգիներու իմացական միութիւնն իրենց հաւաքական գործոց մէջ, եւ պատրաստել հոգիներու եղբայրակցութիւնը մարմիններուն միութեամբը։

Եթէ բոլոր մարդեր մէկ զոյգէ մը սերած են, յայտնի է թէ անոնցմէ պատահած ամեն անհաւասարութիւնները գիպուածական պատ-

ճառներէ առաջ կուգան, թէ անոնք էական տարբերութիւններ չեն։ Յայնժամ նաեւ կ'պարտաւորինք ճանչնալ ու խոստովանիլ թէ՛ բոլոր մարդերը, բոլոր ժողովուրդները կարող են հասնիլ ու վիճակիլ միեւնոյն գաղափարայ, նոյն քաղաքակրթութեան, նոյն զարգացմանց, եւ թէ, եթէ ոմանք ուրիշներէ եւ մնացած լինին, աւելի զարգացեալ ազգոց համար եղբայրակցական պարտաւորութիւնն է բարձրացնել իրենց հաւասարութեան մակարդակին եւ աւելի կատարեալ քաղաքակրթութեան մը բարիքներուն մասնակից ընել զանոնք, որոնք՝ դժբախտ գիպուածներու բերմանց պատճառաւ, զարգացման ընդհանուր ընթացքին հետեւելու կամ ընկերանալու կարող չեն եղած։

Պատմական ամեն ապացոյցներէ դուրս՝ լոկ բանաւարութիւնն ինքնին կ'բաւէ ուրիշն ապացոյցանել մարդկային ընկերութեան աստուածային հաստատութիւն լինելը եւ նախնական միակ զոյգի մը ստեղծումը։ Արդ՝ պատմական յիշատակարանաց ամենէն յարգելին, միակը որ մարդկային ծագման վրայ քանի մը դրական գիտելիք ու ծանօթոյք պահած, պահպանած է, այսինքն ըսել կ'ուզենք Աստուածաշունչի առաջին գիրքը կամ Ծննդոց գիրքը, կատարեալապէս կ'հաստատէ իսկովին բանաւոր սոյն եզրանկացութիւնը։ Զչմարիտ է խոստովանիլ եւ յայտարարել նշանաւոր պատմագիր Պ. Ա. Օդդի հետ թէ՛ եթէ Աստուած չ'ուզեց որ մարդկութիւնը բացարձակապէս կամ բոլորովին կորսնցնէ իւր նախնական պատմութեան աւանդութիւնը, Մովսէսի հնգամատ հանն է որ, միայնակը, կրնայ զայն պահած, պահպանած ըլլալ։ Թէպէտեւ այս Մովսէսապատմին ալ, որ աւելի հին ու վաղնջական աւանդութեանց համաօտումն է, բազմաթիւ թերատ ու կրճատ մասեր եւ չատ մը միջին կէտեր ունենայ, եւ թէ կարելի չըլլայ զայն տառական նշանակութեամբ ընթանիլ, կ'ըզանդակէ, մարդկային ընկերութեան առաջին յեղաշրջումներուն վրայ ընդհանուր տեսութիւն մը, գաղափար մը տալու համար, բաւական դրա՛յան տարրեր, տեսութիւն՝ զոր ուրիշ կողմանէ, ինչպէս պիտի տեսնենք, պիտի հաստատուն ու ստուգեն երբայեցի օրէնսդիրին գրոց բնաւ երբէք ծանօթ չեղող ժողովուրդներուն աւանդութիւններն ու անոնց յիշատակարանները։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մարդկութեան ծագումը.—Ջրհեղեղը:

Ամեն հին ազգերու նախնական ասանդութեանց նման՝ Աստուածաշնչին Մենդոց Գիրքը, մարդուն առաջին պատմութեան յիշատակումն ընելէ առաջ, աշխարհքին ստեղծագործութեան պատմութիւնը կ'յիշատակէ. սակայն հիներէն պատմութեամբ ուրիշ ոչ մէկ արարչագործութիւն կամ աշխարհածնութիւն Ս. Գիրքին արարածապատումին վեհաշուք պարզութիւնն ունի. անոնցմէ ոչ մին Մովսեսի գրածին պէս գիտութեամբ ապացուցւած ճշմարտութեանց վրայ հիմնուած չ'է: Մինչդեռ բոլոր հին հեթանոսական արարածապատումներ աշխարհքին ծնունդը ցուէ մը բղխած կ'ներկայացնէին, աստուածաշնչեան աւանդութիւնն երկրագնդին եւ անոր բնակչաց յաջորդական եւ աստիճանաբար առաջդիմական ստեղծումը կ'հաստատէր, եւ այս հաստատութիւնը՝ որ, այնքան դարերու մէջ, գիտական փաստերով ապացուցուած չ'էր. Թեոք դարուն մէջ՝ վերջապէս գիտական անհերքելի ճշմարտութիւն մ'եղած է:

Եւ արդարեւ, թէ որ օր կամ տիւ ըսելով՝ ոչ թէ քսանեւէորս ժամուան տեւողութիւն այլ անորոշ շրջաններ հասկնանք. եթէ մտքով մէկդի ընենք կարգ մը մասնաւոր պարագաներ որոնց մասին աւանդութիւնը յայտնապէս վթար ու անկատար է. եւ որոնք կ'յարուցանեն խել մը խնդիրներ, զորս ց'այսօր գիտութիւնն ալ նմանապէս չէ կարողացած լուծել. Աստուածաշնչեան աւանդապատումը շատ մօտէն կ'համաձայնի երկրաբանութեան ստոյգ տեղեկութեանց հետ: Այս գիտութիւնն ալ մեզ կ'սորեցնէ թէ այսօրւան մեր աշխարհ տեսած երկրագունդը կազմուած է իրարմէ բոլորովին անջատուած շարք մը շրջաններու մէջ. թէ հոս բնակող կենդանի էակներն ստիպուած են հետզհետէ եւ աստիճանաբար նուազ կատարեալէն դէպ կատարեալն երթալով, եւ թէ երկրագնդին վրայ ամենէն վերջն երեւցաւ մարդը, իբրեւ արարչութեան պսակն ու գլուխ գործոց:

Իւրաքանչիւր անասունը՝ տեսակին համեմատ ստեղծելէ յետոյ, կ'ընէ Մենդոց Գիրքը, Աստուած ստեղծեց մարդն իր պատկերին նման, եւ արու ու էգ ստեղծեց զանոնք:

Աստուած զանոնք օրհնեց ու անոնց բաւ. «Աճեցէք ու բազմացէք, լեցուցէք երկիրն ու շէնցուցէք. իշխեցէք ծովուն ձկանց վրայ, երկնքին թռչնոց վրայ եւ երկրի վրայ գնալուն ամեն կենդանեաց վրայ»:

Այս աւանդական խոսքերը քանի մը բառերով կ'համառոտեն մարդկութեան երկրային ամբողջ նպատակը. ընտել երկիրն եւ անոր տիրանալ, գործել ու վարել դայն, ինչպէս քիչ մը վարը կ'յաւելու. նոյն աւանդապատումը, արդարեւ երկրագնդին վրայ ամբողջ մարդուն պաշտօնը, զերթ՝ զոր թէ՛ փիլիսոփայութիւնն եւ թէ՛ կրօնքը մարդկութեան համար կ'նշանակեն զինք շրջապատող նիւթական արարչութեան հանդէպ:

Մենդոց Գիրքը մեզ պահած է ուրիշ նախնական պատուէր մ'ալ, որ ամուսնութեան սրբութիւնը կ'ապացուցանէ եւ բնութանեաց հիմունքը կ'կազմէ: Նախ եւ առաջ բնելէ յ'տոյ թէ՛ Աստուած մարդն արու եւ էգ ստեղծեց, կ'պատմէ երկրորդ անգամ, այլաբանական ձեւի մը տակ, կնոջ ստեղծումը. կ'երեւի թէ արդարացիելու նպատակով միայն հետեւեալ սա խօսքը. «Ազամ ըսաւ, ոսկրը իմ ոսկրէս եւ մարմինը իմ մարմինէս . . . վաճնորոյ մարդ թողելու է իր հայր, իր մայր, եւ յարելու, միանալու է իր կնոջ. եւ անոնք երկուքը պիտի ըլլան մէկ մարմին»:

Ի՞նչ եղաւ առաջին մարդոց ընկերակցին, իմացական, ֆիզիգական կեանքը: Այս հարցման պիտի կարենայինք պատասխանել միմիայն ենթացրութիւններով, որոնց վրայ լռելը նախամեծար պիտի համարինք, ընթերցողաց խնայելու համար: Աստուածաշնչեան աւանդութիւնն այս մասին շատ քիչ բացատրութիւն կուտայ: Բացատրելէ յետոյ, այլաբանական խորհրդաթաքուն լեզուով մը որուն բանալին կորսնցուցած ենք, թէ մարդուն գործած մեղքին եւ իր Աստուծոյն պատուիրանին դէմ անհնազանդ գտնուելուն պատճառով չարքն աշխարհքն ապականեց. Արեւի մահուան յիշատակութեամբ կ'նկարագրէ մարդկային ընկերութեան առաջին կռիւը, առաջին եղբայրասպանութիւնը. շապէս կ'ներկայացնէ մարդկային երկու զուգահեռական ընկերութեանց պատմութիւնը. պատմութիւն՝ որ գրեթէ յատուկ անուններու երկու տեսակ շարքէ մը կ'ընդլանայ:

(Շար.)

ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

«Երկինք կ'ընդունի բոլոր այն մաղթանքներն ու փափաքներն որք բանաւոր են:»

«Ան որ առաքինութեան շաւղէն կ'ընթանայ, գահավէժէ մը վեր կ'ելլէ, այնքան դժուարին ու զառիւղեր է ճանապարհը: Ան որ մոլութեան ետեւէն կ'ընթանայ, դէպ անդունդն ինքզինք կ'զահալիժէ:»

«Անո կին մը եւ անառակ տղայ մը, բաւական են ամեն օրէնք խտնագարելու համար:»

«Մարդ մ'երկու տեսակ զգացողութիւն կրնայ ունենալ իւր ծնողաց տարիքին վրայ: Ուրախութիւն մը, թէ որ մտածէ թէ անոնք պիտի ապրին ընդ երկար. վշտակրութիւն մը՝ եթէ մտածէ թէ պիտի ապրին շատ ընդ երկար:»

«Ինձ հաճոյք պիտի պատճառէք թէ որ ինձ ծանուցանէք իմ թերութիւններ. զիս պիտի դժգոհացնէք թէ որ ինձ խօսիք իմ առաքինութեան մասին:»

«Թէ որ քիչ հոգ ունիս, առողջութիւնդ լաւագոյն պիտի ըլլայ. թէ որ մոտի ու երեւակայական անգոյ բաներով ինքզինքդ կ'օրօրես, պիտի տեսնես թէ ցուցամոլութեամբ պիտի մատնուիս ի'կորուստ:»

«Ընկէ չափաւորապէս, եւ միտքդ պիտի մնայ անգործ: Չափաւորէ յանդգնութիւնդ ու վէտութիւնդ, եւ բախտդ ոչ մէկ փորձանքի պիտի չի հանդիպի:»

«Երբէք մի՛ դիմեր դատարան, որքան ալ արդար ըլլայ դատդ: Դրացեացդ հետ միշտ ազէկ ու հաճոյալի յարաբերութիւններ ունեցիր:»

«Մի՛ ելներ երբէք բլրոց բարձունքը, թռչնոց բոցները քակելու համար, մի՛ իջներ երբէք գետոց խորը, ձկները խոնաւորելու համար. բնաւ մի՛ սպաններ լծվար կամ արօրագիր եղը, անտարբերութեամբ չի վարուիս բնաւ գեղեցիկ դպրութեանց հետ պատահուելով գեղեցիկ գրուածները:»

«Չարաչար մի՛ գործածէք երբէք ձեր իշխանութիւնն ու ձեր դիրքը, այրին ու որբն ընկճելու համար:»

«Կտրտէ՛ ճիւղերն ու փուշերն որոնք անցքդ կ'խափառեն, ճանապարհէն մոզվէ, հեռուն նետէ քայլիդ հանդիպած գայլախաղ-

ներն ու քարերը. նորոգէ՛ ճամբաները զորս ժամանակն աւրշտկած է, չինէ կամուրջներ, հաղորդակցութիւնները դիւրացնելու համար:»

«Մաւալեցէք բարւոք կրթութիւնը ուղղելու համար մարդոց մոլութիւնները, եւ բաժնեցէք ձեր ինչքերն ու գոյքերն ուրիշին հետ՝ երջանիկ ընելու համար ձեր նմանները:»

«Մարդը կ'կորսուի երբեմն հարստութեանց հետապնդումին մէջ, ինչպէս թռչունն իր մահը կը գտնէ անունդին հետամուտ լինելու պահուն:»

«Ո՛վ որ կ'ճանաչէ բարիքն առանց զայն ի'գործ դնելու, կ'ապացուցանէ թէ առաջադրութենէն կ'թերանայ:»

«Գինովութենէն ինքզինքն զգուշացնելու լաւագոյն միջոցը՝ ծով եղած ատեն գինով մը դիտելն է:»

«Մաղկունք կ'ծլին հաւասարապէս ամէն վայրերու մէջ: Լուսինը կ'արձակէ հաւասարօրէն իր նշոյլ գետոց ու լերանց վրայ: Չարիքը կը բնարդի (գոյութիւն ունի) մի միայն մարդուն սրտին մէջ: Ուրիշ ամէն բանի կ'ձկտին Երկինքին բարեացակամութիւնը ցուցնել մարդերուն նկատմամբ:»

«Երբոր դուք կ'հագւիք կ'սգուիք, խորհեցէք ոտայնանկին դժբախտ խոնջէնքին վրայ: Երբոր դուք կ'ուտէք կ'խմէք, յիշեցէք երկրագործին մշտաշխատ յոգնութեանց ու անհանգստութեանց վրայ:»

«Կ'ուզէ՞ք ճանաչել իշխանի մը սիրտը, դիտեցէք անոր պաշտօնեաները: Կ'ուզէ՞ք ճանաչել մարդ մը, խելամուտ եղէք անոր յարաբերութեանց: Կ'ուզէ՞ք ճանաչել ընտանիքի մը հայրը, նայեցէք անոր զաւակին:»

«Մարդն անգէտ է իր թերութեանց որքան եզն անգէտ է իր ուժին:»

«Ծ'որչափ բարեբաստիկ վիճակ ունենայ մարդը՝ խուկնի չի ծխեր, բայց դժբախտութիւնը պատահածին պէս, խկոյն կ'վազէ մեծ փօին ոտքերն իյնալ ու անոնց պլուրի:»

«Մարդ թէեւ գիտէ թէ իր կեանքի աւելն աւելի երկար տեւողութիւնը հարիւր տարին պիտի չ'անցնի, բայց ինքզինքն այնքան կ'նեղէ, կ'յոգնեցնէ որ իբր թէ հազար տարի ապրելու էր:»

«Իմաստունը կ'ապրի Աստուծոյ երկիւղին մէջ, եւ կ'մոռնայ մարդերը: Անզգամ մարդն՝ ընդհակառակն, կ'երկնչի մարդերէն ու կ'մոռնայ Աստուծոյ:»

(Աստուածաշունչին «Սկիզբն իմաստութեան՝ երկիրդ Տեառն» եւ Սաղմոսին «Ասաց անգգամն ի՛ սրտի իւրում քե ոջ գոյ Աստուած» առածախօսքերը կ'ըսէին չինական սոյն առածները)

«Պարկեշտութիւնը կնոջ արութիւնն է»

«Լուսութիւնն ու ամբուսութիւնը կնոջ արութիւնն են»

«Աղջիկ մը ամուսին մը կ'ընդունի, որ բեւայրին էրիկ մը կ'առնէ»

«Համբերութիւնն ընտանի առաքինութիւն մ'է»

«Ջրհոր մի՛ պեղէք ծարաւահիւծ մարդու առջեւ»

«Միշտ քու համար չէ որ կ'հաւաքես լաւագոյն պտուղները»

«Մարդու մը զգալիք մեծագոյն հաճոյքը բարի գործ մը կատարելն է»

«Մարդ միշտ կ'ցանկայ ունեցածէն աւելիին»

«Երբ կ'ունենայ բան մը, անմիջապէս ուրիշ բան մ'ալ կ'ուզէ»

«Գինւոյ երեք բաժակներ կրնան հազարումէկ կռիւներ յարուցանել»

«Կոնփիւկէնս կ'ըսէ, «Մարդ մը՝ որ վաղուանը չի խորհիր, շատ ցաւեր կ'ունենայ ներկային մէջ» (—Իսկ մեր Բրիստոս կ'ըսէ, «Մի՛ խորհիք վաղուանը»

«Եթէ նօթութեան դարմանն է միտը կամ անունդը, տգիտութեան դարմանն է ուսումը»

«Եթէ նախամեծարելի է առձեռն ջուր ունենալ հրգեհ մարելու համար, լաւագոյն է նոյնպէս վատահիւ ներկայ բարեկամին վրայ քան թէ հեռացած բարեկամին վրայ»

«Մարդ երբ իր աղջիկը կ'կարգէ պէտք է որ այնպիսի մէկն ընտրէ անոր ամուսին, որ աստիճանի եւ ունեւորութեան կողմանէ անորմէ աւելի գեր ի վերոյ ըլլայ, որովհետեւ կնկան պարտքն է էրկանը հպատակիլ, եւ երկիւղով ու յարգանք անոր ծառայել: Մարդ իր անձին համար կին մը ընտրած ատեն՝ առնելու է զայն իբրեւ իր ստորինը, եւ կինն յայնժամ պարտի ընդունիլ ու պատուել իւր նոր ընտանիքը, որ իբր թէ բուն իսկ իրեն ընտանիքն եղած լինէր»

«Բարեբարութիւնն ընդունող մարդ մը հլու, հնազանդ լինելու է, նոյնպէս զաւակ մը՝ յարգամատոյց, եւ պաշտօնեայ մը՝ հաւատարիմ լինելու է»

Դա-Ֆոնտի ըսած է. «Նշլւրնկալութեան ատեն ձեր բարեկամաց եւ օտարաց համար խորութիւն գնելու չէ, Ամենքն ալ միեւնոյն բարեացակամութեամբ ընդունելու է» (Կերելի թէ Ձին Պոքսըրները Դա-Ֆոնտիկի այս պատուիրանը կարգացած չ'են կամ մոռցած են օտարները հիւրամեծարելու մասին)

«Կին մը՝ առանց հայելոյ չի կրնար ճանաչել իւր դէմքին վիճակը. մարդ մը՝ առանց ճշմարիտ բարեկամի, չի կրնար ճանաչել իր յատուկ գործոց սխալանքներն ու մոլորանքները»

«Մարդ ընտրելու է բարեկամ մեր իրմէն աւելի ընտիր ու լաւագոյն ըլլայ թէ որ ինքզինք կ'սիրէ, ուրիշ մը չի պիտի գտնէ: Իւրաքանչիւ ո՞ք չատ ծանօթներ ունի աշխարհին մէջ, բայց կրնայ ըսել թէ բարեկամ ունի»

«Այլոց ստուգութիւնը մեր տնձնական յատուկ փորձառութեան հետ անբաղդատելի է: Լաւագոյն է ըսել տեսայ, քան լսեցի»

«Առաքինի կին մը կ'աշխատի իւր ամուսինը պատուաւոր ու անխառնի ցցնել, անզգամ կին մը կ'ջանայ իր ամուսինը շատ գէշ ցցնել՝ եւ ամեն հնարք ի՛ գործ կ'գնէ որ էրիկն իր պատիւն ու յարգանքը բոլորովին կորսնցնէ»

«Աւելի աղէկ է միւսնիլ քան ժանտաւրոյ ու չարամիտ, կռուասէր կնկան մը հետ ապրիլ»

«Ուժով եղիք, առաքինի էք՝ եւ ձեր խնեղութիւնն ալ ներելի է, միջակ դասէն եղիք, չէք կրնար նշանակութեան արժանի մէկն համարուիլ եթէ չունենաք մեծ հատուկութիւն»

«Աղքատ եղիք, ամեն մոլութիւն ունիք, թէեւ ըլլաք լաւարարոյ եւ բարեկիրթ»

«Մարդուն արութիւնը նոյնպէս եւ ձիուն աշխուժութիւնը կ'զաղորի օրուան մը խիստ աշխատանքէն յետոյ»

«Սերունդներն իրարու կ'յաջորդեն որպէս կոհակները՝ ծովուն մէջ»

«Երբ ծառը ծոխ, ճիւղերն ալ կ'ծոխն»

«Արծիւը մեռած ատեն երկար աղաղակ մը կ'արձակէ»

«Նշանաւոր մարդ մը մեռած ատեն անուն մը, համբաւը կ'թողու»

«Տարափոյն երկրին վրայ է, ճշմարտութիւնը երկնքին մէջ է» (Շար.)

ԳԻՏԱԿԱՆ

ԱՌՏՆԻՆ ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՅԻ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴՈՒՆ ԱՆԿԻՋԵԼԻՈՒԹԻՒՆԸ

Մարդն անկիզբի ընելու համար շատ պարզ միջոցներ. — Գիտական շատ հետաքրքրական եղանակներ, որոնցմով ամեն մարդ կրնայ կրակին մէջ կասկարմիր կտրած երկաթի ձող մը բռնել առանց էս ոչ մէկ կերպով այրուելու, կարող է իր մարմնոյն անդամներն ընկղմել կրակի պէս հալած տաք տաք կապարի մէջ, սաստիկ եռացող ջուրի մէջ, առանց ու էս է ջնջւն տաքութիւն մ'զգալու ջափ նեղուելու կամ վնասուելու:

Վերջին ժամանակաց մէջ, աշխարհի ամէն մայրաքաղաքաց մէջ պատահած յանկարծական հրդեհներէն ի վեր՝ շատ մը յանձնաժողովներ հաստատուեցան այսօրինակ անհելի արկածներուն կրկնումն արգելելու նշանակամբ գործնական միջոցներ խորհելու համար: Սակայն յիշեալ յանձնաժողովներն հակառակ իրենց բազմնապատիկ ու յարատեւ ուսումնասիրութեանց, անփոյթ գտնուեցան ուշադրելու գիտական ինչ ինչ գիտելիք, որոնք զարմանալի կերպով պիտի պարզաբանէին խնդիրը եթէ զանոնք լրջօրէն իգործ դնէին: Խնդիրը պարզապէս թատերական հանդիսատեսները անկիզբի ընելու վրայ կ'դառնար:

Արդ՝ մարդ անկիզբի ընելու միջոց կայ, եւ երեկուրնէ ալ չ'սկսիր Այս նիւթին նշանակամբ շատ հետաքրքրական եւ շատ հետեւական փորձեր եղած են: Օրինակի համար մեր մատը առաջուց եթերով թրջելէ վերջ՝ կրնանք յետոյ հալած կապարին մէջ թաթղել. ոչ միայն չի պիտի այրի, այլ եւ պաղուծիւն մը պիտի զգայ: Նոյնպէս անվտանգ կերպով պիտի կարենանք եռացած ջուրի մէջ խօթել նմանապէս եթերով թաց մեր մատը:

Եթէ անուշադրի աղ (sel ammoniac) ու խառն ծծմբային թթուութեւ լուծւածքի մը մէջ, (dans une solution d'acide sulfureux additionné de sel ammoniac) թրջենք, թաթխենք

մեր ձեռքը, կրնանք առանց արկածի, կրակի պէս հալած կապարի մէջ ընկղմել: Պ. Պուտինյոն (Boutigny) այս եղանակով կատարած շատ մը արաաքոյ կարգի իրողութիւններ կը յիշատակէ:

Հալալի մէջ ընագիտութեան դասատու Պ. Գոմ եւ Պ. Գովլէ այս կերպով հալած մետաղին ծորումն իրենց մատովը կտրեցին, իրենց ձեռքերն ընկղմեցին նոր հոսած մետաղի հալածոյով լեցուած կաղապարին ու քուրային մէջ որուն կիշիչ տաքութիւնը բաւական մեծ հեռաւորութենէն իսկ անտանելի էր:

Տիկին Գովլէ՝ որ ներկայ էր այս փորձերուն, հրաման տուաւ իր ութ տասն տարեկան աղջկանը կրակի պէս կիշիչ հալածոյով լեցուած քուրարի (creuset) մէջ դնել ձեռքը. փորձն երբէք վնաս չի պատճառեց տղուն:

Ուրիշ աւելի զօրաւոր փորձ մ'ալ:

1819 Տարւոյն մէջ, Լիոնեղդօ անուն սպանիացին Փարիզի մէջ բոլոր աշխարհը զարմացուց կրակի ազդեցութենէն անզգայ լինելու եղական հանգամանքովը: Անպատիժ կերպով կ'ձեռնածէր (manier) կասկարմիր կտրած երկաթի ձող մը, եփ ելածի չափ տաք հալած կապարը. եռացող իւղը, եւայլն կը խմէր:

Լիոնեղդօ վերջէն Նաբոլիի մէջ վարժապետ կարգուած ըլլալով՝ Սամանդինի կըսէ թէ՝ սպանիացի այս զարմանալի անձը կասկարմիր կրակ կտրած մետաղէ թիթեղներ մազերուն վրայ կ'դնէր, եւ միմիայն թանձր գոլորշի մը կարծակէր իբրեւ երեւութ. միեւնոյն արգիւնքը կուենար նոյնպէս երբ փորձարկուն (expérimentateur) կասկարմիր երկաթ մը կ'անցնէր ոտքին ներքանին վրայ, լեզուին վրայ, կամ կ'իմէր արծաթ դգալով մը եռացող իւղին մէկ քառորդը, եւ ակոսներուն մէջտեղ կը բռնէր գրեթէ հրաշէկ երկաթ մը: Եւ որովհետեւ Լիոնեղդօ իւր գաղտնիքը մէկու մը չէր հաղորդեր, Նաբոլիցի Սամանդինի վարժապետն ինք իր անձին վրայ փորձեր կատարեց, որոնք յաջողութեամբ պսակուեցան: Այս փորձերն ապացուցին նախ՝ եթէ թթուութեան (acides), մասնաւորապէս ջուրով խառն ծծմբային թթուութեան (acide sulfurique) չփենք մարմինը, այս տեսակ չփռումներու միջոցաւ հրա-

չէկ երկաթին տաքութեան ազդեցումին կ'դիմանայ: Սամանդինի գտաւ նաեւ թէ՛ երբ սպիգային մարմնոյ կամ նիւթի վիճակի մը հասնելու հափ շոգիացած alun(*), լուծուածք մը (un solution d'alun, évaporé jusqu'à l'état de matière spongieuse) ալ աւելի յարմար է սոյն արդիւնքն արտադրելու, եւ թէ այդ լուծուածքով ալ աւելի սաստիկ կիզիչ տաքութեան կ'դիմանայ մարմինն ու մորթը երբ մարմինն անով չփռի: Վերջապէս այս վարժապետը կամ վարպետը հաստատեց թէ անզգայ եղած մարմնոյն մասերը՝ երբ կարծր օճառով չփռին, այս գործողութենէն յետոյ, զանոնք լուանալով, ալ աւելի անզգայութիւն կ'ստանան, եւ յայնժամ հրաշէկ երկաթը մեր մարմնին քսած ատեն մորթին մէկ մասն իսկ չ'այրիւր:

Միեւնոյն նիւթերու պատրաստութեամբ թէ լեզուին թէ բերնին վրայ եղած փորձերն ալ ճիշտ նման անվնասաբեր արդիւնքներն առաջ կ'բերեն. այսինքն անկիզելի կ'ընեն:

Ամեն հաստատուն մարմին որ հեղուկ վիճակի կ'փոխուի, եւ կամ հեղուկները շոգիացման վիճակի կ'վերածուին, կ'ծծեն կամ իրենց մէջ կ'ընկղմեն տաքութեան մեծ քանակութիւնը:

Այս տեսակ փորձեր մեր դարէն առաջ ալ եղած են, Շուէտի Կարոլուս Թ. թղի (16—17րդ դարուն մէջ): Ամբրոսիոս Բարէ վիրաբույժը կ'յայտարարէ թէ մարմնոյն ինչ ինչ մասերն անկիզելի ընել յաջողած է ծծումբի ոգիով (esprit de soufre) կամ ուրիշ բացատրութեամբ՝ կ'ըսուի ծծմբային թթւութեամբ (acide sulfureux):

ԶԳԵՍՏԵՂԻՆԱՅ ԴԵՂԱԳԻՐ

Կուզե՞ք աշխատել կամ ամեն ատենի անճրեւեթեմ անքափանցելի ընել, ձեր ըզգեստները:

8 Լիդրա ջուրի մէջ լուծեցէք 150 կրամ acetate de plomb, (գեղազործները կամ դեղավաճառները (եւ ո՛չ թէ պախաշները կամ ախթերները կամ չէրչիները) ձեզ կ'ըսեն երբ երթաք անոնցմէ գնել կամ հասկնալ): Թրջեցէք ձեր կտաւեղէնն անոր մէջ եւ չորացեցէք:

Կուզե՞ք շուտով մը եւ խնայողութեամբ յարդարել ձեր պատուած զգեստները:

Միացուցէք, իրարու քով բերէք զգեստի

(*) Պաղլեզ, չապ:

պատուած մասերը, փակցուցէք հակառակ կողմէն, այսինքն կտաւեղէնին եւ աստառին մէջ տեղէն, gutta-percha թուղթէն նուրբ թերթ մը, յետոյ տաք երկաթով մը վրան շիւղէք, պատուածքը կ'յարգարուի սոկուն եւ անտեսանելի կերպով:

(Gutta percha խէժային գոյացութիւն մ'է, որ Սումատրա կղզիին եւ Արեւելեան Արշիպելագոսի ուրիշ կղզիներու մէջ ծառէ մը կ'գոյանայ եւ քաւուչուի շատ կ'նմանի: Հարցուցէք դեղավաճառներուն):

ՄԻՍԻ ԴԵՂԱԳԻՐԸ

Կուզե՞ք արքունի սկսած մսին քարմ մսի համ տալ: — Երբ միւր պարունակող սանին ջուրն եփ կելլէ, կեռայ, բաւական է ջուրին մէջ նետել նախ աղէկ մը լուացուած քանի մը փայտածուխ, կամ եռացող ջուրին մէջ ձգել կրակ կտրած ածուխի կտոր մը, կամ խարտոցած երկաթի փշրանքներով լեցւած փոքրիկ քսակ մը, ծրար մը զետեղել ջուրին մէջ:

— Կուզե՞ք որ խաշած միսը քեթեւ ու կալուղ ըլլայ: Միւր թեթեւ ու կակուղ եփելու համար քիչ մը օդիով ցողուելու է միւր, կամ աւելի աղէկն է քիչ մը կաթեցնել այս հեղուկէն այն ջուրին մէջ ուր միւր պիտի խաշի, կամ եփուի:

ԴԵՂԱԳԻՐ ԹՕԴԱՅԱԲԻ (RHUMATISME)

Յօղացալի դեմ մասնադեղ. — Սխտորի երկու պծեղը սխտորգուշի մէջ ծեծեցէք (մանրել) չորս կրամ ամօնիաքի խէժի հետ, (gomme ammoniac). Թրջեցէք ջրով, այս խառնուրդով երկու կամ երեք գեղահաս չինեցէք կամ իրիկուն, առաւօտ հեղուակացնելով խմեցէք: Կրնաք sassafrastr գորաւոր (une fort infusion) մ'ալ կանոնաւորապէս գործածել. oppodeldoc baumeով ալ կրնաք չիել ցաւին տեղերը, ցաւած մասերը ասուեակով (ֆանէլա) փաթտեցէք: յօղացալն այս դեղով շատ յաճախ եւ շատ շուտով ըզրնոցած է: Այս դեղն օգտակար է նաեւ իսկոր ոսկորի կամ ջիղ ջիղի քով եկած, զիրար սեղմած յօղային պրկումներն ալ կրնայ բժշկել:

ԸՂԵՂԻ ՀԱՐՔՈՒՆԸ

Ըղեղի հարկուխը գաղբեցնելու լաւագոյն միջոցն է քննդիւր տը եփու ներշնչել (հոտ-

ուրտալ): Ասոր համար լայն բերնով սրուակ մը գործածելու է. քանի մը ժամուան մէջ շատ անգամ գործածելու է, ապահով լինելու համար թէ քենդիւր տը ետըը չէ ցնդած: Այս զեղը գործածելու է նա մանուսանդ ախտանիշն սկսածին պէս:

ՀԱՐՐՈՒԽԸ

ԵՒ

ԸՆՏԱՆԻ ԴԵՂԱԳԻՐԸ

Մեկ քանի ժամուան մէջ հարբուխը բը ժղկելու պարզ միջոց, որ շատ ածան է. անվիրիպէի է: — Բափուրի (քէֆիրի) գոլոր. չինները մէկ քանի ժամուան մէջ հարբուխն ընտանցելու շատ պարզ միջոց մ'են: Ահա. ւասիկ անոր գործածելու կերպը: Մանր հարուխէ վարակեալ անձը, քանի մը կտոր քափուր սկաւառակի մը մէջ հոսցած ջրով թրջելէ յետոյ, գլուխը կտաւեղէնով լաւ մը ծածկած, քիթովը ուժով մը ներշնչելու է քափուրէն արծակուած գոլորչինները: Օրն 4—5 անգամ կրկնելու է սոյն գործողութիւնը, եւ անա 24 ժամուան մէջ հարբուխը կ'անցնի, կ'անհետի:

ՀԱՅ

Սննդաբար եւ խնայողական հաց: — Այս հացը կ'ըզդկանայ գետնախնձորի ալիւրէ եւ հաճարէ (չալտար) կամ ցորենէ (froment): Գետնախնձորը կեղպելէն եւ լուանալէն յետոյ, բարակ բարակ շերտերով կը կտրտեն. ամանի մը մէջ կ'տեղաւորեն ու յստակ ջրով կը ծածկեն 24 ժամուան չափ: 24 ժամէն յետոյ ջուրը կը քամեն, եւ նորէն կը թողուն որ 24 ժամ ալ մնայ առանց ջուրի: Անկէ վերջ փուռին մէջ չորցնելու է գետնախնձորին շերտերը, երբ լաւ մը չորցած են, ջաղացքը կ'տանին հոն աղալու համար. հոն չորորդ մասին կամ քառորդին չափ հաճարի կամ ցորենի ալիւր կը խառնեն հետ:

Ալիւր չինելու համար գործածուած հատերն երբ աւրուած են, կամ անձրեւի տունն ցանուած կամ բուսած են, խմորը թրելու ատեն՝ ջուրին 10րդ մասը քարեջուրով կ'շաւղեն: Հայսին մէջ եթէ քիչ մը օղի յաւելուն ջուրին հետ, ասով հացն աւելի ընտիր եւ աւելի սպունգանման կ'լինին:

ՊԻՐԱ

Առունին պիրա շինելու դեղագիրքեր կամ կէրպէր:

Ա. — Առէք տաշտ մը, լեցուցէք հոն 33 լիգրա հաճար (չալտար), լեցուցէք վրան անոյշ ջուր այնքան որ թրջելու չափ ըլլայ, եւ ոչ թէ այն քան շատ որ հաճարը ուղղելու չափ ըլլայ: Օրը շատ անգամ երերցուցէք, խառնեցէք հաճարը մինչեւ որ ընծիւղի (ֆիլիպէնմիշ ըլլայ): Երբ ընծիւղները մէկ սանթրիմէր երկայնութեամբ մեծնան, հանեցէք հաճարի հատերը, եւ լեցուցէք 228 լիգրա պարունակութեամբ կամ տարողութեամբ տակառի մը մէջ: Աւելցուցէք վրան մէկ քիլոկրամ քարեջուրի խմոր (մայա), եւ 28 լիգրա ողկէկ տաքցած ջուր, բայց չ'եռացած, եւ ծայրը ճեղք գաւաղանով մը ամենքը մէկանց խառնեցէք. հետեւեալ օրը նորէն պիտի լեցնէք տակառին մէջ 28 լիգրա տաք ջուր (գլիսիլի է որ երբ չ'ելած ըլլայ) եւ պիտի խառնէք առաջուան պէս: Վերջապէս՝ երրորդ օրը՝ պիտի լեցնէք մինչեւ բերանը տաք ջուր, ու պիտի կնքէք:

Տասն եւ հինգ օրէն կամ երեք շաբաթէն, եղանակին բարեխառնութեան համեմատ, քաշեցէք հեղուկը եւ սպառեցէք: — Այս տեսակ չինուած բնտանի պիրային լիգրան հազիւ երեք սանթրիմի կամ վեց փոյտի կուգայ:

Բ. Առէք 250 կրամ houblon(*). վեց քիլոկրամ չաքար, 150 կրամ քարեջուրի խմոր, 10 լիգրա ջուր: Եռացուցէք հուպլոնը կէս ժամու չափ, 20 լիգրա ջուրի մէջ, քամեցէ անցուցէք (սիւզմիշ ըրէք). աւելցուցէք չաքարը հեղուկին եւ ապա մնացեալ ջուրը: Աւելցուցէք յետոյ քիչ մը ջրոյ մէջ մարած քարեջուրի խմորը, եւ վերջապէս այնպէս ուժով մը խառնեցէք որ խառնուրդը կատարեալ ըլլայ. քանի մը ժամէն յետոյ, եթէ եղանակին բարեխառնութիւնը յարմար է, 15 աստիճան, գրեթէ եռացումը կ'սկսի: Տակառին բայ թողուած ծակէն փրփուր գուրս կուտայ, երբ այս փրփուրը կ'գոյանայ, սովորական ջուրով աղէկ էր կը լեցնեն տակառը: Երբ փրփուրը կ'զգարի, խմորումը կամ եռացումը բաւական է: Կ'գտեն, այսինքն պրդտորութիւնը անցնելով կ'փայլունցնեն գոյնը, նախ քայախի մէջ կակուղցուցած եւ ապա քիչ մը ջուրի մէջ հալեցուցած երեք կրամ ձուկի սոսինձով, եւ այսպէս կը խառնեն:

(*) Հայ. գալուկ. Տճկ. հըմէլ:

պիրան հետ Երկու օրէն յետոյ շիշերու մէջ կ'ընցնեն: Եթէ աղէկ կտտարուն պիրաշինութեան այս կերպին բոլոր գործողութիւնները շատ ընտիր պիրա մը պատրաստած կըլլան որ շատ փոքրուն կըլլայ շաքարէ մը յետոյ: Այս պիրան մէկ լիդրան 10 սանդիմի կամ 20 փարաի կուգայ: Թէ որ շաքարին տեղ շաքարի մրուրը, այսինքն շաքարը զըտեկէն դոյացած քամուք կամ խամ շաքարը գործածուի, լիդրան 3 սանդիմի կուգայ: Մէկ սանդիմը երկու փարայ է գրեթէ:

Խնայողական պիրաի նոր դեղագիր մ'ալ: Գ. Մէկ ծայրէն ծակած շատ մաքուր տակառի մը մէջ, կ'ընցնեն 50 լիդրա ջուր, 125 կրամ հուպլոն, 1 քիլոկրամ 750 կրամ, մէկ անգամ միայն զուած շաքար (խամ), մէկ լիդրա ընտիր քաղցիս եւ 8 կրամ նարինջի չոր ծաղիկ. աղէկ մը խառնելու եւ թողելու է 3 օր՝ ամառ ատեն, եւ 4 օր՝ ձմեռ ատեն, աղէկ մը թրջոցը մնայ, խմորի, քաստի, Հոգ տանելու է քաստիմը կտտարւած պահուն տակառը ուժով հաստ կտաւով մը ծածկելու է: Թէ առաւօտ եւ թէ երեկոյ գաւազանով մը զօրաւոր կերպով խառնելու է: Երեք չորս օր վերջը, եղանակին համաձայն, շիշերու մէջ կ'ընցնեն, եւ ընտիր խիցերով կը գոցեն շիշերուն բերանները, խիցերն ալ թելերով կը կապեն: Այս գործողութենէն 3 4 օր վերջը՝ շիշերը կանգուն կ'տեղադրեն եւ կ'թողուն հոն մ'նչեւ սպառեն: Որպէսզի այս պիրան աղէկ պատրաստուած ըլլայ, տառն օր՝ ամառ ատեն, տառնեւ հինգ օր ձմեռ ատեն սպասելու է:

Պիրաի դեռ շատ մը գեղագիր կան զորոնք իրենց կ'արգին մաս առ մաս պիտի հրատարակենք: Հանրագիտակի մէջ, որիչ շատ մը բմպիլիններ պատրաստելու դիրին եւ սակաւածախս եղանակներու հետ:

ՎԻՐԱԽՈՐՈՒՄԻ ԴԵՂԱԳԻՐ

Կուզիք որ վերբերնուդ ցաւը շուտով անցնի եւ շուտով բժշկուիք:

Երբ վիրաւորուած էք ու ձեր վերջին ցաւէն շատ կ'տառապիք, թափ մը մէջ դրած կտակարարի մոմերին վրայ ցանցէք շաքար կամ խամ շաքար, վիրաւորուած մասը կրակին վրայ ցանցած շաքարի ծուխին վրայ բռնեցէք, քանի մը վայրկեան եւ ա՛նպիսի տեսէք թէ ցաւին սաստկութիւնն իսկոյն կ'մեղմանայ եւ ցաւին բժշկութիւնն ալ կ'գիրանայ:

ԱՐԳԱՆԱԿ ԿԱՄ ՄՍԻ ԶՈՒՐ

Արգանակը պահելու կերպը. — Լեցուցէք արգանակը շիշերու մէջ, դրէք պաղ ջուրով լեցուն կաթսայի մը մէջ, տաքցուցէք ջուրը եռացնելու աստիճան, եւ թողուցէք որ 15 րոպէի չափ եռայ, յետոյ հանցէք շիշերը տաք ջուրէն, շիշերուն բերանները խիցով աղէկ մը գոցեցէք: Այսպէս երկար ամիսներ կ'գիմանայ արգանակը:

ԿԱՐԿԻՆՈՍ

(ԲԱՆՍԵՌԻ, ԻՆՃԻԹՄԷ ՊԷՆԻ)

Անոնք որ կը կարծեն թէ այս սոսկալի ախտէն վարակուած են, եւ իրօք ալ քանսնին ունին, կրնան վստահ եւ ապահով ըլլալ իրենց ապաքինման մասին. որովհետեւ կարելի է բժշկել իրենց ախտը առանց ո՛ր եւ է վիրաբուժական գործողութեան եւ իրենց մարմնոյն ո՛ր եւ է սաստիկ ցաւատառեալու. որք յուսահատութիւն կը պատճառեն թէ՛ հիւանդին եւ թէ՛ նորա շուրջը լքտնուող մարդոց: Ելեկտրական դարմանք մինչեւ ցայժմ շատ մը բժշկութիւններ գործած են: Շատ հիւանդներ՝ որոնք իբրեւ անբժշկելի դատապարտուած էին զիրենք խնամող բժշկիներէն, այսօր կտտարեւապէս ընտցած ու ապաքինւած են: Կարեւոր է նշանակել թէ այս բժշկագործութիւնը յաջողւած են առանց ո՛ր եւ է գործողութեան, որովհետեւ Լյուքսիքի Մետիցայը (Ի Բերա Շանսէլլոնի փողոց, թիւ 6), որ կը դարձանէ սոյն ահաւոր ախտով վարակեալները, բացարձակաբար կարգիլէ ամեն վիրաբուժական գործողութիւն իբրեւ անօրուտ. վասն զի այս վիճակին մէջ ախտը վերստին յերեւան կելնէ:

Արգարեւ շատ ուրախալի է որ այսպիսի գծնդակ տխար մը անվերապելի դարմանն հուսկ ուրիմն գտնուած է. ուստի պէտք է առանց յապաղման դիմել խորհուրդ հարցնելու երբ կասկած ծագի ախտին գոյութեան վերայ, եւ ժամանակ անցունելով թոյլ չտալ որ ախտը բովանդակ մարմնոյն մէջ տարածուի եւ գորութիւններն սպառէ:

ՆԵՐԿԻՆ ՀՈՏԸ ԶԵՋԵԼ

Նոր ներկուած սենեակի մը ներկին անհաճոյ հոտը ջնջելու համար դիր սենեակին մէջ տեղը վառարանի մէջ բեւեկնոյ (արտորճ) սերմեր եւ սենեակը ամուր մը գոցէ. եւ լած ծուխը կը ջնջէ ներկին հոտը: Այս օգտակար է նաեւ ծխախոտի մուխով ապականեալ սենեակի մը օդը մաքրելու համար:

ՉԻՆԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՉԻՆԱՅ ԿԱՅՍՐՆ ԵՒ ԱՆՈՐ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ

Չինի կայսրը կ'կոչուի Երկինքին (Տիեհ-Սը) այսինքն Աստուծոյ զաւակը, եւ Անոր փոխանորդ-վարիչը, Օգոստոսփառ Տիրապետը (Օւանկ-Տի), Օգոստոսփառ Բարձրութիւնը (Օւանկ-Շանկ), տասն հազար տարիներու Տէրը (Հուան-Սուի-Իաի), եւայլն, եւայլն, գերագոյն պաշտօնին բոլոր առանձնաշնորհումները լիովին ունի. ամէն իշխանութիւն, ամէն հեղինակութիւն կը բղխի իրմէն:

Դիւրահաւան եւ աւելորդապաշտ ժողովուրդը, որուն մոլորումներն ու տգիտութիւնն ա'լ աւելի կ'զօրացնեն չինական դրպիրները կամ գրագիտական դասը, այնպէս կ'հաւատայ թէ՛ բոլոր երկրագունտն իրենց հպատակած է, եւ թէ ուրիշ ազգերու բոլոր թագաւորներն անոր կողմանէ կարգուած պատուիրակներ են: Իրեն համար օրէնք չիկայ, ինքն օրէնքէն գեր ի վերոյ՝ իր կամքն ու հրամանն օրէնք է. ուզած ատեն կը ջնջէ շնորհած բոլոր առանձնաշնորհումները. իր վճռները վերջնական են եւ իրեն եւ եթէ կ'պատկանի շնորհ ընելու իրաւունքը: Կայսրութեան բոլոր ուժերն ու հաստիքներն իր բացարձակ տրամագրութեան ենթարկուած են: Երկիրն ու երկրագունտն ամբողջ իր բնական ստացւածն է, մարգերն ամեն, ազգերն ամեն իրեն հպատակները, իր հողերուն ու իր շէնքերուն վարձակալները, շահագործողներն են. որովհետեւ կայսրութիւնն ամբողջ իրեն կ'վերաբերի: Չինի կայսրը բացարձակապետութեան մարմնացումն է: Երկնքին տակ գտնւած բոլոր մահկանացուները՝ թագաւոր թէ սպասուոր, հասարակ թէ յատուկ, պաշտօնական թէ անպաշտօն էակներ, իրեն երկրպագու ու ծնրադիր ազերսարկու ծառաներն են: Իր երկնային ու երկրային բոլոր այս իրաւունքներուն փոխանցումն իրեն միայն կ'վերաբերի: Յաջորդութեան կամ Պայազատութեան եւ ո'չ մէկ օրէնք զինք չի նեղեր: Չին կայսր մը կրնայ օրէնք զինք չի նեղեր: Չին կայսր մը կրնայ ընտրել իրեն յաջորդ, ուզած ատեն, ուզածին պէս, իր զաւակներէն կամ իր հպատակներէն հաւանած մէկը: Իմաստասիրօրէն նկա-

տելով, Չինի կառավարութիւնն ամուլ բացարձակապետութիւն մ'է, լրտեսներու հարձերու եւ անսահման պատասխանատուութեան ենթակայ պաշտօնեայնէրու բազմութեամբ չրջապատեալ տեսակ մը բռնապետական նահապետութիւն կամ հայրապետութիւն է, որուն ազդած սարսափն է որ կ'մշտնջենաւորէ ու ամուր կը բռնէ իշխանական հեղինակութիւնը:

* *

ՉԻՆԱԿՍՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Չիներն աշխարհի ամենէն աւելի բազմաթիւ ժողովուրդն են. 400 միլիոն չիներ կան: Դիտելու է թէ այս ջոքս հարիւր միլիոն ժողովուրդները կ'բաղկանան ո'չ միայն չիներէ, այն նաեւ թաթարներէ, Մոնղոլներէ, Մանչուներէ: Այժմեան տիրող արքայական ցեղը թաթարականը կամ մոնղոլականն է: Չինական բոլոր քաղաքական, վիճարական, վարչական եւ ուրիշ ամէն կարգի պաշտօնական մարմնոց, գումարմանց կամ շարժմանց մէջ թաթար տարրը միշտ առաջնակարգ իսկ բուն Չին տարրը ստորադաս ու երկրորդական է, հակառակ չինութեւ մեծամասնութեան: Դիտելու պարագայ մալ սա է թէ՛ 50 միլիոն Մանչուականներ ալ կան չինու մէջ ամեն ցեղի գասակարգէ, որոնք զօրաւոր դիրք եւ հզօր ազդեցութիւն ունին, եւ շատ անգամ բոլորովին անկախ ու ինքնօրէն իշխանութիւն մը հաստատելու համար ապստամբած են: Չինական իշխանութիւնք Մանչուական ապստամբութիւնները զսպելու համար մեծ զօրութեանց մասնուած եւ անհամար զոհողութիւններ ըրածնէ: Նմանապէս Չին ժողովուրդը թաթարաց լուծը թօթւելու եւ բուն չինական ցեղին կործանեալ Չին իշխանութիւնը վերականգնելու համար, միշտ զազտի ընկերութիւններ կազմակերպած են եւ յաճախ ապստամբած՝ թաթար իշխանապետութեան դէմ: Կէս դար առաջ՝ Տիեհ-Տի անուն Չին ապստամբապետի մը առաջնորդութեամբ Տաի-Պիւններուն, եւ վերջերս ալ՝ Պոքսըններուն ահարկու շարժումները տիրող թաթար ցեղին դէմ չինական ժողովուրդին որոշուցած ատելութեան ու բռնատուտեան ցոյցերն են, որոնք ատեն ատեն կ'սկսին, եւ կ'վերջանան չինաց աշխարհակորոյս փնտովը եւ եւրոպայի ազդաց աշխարհակալ շահն-

րովր: Չինաստան անմատչելի ու անսահման անապատներով, անկոխելի անտառներով, բարձրաբերձ լեռներով, եւ նամանաւանդ զժուարամատոյց ծովեզերքներով չրջապատուած լինելուն պատճառաւ, երկար դարեր աշխարհի ուրիշ մասանց ժողովուրդներու անծանօթ եւ անոնց հետ անհաղորդակից մնացած է: Չին ժողովուրդը մեզ՝ հայոցս՝ կ'ծանօթանայ երբ Մանգուէն իշխանը Չին Ստանէն Հայ հին Ստանը դադլթելով Մամի-կոնեան ցեղ անունով կ'հռչակաւորուի մեր աղգային հին պատմութեանց մէջ: Չին ժողովուրդը պատերազմի մէջ վաւազագոյնն է, ինչպէս որ սոյն Մամգուէն իշխանն ալ Համ Ոստանին մէջ առաջնակարգ գիրքն ու համբաւն ստացաւ չինական իշխանաց յատուկ այն վայրագ անագորունեան հին որով Սլիւուն եաց լեռնական քովարի ցեղը՝ բնգլգլաւնցն առթիւ, սրախողող բնաջնջեց: Թէեւ՝ Ռինչեւ այսոր՝ Սլիւուն եաց լեռնորդիներուն ճակատագիրը նոյնն եղած լինի:

Չինացիք որքան ալ իրենք զիրենք ուրիշ ժողովուրդներէ գերազանց համարեն, իրենք ալ ուրիշ ազգերու հասարակ ընթացքովը վայրենիութենէ ի քաղաքակրթութիւն բարձրացած են: Թէեւ մինչ, զեռ Ասիայի եւ Եւրոպայի այսօրուան ծանօթ ժողովուրդները վայրենի վիճակի մէջ, անտառներու խորը, քարանձաւներու գիրկը, լճաքաղաքներու մէջ, վտորի կ'սղնիով կրանանէին, կենդանեաց մորթերն զգետտ կրհագնէին: Իրենք անոնց այսօրուան ծաղկեալ քաղաքակրթութեամբ փայլուն վիճակն ունեցած են, սակայն չինական հնապատումները երբ կ'պրպտենք, կ'գտնենք անոնց նախնիքներն ալ վայրենի վիճակի մը մէջ երկար դարեր թախտադած: Չինի նախնական ժողովուրդներն ալ անտառներու կամ քարայրներու մէջ ապրած են ուրիշ ամեն ժողովրդոց պէս, եւ զգետտի տեղ՝ վայրի կենդանեաց մորթիւ հագած: Անոնք ալ որսացած կենդանիներուն մտովը կ'անանէին: Չինաց քաղաքակրթութեան առաջին հետքերն ու նշանները կ'երեւին Չինի Հիւսիսային Արեւմտեան կողմի աշխարհաց մէջ, Հօանկ-Հօ գետին եզերաց վրայ հաստատուած ցեղերուն մէջ: Այս գետեզերաքանակ հաստակտոր ցեղերուն պետերն սկսան տակաւ առտակաւ կանոնաւոր կերպով միմեանց հետ

ամուսնութիւններ կնքել եւ ընտանեկան կենցաղի վարժուիլ: Սկսան հիւզակներ, խրճիթներ ու տնակներ շինել, օգոց անբարեխառնութեանը դէմ, իրենք զիհենք պաշտպանելու ու պատսպարելու համար Գտան կրակ վառելու հնարքը, ասով երկաթը դարձնելու եւ այլ եւ այլ երկրագործական գործիներ ու զէնքեր շինելու գաղտնիքը: Գիտցան թունաւոր ու վնասակար բոյսերէն որոշել առողջարար ու անդարար բոյսերը: Տարւան չորս եղանակներու թուականները ճշգիցին, գրի շատ մը դրութիւններ հնարեցին, եւ վերջապէս այսօրուան իրենց գրելու սովորական ու գործնական կերպն ընդունեցին: Սորեցան մետաքսն ու բամպակը հիւսելու եւ բանիլ: Չինացէտ գիտունի մը կարծիքին նայելով, չիները սարգերու ու տայն հինելու կերպէն ուսած ըլլան հիւսելու արհեստը:

Մեր թուականէն զեռ երեք դար առաջ, չինաստան ալ եւ այլ փոքր Տերութիւններու բաժնուած էր, անոնցմէ ոմանք աւելի զօրաւորագունին հպատակ, ուրիշներն ալ իրարմէ անկախ:

Ճեմ-Շի Հօանկ-Տի անուն հռչակաւոր ու խուժաղուժ կայսր՝ մեր թուականէն երկու դարու չափ առաջ, բոլոր դիրքերը կրակով այրել, ջնջել հրամայելէն վերջը, բոլոր ալ եւ այլ փոքրիկ թագաւորութիւնները միացուցուց եւ ամէնքը վերածեց մէկ կայսրութեան մը, որ իրմէ Վիսկիս Այս միակալ ու միահեծան կայսիր որովն սկսած է Ասիայի ծայրագոյն Արեւելքին այս երկիրը Ճէն կամ Չին կոչուելու սովորութիւնը:

Չինական պատմութեան ամենէն աւելի կարեւոր գիրքն է Բու-Գինկը, զոր՝ Յ.Բ.է՝ 500 տարի առաջ, մատենագրած է Ղունկ-Մէն անուն չին գրագէտ մը: Չինական զբաղութեանց խորին հմուտութեամբը նշանաւոր Կոպիլ Ֆրանսացի Միսիոնարը, եւ Ֆրանսացի նշանաւոր չինասրան գիտունը՝ Պիօ Թարգումա՝ նաեւ այս դարուն սկիզբները Ղունկ-Մէնի Պատմագիրքը, որ զարմանալի ճակատագիր մ'ունեցաւ: Այս գրքին բոլոր օրինակները Ճէն-Շի Հօանկ-Տիի պաշտօնէից ձեռօք այստեղ փնջուած կ'հաւատարմին, բայց գտնուեցաւ Թու-Շանկ անուն ծերունի չին զպիր՝ որ գոց բրած էր բոլոր գիրքը, Հին Դրուիդներու քրմաց նման, որք իմաստնոց սրբազան գրքերուն հազարաւոր, բիւրաւոր տողերը ջուրի պէս գոց կ'ընէին, եւ իրենց աշակերտաց ալ գոց ընել տալ կ'ուսուցանէին:

(Շար.)

ՊՕԵՐՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄՆ

ԵՒ

ԱՆՈՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՑՄԵՐ ՕՐԵՐ

1652ին էր, խոմար մը հոլանտացի գեղ-
ջուկներ, իրենց տաջնորդ ընտրելով ժան-
Անդուան վան Ռիպէքը, գնացին հաստա-
ւեցան Ամբրիկէի հարաւային կողմը, Բարե-
յուսոյ գլուխը, զոր դատ. Պարթըլէմի Տիագ
Փորթուգալցի նշանաւոր նաւապետը՝ 1486ին
Նոյն ատեն կ'կոչուէր փոքրիկաց գ. խաւս
1497ին՝ Վասգո ար Կամա՝ Փորթուգալից
հռչակաւոր նաւապետը, Հնդկաստանի ճաւ-
բան գտաւ, յաջողութեամբ անցնելով փոքր-
կաց Գլխէն, որ այլեւս կոչւեցաւ Գլուխ Բա-
րեյուսոյ, որ այն ատենէն ի վեր մնացած էր
անտէր Փոթորիկաց սպառնալիքներէն ան-
մատչելի հոչակուած այս վայրաստանին մէջ
է որ գնացին հոլանտացի շինականները հաս-
տատուեցան։ Այս գիւղացիներուն նպատակը
կամ տէսակէտը առեւտրական կայան ու
կեդրոն մը հաստատել չէր, այլ վարել հով-
ւական կեանք մը եւ մշակել խաղաղօրէն
այն հողերը զորս երկրին բուն տոպոցուած-
աւէր Հոգէնդոներէն ու Գաֆրերէն կ'գնէին։
Հոլանտացի ուրիշ գաղթականներն ալ հետ-
գհետէ սկսան դիմել գէպ Բարեյուսոյ։ Այս
վերջին խումբերուն հետ միացան նաեւ
Նանդի հրովարտական յետս կոչման հետե-
ւանօք Ֆրանսական վտարեալ Կալվինա-
կաններն ալ։ Այս վերջիններուն մէջ կ'գրո-
նուէր Ֆրանսայի Ստորին-Շառանդ կոչւած
նահանգին Դոնէյ-Պուդոն տանին բնիկնե-
րէն ժուպէր ընտանիքը, նոյնպէս եւ Գրոզ-
նիէ ընտանիքը, որ յետոյ Գրոնթէ մականու-
նին փոխեց իր անունը։ Պէրնարտէն ար Սէն-
Բիէր, 1767ին, իւր ճաւորդութեան ատեն
երբ այցելեց Բարեյուսոյ Գլուխի գաղութը,
հոն հանդիպեցաւ բոլորովին ֆրանսական
քաղաքի մը որ կ'կոչուէր փոքր Ռոշէլ։

— Անշուշտ ի յիշատակ Ստորին Շառանդի
ծովահայիաց հռչակաւոր այն Ռոշէլ քաղա-
քին, ուր գաշնակցական Կալվինականները
1554էն ի վեր ամրացած՝ գրեթէ անկախ
հանրապետութիւն մը հիմնած էին, եւ 1573ին
զօրեղապէս դիմադրելով Հանրի Գ.ի յարձա-
կումները յետս մղեցին, մինչեւ որ 1627ին
Ռիշըլիէօ յաղթեց ասոնց յաճառ դիմադրու-

թեան՝ եւ Նանդի Հրովարտակն յետս կոչելով
արտաքսեց Կալվինական քաղաքէն 300
ընտանիքներ, որոնց հետ էին ժուպէր եւ
Գրոզնիէ ընտանիքները։ — Թրանսվալեան
պատերազմաց ատեն Պօէրական դատին եւ
Քրիսկէր Նախագահին նկատմամբ ընդհանուր
Ֆրանսացւոց ցոյց տուած պաշտօնական թէ
անպաշտօն ջերմագին համակրանքը կ'արգա-
րանայ Պատմական սոյն յիշատակութեամբ։
Կրկին ծագումն ունեցող այս ագաւակատէր,
հողագործ, տուարածական ժողովուրդը՝ ուր
սակայն հոլանտական տարրն էր արորդը,
կ'ապրէին նահապետօրէն, մշակելով իրենց
գաւտերը, անուցանելով իրենց բազմաբնոյ
ընտանիքները, ամենքն ալ մէկ սիրտ, մէկ
հոգի, խաղաղ, երջանիկ ու անկախ կամ
գրեթէ Հոլանտայի Հարաւան ու բարեմիտ
գերիշխանութեան տակ, երբ 1793ին, չարա-
գուշակ թուական Պօէրաց համար, Հնդկաս-
տանի ճամբուն վրայ Բարեյուսոյ սքանչելի
գիրքն Ագլիացւոց նախանձը գրգռեց։ Բրի-
տանական կղզիներու մեղովուրդը որ գրեթէ
շոգիով ու ծովով կ'ապրի, աչքը անկեց Բա-
րեյուսոյ։ Եւրոպական պատերազմներու ընդ-
հանուր խառնակումներէն օգուտ քաղելով
Անգլիական զօրքերն անմիջապէս յարձակե-
ցան այս նահապետական անգլէն գաղութին
վրայ, եւ զայն գրաւեցին առանց պատճա-
ռի, իրաւունքը հզօրին է ըսելով։ Մեծն
Նաբոլէոն Մեծին Բրիտանիայի այս մեծագոյն
անիրաւութեան աչք չի գոցեց, եւ Ամիենի
գաշնադրութեան մէկ յօդուածին ուժովը
կրկէն հոլանտացւոց վերագարծուց Բարե-
յուսը։ Սակայն Անգլիա, 1806ին, նորէն յար-
ձակեցաւ Պօէրական գաղութին վրայ, եւ
այս անգամ ձեռքէ հանել չուզեց, եւ 1814ի
գաշնադրութեամբ վերջնական կերպով զոր-
կեց Հոլանտան Բարեյուսի վրայ ունեցած
բոլոր իրաւունքներէն, հակառակ գաղթա-
կաններու բողոքին ու դիմադրութեան։

Անգլիայի փառասիրութիւնը որո՞ւ քչմօր
բաղխի, իր ծանր բռնութիւն տակ կ'ընկճէ,
կ'ճգմէ զայն։ Պօէրները կրկին անոր դառն
փորձը։ Ապստամբական բոլոր շարժումները
արեւին մէջ խղիւղեցան։ 1827էն ի վեր՝
աշխարհակալութեան ու գրաւման պահուն
հաճութեամբ տրուած առանձնաշնորհում-
ները ջնջուեցան, անգլիներէն պաշտօնական
լիզու հռչակեցաւ, ամեն բռնական միջոց

ի գործ գրեցաւ նկնելու, նուաճելու կամ
թէ բոլորովին բնաջինջ ընելու համար այս
աննկուն ու անզուսպ շինականները Պօէր-
ներու գոյութիւնն այլեւս կարելի չէր, պէտք
էր հնազանդիլ լուծին կամ յանձնել երկիրը
Պօէրներէն շատերը նախաձեռնար ընտրեցին
տարագիր գնալ իրենց երկրէն դուրս:

1835/ն, Բարեյուսոյ գլխէն Պօէրաց ելքն
սկսաւ խմբովին: Պօէր ագարակաւորք՝ Պրան-
սայի Բիւզերի եւ Հոլանտացի Մարիձի ա-
ռաջնորդութեամբ, տեղաւորելով իրենց վաշ-
կառուն սայրերուն վրայ կիներն ու տղանե-
րը, քչելով իրենց առջեւէն երամախները,
կ'չուեն դէպ հիւսիս, Նադալի ամայի վայրաց
մէջ: Ընդհանուր տարագրանքի այս աղէ-
խաբք ու սրտածովիկ պահուն ստիպեալ կը-
ուիլ վայրաց Զուլուներու դէմ ալ, զորս
անգլիացիք ձեռքի տակէ կ'զրգոճին անոնց
դէմ անխղճօրէն:

1837 եւ 1839 տարիներուն մէջ, հինգ
հազար ուրիշ ընտանիքներ ալ այս օրինակին
կ'հետեւին, կ'անցնին Օրանժ գետը, եւ անոր
աջ եզերաց վերայ կ'նիւնարկեն Օրանժի
Հանրապետութիւնը:

Հազիւ Զուլուներու յաղթական Նադալի
գաղթականներն իրենց երկրորդ գաղթա-
վայրը կ'էնցնեն եւ հողին արժէքը կ'բարձ-
րալ, եւ ահա Անգլիա կ'սկսի վէճի նոր կըն-
ճիւղներ յարուցանել եւ խռովիլ անոնց ան-
դորրը: Պարտեալ, զժբախտ Պօէրները յան-
կարծակիի եկած, 1845/ն, վերստին ձեռք
կ'առնուն տարագրանքի ճամբան: Անորէ
կիցո՞ւ Բրեգորիոսի առաջնորդութեամբ:
Կանցնին Վաալը, որ Օրանժը թափուող վը-
տակներէն մին է, անոր հիւսիսային գետա-
փանց վրայ իշխող Էրանց չլթաները կ'ճեղ-
քեն, եւ անոր միւս կողմը կ'նիւնեն Թրանս-
վալեան (անգրավաալեան) Հանրապետու-
թիւնը: Այլեւս իրենք զիրենք բոլորովին ու
վերջնականապէս անգլիական ընչաքաղց հե-
տապնդումէն ու հալածմանքներէն զերծ ու
ապահովեալ կ'հաւատան այս անգամ...

Երբէ՞ք: Անգլիա ոչ գութ ունի, ոչ ալ
գուլ ու գազար, այս շինականներուն հա-
մար, որոնք իրենց նահապետական ձեռովը
կուղեն ապրիլ, եւ որոնց հանգիստ շունչ
առնել չիտար: Անգլիա նորէն կ'սպառնայ
ինքնօրինութեանը համար բազմաչարչար ժո-
ղովրդեան գոյութիւնը ջնջել եթէ իր գերիշ-

խանութիւնը չի ճանչնայ: Յայնժամ բոլոր
Թրանսվալցիները զէնքի կ'վազեն. սակայն
Պոմ-Բլաադի մէջ յաղթուելով՝ իրենց երկիրը
Բարեյուսոյ գաղութին կցւած կ'տեսնեն,
1848/ն: Յայնժամ կ'սկսին կուսակցական եր-
կար կռիւները, յաջողանքի, ձախողանքի այլ
եւ այլ էջեւէջներով եւ կ'տեսնեն մինչեւ
1852, Զանտ-Ռիվերի գաշնադրութիւնը, որ
Դրանսվաալը անգլիական թեւարկութեանէն
ազատ կ'կացուցանէ: Օրանժը՝ որ շարունա-
կեց կռիւը, յաջողեցաւ ուրիմն ինքն ալ իր
անկախութիւնը ճանչցնել Պէօմֆօնդայնի
գաշնադրութեամբ, 1854/ն:

Տասնեւեօթ տարի վերջը՝ երբ Բէմպըր-
էի ագամանքի հանքերը գտնուեցան, այս
վերջին գաշնադրութիւնը բնութարանեցաւ:
Անգլիա, 1871/ն, իրեն կ'շորթէ հանքաբեր
երկիրը, եւ Օրանժ ստիպեալ կ'հարկադրի
ընդունել ու վաւերացնել, 1876/ն, իր սեփա-
կան ստացուածքն եզոզ երկրին սոյն ան-
գամատումը:

Դրանսվաալ ինքն ալ յարգեց խաղաղու-
թիւնը, մինչեւ 1877: Այս նոյն տարին՝ ա-
ռանց պատերազմի յայտարարութեան, ա-
ռանց ո՛ր եւ է պատրուակի ստուեր մը մէջ-
տեղ կենալու, պարզապէս ու բացարձակա-
պէս յայտարարուեցաւ թէ Դրանսվաալը
Անգլիայի թագին կցւած է: Այս անուր բըռ-
նաբարումը Պօէրներուն ցասումն ու սար-
սափը ծայր աստիճան հասցուց: Դրանսվաալի
բոլոր ժողովուրդն՝ իբրեւ մէկ մարդ, սպա-
ռապնւած պատերազմի դաշտը նետեցաւ:
Պատերազմը երկու տարի տեւեց, եւ վերջա-
ցաւ 1881/ն Մաճուպա—Հիլլի մէջ ամբողջ
անգլիական բանակին բնաջինջ լինելովը եւ
Բրեգորիայի խաղաղութեան գաշնադրու-
թեամբը:

1884/ն եւ 1888/ն ստորագրուած երկու
ամբողջացուցիչ գաշնադրութիւններ ապա-
հովեցին ու վաւերացուցին Դրանսվաալի վե-
հապետական բոլոր իրաւունքները եւ անոնց
ինքնօրէն կիրառութիւնը: Այսու ամենայնիւ
Անգլիա Պօէրներու Անկախութիւնն ու ա-
նոնց ամբողջութիւնը վաւերացնող միջադ-
գային գաշնադրութեանց մէջ գտաւ միջոց
ներմուծելու քաջքնուք վերցնող առաձգա-
կան յօդուած մը, ազբիւր ապագայ կնճառա
դժուարութեանց եւ պատրուակ ապագայ
միջամտութեան, որ ծնաւ վերջին կռիւը:

Դրանովապի հե Օրանովի երկու Հանրապետութիւնները փորձառութիւններէն խրատուած, 1889ին եղբայրական դաշնագրութեամբ մը միացան, եւ իրենց ուժերը միասնաբար յատկացուցին իրենց ազգային իրաւանց ու շահուց պաշտպանութեանը Ամեն կանխահոգ եւ հեռատես զգուշութիւններ ի՞գործ գնելու պէտք ունէին, Մոսկուպա-Հիլլի արխիմոսուշտ կուէն ի՞վեր Անգղիայի բոլոր ջանքերը կ'ձկտէին մէկիկ մէկիկ առնել Պօէրներու տալ հաւանած առաւելութիւններն ու առանձնաշնորհումները:

Միացեալ արդէն յայտնի է բոլոր ընթերցողաց երէկուան եւ այսօրուան կարգացած օրական լուրերուն ու այժմէական զէպքերուն պէս Եօհաննէսպուրկի ոսկւոյ հանքերուն զիւտը պատահելով, Լոնտոնի գաղթականներուն քով աշխարհակալութեան ընչաքալց ոգին կ'արծարծի. 1893ին ձէյմսընի դաւադրական արշաւանքը, եւ Պօէր կառավարութեան այս բախտախնդիրին հանդէպ, բռնած վեհանախական ընթացքը, որոյ ի՛պատիւ ի՛քաջալիրութիւն Գերման Կայսրը շնորհաւորական համբաւաւոր հեռագիրն ուղղեց առ մեծահաւատն եւ գիւցազնոգին Քրիւկէր, Դրանովապի Հանրապետութեան Կայսրապետարայ նահապետ նախագահն, եւ ասոնց հետ՝ երկու հանրապետութեանց սահմաններուն վրայ տնգալական զօրքերու հաւաքումները, եւ սկիզբէն ցարդ իրենց գոյութիւնը իսպառ սպուռ ջնջելու համար անգլիացուց կողմանէ շարունակաբար ի՛գործ դրած արիւնալի նախընթացներու դառն յիշատակները պարտաւորեցին հողագործներու այս փոքրաթիւ ժողովուրդը որ Բրիտանական հսկային դէմ ճակատել յանդգնելու նախաձեռնարկ լինի Պօէր գիւղացին դաշար թողուց՝ սուր հրացան բահի տեղ առած, Քրիւկէր նախագահին եւ Ժուպէր զօրապետին ձայնատուր հրաւերովը, իբրեւ մէկ մարդ խաղաց ի՛զաշտ մարտին, գիւցազնաբար աչքն առնելով ու արհամարհելով պատերազմին բոլոր վտանգները, աւերումը, աքսորանքը, մահը, իրենց անկախութեան պահպանումը վտանգէ անկախ պահել փորձելու համար:

Պօէրներու գիւցազնական անցեալն ու ներկան կ'ապացուցանէ թէ կրնան յաղթուիլ բայց չեն ընկճուիլ:

ՆՈՐ ԳԻՒՏԸ

ԱՆԹԵԼ ՇԵՌԱԶԱՅՆ

Անթիլ հեռագիրն իր դատական շրջանն սկսած եւ արդէն գործածութեան մէջ է, որուն գոհացուցիչ արդիւնքը Թրանսպալեան պատերազմին մէջ աւելի շօշափելի կերպով տեսնուեցաւ: Ահա այժմ անթիլ հեռագայնն ալ սկսած է, որուն շնորհիւն ու միջոցաւ մարդ թելով՝ հեռագայնի նման կարող է փարիզէն Լոնտոնի եւ ուրիշ հեռաւոր քաղաքացի հետ այնքան դիւրութեամբ խօսիլ, ճիշտ ինչպէս երկու մարդ բերան առ բերան կրնան խօսիլ իրենց բնական ձայնով: Յաջորդ թերթով մանրամասն տեղեկութիւններ պիտի հաղորդենք սոյն նոր գիւտին վրայ, որուն հնարիչն է նշանաւոր Ռոս գիտնական մը:

Հեռաւայնագիր (թէլէֆոնոլոգի) հեռագայնէ եւ ձայնագրէ խառն բաղադրեալ գործիք մ'է, իւրաքանչիւր հեռագայնի յարմարեցուած է մոմէ արձանագրիչ մը. ձայնագիրներու գլանին նման, Հեռագայնի հաղորդակցութիւն մը կը բաւէ այդ գլանը խօսոյն շարժելու: Թելին մէկ ծայրէն խօսող մարդուն իւրաքանչիւր խօսքը ոչ միայն թելին միւս ծայրէն լսելափողին մէջ կը հնչէ, այլ եւ մոմէ արձանագրիչին վրայ՝ ապագրուած տառերու պէս, կը հաստատուի: Երբ մէկը իր տեղը չ'գտնուի, հեռագայնով կրնայ լուր մը ընդունիլ եւ խօսիլ ուղղով անձը հաղորդակցութեան կը մտնէ գործիքին հետ, ըսելիքը կ'ըսէ եւ նորա խօսքերը ճիշտ կ'արձանագրուին, եւ հեռագայնին հաղորդած խօսքերն ընդունող հեռաւոր անձը նոյն իսկ կ'իմէ կայարանին մէջ ներկայ չ'լինի, այսինքն իրեն հաղորդուած ատեն ինքն ո՛ր եւ է գործով մը, զէպքով մը բացակայ գտնուի ըստիպուած լինի, վերադարձին՝ բաւական է որ գործիքը դարձնէ եւ լսելափողը մօտեցնէ ականջին, եւ ահա գործիքն իսկոյն հաւատարմաբար կ'հաղորդէ իրեն աւանդուած խօսքերը, որով մարդ իսկոյն կը մոռնայ իրեն խօսքը ուղղով անձին ով բլլալը, ինչոսեւ ճիշտ իրարու հետ կենդանի ձայնով տեսակցելու պէս:

(Շար.)

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՍԵՐՈՐԷ ԿԻՆՊԵՆԿԵԱՆԻ

ՍԱՀՄՈՍՆ ԻՄ

Առ. Գերագնիւ Տիար Պատրիկ Կիւլպիկեան, վաղեմի եւ սիրելի կրտսեր ու տաղանդաւոր ուսումնականից մեր Ն. Շահնազարեան Վարժարանի, Ի՛շապեղ:

Տարիներ ապրեցաւ կեանքդ՝ Յիշատակդ պիտի ապրի դարեր: Ապրեցա՛ր կեանքը ճշմարիտ հայուն ու քրիստոնէին, բարի Հպատակին ու առաքինի Մարդուն: Տո՛ւր ու տալ ուսուցիր Աստուծոյն՝ Աստուծոյ, Կայսերը՝ Կայսրին, Ազգինը՝ Ազգին ու մարդունը՝ մարդուն: Տիտոսի Որացոյցն էր և ո՛չ թէ Սաղմոսին ԽՈՏՈՅ ԱՌՈՒՐՑ անցագիրը՝ կեանքիդ պատն ի՛վար կախ: Մէն մի օրն՝ որ առաւօտեց արեւելքիդ հոգիգոնէն, ԼՈՅՍԻ ԵՂԵԻ կոյր բախտին ու սեւ ճակատագրին խաւարն աշխարհոյ շատերուն, որք այսօր արարածի երախտաշուրթն օրհնիւք կը ծնրագրեն փրկին վիմաւորի էության ննջող արդարի Յիշատակիդ առջեւ: Անոնցմէ մէն մին ԵՂԵԻ ՎԱՂՈՐԴԱՅՆը՝ որ կ'իսթէ կայսին արգասաբեր անձրեւին, գարունին կանանչովը և ամառին սակեգիսակ հասկովը հնձաւէտելու համար կոչկոռ ախօսը կարօտ մշտէին, որ մեր հանապազօրին լիութիւնը կուտայ: Ո՛ւր գտար Տոճար Լուսաւորչի, հոն Արդադիրդ ունի արձանագիր: Ե՛րբ ալ, ո՛ւստ ուստեք ալ քեզ գիմեցին Ս. Սահակներ ու Ս. Մեսրոպներ, վաւաճապուհի հոգիովը զանոնք վառեցիր: Ե՛րբ ԱՂԻՆ վտիտ ու սպողուն եօթն հասկերու և եօթն երնջաց մեր տարիներուն մէջ, եօթնիցս եօթնապատիկ Ամաղթեան եղջիւր հանգիւսացար, Բակտոյ հոսեցար ու հոսեցուցիր երաշտին ցամքեցուցած արտօրէից ու դաշտօրէից մէջ: Երկրի վրայ երկնքին մէջ կ'գանձէիր: Աստուծոյ ափովը լուսման կ'բաշխէիր այրիներուն: և որոյն առջեւ մեծ Հայրապետին գողը կը բանալիր: Ընդ Աջմէ Հօյ Նստողին Դու Համարաւոր, չի ճանչցար մամոնան, և Տոճարի գաւթին մէջ խորազանելիք լուսնափոխի սեղան չի դրիր:

Ծառա՛ն աղնիւ ու հաւատարիմ: բերապատկեցիր Մին զոր աւանդեց քեզ, Տէրը, և Ա. ետարանին բերրի ու պարարտ հողոյն պէս՝ միոյն տեղ բազմապատիկն հատուցիր: Մեծատուն Տանուտէր Դու, խնջողքիդ հրաւիրեցիր Յիսուսին պատուիրած կոննականները, Ղազարոսները քեզ ամբողջից բազմեցուցիր:

Մեծատուններու մէջ՝ Մին Անոնցմէ Այց հոգիները գերեզմանէն անդին չէ թէ գթութեամբ ՄԱՆՈՒԻ կ'երկարին, ալ Հաւատոյ սրբափետուր թեւերով լուսանաւորտ հրեշտակ կ'թռչին առ Աստուած, երկնաբնակ Հարց ու Նախնեաց մեծ հոգիներու գերդաստանին նոր անդամ՝ յօդանայու, թողով իրենց ետեւ ամբողջ ժողովուրդի մը արցունքը ու սուգը՝ իրենց դադաղին ու գերեզմանին շուրջը, սիրոյ, պատուոյ տխուր հարկատու, և Ազգ մը համայն՝ իրենց իշխանական յիշատակին ծնրագիր ու երախտապարտ:

Կեանքդ համակ բարեյրաւութեանց ու Մարդասիրութեանց ԱՅՍՄԱՌՈՒՐԲ մը, եւ առաքինութեանց լիակատար ՎԱՐՔ ԲԱՐԻ ԱՐԱՆՑ մը հանդիսացաւ, Ներկայ և Ապագայ ՆՄԱՆԵԱՑԻ համար՝ գործնական ընտիր Դասագիրքը:

Ազգային բարերարաց Ծիրակայտին մէջ իրաւամբ և արդետմբ արժանացար առաջնակարգ գահոյքիդ, եւ Ազգն՝ իրեն մատուցած բազմապատիկ ծառայութեանց ու երախտեացք ի՛վարձ և ի՛պատիւ, իւր Մեծ Տան ծոցը սրբատուփ ընծայեց նշխարացդ, իբրեւ վկա արան օրհնեալ յիշատակիդ:

Եւ այն կճեալ Շիրիմը՝ որ սրբիական սիրոյ ու երախտագիտութեան արձան կ'նոճիւնայ Հողքիդ վրայ, մարմնորէ աւելի, Զաւակացդ Սիրան է Կուրծքիդ վրայ բաբախուն ու բազկատարած:



ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԷՖ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

Երբ սերունդ մը ճամբայ կ'ընայ ու կուտայ մէկզի քաշելով որ նորեկն անցնի, սա իր շաւղին պահակ ու ուղղեցոյց նախորդին տալով շնորհակալութեան ու երախտագիտութեան բարէնիչն եղող պատուոյ բարեւը խոնարհաբար անցնելու է, որպէս զի ինքն ալ իր կարգին իր յաջորդ սերնդոց յարգանքին՝ իրաւունք ունենայ: Սերունդք կը շարունակեն ազգերն ու ժողովուրդները՝ որպէս օղակները՝ շղթան, զիրար ամբողջացնելու ու աւելի զօրացնելու համար: Ա.Ֆէն մէկ ազգ կամ ժողովուրդ գրեթէ միեւնոյն մարդըն է որ կ'ծնի, կ'ապրի, կ'շարունակէ եւ օր քան զօր աւելի զարգանալով կ'գիմէ գէպ կատարելագործութեան իր անձկալի իտէալ: Ապա մեծարանաց ամեն ցոյց զոր կ'ընծայենք մեր նմանեաց, մեր իսկ անձին մասնացած կ'ըլլանք:

Մենք եւ մեր տարեկիցք որ կ'վերաբերինք 1870/ին ծնած Ազգային կրթական սերունդին, եւ որ մեզ ուսուցիչ ու հեղինակ ունիք 1860ի գրական ու կրթական սերունդը, որ տածեց զիեցուց մեր միտքն ու

սիրտը. իւր իմացական ստինքով, աւանդեց իր քաղաքակրթական գաղափարները, մէն միոյս տարրական պարտքն է մեր սիրոյ ու պատուոյ ծաղկափունջը նուիրել անոնց քաղմերախտ ու բազմալստակ յիշատակին. առն անգամ որ մեր կեանք անցքին վրայ մեզ ընդ առաջ պատահին:

Պօղոս էֆ. ծնած է Արապկիր, 1841ին: Իւր նախնական ուսումն առնելէ ետեւ՝ 1859ին Կ. Պոլիս եկած եւ շարունակած է իւր ուսումները: 1864ին մտած է Բ. Դրան Տպագրական Սենեակը, եւ 1868էն մինչ 1888՝ աշխատակցած է հանգուցեալ Ֆիլիփ էֆէնտիի հրատարակած Թուրքերէն Թերթերուն, որոց վերջինն է Թարիֆ: 1880էն մինչ 1884 աշխատակցած է նաեւ Միտհաթ էֆէնտիի հրատարակած Պրանսերէն եւ եւ Թուրքերէն լրագրին միմիայն Փրանսական բաժնին: Այս գրաւոր աշխատութեանց հետ շարունակած է մինչեւ ցարդ իւր պաշտօնական պարտաւորութիւնները: 1888ին ընդունուած է նաեւ Կայս. Պալատի Թարգմանչութեան պաշտօնին: Ի վարձատրութիւն

իւր ծառայութիւնն ստացած է Ուլայի Բ. աստիճան եւ Օսմանիյէ ու Մէճիտիյէ պատ. ուանչաններու Գ. աստիճանը:

Պառնասեան էֆէնտին 1860էն սկսեալ, մեր գրական Պառնասին պատուարեր ու ներշնչուն դէմքերէն մին հանգիսացած է:

Ոճը պարզ, հեզ ու համեստ է. բարեպաշտ հոգիէ մը բղխած աղօթքին պէս, այլ ո՛չ նուազ փափուկ ու նուրբ:

Նոյն ատենի Մասիսներուն մէջ խմբագրած է քիչ ժամանակ, եւ 1876-78 թուականներուն Կայսերական կառավարութեան նուիրական շահերը պաշտպանած է օտար եւ թշնամալից հրատարակութեանց դէմ: Այդ յօդուածները այն ատեն հրատարակուած են նաեւ Ֆիանսերէն լեզուով, Լա թիւրքի լրագրին մէջ, որ արտաքին գործոց նախա-

րար հանգուցեալ Սաֆվէթ փաշայէն գնահատուելով, Մասիսի 10 ոսկի ամսաթուղի շնորհած է, ի վարձատրութիւն այդ հաւատարիմ ծառայութեան, որ բաւական տարիներ վճարուելէ ետեւ, մէկ Տիջոց մը իբր խնայութիւն ընդհատուած էր, բայց Կայսերական Բ. Կառավարութիւնը վերջերս նորէն շնորհած է, որ ցարգ կ'ստանայ Մասիսի հիմնադիր Կ. Ս. Իւթիւճեան էֆ.:

Գրած է նաեւ Տնտեսագիտական եւ այլ բանասիրական յօդուածներ, որոնք ինչպէս իր ժամանակացոյ՝ նոյնպէս մինչեւ ցայսօր մեր ալ՝ ակնածանքն ու մեծարանքը կ'ըզգաւ պատկեն, Պառնասեան էֆէնտինն մշակած ու հանրացուցած բազմադիմի ու բազմագուտ գիտնական հմտութեանց եւ անոր անձնական պատկանելի արժանեաց հանդէպ:

”ՀԱՆՐԱՊԵՏԱԿ”ԷՆ

Յ'ԵՐԿԻՆՍ

ԱՌ ՎԱՂԱԹԱՐԵԱՄԵՆ ԼՈՒՆԻԱ Պ. ՊԱՌՆԱՍ

Գ. Ռ. Վ. Բ. Ն.

ՈՒՍՈՒՑԶԻՆ

Ստամպուլի Պաշտօնական տօն օրերէն մին էր, արեւուն պէս պայծառ, հանդէսին նման ամեն ոք զարդարուած, կ'անցնէին Ոսկեղջիւրի կամուրջէն, ճեղքելով յորձանուտ ամբոխն որ անդ կ'եռար: Աղածրի մանկիկ մը՝ նոր սանտրուած՝ գանգուրները հովին դէմ ծրփածփուն, առոյգ, կայտառ ու խնդումներս, թաթիկները մայրագորով Մեծ-Հայրիկին, Հարանց Հայր Հայրիկիդ արք խարսխած. քրդանձքն ի վեր աւելի բուսած, ծաղկած դեռաթեւ Գերդեիկ մը, քան հետն ի՛ վեր ոստոստուն ու մանտրուքայլ գառնուկ, մեծ ու շքեղ մարդերու հոծ թափօրին մէջ՝ անցորդներն իրեն աւելի ուշադիր քան ինքն անցորդաց, անմեղի մը դէմքով դէմս յանկարծ ցարեց, ասուպի մը ճառագայթին պէս. գիտե՞ս. ո՛վ. սիրական. ամենուն ալ սիրական-ՎԱՀՐԱՄԴ, մեկնատիկղ, ում կեանք տալու համար. եղով. ո՛ չնաշխարհիկդ Լուկիա, կեանքդ փոխանակեցիր մահուան. եւ այսպէս Միա-

ծնիդ օրանն եղաւ գերեզման: Այլ սակայն զՔեզ, իր մէջ նորածաղիկ յարուցած, մանկացուցած, ալ աւելի գեղեցկացոյցած Յիշատակդ է նորափթիթ: Փղձկուն խանդաղատանօք փոքրիկ Վահրամիդ խարտեաշ գըլխիկն ափերուս մէջ գրկած համբուրեցի ճակատէն կարօտովը միացող շրթնեկովդ, եւ զինքն օրհնեցի մանուկներն օրհնող Յիսուսին բերանով: Մեծ-Հայրիկին աչքին լոյսն է Վահրամիդ, գոգովդ ու գրկովդ մեծցուց, ծնկւրներովդ օրօրեց, ծոցովդ սնուց, սրտովդ կ'գորովի, հոգիովդ կ'զմայլի անոր վրայ, աչքերովդ կ'հսկէ անոր մէն մի քայլին, թողած ահաւոր ամայութիւնդ Վահրամովդ կ'շէնայ. Ինքով աւերեալ բոյնն ու թափուր վանդակն անոր ճըլվրու մներովը կ'վերաշինին, կարօտովդ հալող Հայրիկդ ու սիրելիքդ Վահրամիդ հոտոտելով կ'սփոփուն, մայրակորոյս թունիկին մէջ վերաստեղծեալ կ'գտնէ մահաւարդ տարաբախտ Հայրիկդ իւր վաղամեռիկ սիրական Աղջիկը, զՔեզ, ո՛ աննման Լուկիա:



ԼՈՒԿԻԱ Պ. ՊԱՌՆԱՍ

Անտիական Վահրամիդ հասակն ահա հասած է, գրեթէ նստելու մօտ՝ առջեւն ա՛յն Դպրոց Գրասեղանին, — ուր արդէն Բեղամոյնն Վիգտօր Բեզ յաջորդած, եւ, իւր Անունին պէս ալ յաղթական՝ իր Կարգի Շրջանաւարտութեանց մէջ Առաջինը ծափահարած էր. — Մտքի փեթակ ա՛յն Գրասեղանին, Ոյր վերայ շատ ամեր անընդհատ, Հայ Ազգական Աթենքոնքն — երբեմնի Մեղպուրեան Վարժարանին — մէջ, տաղանդի ոգիոյդ ընկերութեանց Հոյերուն՝ ինչպէս եւ Բո՝ նրաթիւ մասաց չէնքն հինել հանապազօրոգած եմ։ Ո՛րքան այգաւէտ յոյսեր, ո՛րքան ապագայի իր յիշատակ Անցեալին, ոյր վերայ՝ այսօր նոճի կ'արձանանանք եւ բու կ'հեծենք։

Մի՛ն էիր եւ Դու, լուսափթիթ Պառնասոսհիդ Լուկիա, Արմէնութեանց չքնաղ սեռին փայլածու՝ աղջիկ ճաճանչներէն, որք, ո՛ւր ուրք ալ ճառագայթին, առանին երանաւէտութեան ոսկեղար մ'արշալուսող եղեմական տիւր կ'ծագեն։

Մի՛ն այն Հայ գիցանոյ Ռէմբերէն, որք հայր ու մայր ծոցէն աւելի աստուած ճակատին մէջ կ'երկնուին, եւ Շնորհքն ու Ձիրքըն իրենց երկնընծայ պարգեւ ու մրցանակ խլած կ'թռնն աշխարհք, գտեալ դրախտի մը անուշուշտն ու ցոլիւնն սփոփանք թէ պարծանք սփռելով մեր շուրջ, եւ կեանքի իտէալին միւռոն համբոյրը տալով մեզ աւետ-

եաց ողջոյն, մեզ՝ որ անոնցմէ մէնմիոյն մէջ գեղանսեհ օրերու նոր Հեղինակուհի մ'ողջագուրել կ'հաւատաւորինք։

Մեղուն ու միջինը նախանձեցնելու չափ աշխատատէր էիր։ Մարդասէր ալ։

Կ'խշե՛ս, օր մը Գրութեան Քոյրերը, իբրեւ շարագրելի նիւթ, աւանդած էի Ձեր՝ Կրտսերութեանցդ, Դասարանին Նոյն օրն ալ՝ խմբագրած նիւթն առաջին անգամ ընթեռնու վիճակը Բուկդ էր։ Նոյն պահուն ալ, առաջին հեղն էր որ բացակայ էիր։ Ընկերութեանց միոյն մատնիչ նշանի համար լեզւէն գուշակեցի թէ Դպրոցին փողոցի դրան առջեւն ես, սրուն գէմ կ'բացուի եւ Ձեր տան դուռը, հետաքրքրեցոյ ես անձամբ գալ լրտեսել Բեզ թէ ի՛նչ ընելու համար գնացեր ես հոն, մի՞ գուցէ մնտի մը պատրուակելով խուսած ըլլայիր դասէդ։ Ո՛չ։ Երկբայանքս փուշ խրեցաւ սրտիս։ Տեսի գ'Բեզ հոն գրթութեան փոքրիկ Գոյրի մը ընտանի խանդաղատանօքն ոգեւոր, եւ ո՛ր եւ է աչքէ ալ չի տեսնելու յապաղմունքդ չի մատնելու երկչոտ աճապարանքով ալ խռովեալ՝ բարեպաշտուհւոյ մը պարտքը կ'վճարէիր։ Երթեացեալ դէմքով, բրդգզեալ գրգռեակներուն մէջ փուռգամբձ կ'մախք դողացող, ծերուկ փշրաքաղ Ղաղարոսի մը գանձանակ ափին մէջ՝ չիկնոտ լուժադ, եւ, անորնքթի մախաղին մէջ, նաչի՛ն նկանակը գութ կ'կաթէիր, մանկական միսթարանք մ'ալ վերջաբան փափսալով։

ճիշտ ինչպէս կ'փսփսայ խոստովանահայրը՝ հոգեվարքին հաղորդ տուած պահուն: Եւ այս ամենն հազիւ ակնթարթ մը տեւեց, նետի նման թռար շուտ դասարան, ուր հասածիս պէս գտի Քեզ արդէն յոտնկայս՝ Գրութեան ֆայր շարագրութիւնդ կարգաւոր պատրաստ:

Մուսայք ալ ստնտու եղած էին Քեզ, եւ արդէն աղջիկն ու գեղարուեստ, կոյսն ու բանաստեղծութիւն, ուսանուէին ու հնարուէին միմեանց հոմանիշ են: Քանի՞օն հիանալի կ'հմարտանայիր, դպրոցական Տօնբուն մէջ, երբ աղէքախ մատանցդ տակ էր գեցիկ դաշնակէն աւելի ներդաշնակ կ'գեղգեղէր վառ ձայնդ՝ զի՛լ երաժիշտ. ուր ծով ծով կ'ալեւէտանար հոգեակդ Սրբուհի. եւ մեր յափշտակեալ հոգիներու կուտար բոցեղինի թեւեր, մոլորակէ մոլորակ զմայլանք՝ եւ Եղիսէ Եղիս հեշտանք ու բերկրանք թռչելու: Բարէ՛, զի՛արդ այնքան կանուխ լոնց շաքարբերան պլպուլ լիզուդ. ու այնքան վաղ թօշնեցան այնքանի՛ արծաթ մեղիդեաց լուսաղբերակ՝ անուշժպիտ շրթթունքդ, ուր ծիծաղ կ'ծաղկէր կուսան սրբտիկդ մանուկի: Ո՛րպէս այնքան շուտ մաւրեցան հոգիներուն վճիտը հայլիացնող աշոյշնայուածք աչքերդ, ուր հանճարն այնքան կայծեր բիր վառեր էր: Որպէս պուտ մը մեղանը՝ ուսանուհի գրչեկիդ տակ, եւ, տերեւ մը դաս թղթեկին վերայ, սիրտ ու միտք կ'կայլակէր. թե՛լ մը գերձանն ալ տանտիկին ասեղիդ ու հնարունի հերիւնիդ տակ, պատառ մը պատտառին վրայ, գեղարուեստի ու ճաշակի խառնուրդի գոհար բուստ կ'բուսնէր: Դեռաբոյս պատկերահան վրձինդ ալ սկսած էր շիթ մը ներկն ու մատիտ մը գիծը քարտէզին վրայ շունչ ու հոգի փոքր:

Բոլոր այս աղւոր օժիտ ձիրքերդ, աւա՛ղ, աղուաբարոյդ Լուկիկ, մաղ մը հող ու մոխիր դարձան, ու սիրելեացդ հոգիներուն մէջ արցունք ու սուգ ցանւեցան: Մեղպուրեան Աթէնիոսին եւ իւր սեռին նոր տիտղոս ճակատադրած ողբացեալ Երէց ընկերուհւոյդ՝ Մուսայաձիրն վերգինէէն (Օրիորդ Ս. Սեղբոսեան, եւ նոր հարս Պաղպաղեան) եւ Զմիւռնաի Հոմերաբոյր Մառիէն (Օրիորդ Տամկաճեան եւ նոր հարս Հ. Մ. Մամուրեան) յետոյ, Բո՛ւ Օժիտդ պատանք լացինք, լացի՛ն Հայ աղջկունք, Հայ Հարսունք ու Հայ

մայրեր, եւ պիտի լան ամեն ծնողք, որոյ գիրկն ու գոգը Քեզ նման զուակի մը գերեզմաննոց կ'ձախտագրուի:

Թռա՛ր ծնողքի ծոց բռնէդ նոր Սրբուհի յաւելուլ յ'երկինս, թողլով Հայրիկդ, հառաչանքը միացող Պառնաս մը, Քոյրդ՝ Յիշատակիդ վրայ, զոգ մը արցունք, եւ վահրամդ՝ ա՛ճի ններէդ յարուցեալ նորափետուր Փիւնիկր:

Ուսուցչիդ այս դամբանական ԳՈՎՔԹՈՂ լինի՛ հողքիդ վրայ շունչն Աստուածեան, որ հոգի փչեց հողին. եւ Յիսուսի «ՏԱԼԻԹԱԿՈՒՄԻՆ», որ յարութիւն արձակեց այլուոյն դստեր գագաղին:

Իբրեւ վերջին Դաս, քո՛յ մենկն դիր սա պատուիրանիս: Երբ Դուն ու նմանիքդ Երկնաւորին հրեշտակ այցելէք, եւ Անոր անհղ երեսացն առջեւ ծնրագիր ու բազկատարած փառաբանութիւն մատիք, իմ ձեզ ներշնչած արի ու բարի հոգովը խիղախեցէք Անոր ունկն ի՛ վար հծծել, կամ իբր նոր իմն մըշտամբունջ հայ ալէլու՛ ոգել, Աստուած բաղմոնորմ եւ Բարերար կեցուցիչ, այլ եւս դադրէ՛ պահ մը մահն ու արհաւիրքը մեղայցելու արձակելէ եւ կեանքը կամ ծնունդը մեզ նզովել տալէ»:

Որպէս բոլոր ողբացեալ հանճարեղ ու հատընտիր Աշակերտուհեացս, նոյնպէս Քուկին ալ, ո՛ր ցլաւէտ արտասուելիդ Լուկիա, թառամած ծաղիկ կեանքին Յիշատակը քանի մը տող արցունքով թռչելու, միւռնունքու ախոր ու անիծեալ հարկն անա հատուցի, եւ հատուցի այն յօժար հոգով՝ որով էր երբեմն սիրական Դստերդ Քեզ եւ Քեզակցաց կը վարդապետէի:

Ուսանողի պաակերդ, անմահի՛ միտալեակ, Հանրագիտակիս թանգարան Միւզէոնին մէջ, անթարչամելի ՄՈՒՄԻԱ պահարանեցի, պաճուճելով ալ զՍ. նախատիրած հոմերական հալուէ զմուռններով, այսինքն ընդելուզելով զայն ճաշակասիրած գրական այն երկնեանդ պչրիւք՝ որք ոճիդ գեղեցիկին «Յուսուք Յ'ուլուս» էին մտքիդ, եւ զորս կը պաշտեւէտէիր, հովուերդունի ներքնադաշնիճիդ ոսկեդար քուսիքներուն պէս: Օր մը, Պէրպէրեանի «Պաղքիւս»ը, Թէրզեանի «Հիւծեալ աղջիկ»ը, Լամարթինի «Կակիծ»ը վերլուծել տուի ձեզ, ձեր Բանաստեղծութեան մէկ Դասիս մէջ, անմահ Օր Սեղբոսեան վերգինէի վաղամեռիկ ու տարաշխարհիկ

մանուկն առթիւ, քերթուած մը՝ իբր շարա-
գրելի նիւթ՝ Դատուհանցք խմբագրել տալու
համար՝ Հակառակ պատկառօտ բնոյթիդ, խե-
լայեղ իմն գոչեցիր քնաղդաբար, ինձ հետ
ընկերուհիներդ իսկ զարհուրեցնելու չափ
խիզախօրէն, «Ախ, Միւսի՛ւ, երանի՛ թէ ես
ալ մեռնէի եւ իմ վրաս ալ այսքան անմահ
բանաստեղծական մը գրէին»։ Ապագարձեցի
քեզ այն ատեն չի ներելով քեզ գուշակիւ
ապառնիք. «Դեռ չի՞թ մը անցեալ եւ ծով մը
ապագայ ունիս»։ Ճանարկեցի, եւ գուժկան
լեզուդ չի կրկնել Բեզ պատուիրանեցի, Ո՞վ
կրնար գուշակել թէ Երեմուհի մը եղերա-
մայրը յայնժամ կը մարգարէանար ուսանողի
մը գրասեղան Դեղբանէն՝ Փշրէ՛ր զանգակը՝
որ հատկիւն հեծկլտանօք, Եղեմ տարիներէդ
յետո՛յ՝ Մէլգոմէնեան կտակիդ մասանգորդ
դատապարտեց այս դամբանական Գովքը՝ Մո-
սայ փափաքդ չ'անգառակելու համար, ահա
Հայրիկդ, Պառնասեան Զէֆէոսին, եւ միա-
ժինդ՝ պարոնիկ Վահրամդ, Մեծ-Հայրիկիդ
կուշտը դասեցի, քովիկդ, Եարմուկ արմուկի,
Բեզ ողակիր կամ խաչակիր պահակ, Ապա-
գային ու Պատմութեան յաւիտենին մէջն ալ
մշտնջենաւորելու համար թէ՛ Զեր գրկախառն
ընտանի միասնականութիւնը, եւ թէ՛ իմ ալ՝
ամենեցունցդ օրհներգելի Յիշատակին Տա-
ղարանի գանձ ընծայուած՝ մտերիմ ու հա-
ւատարիմ բարեկամի մը պատուասիրական
զգացմանցն աւանդապահ՝ ներշնչուն այս
Գովք մը Շունչը։

Ներէ՛ ինձ, բանաստեղծականդ Լուկիա,
եթէ կսկիծս ու գերեզմանի կտակ իզձդ չի
կրցայ յագեցնել կամ գոհացնել. բաւ է թէ
ապաշնորհ մահէն՝ անոր կողը դաշոյն մը
խրելու չափ՝ վրէժդ լուծեցի, յարուցանելով
զ'Բեզ Գերեզմանէդ, Հսկրագիտակիս մէջ,
ուր ճաճանչող գեղեցիկ սեռիդ գեղեցկագոյն
տաղանդին նորանշոյլներէն մին ծագել նա-
խասանմանուած էրի Գովքս Գերեզմանիդ
յաւերթածաղիկ Փունջ ու Պսակ՝

Ռստեցեղ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



ԳԻՒՏԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՔՆԵՐԸ

ՀԵՌԱԳԻՐՆ

ՆՈՒ

ԱՆՈՐ ՀՆԱՐՄԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Հեռագրութիւնն՝ իր ամենէ աւելի ընդ-
հանուր ու ընդարձակ նշանակութեամբը,
հետուէն հաղորդակցելու արհեստն է։ Այս
արհեստին ծանօթութիւնը շատ հին է. մար-
դիկ շատ կանուխէն հեռուէն, միջոցին մէջէն
իրարու կարեւոր լուր մը հաղորդելու հը-
նարքը մտածելու խելացիությունն ունե-
ցած են։

Այս նպատակով էր որ՝ ամենէ աւելի
բարբարիկ ու ազէտ ժողովուրդներն իսկ,
գաղթելու եւ պատերազմելու ատեն, նշան-
ներ գործածած են։

Այս նշաններն էին երկար ատեն նախ
բարձր տեղերու վրայ վառած կրակներ։ Ու-
րոնց նշանակութիւնն էր, առաջուց որոշւած
պայմանագրութեան մը համեմատ, պատե-
րազմի ատեն՝ յաղթութիւն մը կամ պար-
տութիւն մը ծանուցանել, կամ յարձակման
հրաւէր մը կարգալ, օգնութեան կոչել,
եւայլն, եւայլն։ Ազատ է մարդ այս միջոց-
ները հեռագրութիւն կոչել, բայց յայտնի է
թէ շատ տարրական վիճակի մէջ էր եւ
այնքան կ'համեմատէր այսօրուան ելէքտրա-
կան հեռագրին, որքան կրնանք համեմատել
Անատոլիի եզներուն վարած սայլերը՝ չոգե-
կառքին վայրաշարժներուն (Locomotive) հետ,
կամ մեր Եփրատ գետին վրայ հին ատեն
երթեւեկող տաշտաշէն մակոյկները՝ այժմեան
չոգենաւներուն հետ։

Յոյներն առաջին անգամ այս արհեստը
քիչ մ'աւելի առաջ տարին, աւելցնելով հե-
ռուն վառած փարոսներուն ու լապտերնե-
րուն վրայ այլ եւ այլ նշանակներ. օրինակի
համար՝ զանազան գոյներով դրօշներ, որոնք
իրենց որոշ նշանակութիւններն ունէին. ա-
նոնք յղացան այբենգիմական հեռագրութեան
մը գաղափարն եւ առաջին փորձերը կա-
տարեցին։ Անոնցմէ յետոյ հին կարթագինա-
ցիները եւ Հռովմայեցիները գործածեցին
այլ եւ այլ նշաններ, հեռաւոր բանականներուն
հրամաններ, ազդարարումներ ու լուրեր հա-

ղորդելու համար: Եւ տակաւին Տրայիանոսի հռչակուեոր Սիւնից վրայ ցցւած քանդակով կ'երեւի հռովմայեցի հեռագրական պահակի կամ կայանի մը պատկերը: Սպայ մը պատերազմական փորձեր կը կատարէ գիշեր ատեն, երկգետիկոն պահականոցի մը տանիքի լուսամուտէն դուրս հանած ջահի մը միջոցաւ:

Կեսարու յիշատակութեան նայելով, այսօրուան նրբացած քաղաքակիրթ ֆրանսացւոց նախահայրերն եղող հին վայրերնի Կեղտերն ալ լուսեղէն կամ հրեղէն տեսակ մը նշաններ կ'գործածէին, իրենց մէջ թշնամիին շարժումները իրարու հաղորդելու համար: Աւելի խառն ու բարդ լուրեր հաղորդելու համար, թէեւ շատ պարզ բայց ոչ նուազ խելացի միջոց մ'ընտրած էին, որ թէեւ արագահասութեան կողմանէ նշանակելի է, սակայն հեռագրէ աւելի այժմեան զինւորական կայաններու նման բան մ'էր: Իրարմէ ոչ շատ հեռի՝ զինւորական պահակներ հաստատած էին, որոնք բարձրաձայն պոռալով բերնէ բերան իրարու կ'փոխադրէին լուրը, վերջին ծայր շուտափոյթ արագութեամբ: Այս երագահաս միջոցով Օրլէանի մէջ Հռովմայեցիները արեւագալի ատեն ջարդելու գոյժը իմացեցաւ իրիկւան պահուն Ուլէրնի մէջ, հարիւր վաթսուն հազարամեղը հեռաւորութենէ մը:

Սակայն Եւրոպայէն աւելի Ասիայի մէջ շատ կանուխ եւ աւելի կանոնաւոր կերպով սկսած ու շարունակած է հեռուէն իրարու հետ այլ եւ այլ նշաններով հաղորդակցելու հեռագրական նշաններու գործածումը, զորս Արեւելքէն Արեւմուտք գաղթող Ասիացի նախնիքն իրենց հետ տարած եւ հոն ընդհանրացուցած են. որոնցմէ սորելով այսօրուան եւ դեռ առյապայն աւելի կատարելաւ գործելի հեռագրական հնարքը յօրինած են Եւրոպացի գիտունները: Հնդկներն ու Չիններն արդէն՝ դեռ Եւրոպան գոյութիւն չունեցած, դիւրավառ խառնուրդներու եւ պայթուցիկ նիւթեր բաղադրելու թաքուն գիտութեան ծանօթ էին. որոնցմով Յոյներէն, Կարգեղոնացիներէն, Հռովմայեցիներէն եւ Կեղտերէն ո եւ է ուրիշ աղբերէ աւելի կատարեալ եւ աւելի բազմապատկեալ հեռաւոր հաղորդակցութեանց միջոցներ կրնային յօրինել ու գտնել: Չինները կանգնած կամ

տնկած էին փարոսներ իրենց համաւաւոր մեծ Պարիսպին կամ Սուրին վրայ, որուն երկայնութիւնն է 550 հազարամեղը, եւ անոնց միջոցաւ պատերազմի կամ յարձակման ու պաշտպանութեան ձայնատուր հրաւերը՝ մէկ քանի ժամուան մէջ, կ'ազդարարուէր իրենց սահմանագլուխներու բոլոր կողմերը:

Հեռագրական արհեստը՝ մինչեւ քրիստոնէական ժե.րդ դարը, մեծ առաջդիմում չ'ունեցաւ: 1640ի ատենները՝ Հայր Գառուար Սգոգ եւ Մայանսի Կայսրնտիրին բժիշկը՝ Տոգգոր Պէշէր՝ առաջարկեցին գործածել ցիւրեկը չոր խոտի որաներ, գիշերը լապտերներ, հինգ կայմերու վրայ տարածելով, որոնցմէ իւրաքանչիւրը հինգ բաժանումներ ունէր, եւ անոնցմէ ամէն մէկը այս մասին յարմարցւած բառարանի մը նշաններէն միոյն կ'համապատասխանէր: Նոյն թուականին գերմանացի Պէշէրին հայրենակիցը՝ Տոգտոր Հօֆման եւ անգլիացի Հուք մեքենագէտը՝ հեռագրական շարժուն նշաններու գրութիւն մը հնարեցին: Ժե.րդ դարու ֆրանսացի նշանաւոր բնագէտներէն մէկը Կիյօմ Ամօնդօն՝ մտածեց 1690ին, միջոց մը որով Հռովմէն մինչեւ Փարիզ՝ 3—4 ժամուան մէջ լուր մը պիտի հաղորդէր, առանց այնքան երկայն միջոցին մէջ ո՛ր եւ է մէկը՝ հասկնալու գաղտնի լուրը: Այս գիւտին գաղտնիքը սա էր՝ Այլ եւ այլ կայաններու մէջ հաստատել մարգեր, որոնք հեռուն նշմարող գիտակներով նախորդ կայարանին նշանակները տեսնելով յաջորդ կամ հետեւորդ Կայարանին կ'հաղորդէին եւ այսպէս առաջինէն մինչեւ վերջին կայարանը կ'շարունակէին հաղորդակցութիւնը: Այս այլ եւ այլ նշանակները այրենգիւմի գրեր էին, որոնց բանալին կամ գաղտնիքը եւ անոնց թիւերը միայն Փարիզի ու Հռովմի մէջ գիտէին: (Շ. Վ.)

ՀԻՄՆԵԱՆ ԳԵՂՈՆ

ԶՕՆԵՄԼ

ԱՌ ՆՈՐԱՊՍԱԿՔԵՍԱՆ ՏԻԱՐ ՎԱՅՐԱՄ Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԵՒ

ԱՌ ՆԱԶԵԼԱՇՈՒՔ ՆՈՐԶԱՐՍՆ ՏԻԿԻՆ ՔՐԻՍՏԻՆԷ Վ. Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԱՐՏԱՍԱՆՍԵԱՆ, ՕՐ, ԱԳԱՊԻ Ս. ՖԻՆՃԱՆՃԵԱՆԷ

Ի Հանդիպի Հարսանեաց Նոցուն

Ի՞նչ սիրուն է ու գեղեցիկ սա մեր Հանդէս.
 Ծաղկազարդի, Վարդավառի Տօնի մը պէս՝
 Կը պաշարէ Սուրբ դողով մը սիրտն ու հոգին.
 Մարդը՝ Սուրբ մը, տունը լինի Եկեղեցի.
 Ուր ամեն շուրթ շունչ մը մաղթանք ու ալելու,
 Խունկի պէս լուռ՝ հանէ յերկինս ազօթարկու:

Ո՛ւր ալ խմբինք այս Հանդէսը՝ ՀԱՐՍՆԻՔ հոյենք,
 Ու ՀԱՐՍՆԵՒՈՐ՝ զՍ.յն կատարող Ներկայքն ամենք.
 Ուր Տէր Հայրը՝ Հայր Աստուածին Սուրբ փոխանորդ,
 Զեռքին մէջ Խաչն՝ երկնէն յերկիր Աջն առաջնորդ,
 Զուստ մը գլխոց վերայ Պսակ կը տարածէ.
 Ու «զո՛ր Աստուած զուգեաց, կըսէ, մարդ չիգատէ՛:

Ա՛լ Պարոնը կըլլայ Փետայ, Տան թագաւոր,
 Աղջիկը՝ Հարս, Տան թագուհին արժանաւոր.
 Դնեն ա՛լ հիմ նոր ընտանեաց մ'արքայութեան,
 Ու միալուծ հերկեն զՆոգեմն երանութեան,
 Երկու մարմնոյ մէջ ալլելա մէկ հոգի են,
 Նոյն խնայն ու վիշտ, նոյն իղձն ու յոյս զ'երկուքն յուզեն:

Մաղթենք ապա, մենք ամենքս ալ բոլոր սրտէ,
 Իրենց Պսակ միշտ անթառամ՝ ցեց չի տեսնէ՛,
 Իրենց կեանքի բաժակը միշտ խնդութեամբ լի.
 Բախտն անդ երբէք, ա՛հ, չի կաթէ՛ ո՛չ մի լեղի,
 Իրենց արեւ մշտառաւօտ ամպ չի տեսնէ՛,
 Դեպքին մերիկն իրենց նաւը չ'ալեկոծէ՛:

Հազար ապրին Հարսն ու Փետան, ծլին, ծաղկին,
 Ընտանիքին լինին նոր փառք. պատիւ՝ Ազգին.
 Լինին սէրը, առանց խեղի, ծաղիկն անփուշ,
 Մէն մ'իրենց հետք Յիշատակը թողու անուշ.
 Մէն մ'օրիորդ, երիտասարդ թող Իրենցմէն,
 Առաքինի Հարսն ու Փետան օրինակին:

Մաղթեմ նաեւ, ո՛ր պատուական հարսներն եր,
 Որ՝ այս տան պէս, հանդիսանան եւ Զեր տուներ,
 Նոր նոր Հարսի, նոր նոր Փետի Պսակարան,
 'Յարդ թառամած սերունդներուն ընծիւղարան,
 «Բազմադարձ» անդ օրհներգէ՛ միշտ Տէր-Պապան,
 Ու մէն մի օր բերէ խնդից նոր օրօրան:

Տիարք, Տիրուհի՛ք Հանդիսականք մեր Պատուական,
 Հարսն ու Փետան մեր՝ հոս, ահա դա Երկուքեան,
 Քրիստինէ եւ Տիար Վահրամ Յ. Մարգարեան,
 Իբրեւ նոր Պօղ ու Վիրգինէ պատկերանան.
 Արեւշատ կեցցեն յաւէտ Հարսն ու Փետան.
 Կեցցեն յաւէտ եւ Հարսները մեր Պատուական:

ՎԱՃԱՌԱԳԻՏԱԿԱՆ

ՎԱՐԿՆ ՈՒ ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Ա.

ՄՈՒՏՔԸ

ՆԱԽՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

«Վարկը վաճառականութեան հոգին է, առանց վարկի չի՛ք վաճառականութիւն, առանց վաճառականութեան չի՛ք աշխատութիւն»:

Ճարտարարուեստը կամ ճարտարագործութիւնն (industrie) իր օրրոտօրէ առաջդիմական ընթացքին մէջ, երկու զուգահեռական գծերու վրայ կ'առաջանայ: Մէկ կողմանէ՝ կ'ստեղծէ աշխատութեան գործիքները, կր հնարէ կամ կ'կատարելագործէ մեքենական եղանակներն ու միջոցները, կ'նուաճէ տարրները, իր իշխանութեան կ'կատարակէնէ բրնական ուժերը (agents physiques): Նիւթական կամ ֆիզիքական զարգացումն ու բարգաւաճումն է այս: Միւս կողմանէ՝ կ'ընդարձակէ մարդկային իմացական կարողութիւնները, երբեմն ուժերու միացմամբ, երբեմն աշխատանքային բաժանմամբ, գրամագրութիւններու շրջաբերութիւնն ու արտադրութեանը բաշխումը շահաւէտ կերպով ու միջոցներով յաջողցնելու, գլուխ հանելու գործը կ'փութացնէ:

Կ'քաջալերէ վերջապէս աշխատանքը, բազմապատկելով անոր շուրջ բարեկարգութեան, երաշխաւորութեան եւ ապահովութեան պայմանները: Բարոյական կամ ընկերական զարգացումն է այս: Թէ որ փնտռենք այսօր նիւթական զարգացումի վերջին եզրները, առաջին գծին վրայ կ'գտնենք շուքեղարժ մեքենաները, երկրորդին եւ այն հանճարեղ մեքենականութիւնները որոնք այնքան բարձրացուցին հիւսուածոյնը, ճարտարագործութիւնը: Մեքենաներու զուգահեռական գծին վրայ փնտռելով հանրօգուտ հաստատութիւնները՝ որոնք ընկերական կամ բարոյական զարգացումին վերջին եզրը կ'նշանակեն, կ'հասնինք բնականաբար սրժեթուղթով գործող ընկերութիւն-

ներու, որոնց մէջ նշանաւոր են ապահովագրական ընկերութիւնները, եւ անոնցմէ աւելի գերի վեր՝ կ'գտնենք Դրամատունները (Պանգա):

Դժուարին է ըսել թէ զարգացման այս երկու զուգահեռական շաւիղներէն որո՞ւն մէջ մարդկութիւնն աւելի փայլուն յաղթանակներ չահեցաւ: Ապաքէն՝ մարդ կրնայ զարմանալ դիտելով այն հրաշալիքները, զոր կատարեց շոգին դարէ մը ի վեր, եւ կ'ապշի իրաւամբ՝ մտածելով այն ամէն ինչ որ երկրաթուղիի այնքան պարզ հնարագիւտը կը խոստանայ ապագային՝ եւ կ'իրագործէ ներկային մէջ:

Սակայն ի՞նչ մտածելու է արժեթուղթերու այն հանճարեղ գրութեան վրայ, առանց որոյ ամեն մեծ ձեռնարկ մարդուն անմատչելի պիտի լինէր, ապահովագրական այն նըպաստաբեր հաստատութեանց վրայ, որ լիապարգիւ տղատութիւն կ'ընտրէ անհատներուն, առ ոչինչ գրելու աղէտաբեր դիպուածին անոնց նկատմամբ խաղաղած գէշ խաղերն ու ունեցած չար քմահաճոյքները: Վերջապէս այն դրամատուններուն վրայ, որոնք աշխատողներու ձեռքին մէջ կ'ընեն դրամադրութիւնները, առանց որոյ անոնց բոլոր գործունէութիւնն ի՛զուր պիտի սպառէին ամուլ ճիգերով:

Այսու ամենայնիւ ժողովրդական նախապաշարութեամբ մարդկային ընդհանուր բարւոյն շահաբեր գիւտերու այս երկու սեռերուն շնորհաբեր հաւասար կարեւորութիւն: Ընդհանրապէս՝ բարոյական կարգին մէջ կատարած զարգացումներէն աւելի նիւթական կարգին մէջ կատարւածները գնահատելի կ'լինին յաջաւորմին, նիւթականը շուշափելի եւ բարոյականն յաճախ իրենց անթափանձելի լինելուն համար: Սակայն յայտնի է թէ մարդկային զարգացման մարմնոյն երկու ձեռքերն եւ երկու ոտքերն են նիւթականն ու բարոյականը եւ անոր առաջխաղացման մեքենային ջուխտ մը անխնայորէ:

Բաւական է աչք մը նետել դրամատուններու պատմութեան վրայ, հասկնալու համար անոնց անբաղդատելի զօրութիւնը, եւ ճանչնալու համար անոնց մատուցած անհուն ու անսահման ծառայութիւնները: Դրամատուններու շնորհիւն էր որ Սկովտիան՝ ինքնին աղքատ երկիր մը, յանկարծ ծաղ-

կեցաւ, հակառակ իր անբարեբեր ամուլ ու ժլատ հողին անյաղթելի դժուարութեանց եւ հակառակ իր զարգացման մասնաւորապէս խափանարար օրէնսդրութեան մը, որ ոչ իր ձեռքով եւ ոչ ալ իրեն համար շինւած էր:

Դրամատուններու շնորհիւն էր նաեւ, Հիւսիսային Ամերիկացիները՝ որոնք անապատին վրայ ամբողջ երկիր մը աշխարհակալեցին, եւ այս նոր աշխարհը՝ զոր իբր անէութեան անդունդէ մը նոր կ'իլէին, բարձրացուցին վաճառականական այնպիսի փայլուն աստիճան զիրքի մը, որուն հասած չեն ամենէն աւելի ծաղկեալ հին աշխարհները: Այս Դրամատուններուն եւ ոչ թէ իր ֆիզիքական առաւելութեանց կը պարտի Անգղիան այն անմրցելի գերակշռութիւնները, զոր գրաւած է Ներոպի մէջ եւ Աշխարհի ամէն կողմը, եւ այն գերեթանկ բարեկեցութիւնը՝ զոր կ'վայելէ ուրիշ ազգերէ աւելի:

Ինչ բերապատիկ, անհունապատիկ բարիքներ չպիտի արտադրէին ուրիշ ամէն տեղեր, ինչպէս կ'արտադրեն այսօր եւրոպական եւ այլ վաճառաշահ երկիրներու մէջ, այս հրաշագործ հաստատութիւնները, եթէ անհեռատես կամ կարճատես օրէնքներ անոր սկզբունքը չ'պակասէին կամ անոր թռիչք չի պրկէին: Նոյն իսկ այն երկիրներուն մէջ անգամ, ուր դրամատունները՝ իրենց վարիչներուն տգիտութեան կամ խարդախութեանց երեսէն, միայն վաղանցուկ ու կործանարար գոյութիւն մ'ունեցան, թողուցին փայլուն հետքեր իրենց վաղամտեիկ ընթացքին մէջ, եւ իրենց ոյժը փայլատակեց նոյն իսկ իրենց անկման հետեւանօք ծագած խառնակութեանց մէջ:

Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հիմ Դրամատունները. — Դրամատուններու Պաշտօնին, անոնց բաժանման կամ գասաւորումին վրայ խօսելէ առաջ, կարեւոր դատեցինք անոնց պատմական սկզբնաւորութիւնն ու շարունակութիւնը՝ մինչեւ մեր օրեր՝ ներկայացնել մեր ընթերցողաց, որոնք աւելի յստակ եւ որոշ գաղափար մը կրնան կազմել կամ ինքնին ալ գոյացնել դրամատուններու բնութեան, պաշտօնին ու անոր այլ եւ այլ սեռերուն ու գործերուն վրայ, հետեւելով անոնց պատմական ընթացքին:

Առաջին ու ամենահին Դրամատունը՝ զոր կ'շխատակէ պատմութիւնը, հաստատուեցաւ Վենետիկի մէջ, գրեթէ ժ.թ.գ գարուն մէջ տեղերը՝ (1171):

Վենետիկեան Հանրապետութիւնը, Վիզայիա Միքայէլ Դուքսին օրով, մէկ կողմէն՝ Արեւելեան կայսրութեան դէմ մղած պատերազմներուն, միւս կողմէն ալ՝ Արեւմտեան կայսրութեան դէմ յարուցած եւ ի գործ գրած թշնամութեանց երեսէն, այնքան ծանրածանր ու արտաուովոր ծախուց ենթարկւած էր որ՝ իւր գանձային բոլոր աղբւրները ծծելէն, դաժնեցունելէն վերջը, հարուստ քաղաքացիներէ բռնագատեալ փոխառութիւն մը կրնաքել ստիպեցաւ: Փոխառութիւնը հաստատուն հասոյթներու վերածուեցաւ, որուն վրձարման համար պարտաւոր ըրին իշխոնապետութեան եկամուտները, փոխառուները գումարեցան Պաշտօնական Սննեակի մը մէջ, եւ կազմեցին Սորհուրդ մը, որ կ'գանձէր կառավարութիւնէն փոխառութեան շահը, 100ին չորս գանձեկան տոկոսով, եւ կը բաժնէր զայն փոխառուներուն, անոնց մէջ իւրաքանչիւրին տուած գումարին համեմատութեամբ: Այս սննեակ առաջապէս եղաւ Վենետիկի Պանդանո Մագ Գիւլիոյի պատմական յիշատակութեանը նայելով՝ Վենետիկի կառավարութեան կողմանէ փոխառութեան պարտաթուղթերը՝ որք շահարկի ալ էին, կրնային ձեռքէ ձեռք փոխանցիլ ու չըջաբերիլ: Եւ տուին կամ ծնան չըջաբերող թղթադրամներուն գաղափարը: Ինչ ալ եղած լինի իսկզբան սոյն առաջին Դրամատան գործողութեանց բնութիւնը, եւ այս մասին ստուգ տեղեկոյքն ալ կ'պակսի. գիտենք միայն թէ յետոյ պարզապէս փոխառութեան դրամատուն (Banque de virement) մ'եղաւ: Մասնաւորներու դրամի փոխառանդ կ'առնէր, եւ անոնց վարկ մը կ'ըսնար գրաւ դրած գումարին չափ:

Գրեթէ նմանօրինակ պարագայից մէջ հաստատուեցաւ նաեւ Ճենովայի մէջ, Սեն-ժորժ (Ս. Գէորգ) կոչ. ամ Դրամատունը (1407): Վենետիկի դրամատան օրինակին պէս, անոր նման մասնաւորներու դրամները առանդ կ'առնէր եւ փոխ կուտար, ու վճարումներ կընէր: Սակայն քաղաքային եւ օտարաց հետ ունեցած բուզմոցիմի կոխներուն առթիւ, սոյն Հասարակապետութիւնը շատ մը վնասներ կրելուն հետեւանօք, կ'ստիպէր յոճախ փոխառութիւններ բնել Սեն-ժորժ դրամատունէն: Այնպէս որ՝ հանրային փոխառութեան գանձ մ'եղաւ աւելի՝ քան թէ վաճառականական հաստատութիւն մը:

(Շար.)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ծագման պատմութիւնը. — Ֆրանսական, Անգղիական եւ ուրիշ ազգաց Տնտեսագետ մատենագետները. անոնց դրութիւնները, քակցութիւնները, վարդապետութիւնները, իւրեաց հետ հակաճառութիւնները, միմեանց հետ հաշտութիւնը. — Ուրիշ ուսմանց հետ ունեցած առնչութիւնը, եւայլն եւայլն:

Քաղաքական տնտեսագիտութիւնը գրեթէ բոլորովին նոր ժամանակաց վերաբերեալ գիտութիւն մ'է: Թէպէտեւ քանի մը տաղանդաւոր մարդիկ՝ չին դարերէ սկսեալ՝ որոնց գլխաւորն է Արիստոտէլ, այս ուսման ինչ ինչ օրէնքներուն խելամուտ եղած, բայց Ժ.Բ. դարուն մէջ էր որ աւելի տարածուն ու հաստատուն վարդապետութիւններով մարմնացաւ, եւ կանոնաւոր ու դասական գիտութեանց կարգն անցաւ: Ֆրանսացի, Անգլիացի եւ ուրիշ ազգաց մէջ հետզհետէ ծաղկեցան տնտեսագէտ հեղինակներ, եւ իրենց հրատարակած այլ եւ այլ օգտաշատ մատենաներովն աւելի ծաղկեցուցին Հարստութեան ուսումը:

Ֆրանսայի մէջ (1694—1774) Տոգտոր Quesnayը կ'ընայ՝ մարդկային բնախօսութեան ուսումնէն ընկերական բնախօսութեան արխիւքն Քաղաքական Տնտեսագիտութեան սկզբունքները, մերկացնելով զայն ծածկող, շրջապատող մթնոլորտներէն, նախապաշարունակէն, ճշմարիտ ու զրական գիտութեան մը կարգն անցնել, ինքն ալ օգտուելով իրմէ նախորդաց ինչ ինչ տնտեսագիտական նախաշաւիղ հմտութիւններէն:

Առաջին անգամ՝ մեծ ու նախկին Հանրագիտակից (Encyclopédie) մէջ հրատարակելով Ագարակապետներ եւ սերմնահատեր (fermiers et grains) վերնագրով երկու յօդուածներ. վերջէն հրատարակեց Տնտեսագիտական Պատկերները, որոնց պարունակած նիւթերն են Արտադրութիւն, Բաշխումն, սպառումն եւ արժեքներու ձեւափոխումը անունով տնտեսագիտական գլխաւոր հարցերը. այս հրատարակութեամբ հաստատել կուզէ թէ հողային արտադրութիւններն են ճշգրիտ հասութի միայնակ աղբիւրը: Այս սկզբանց վրայ՝ հիմնեալ կ'հաստատուի Բնապետներու (Physiocrates) Դպրոցը, որուն պարագլուխն է Dr. Quesnayը. երկար ատեն այս Դպրոցի

կուսակիցները հեգնօրէն կոչուեցան տնտեսագետները՝ որպէս մեր ժամանակին ռափկները յաճախ ավօգաքները ծաղրանունով կը կոչեն փաստաբանները կամ իրաւագէտները. նոյնպէս երբեմն ալ physiocratesներու աղանդը (secte) կ'որոշորէին Բնապետներու Դպրոցը: Բայց երբ քաղաքական տնտեսագիտութեան ուսումն ընդհարացաւ, եւ Տնտեսագէտ անունն սկսաւ տրուել ամեն անոնց որոնք սոյն ուսմամբ կ'պարապէին, Physiocrate անունը նուիրագործուեցաւ, եւ օրինական ու վաւերական Յատուկ անուններու կարգն անցաւ պաշտօնապէս, որոշելու համար զայն ուրիշ գրութեամբ ու սկզբունքներով հաստատուած տնտեսագիտական վարդապետութիւններէն:

Բնապետներու դպրոցին հանգանակը սապէս կրնանք համառօտել, ապահովել աշխատութեան եւ վաճառականութեան ազատութիւնը, եւ հարստութեան միայնակ արտադրիչ համարիլ բնութիւնը:

Հողագործութիւնը, ձկնորսութիւնը, որսորդութիւնը, հանքերու եւ քարահանութեան շահագործումներն էին, ըստ այս վարդապետութեան, սոյն հարստաբեր արտադրութեան միակ պատճառները:

Բնապետ տնտեսագէտներու համար, հարստութեան էական յատկութիւնն է նիւթականութիւնը (matérialité). հետեւապէս, ասոնք աշխատութեան արժէքն ու օգտակարութիւնը կ'համեմատեն հում կամ խամ նիւթին հետ զոր մարդ կրնայ դիզել, տրամադրելի ունենալ: Նաեւ միայն շահագործելի հողին վրայ տուրքն օրինական կը համարին. կը քաջալերեն հողագործական ճարտարաբուհստը, եւ կարեւորութիւն չեն ընծայեր մեքենայործական ուրիշ ճարտարաբուհստներու վերջապէս Բնապետականի միշտ հակառակ են, եւ իրաւամբ շահադէտ տուրք եւառիկի դրութեան (système mercantile) դէմ, որուն մէջ թանկագին նիւթերը միայն հարստութիւն կը համարուին: Տոգթ. Գէզնէի նորից մ'ունեցած էր արդէն (1634—1664), իսնձին Sullyի որուն տնտեսագիտական վարդապետութիւնը կ'համառօտի իր առածի կարգն անցած սա խօսքին մէջ, Արօքն ու արօքն երկու ստիւք են, որով կ'սնանի Ֆրանսան, Բերուի ճշմարիտ հանքերն ու գանձերը:

(Շար.)

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ ԱՄԻՍՆԵՐԸ

ՆՈՑՆՍԲՍԵ

ԱԳԱՐԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— Ագարակապետին գլխաւոր զբաղումները.— Ագարակին յարակից աշխատանոցին, իւղարանին, շաքարարանին, կաթնարանին, նկուղին կամ մառանին ձմեռնային գործերուն ընթացքը որոշելը Պարարտանալիք կենդանիներուն ձմեռնային պարէնը պատրաստելը Պարտէզներու ջերմանոցներուն կահաւորման սկսիլը եւ վերջացնելը Աշնանային հերկումներն եւ սերմանումներն վերջացնելը մինչեւ ամսոյս վերջը Արտերու շուրջը պատող խրամատներն ու ջրընթացքներն նորոգելը Այգիներուն խնամք տանիլը Անտառներու եւ մրգաստաններու ծառերը կտրատելը եւայլն, եւայլն:

2.— Զեռական աշխատութիւնք.— Ագարակի աշխատանոցին մէջ պատրաստել յաջորդ եղանակներուն վերաբերեալ ագարակային կահկարասիքը՝ ձեռագործիներն եւ մեքենաները Նաեւ ջրհորներու եւ ջրհաններու մեքենաներուն նորոգութեանը սկսիլը Զմեռնային կալերու մէջ ցորենը ծեծել եւ յարդէն զատելով ամբարանոցներու մէջ մթերելը Եգիպտացորենները հատաւորելը Լուսբիաները փոճոկելը Հաւնոցներու արտադրած վառեակներուն եւ հաւկիթներուն համար, վանդակներ եւ կոզովներ պատրաստելը Նոր պատրաստուած գինիներուն ալ տակառներ չինելը Զերմոցներուն վառարանները նորոգել ու գետեղելը Արտերու ջրուղիները նորոգելը Ծառի տերեւները հաւաքել եւ խշտեակներ կազմելը Կանեփն ու կտաւը սանտրել, թելատելը Կնիւններն ու սէվերը ջրուղիներու մէջէն խել եւ խուրձ կապելով խրճիթներու տանիքները ծածկելը:

3.— Իւղարան.— Զիթապտուղի հունձքը հարաւային նահանգներու մէջ շարունակելը Աճառ եւ ձէթ չինելու գործիներն ու մեքենաները պատրաստելը Կարագն ու կոգին պատրաստելու ճիշտ ժամանակն է:

4.— Շաքարարան.— Ժակեղեղի եւ շաքարեղէգի հունձքը վերջացած կրնայ նկատուիլ, ուստի շաքարարանին մէջ գործունէութիւնը սկսելու է:

5.— Կաթնարան.— Ընդհանրապէս այս ամսուան մէջ կաթնարաններու գործունէութիւնը կսկսի աւելնալ. կաթը կարագի, կոգիի եւ պանիրի վերածելու համար:

6.— Նկուղ կամ Մառան.— Այգեկուծքն արդէն շատոնց աւարտած ըլլալով՝ քաղցուն քամած եւ գինիի վերածուած է. ուստի նոր ձերմակ գինիները հին տակառներու մէջ լեցնելով նկուղ իջեցնելը կամ մզուած ջինջ գինիներն սրուակներու մէջ քաշելը Ծիւի թորումն անհրաժեշտ է օգի եւ գինեակ պատրաստելու համար:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ

1.— Հաւնոց.— Սագերու, հնդկահաւերու եւ հաւուկներու պարարտացումը շարունակելը Հաւնոցները՝ ցուրտին, խոնաութեան ինչպէսեւ վնասակար կենդանիներու դէմ ապահովցնելը Հաւկիթ ածող հաւերը զատելը Վախտ մնացածները ծախելը Բաց եւ տաք օդերուն անուաւոր հաւնոցի միջոցաւ հաւերը նոր հերկուած արտերը փոխադրել որդերով մուցանելու համար:

2.— Մեղուանոց.— Ստէպփեթակնոցն այցելելը Այն փեթակները, որոնք պէտք եղած ձմեռնային սնունդը չ'ունին, պարենաւորել հեղուկ-մեղրով ($\frac{1}{4}$ կամ $\frac{1}{6}$ ջրով): Գեղեցիկ օգի մը զանոնք փոխադրել ի ձմեռանոց: Մեղուներուն դուրս ելլեն արգիլելու համար, փեթակին մեղուանցքները նուազեցնելը:

3.— (Ոնասնոց) Ը Գոմ.— Գոմին մէջ գրտնուած կովերուն եւ եղերուն հոգ տանիլ մաքուր օդ ծծելու, որուն համար, օրը պէթ մէկ երկու ժամ դուրս հանել պէտք է Նուա եւ տալ արմատեղէն, ցորենեղէն ինչպէս եւ իւղոտ գնդիկներ, շաքարանոցի կուպեր՝ չոր խոտով խառն: Նաեւ չափազանց խնամք տանիլ անասուններու՝ ցուրտէն չ'պաղելու: Պարարտացու եզերն արօտավայրերէն ներս առնել եւ մինչեւ 3 ամիս գոմին մէջ մուցանելը Միայն չ'աշխատող եզերուն արմրտիք եւ յարգ տալ:

4.— Փարախ.— Արօտավայրերն այսեւ ոչխարներու յագուրդ տալու չ'են բաւեր. ուստի պէտք է փարախներուն մէջ տալ յա-

եղումը ամեն անգամ ինքնուրույն պարտադրանքներով սկսվելու է։ Երբ խոտով խառն արմատեղեններ, երնդեղեններ եւ ցորենեղեններ տալով։ Ժամանակ ժամանակ փարախներն օգտակար են, տախտակամանները միշտ մաքրել եւ այլն։

5. — Ախտո. — Ձիերու մասնաւոր խնամք տանելու եւ մանաւանդ յղի երիւարներուն տալ տուտ եւ մաքուր սնունդ։ Բաց օդերուն քուտակները դուրս հանել, օդադրել։ Փոխանակ վարսակի կարելի է տալ ստեպլին։

6. — խոզակ. — խոզերը խոզկաղինով սնունդանելու եւ մատակարար մատակ խոզերու պարարտացումը շարունակելու։ խոզերները (cochon de lait) շուկայ տանել վաճառել։ (Շար.)

ԳԵՂԱՄԻԾԱՂ ՄԱՆԿԱՌԻԻՆ

Աւարտուող լի են մեր սրբաբեր հասակ. Մեր աչքերուն մէջ կը շողայ հրճուանք. Թրուշներուն պէս անտուտորնակ՝ Օգով ու խինգով կը զըւարթանանք։ Ձինջ երկընքին տակ եւ արեգակին, Ուր երջանկութիւն խալտայ յընծագին, Մենք կը ճըստողենք անհոգ ու անվախ — Ժըպտուն մանկութիւնն ենք յարածիծաղ։ Մեր թարհ հասակը, Գարուն ծաղկաւէտ, կը բանայ փափուկ բաժակներ արդէն, Որոնց գոյները՝ շողուն, խալտաբղետ, Իրենց հեշտանքով մեզ կ'արթնցրեն։ Զառազայթներովն ոսկեփայլ այգուն Մեր հոգին կ'առնու թոյն իր բարձրագոյն, Ու կը թրթրոյն յոտով մ'աննըւող. — Ժըպտուն մանկութիւնն ենք մշտածիծաղ։ Ապագայ կեանքի յոյքովն անարդեւ կը կայտանք զըւարթ, խալտաւաշ ու ազուոր, եւ ո՛չ մէկ բառուկ կուգայ միթագնել Ըզնիզ ողողող ծրփանքն հեշտօրոր կը տոնենք կեանքի քայլերն առաջին, կը պոռթկան վըստան մեր ձայներն ու ժպիտ եւ մեր նուրբ քնքերն ջինջ անշամանգալ. — Ժըպտուն մանկութիւնն ենք գեղածիծաղ։

Թրգմ.

Ժ. ԲՈՒՐՏԻՅԱՆ

Ն. ԹՈՐՈՍԵԱՆ

Գաղտնիք

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԳՈՒՍԱՌԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ

— Երբ մէկէն իմէկ փոքր տան, իրենց ծանօթները անպատճառ իրենց վրայով կը խօսին՝ կամ կը գովեն եւ կամ կը պարտաւեն Քանի՜ անգամ որ փոքր տան, այնչափ ալ յիշած են այդ բացակայ ակումբին մէջ։

— Աստուածածնայ աւետույթն օրը երբէք զմեկին չեն գործածեր. եթէ զմեկին ամեն ձեռքերին՝ անպատճառ մատներն կը կարեն կամ ո՛ր եւ է վերք մը կ'ստանան։

— Մեռնողի գիշերը ճրագալոյցի մօտ կը վառեն ու տուն կը տանին, անով ուրիշ մօտ մը կը վառեն եւ ամբողջ գիշերը չ'են մաշուր գայի։ Եթէ այդ վառումը մօտը ճամբուն մէջ մարի՝ դժբաղդութիւն մը պիտի վիճակի իրենց, որովհետեւ Քրիստոս իրենց բնատնի յարկէն կը խլէ իւր կենսատու լոյսը։ Իսկ եթէ այդ ճրագը սենեակին մէջ ինքնին մարի՝ չար հրեշտակներ եւ դեւեր կը բնակին հոն, իսկոյն տաներեցին օրհնել կուտան յաջորդ օրը։

— Օրօրոյն մանկիկներ երբ անքուն կը մնան, օձի շապիկ մը կը դնեն դիտուն ներքեւ։ Հիմակ այս նախապաշարումն միացած է նաեւ բժշկական դարմանները։

— Տղամական կիներ իւր քառասունքը չ'աւարտած՝ տունէն դուրս չ'ենիր, ո՛չ ինքն եւ ո՛չ մանկիկը։ Նորածին մանկիկներ՝ քանի մը անգամ՝ գեռ քառասուն օրը չի բոլորած՝ դուրս հանուած են, որոնք լուսնոտութեամբ վարակուած են։ Այս իրողութիւնը ահա՜ կ'աւարտելէ խեղճ ծնողները, որոնք խստապահանջ են այս զգուշութեան նկատմամբ։ Տղամական կիներ այժմ բոլոր առաջնորն քառասունքը չեն յարգեր՝ դժբաղդաբար, եւ այս պատճառաւ կնոջական հիւանդութիւններ շատցան գաւառներուն մէջ։

— Գաւառներու եւ մասնաւորապէս Ակնայ մէջ, բնակիչք սովոր են քանի մը աճսուան հացը մէկ անգամէն պատրաստել։ Անոնք խմորը որոշեալ եւ աստիճանական չափով մը կը տափակեն ու կ'երկարեն, եւ ապա խուսին մէջ կ'եփեն։ Այս եփումը հացեր կը նմանին՝ Պոլսոյ մէջ առձեռն ծախուած Պար-

սից փխտեցնելուն, զորս՝ եղանակին ու տա-
քութեան համեմատ, մէկ քանի օր կը փութն
տանիքները կամ սենեակներուն մէջ ու լաւ
մը կը չորցնեն, որպէսզի խոնաւութեամբ չի-
մգլտուի։ Այս չորցած հացերը կը կտտեն եւ-
կաթէ ձողերու վրայ, որոնց հաւաքութիւն
Ակնցին կ'ըսէ կտցան (կտցող)։ Ամէն ճաշի
եւ ընթրիքի առանձն այդ հացերէն քանի մը
հատ կը թրջեն ջրով լեցուն կոնքի մը մէջ,
հացը կը կտտուին, եւ ապա սեղանին վը-
րայ շուրջանակի կը չարեն զ'այն, ու կ'ուտեն։
Այս թրջելու պարագային մէջ, երբ չոր հացը
կը կտտտեն կոնքին մէջ իջեցնելու համար,
քնականաբար հացի մանրուքներ ալ յատաջ
կուգան։ Ակնցին խնայող եւ անտեսող ժո-
ղովորդ մըն է, որպէսզի այս կտտրուանը
անխնամ չի ձգեն եւ չի վնասեն, այնպէս ըմ-
բռնած են թէ՛ այդ հացին փշորներն ո՛վ որ
ուտէ, երրորդէ՛մ երթալու արժանի կ'ըլլայ։

—Այս վերայգրեալ կերպով պատրաստ-
ուած հացերը շատ բարակ են, յաճախ ջեր-
մութեան սաստկութենէն կ'այրին ու կը
մրկին, կը սեւնան։ Տղայք ընդհանրապէս
կը խրախն սեւ հացէն, եւ արդարեւ ան-
մնունդ բան մըն է այլեւս այդ այրած ու
սեւցած հացը, բայց ծնողք միշտ կը յորդո-
րեն իրենց պզտիկները ուտել այս սեւ հա-
ցէն, որպէսզի «անվախ ըլլան, գայլէն չի
վախնան», եւայլն։

—Ակնայ կարուշա գիւղէն փոքր ինչ
հետո՝ կայ Ս. Կողմու-Դամիանոսի մատուռը
կամ եկեղեցին յունական ոճով շինուած եւ
այդ հին դարերէն մնացած։ Տեղացին երբ
ջերմով տառապի, մոմով ու խնկով կը գրմէ
այդ անարժանի բոխիկներուն, հոն կը վառէ
իր մոմը եւ կը բանայ իւր ջերմեանդն սի-
տը, իւր կարողութեան չափով աղքատնե-
րուն ալ կերակուր կը բաշխէ, հեյլուայ (հը-
րուշակ) կամ մսի ջրով եփուած փխլաֆ,
եւայլն։ Եթէ հիւանդը պիտի ապաքինի իւր
ջերմէն, խորանին առջեւ կը բռնէ իւր զող-
դուն հիւանդութիւնը։ Զերմը գաւառներու
մէջ յաճախապէս է, մանաւանդ ամառն ամ-
բողջ։ Զերմը լուսնոտութեան մանրանկարն է,
անոր նման հիւանդը յաւկամայ կը զողջալի,
եւ այս խիստ պատճառաւ Ակնցին ջերմը ան-
ուանած է դող։

—Տեսներնգառաջի Շր. իրեկունը եւ կի-
րակի առտուն՝ քաղաքին կամ գիւղին նոր

ամուսնացած փեսայներն ամբողջ շապիկ կը
հագնին Եկեղեցւոյն մէջ, ձեռքերին մէկ մէկ
ճերմակ գերոն բռնած՝ երեսնին ժողովրդեան
կը դառննեն։ Աւագ սեղանին առջեւ՝ պատ-
ուանդանի մը վրայ զետեղուած չորս կամ
ութն եւ կամ տասն եւ երկու մոմեր իրենք
կը վառեն, որմէ ժողովուրդն ալ իր մեղրա-
մոմերը կը լուսաւորէ։ Այս սովորութիւն հաս-
տատուած է, կարծեմ, եկեղեցւոյ արկղին
հասոյթ մը աւելցնելու դիտուելով։ Փեսաներ
իրենց կարողութեան չափով քանի մը մէ-
ծիտ կամ լիւրայ կը նուիրեն եկեղեցւոյն եւ
վարժարանին։

—Պաւառական ընտանիքներ առաւօ-
տուն կանուխ կ'երնեն, անոնք Պոլսեցիներ
բուն նման արդուզարդի հոգի չեն տար։ Ի-
րենց առաջին գործն է լուսացուիլ, մաք-
րուիլ, անոնք մեղք կը համարին անլուայ
բարեւ տալ։ Ահա՛ մեզքի ըմբռնում մը խըս-
տապահանջ, որ մեծապէս կը նպաստէ իրենց
առողջութեան։

—Պաւառացին անլուայ սեղան չի նստիր,
այս ա՛լ մեղք մըն է։ Ահա՛ ըմբռնում մը,
որ մաքրասիրութեան կը յորդորէ նոյն խիստ
խաժամուժը։ Պաւառացիք փափկասուն չ'են,
անոնք երկրագործ են կամ արհեստաւոր,
անոնք մշակ են, ձեռքերին միշտ աղտոտ
կը լինի եւ բրտացած։ Անոնք արհեստական
պատառաքաղն ալ չ'են յարգեր, քնական եւ
Ակամէն մնացած պատառաքաղովը կ'ուտեն,
հետեւաբար պարտաւոր են մաքրատէր լի-
նելու։

—Կաղանդին օրը կանուխ եկեղեցի կ'եր-
թան, տարին ամբողջ անանկ հանկու հա-
մար։ Տարեգլուխը նշանաւոր օր մըն է ամէն
ժողովրդեան եւ տեղացիի համար, ամէնքն
ալ այդ օրը առաջագրութիւններ կ'ընեն եւ
կը գործադրեն։ Ամէն ժողովուրդ կամ երկ-
րացի իւր նախասիրած առաջագրութիւնն
ունի, գաւառացին ալ այնքան կը սիրէ իւր
եկեղեցին, այնքան քաղցր կը գտնէ անոր
հոգեկան մխիթարութիւնը՝ որ տարեգլխոյ
առաջին իղձը որոշած է։

—Պաւառական ժողովուրդներ մտքով
անշնչակ են, վարժարաններ զետեւ նոր սկստն
զարգանալ եւ ուղեւոյ սիւսունդ մը հասցնել։
Այս կրկին սերնդող մէջ անհամաձայնութիւնը
զուտ քնական է, հիները չ'են բոլորներն նու-
րեւուն յառաջագիմութիւնն ու մտածում։

ներքի, եւ այնպէս համոզուած են թէ՛ «աշխարհքը կարգացողէն պիտի փլչի»: Արդարացի կը գտնենք այս աննպաստ համոզումը, ո՛չ միայն գաւառացի այլեւ պոլսեցի նոր սերունդին նկատմամբ, որ վարժարանակներն թացք մը բոլորելով ինքզինք աշխարհի գիտունը կը կարծէ: Այս յաւակնոտ նոր սերունդը շատ չափաւոր կամ սահմանափակ մտքի զարգացում մը միայն ունի, եւ երբ կը ձգտի աշխարհի բմբուռները յեղաշրջել, հին սերունդը իրաւամբ կ'ըսէ՝ «աշխարհքը կարգացողէն պիտի փլչի»:

— «Ձօքանջի սիրական պիտի ըլլայ» կ'ըսեն՝ հոր կերակուրի վրայ հանգիպի մէկը:

— Երբ մէկուն ռաքին տակը կեռայ, հրաւէր մը պիտի ստանայ, այսինքն պիտի քալէ ու հոգնի:

ՉԱՀԱՆ Գ. ՍԱՐԵԱՆ

ԳԱԽԱՌԱԿԱՆ ԳՈՐՈՎԸ

ԱՌ ՄԻՀՐԱՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

«ԶԱԽԱԿՍ ԻՆՁԻ ՊԱՀԵՄ ՄԻՇՏ»

Ա.

Ներսէս ծնած էր Ակնայ կամարակապ գիւղը, բարեկեցիկ ընտանիքի մը զաւակն էր բարի եւ զարգացած: Իր ուսումնական ընթացքը բոլորած էր գիւղին Արամեան երկրորդական վարժարանին (Նախակրթարանին) մէջ: Ներսէս իր մանկական հասակին մէջ իսկ արտակարգ ուշիմութիւն մը ունէր, իր վարժարանական ընկերներուն մէջ միշտ առաջինն էր, եւ այս պատճառաւ իր ուսուցչին՝ Երեմիա Տէր-Բարգոյղիմեանցի էն սիրելի աշակերտն: Ներսէս իր աշխոյժ ուսուցչին խնամոտ գոտարակութեան յանձնուած, 1893 Մայիսիս իր ընթացաւարտի քննութիւնը անցուց եւ փայլուն վկայագիր մը ստացաւ: Ներսէս երախտագէտ էր սակայն, չի մոռցաւ իր ծննդավայր գիւղին վարժարանը. երկու տարի ձրիաբար օգնական ուսուցչի պաշտօնը վարեց իր սիրած յարկին մէջ:

Ներսէսի ծնողք որոշեցին վերջապէս իրենց զաւակը Պոլիս ղրկել. 1895 Օգոստոս

18ին Ներսէս իր հրաժեշտի ողջոյնը պիտի տար իր հայրենի երկրին ու յարկին, Այդ օրը Երեմիա թիւնը կը տիրէր ո՛չ միայն իր ընտանիքնակարանին մէջ, այլ եւ վարժարանին ու գիւղին մէջ. համակրելի երիտասարդ մըն էր նա եւ սիրելի:

Իր վերջի պահուն չի մոռցաւ վարժարանը, գնաց իր հրաժեշտի ողջոյնը տալու, հակիրճ խօսքերով պատկերաց վարժարանի նպատակը, միջոցները եւ յաջողութեան պայմանները. ու ստանդները յորդորեց աշխատութեան. «աշատեցէ՛ք անվհատ եւ պիտի յաջողիք» այս էր իր յանգերգը: Ներսէս յուզուած կը մեկնէր, վարժարանի աշակերտներն ու պաշտօնեայք՝ անոնք ալ յուզուած էին. Երեմիան՝ այդ վառվռուն ուսուցիչը՝ քանի մը խօսքերով դրուատեց իր սիրելի աշակերտին աշխատասէր ընթացքն ու ոգին, եւ յորդորեց անոր հետեւիլ: Համբուրեց Ներսէս արտասուած թոր աչքերով, աշակերտներ ըսկսան «Մնացես բարեա՛ւ» ըրելով անկէլ ուղորմուկ շեշտով մը. Ներսէս զգայուն սիրտ մը ունէր, ալ չի կրցաւ երկարել իր այս վերջին ժամանցը, իր վերջին «մնա՛ք բարեա՛ւ» ըսաւ ու մեկնեցաւ:

Տան մէջ իրարանցում մը կար, ազգականներն ու բարեկամներ չրջապատած էին Ներսէսը, եւ անա՛ ջորեպանը եկաւ, յանձնարարեց պատրաստուիլ: Եւ գինէ՛ այս էր ճամբորդին քրոջ անունը, վազեց սեղանատուն, գուժեց անոնց ջորիներու հնչականքուն ձայնը (լսած լինելը): Այլեւս ո՛վ կրնար իր քայլը չարունակել. ազգականներն ու բարեկամներ Ներսէսը կը համբուրէին, անոր վիզը կը փաթտուէին, մէկ մէկ նուէր կը մխրձէին անոր գրպանները. իր ծնողքը՝ հայրն ու մայրը՝ թաշկինակ մը տուին՝ որպէսզի անով սրբէ իր արցունքն ու վերադառնէ, իրենք պահեն այդ թաշկինակը ու միշտ իշան իրենց Ներսէսը:

Տան մէջ լացն ու կոծը ծայրայեղութեան գիւմած էր, բոնեցի իր թիւէն ու ազատեցի իր յուզեալ ազգականներուն ձեռքէն: Վերի ճամբան հասանք վերջապէս, հոն քահանայն ըսաւ իր «Տէր ուղղեա՛ն», վարժարանի աշակերտներէն ոմանք ի պատիւ իրենց երբեմնի ուսուցչին՝ կրկին արտասանեցին իրենց երգը. Ներսէս ամէնուն ալ տուաւ իր հրաժեշտի ողջոյնն ու նուէրները, եւ ջորին

հեծաւ իսկոյն: Ճամբորդի կարաւանն երբ շարժեցաւ, Ներսէս ծածանեց իր կարմիր թաշկինակը, իր վերջին հրաժեշտի ողջոյնն էր այս՝ զոր կը դիտէին իր ազգականները:

Ութն օր վերջ՝ Ներսէսի ծնողք հեռագիր մը ստացան Կիրասոնէն. իրենց որդին անվտանգ հոն ժամանած էր եւ հետեւեալ օրն ալ շողեմաւ պիտի նստէր Պոլիս երթալու համար: Այս հեռագիրը ստացան եւ անմիջապէս խմբովին դիմեցին Ս. Նիկողոսին, որպէսզի իրենց Ներսէսը ծովային ճամբորդութիւնն ալ ողջամբ կատարէր:

Սեպտեմբեր 5ին՝ Ներսէս Պոլիս ժամանեց. ամէն ինչ կը խնդար իրեն, գեղազուարճ Վոսփօրը, ցնծալից բերան, աղմկալից փողոցներն ու հրապարակները, ընդհանուր գործունէութիւնը, վերջապէս՝ նոր միջավայր մը եւ ասպարէզ մը կը բանար իրեն առջեւ:

Պանդուխտ մըն էր Ներսէս եւ իր բնակութիւնը հաստատեց խանի մը մէջ. սենեակ մը վարձեց հոն, եւ այդ խոնաւ կամարներուն տակ կ'անցնէր իր ախուր օրերը: Ներսէս ընկերականութիւնը չատ չէր սիրեր. կը նախընտրէր իր մենակեաց զբաղումները, գրական քան զուարճախօս տեսակիցներն ու խօսողասէրները: Ամէն երեկոյ խանին մէջ խմբակներ կը կազմէին պանդուխտներ, բայց մեր Ներսէսը մտախոհ կ'ուսումնասիրէր իր «Հանդէս Ամսօրեայ»ն ու Արեւելեան Մամուլը՝ որոց յաւիտենական բաժանորդն էր: Ներսէս թէեւ երիտասարդ եւ զարգացած, չ'էր մոռցած իր եկեղեցին ու հաւատքը. մասնաւոր հետաքրքրութիւն մը ունէր ազգային լրագրութեան, երբ նշանաւոր քարոզի մը ազդարարութիւնը կարգար, այն եկեղեցին պիտի երթար լսելու քարոզը: Ամէն Կիւրակէ Մայր-Եկեղեցի կ'երթար յաճախ առանձինն եւ երբեմն միակ ընկերով մը՝ որ իր խանին բնակիչներէն էր:

Ներսէս թէեւ մտադիր էր արհեստի մը հետեւիլ, բայց իր հայրենակից բարեկամներու միջամտութեամբ գործակատար-վաճառականի մը գրասենեկին մէջ գրագրի պաշտօն մը ստանձնեց: Ինչ ժամանակի մէջ Գրական ասպարէզէն բաւական ծանօթներ ունեցաւ, շատ կը սիրեր անոնց տեսակցութիւնը եւ միշտ կ'օգտուէր. մեկամաղձիկ չէր նա՝ բայց կը սիրեր մենակեցութիւնը, ժամանակացոյց մը պատրաստած էր իր պարապ ժամերուն համար, եւ ճշտիւ կը գործադրէր զայն:

(Շար.)

ՎԱՀԱՆ Գ. ՍԱՐԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՏԿԱՌԵԼԻ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՆ

Հանրագիտակ ուրախութեամբ կ'աւելտէ իր ընթերցողաց թէ՛ Սամուէլեան Երկօքին Եղբայրները՝ Տիարք Միքայէլ եւ Մինրան, Իւսկիւտարու մէջ Պաղլար-Պաշիի կողմը, իրենց ընդարձակ ու հոյակապ Տունը, նուիրած են Ազգին՝ որպէսզի դժբախտ հրեհէն մօխիր դարձած նշանաւոր Ճեմարանին տեղ, Ազգային վարժարան լինի, ուր արգէն փոխադրուած են Ս. Կարապետ Թաղին դպրոցականները: Կարեւոր գումար մ'ալ պարգեւած են այս պատկառելի նուէրին հետ որպէսզի դպրոցին կահ կարասիներն եւ այլ պէտքերը հոգացւին:

Ինքիզալի (Փոխանցման) պաշտօնական գործողութիւնը սիրայօժար՝ ձրի կատարուած է Ս. Կարապետ Եկեղեցւոյ Թաղին Պատուարժան Խորհուրդին բարեջան Ատենապետ եւ Ազգային անուանի փաստաբաններէն, եւ մեր վաղեմի ու սիրելի բարեկամ երբեմնի պաշտօնակից, Պատուարժան Գալուստ Էֆ. Գուլումձեան: Մեր Մեծանուն ու բարերար Մօրքեռորդիները այս մասին ընդունած են նաեւ Ս. Պատրիարք Հօրմէն օրհնութեան յիշատակելի կոնգակ:

Սամուէլեան Գերդաստանը՝ առաջին անգամը չ'է որ կ'ընծայէ Ազգին իր ստացւածքէն եւ քսակէն իրենց ազգասիրական Ուլույն եւ իրենց ճշմարիտ Հայու եւ ճշմարիտ Բրիտանոնէի անուան արժանի նուէրներ: Սամուէլեան Եղբարք՝ որոնք այսօր Փարիզի մէջ կ'ընակին եւ Եւրոպայի առեւտրական հրապարակաց վրայ՝ իբրեւ գոհարեղինաց վաճառական, կարեւոր դիրքի ու մեծ վարկի տէր են. Ազգին գթութեան արժանի Որբոց եւ Այրեաց եւ ազգային ողորմածական ու մարդասիրական ամեն կարգի, տեղոյ ու Հաստատութեանց օրինաւոր հանգանակութեանց միշտ մասնակցած են առատաձեռնօրէն: Իրենց Բարեպաշտուհի ու լուսահոգի Մայրը՝ Տիկին Սօֆիկ, եւ իւր բարեյիշտակ Հայրը՝ Աղա Սամուէլ՝ իրենց կենդանութեան ատեն, Ազգային Եկեղեցիներու, Դպրոցնե-

րու եւ այ կարեւոր ու չքաւոր ընտանեաց յօժարակամ ոժանդակած են: Աւետարանական ու Նահապետական ընտանիք մ'ի Սամուէլեան Գերդաստանը՝ յաճախ եւ գրեթէ միշտ Աջ ձեռքով նուիրածը՝ Զախ ձեռքին եւ ո՛չ ալ ահեկինը՝ Աջոյն կ'իմացնէ: Այսքան բարեպաշտ եւ բարերար ընտանիք մը ո՞րքան ալ իւր նուէրներն՝ յանուն ծածկազխտին Աստուծոյ միայն բաշխէ զարօտելոց, Հրապարակագիրներուն պարօքն է ի վեր հանել եւ Հանրային երախտագիտութեան յանձնել, այլոց ալ հետեւելի օրինակ ընծայելու համար: Սամուէլեան Եղբարք բռնիկ Պոլսեցի՝ Օսմանեան հաւատարմագոյն հպատակներն հղած են միշտ, Ազգին ու Պետութեան պատիւ բերող՝ թէ՛ երբ Պոլսեւնակ էին եւ թէ՛ երբ այսօր Եւրոպայեան են: Փարիզի ու Անվէրսի մէջ՝ Չ) տարիներէ ի վեր արդէն շահավաճառի ձիւղեր հաստատած են, նման ա.մեն Օսմանեան տուրեւառիկ Պատուաւոր մեծանուն Հայոց հետ: Էր երբեմն Պոլսոյ Օսմանեան Հայերն էին որ զաւառներու արտասանմանին կարօտ Հայերը կ'հոգածէին, հիմակ ալ ճիշտ արտասանմանի անկարօտ ու կարող Հայոց կարգն է իրենց կարօտ ու անկարող արեւակցացն օգնել:

Սամուէլեան Եղբարք իրենց նախնական կրթութիւնն առած են Իւսկիւտարի Ճեմարանին մէջ, երկրորդականը՝ ողբացեալ Ն. Շահնազարիանի եւ Ռոպէրթ Բօլէթի մէջ, բարձրագոյնն արդէն Եւրոպայի մէջ լրացուցած:

Ուրախ ենք միանգամայն լսելով թէ ուր ուրեմն յաղթական եւ յաջողութեամբ պըսակեալ դուրս ելած են Դատաւարորթներէ մը, որուն մէջ երկու կողմին բարեկամ ազգայիններն ալ՝ երկար ատենէ ի վեր՝ անձկանօք կ'սպասէին վերջնական ելքին: Փափաքող ենք որ այս կարգի խնդրոց մէջ, մեր ամեն կողմի Ազգայինք Աւետարանին ու Կոնփիւկիոսի Պատելիանին աւելի անսան, այսինքն երկուստեք իմաստասիրութեամբ մը անուշի կապելով հաշտուի: Թէեւ հասարակ առած մ'ալ կ'պատուիրէ օրէնքով կտրուած մատր ջի ցաւիր:

Հանրապետական հռչակելով Սամուէլեան բարեխոնար Գերդաստանին այս Ազգային Պատկոտելի նուիրատու թիւնը, կ'առաջարկէ

Իւսկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցւոյ Թաղ. Պորհրդոյն, որ իրենց պարզեւ բնծայուած Դպրոց-Տունին անունը Սամուէլեան վարժարան մականուանուի, ի յիշատակ եւ ի պատիւ նուիրատու Բարերարաց, որ անշուշտ իրենց նուէրին արժէքն ու անունն իրենց Գերդաստանին անուան արժանի յաւերժութեամբ մը մշտնջենաւորելու ամեն բարեացակամութիւն ու զոհողութիւն բոլորանուէր յանձն կ'առնուն:

Բարերարաց յիշատակը երախտագիտութեամբ պատուելը բարերարներ յարուցանել է:

* * *

Տարբեր աղբիւրներէ ալ կ'իմանանք թէ՛ նշանաւոր էգնայեան գոհարավաճառ տուրեւառիկ Տունն ու Ազգային բարերար համալսակ Գերդաստանն ալ մտադիր է եղեր, Սամուէլեան Եղբարց նման՝ իրեւ Օսմանեան հաւատարմ հպատակներ. Պոլսոյ իրենց ծննդավայր թաղին կամ ուրիշ Հայաբնակ վայրի մը ի նպատակ, կրթական ու բարոյական տեսակէտով՝ Ազգային բարերարի անունին արժանի ու ընդօրինակելի նուիրատութիւն մ'ընել:

Մաղթենք որ այսօրինակ Ազգային բարերարներու հանրօգուտ օրինակներն աճելով աճին եւ բազմանալով բազմանան, ամեն տեղի, ամեն հարուստ Հայ զասակարգերու մէջ:

ԶԱՅՆԵԱԿ

ԹԱՂԱՐԻՆ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Ազգկայ մը աղու, թովիչ նայուածքին պէս, ժանեկազարդ ու գունագեղ թաղարին մէջ, Բիւլ կը ժպտին ծաղիկները հոյլ հոյլ ու վէս, Այերային նայուածքով մը հանդարտ ու գէջ:

Զեփիւռն անուշ կը աըրորէ իր մեղմ համբոյր Ներս՝ թաղարին ծաղկանոցին պատուհանէն, Ու իր յուշիկ բարախոսման տակ՝ սիրաբոյր Ծաղիկները կը սարսուռն արդ յամբօրէն:

Մեղմասարսուռ այդ հպումէն, սիրոյ հպում, կը գոյանայ խունկի բոյր մը, նուրբ գոլորշի, Կ'իթերանայ ու կը ցընդի իւրեւ փոշի:

Ու շուրջպատէն այդ օդային՝ տարրալուծում կը գոյանայ՝ ինչպէս սէրերը մարդկային, Որոնք սրտի ծաղկանոցէն կը խուսափին:

12 Մարտ 1900.

Մ. ՅՈՒՆԷՓԵԱՆ

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Ի ՏՈՒՑՏՈՐ ՔԻՒՆԵՐԷ

Գրասենեկի միջ աշխատողներու
եւ խցաբանակ գիտաւնեցող համար
Ա.

Ի խոր ծերութիւն հասնելու համար՝ աշխատութիւնն եւ չափաւորութիւնն ամենայնամար միջոցներ ճանչցուած են ամեն ժամանակի գիտուելներէն:

Յիւրաքանչեւ, դատարկութիւնն ոչ թէ միայն ամէն չարիաց աղբիւրը, այլ նաեւ առողջութեան մահացու թշնամին է, վասն զի կենդանի ոյժերը, զորս առողջ մարմինը կը պարունակէ, կը պահանջեն գործադրութիւն, եւ գործարաններն՝ եթէ մարդ չ'գործածէ, չ'աշխատցնէ զանոնք, կը հիւսնեն, կը տկարանան եւ կը հիւանդանան: Բայց աշխատութիւնը պէտք է ընտելանաբար իմաստուն կերպով եւ կեանքի օրինաց համաձայն կարգադրել. եթէ այսպէս չը վարուինք, այն ատեն զբաղումն իրեն հետ վնասներ կը րեւէ, որք ի վերջոյ ամենագորաւոր առողջութիւնն ալ կը խանգարեն: Այս խօսքերը մարմնաւոր աշխատութեամբ, ճակտի քրտինքով իրենց հացը ճարողներու համար ըսուած չեն միայն, այլ նաեւ մտաւորապէս աշխատողներու բարձր դասակարգին համար, որոնք մինչ մարմիննին կը հանգչի իրենց միտքը սաստիկ կը յոգնեցնեն:

Մեր քաղաքակրթութեան յարաբերութիւններն այնպէս բերին որ մտաւոր աշխատողներուն թիւը զգալապէս բարձրացաւ: Ոչ թէ միայն գիտնոց խումբը ստուարացաւ այլ նաեւ պաշտօնեաներու բանակն աճեցաւ: Վաճառականութիւնն ու արտւարաններն կաշկանդած են միլիոնաւոր գրագիրներ նեղ գրասենեակներու մէջ. բոլոր այս մարդիկ բնաւ մարմնաւոր ծանր աշխատութեամբ չեն զբաղիր, կը նստին կամ կը կենան երկար ժամեր իրենց գրասեղանին վրայ, եւ գլխաւորաբար իրենց ուղեղովը կ'աշխատին: Այսօր՝ ոչ ոք կը պնդէ թէ այս աշխատութիւնը դիւրին ըլլայ, փորձաւորութիւնն ըստ բաւականի սովորեցուցած է որ

մտաւոր աշխատութեան չափազանցութիւնը մարմինը կը մաշեցնէ ու կ'ապականէ, եւ բժշկական վիճակագրութիւնը կը հաստատէ թէ մարմնաւոր աշխատութեամբ զբաղողներէն աւելի՝ մտաւորապէս աշխատողներու վրայ կարգ մը ջղային եւ ըղեղային հիւանդութիւններ, մտքի խանգարումներ, անձնապաշտութիւն, տաճարապատիկ աւելի աւեր կը գործեն, քան մարմնաւոր աշխատութեամբ զբաղողներու մէջ: Հետեւաբար բըժիշկներու աւագ պարտականութիւնն է՝ մեր այս քաղաքակրթեալ կեանքի աւերներուն առաջին առնուլ եւ մտաւորապէս աշխատողներուն մեծագոյն մասին խորհուրդներ տալ, թէ անոնք ինչպէս իրենց պաշտօնական գործերուն փաստակար կողմը կարելի եղածին չափ կրնան նուազեցնել:

Արդարեւ շատ գոհարին է բոլոր այս կարգի մարդոց համար համարժէք կանոն մը յօրինել: Մտաւորական գործունէութիւնը այնչափ ճշտօրէն չի չափուիր եւ թիւերով չի բացատրուիր, ինչպէս տեղի կ'ունենայ մարմնաւոր գործունէութեան մէջ: Չենք գիտեր ուղեղի մէջ խորհուրդ մը որչափ նիւթ կ'սպառէ, եւ թէ այս ոյժի ըսպառման փոխարէն մարմնոյն ինչ հատուցանելու ենք: Միանգամայն մտաւոր կարողութեան չափը՝ մասնաւորին անձնական տաղանդէն կախում ունի. շատ դիւրութեամբ կը լուծէ մէկը գոհար խնդիր մը, որ ուրիշի մը գլխու ճաթաւուք ու յոգնութիւն կը պատճառէ. յարմար ձիւղերով օժտեալ մարդ մը գոհարութեամբ ու բերկրութեամբ կը կատարէ իր պաշտօնը, որուն մէջ իր նախորդը հիւսած ու մաշած է:

Ամէն օր այսօրինակ փորձաւորութիւններ կրնանք ընել, եւ ասոնք կը սորվեցնեն մեզ, թէ մտաւորական աշխատութեան համար ընդհանուր արժէք ունեցող չափ մը չի կրնար գտնուիլ, եւ թէ մասնաւորն ինքնին իր կարողութիւնը քննելու է, եւ թէ մտաւորական յոգնածութեան սահմանն իրաքանչիւր մարդուն համար տարբեր է:

Բայց նոյն իսկ ամենայնովակ հանճարն ալ՝ եթէ իր տրամադրութեան տակ ունեցած զօրութեան առատութիւնը զեղծմամբ գործածելու ըլլայ, խոնջութեան փնտսակալ հետեւութեանց կ'ենթարկուի: Մտաւորա-

կան կարողութեան այս սահմանն երբէք անցնելու չէ՝ յարատեւ կերպով։ Ուրախութիւն եւ բաւարարութիւն, մարդս իր կոչման կատարմանը մէջ զգալու է, իրեն համար աշխատութիւնը՝ կեանքի հրապոյր մը, զօրութեան աղբիւր մը կազմելու է։ Անոր համար է որ տհաճութիւնը, թուլութիւնը, ընդարմացումն՝ որոնք նախապէս կամաց կամաց եւ անզգալի կերպով երեւան կուգան, մէյ մէկ ազդարարներ են, որ կ'իմացընեն մտաւորապէս աշխատողին, թէ իր միտքը չափէն աւելի յոգնեցուցած է։

Թարգմ. Գեորգիանէնէ

Շար.

Լ. ՔԷՍԵՆԷՆՆԱՆ

ՄՐՅԱՐԱՆ

ՄՐՅՈՒՄ Ա.

ՀԱՅՐ ԵՂՈՒԱՐԴ ՀԻՒՐՄԻՋ

ԵՒ

ՏՐ. Տ. Ե.

Ռապիճի Փեղրաիճ գրաբար բարգմն. մեջ

ՄՐՅԱԿԻՅ

Մրցումը՝ այն ազնիւ զգացումն է որով ջանահնար ու հետամուտ կ'ընեն սեւէ մէկը ուրիշ մէկու մը կամ բանի մը առաւելութեանը հաւատարիլ, երբեմն ալ զայն գերազանցել։

Մրցումը տարբեր է զչարուսէն կամ գէշ հասկցուած նախանձէն, որով մէկը ուրիշին բարի չի կոմենար, եւ իր նմանւոյն քան զինքն աւելի գերազանց լինելուն առաւելութիւնը չի քաշեր։ Ճշմարիտ գրագէտը, ինչպէս և ճշմարիտ արուեստագէտը, ա՛նէ որ կ'մրցի ու չի նախանձիր։

Մրցման այս ազնուական ոգով տոգորեալ լինելու են ամեն մրցակիցներ, որք հետզհետէ ի' հանդէս պիտի գան պարբերաբար, Հանրագիտակի Մրցարանին մէջ, որպէս Տր. Տ. Ե. նայն ոգով վարւած է իւր մրցման մէջ։

Արդէն լսած էինք թէ Տր. Տ. Ե. քամրողութեամբ գրաբարի թարգմանած է Ռապիճի Փեղրան, զոր նախապէս թարգմանած էր Հ. Ե. Հիւրմիւլզ հեաաքըրըր եղանք տեսնել

Փեղրաի նոր թարգմանութիւնը և ատոր գրական գեղեցիկ մէկ կտորը՝ Իպպոլիտի մահը որ ֆրանսական գրագիտութեան մէկ գոհարը համարուած է. խնդրելով զայն պատուարժանութեանչէն առինք և Հայր Հիւրմիւլզին միևնոյն կտորին թարգմանութիւնն ալ դրինք անոր դիմաց, կցելով միանգամայն անոնց ֆրանսերէն բնագիրը, ի դիւրութիւն պարտու պատշաճ բաղդատութեան։

Թէ ո՛րքան յաջողած է Տր. Տ. Ե. իր այս նոր գրաբար թարգմանութեան մէջ, կ'յանձնենք զայն մեր գրաբարագէտ ընթերցողաց, Հայկաբանութեան Ուսուցչաց, մեր բարձր դասու գրագիտաց դատաստանին ու գնահատումին։ Եւ ասոնցմէ աւելի նա մանաւանդ փափաքելի է մեզ՝ սոյն նոր թարգմանութեան մասին, հրապարակաւ լրտեսել կարծիքն ու դատաստանը Գրաբարի Ակադեմիան հանդիսացող Վենետիկի, ինչպէս և Վիեննայի, Միսիթարեան Ս. Հարց. որոց կ'պարտի Հայ Ազգն իւր ոսկեղինիկ լեզուն վերածնութիւնը, ինչպէս և իւր այժմենի գրական թէ գիտական զարգացման առաջին մղումն ու առաւելագոյն պաշարը։

Եւ որովհետեւ Վենետիկեան գրաբար Ակադեմիան յաւիտենական Նախագահն ու Անոր մշտնջենի Ատենապետը կ'մնան Հայր Արսէն Բագրատունին և Հայր Եղուարդ Հիւրմիւլզ, որքան ա՛լ համարուի ազնիւ փափաք ու ջանք մը, անշուշտ բաւական յանդուգն փորձ մը ըսենք թէ խիզախում մ'է գրաբարի Ակադեմիայի Ատենապետի մը հետ մրցելու ջանալն ու փափաքելը. գրաբարագէտ ու լեզուագէտ Հայ երիտասարդի մը համար, որ, ինչպէս կ'երևի իւր գրաբար լեզուէն, Տ. Ե. աւելի Բագրատունիի Հայկաբան զպրոցին հետևող ուղղափառ հաւատացեալ մը լինել կը թուի։

Թէ ցոր աստիճան ճաշակաւոր, պատշաճաւոր, ներդաշնակաւոր ոճով արուեստագիտական իր այդ փորձ հուն ելած է, ինչպէս ըսինք արդէն մենք զայն դատող Արիոպագոսեան սափորին մէջ առ այժմ մեր նետնիքը չէ՞զրքի ճերմակ քուէ մ'է. չի նախապաշարելու համար ընթերցող բանասէրներու ու գրաբարի ներհուններուն անկախ ու անաչառ դատաստանները, որոց առջեւ բաց արձանագիրք մ'է Հանրագիտակը։

ԱՌ ՀԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆՆ
ՄԿԻՏԻՉ ԷՍԷՆՏԻ ԵՍԱՆԱՆ

Ընծայ խուր յարգանաց

Ազգային անուանի սեղանաւոր, վաճառական եւ բարերար Եսսեան Յովհաննէս Էֆէնտի մահուան առթիւ, ընդհանուր Ազգին ու Մամուլին հետ և Հանրային, զգացած խորին տխրանքն ու վիշտը կ'բաժնէ և Անոր երիցս օրհնեալ Յիշատակը կ'պատուէ յետագայ պարզ Ողբերգովն ու կարճ Տապանագրով:

Հասարակաց Հայր Դու բարի,
Անժառանգաց պաշտպանդ արի,
Հպարտ գանձէն վեր հեղ հոգի,
Բարերար կեանքն որ Փառք թաղուի:

Մինչ քեզ նման շատ մեծատանց
Հողքին վերայ մոխրանալ գանձ,
Աստուած ու լոյս տաճարանայ
Բարերարիդ Շիրմին վերայ:

Մեռան անոնք. զանգակն ողբաց.
Յուզարկաւոր մարդը գնաց,
Իսկ Ազգն իր սուգ Շիրմիդ Արձան
Կանգնած կ'ողբայ մահդ յաւիտեան:

Ինչ մեծ յոյսեր քեզ հետ փլան,
Ինչ ողջ իղձեր սև հողքդ իջան.
Որքն ու այրին արդ անպաշտպան
Մահդ հանրային աղէտ կ'ողբան:

Դու թդ էր քսակ, ո՛ր Մեծատուն,
Ազգատներուն Դրամատուն,
Մերկին՝ զգեստ, ջո՛ւր՝ ծարաւին,
Հիւանդին՝ տես, տո՛ւն՝ տնանկին,

Անկարին՝ կար, տէ՛ր՝ անտէրին,
Ցաւին՝ բժիշկ, դարման՝ վէրքին,
Սփոփանքի անոյշ կայլակ՝
Սգաւորին դառն ի՛ր բաժակ:

Դու թդ ամեն տեղ հրաշք գործէր.
Ու Աստուածի պէս կ'ողորմէր.
Որ կ'ողորմի՝ կ'աստուածանայ.
Կ'աղաղակէ Գիրք Նարեկայ:

Քանի՛ խեղճ Հայ երիտասարդ,
Ո՛րքան շատ հէգ կին ու այր մարդ
Քո շնորհիւ՝ արդ երջանիկ,
Փայլուն դիրքի տէր ընտանիք

Կ'ողբան զՄահ Բարերարիդ,
Երախտապարտք՝ Յիշատակիդ:
Քո ողորմած օրհնեալ լուսնայ
Տեղաց ամեն տեղ մանանայ:

Հաւատարիմ Քաղաքացին
Օսմանեան մեծ Վեհապետին

Ո՛ւր որ գնացիր, պարծա՛նք դարձար,
Ազգիդ, երկրին, ո՛ր Բարերար:

Ո՛ւր որ թռաւ քո ճոխ համբաւ,
Ճոխ գործքերէդ թռիչն առաւ:

Հով համբաւը չէր փառքիդ փող,
Դործքդ էր փառքդ միշտ տարփողող:

Անվուգական զոյգ եղբորդ հետ:
Գերդաստանիդ մեծ նշահապետ:

Տոհմիդ հռչակն ա՛յնքան գործոն
Աշխարհոցից քեզ բազմհորիցոն,

Որ Եսսեանն այսօր անուն՝
Միջազգային յատուկ Անուն,

Ու բարերար համազգային
Կը տիտղոսուի, տիաղո՛ւս Ազգին:

Տաղանդն, հանձարն ու արժանիք
Ո՛ւր ցոյց տուին ձեզ երաշխիք:

Հանդիսացաք նոր Մէկենաս
Հայ Մուսայից ի՛նոր Պառնաս:

Թէ՛ վրձինը արուեստագէտ,
Թէ՛ գրիչը գեղադրագէտ,

Թէ՛ ասեղը տնտեսագէտ,
Թէ՛ բրիչը մեծ հողագէտ

Ձոն առին Ձեր մրցանակներ:
Ձի ճշմարիտ մեծատուններ

Անոնք են լոկ. որք՝ Ձեզ նման,
Նիւթէն հոգի վերհամբառնան:

Եւ երբ այսօր, ո՛ր Բարերար,
Կեանքն հանուեցար, մահը հազար,
Ի՛ մէջ փառքիդ յաւերժութեան
Երթալ հանգչել հի՛ւր աստուածեան:

Ոոկի դանձեղ ա՛լ աւելի
Վեր կը պաշտենք Քո գանձ հոգի:

Յիշատակիդ մէջ կենդանի
Որ յաւիտեան պիտի ապրի:

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Յո՛րջափ փառքիդ աստուածաբան
Ձոյգ մ'նայակապ Տաճարք բնդան,
Թե՛ Եսսեան զոյգ Վարժարան,
Ուր հանճարոյ պաշտիս Պաշտպան,
Թե՛ Եսսեան եկեղեցիդ,
Ուր բնակիս հետ Աստուածիդ:
Յո՛րջափ բնդան անոնք ու տան
Մեզ լոյսն, Աստուածն ու ապագան
Պիտի ապրիս Դուն յաւիտեան,
Ո՛ր Բարերար մեծդ Եսսեան:

ՄԱՅ ԻՊՊՈԼԻՏԱՅ

Այն ինչ ի դրանց աստի Տրեզեն քաղաքի ել՝ նա ընդ մեզ
 Բազմեալ ի կառս անդ իւր, կային ըզնովաւ լուռ իրրեւ ըզնա
 Թիկնապահք թաղծեալ, եւ գնայր դէպ ի Միկէնըս մըտայոյդ,
 Թողեալ ի ճօճ ըզձիովք զերասանակուրն տատանեալ.
 Սօս երկվարք, որք լի երբեմն ի վեհ աշխոյժ կառավարեալ,
 Արդ կորագլուխ տըխրահայեացք՝ թուէին նըմա գոլ վըշտակիցք.
 Զայն ահագին եւ ի խորոց ծովուն, այերք պըղտորեցան.
 Եւ ի ծոցոյ երկրի հընչեաց եղերաձայն զարհուրելի
 Առ բարբառն ահարկու պատասխանեալ հեծեծեալ.
 Արիւն ի սիրտըս մեր պաղեալ, եւ ի յայթիւ կացեց
 Քըստմեցան բաշք երկվարաց. ի մըկանունս անդ լոյժ դաշտին
 Յորձնեռանդն յայնժամ ի վեր ամբառնայր լեռքն ջրակուտակ,
 Մատեան ալիքն, եւ փրփրադէղ բեկտեալ ի դուրս ժայթքէին
 Հրէշ կատաղի՝ սպառնող եղջերք վինեալ ի լայն ճակատուն,
 Զրահամորթ ծածկեալ իրանն ամրող ի թեփ դեղնաշորթ.
 Յուլ ամեհի, վիշապ անսաստ, ի ծամածուռ քընթընոց
 Ի թեք գաւակ իւր գալարեալ, եւ սարսէին ծովեզերք
 Ի մըռընչել գազանին երկարաձիգ ի մըռընչիւն.
 Երկինք ընդ հրէշըն վայրենի պակեան, երկիր սարսեցաւ,
 Պըզծեցան օդք. ճով որ ըզնայն օժ՝ ընկըրկէր ահաբեկեալ.
 Եւ բնութ փախեան, ոչ ոք յուժպէտ արիութիւն խրախուսեաց.
 Ի մեհեան անդըր մերձակայ անկան ընաւք ապաստանել,
 Իսպաղիկ եւեթ՝ զաւակ արժանաւոր դիւցազին՝

MORT D'HIPPOLYT

A peine nous sortions des portes de Trézène,
 Il était sur son char; ses gardes affligés
 Imitaient son silence, autour de lui rangés.
 Il suivait tout pensif le chemin de Mycènes;
 Sa main sur ses chevaux laissait flotter les rênes.
 Ses superbes coursiers, qu'on voyait autrefois,
 Pleins d'une ardeur si noble, obéir à sa voix,
 L'œil morne maintenant et la tête baissé,
 Semblaient se conformer à sa triste pensée.
 Un effroyable cri, sorti du fond des flots,
 Des airs, en ce moment, a troublé le repos;
 Et du sein de la terre une voix formidable
 Répond en gémissant à ce cri rodoutable.
 Jusqu'au fond de nos cœurs notre sang s'est glacé:
 Des coursiers attentifs le crin s'est hérissé.
 Cependant, sur le dos de la plaine liquide,
 S'élève à gros bouillons une montagne humide:
 L'onde approche, se brise, et vomit à nos yeux,
 Parmi des flots d'écume, un monstre furieux.
 Son front large est armé de cornes menaçantes;

ՄԱՅ Ի ՊՊՈԼԻՏԱՅ

Այն ինչ մեք ընդ Տրեդենեան դըրունս ի դուրս խաղայաք,
 Կայր 'ի նիստ նա յիւրում կառս, և գըլխապահք իւր թախծեալք
 Պար առեալ ըզնովաւ, կային 'ստ նըմին անմըռունչք.
 Յառաջէր անդոհալից նա 'նդ ճանապարհ Միկենաց:
 Ի կեռացն հոսեալ կային երասածակք ըզմիովք.
 Յորդեռանդըն սէգ նըծոյղք, զորս տեսանել երբեմն էր
 Հըլուաբար անսացեալս առ ձայն նորուն բարբառոյ՝
 Արդ աջօք սըգազգած, գըլխակորեալք տըրտմալից,
 Ըստ թախծուտ սըրտի նորա յարգարէին գոգ զինքեանս:
 Եւ ահա յանդընդոց ծովու կառանչ ահաւոր
 Հընչեցեալ, եհար խըռով յանդորրութեան անդ օդոց.
 Նոյն ընդ նոյն ի ծոցոյ երկրի բարբառ ահագին
 Առ այն ճիչ զարհուրելի ընդդէմ կըրկնեաց հեծեծմամբ.
 Արին մեր ի պող մածաւ մինչև ի յալս անդ սըրտից,
 Խըրճնացան շականջեղց երիվարաց բաշք ի վեր:
 Եւ ահա ի մկանունս անդ լուծականըն դաշտի
 Յորճնեռանդըն դիզացեալ խոնաւակոյտ կանգնի լեռն,
 Եւ գալով գայ յափըն կոյս, և փեռեկեալ՝ փըրփրախառն
 Ի ծոցոյ անտի իւրմէ ժայթքէ հըրէչ մոլեգին՝
 Յաղթ ճակատ վրիժակազէն ահընկէցիւք եղջերօք,
 Դեղնորակ թեփովք համակ պարածածուկ իրանն ողջ,
 Յուլ խեռ անսաստելի, բուռըն վիշապ ամենի՝
 Ոյր ողինն իւրոյ գալարք քընթըռնէին պատուածոյք,
 Սարսէին ծովափունք յերկարածիգ մըռնչմանէն,
 Ի տեսիլ վերագին հարան երկինք ըզդողի,
 Եւ երկիրըս պակեաւ, ապականեալ եղեն օդք,
 Եւ որ զայն սծին ալիք՝ սոսկացեալ յետս ընկըրկին.
 Բնաւք խուսեն, ըզվայրապարն ի բաց եդեալ խիզախին,
 Ու ի մեհեան մի մերձակայ անձնիւր խընդրեն ապաստան:

Tout son corps est couvert d'écailles jaunissantes.
 Indomptable taureau, dragon impétueux,
 Sa croupe se recourbe en replis tortueux;
 Ses longs mugissements font trembler le rivage,
 Le ciel avec horreur voit ce monstre sauvage.
 La terre s'en émeut, l'air en est infeété,
 Le flot qui l'apporta recule épouvanté.
 Tout fuit; et, sans s'armer d'un courage inutile,
 Dans le temple voisin chacun cherche un asile.
 Hippolyte lui seul, digne fils d'un héros,
 Arrête ses coursiers, saisit ses javelots,
 Pousse au monstre, et d'un dard lancé d'une main sûre,
 Il lui fait dans le flanc une large blessure.
 De rage et de douleur le monstre bondissant
 Vient aux pieds des chevaux tomber en mugissant,

Կացոյց ըղձիս. բուռն ի գեղարդն հարեալ, ի հրէշ անդրը դիմեալ,
 Ի շեշտակի հարուած բանայր խոց լայնատարր ի կըշտին:
 Ի զարոյթ եւ ի կըսկիծ նըհանգն ի վեր ընդոստուցեալ,
 Եկն առաթուր երիվարացն անկաւ անդէն մըռնչելով.
 Եւ թաւալգլոր ըզբոցաշոնչ որկորն ի դէմս ածեալ նոցին՝
 Ընկելոյզ ծածկեաց ըզճիանն ի հուր ի ծուխ եւ յապայոյթ.
 Ահ ըզնոսա խռովեցոյց, եւ խուլ յայնժամ եւեթ վարչին՝
 Հետեալ սաստից եւ շրուշակաց, մինչ ձա գրաջան տագնապէր,
 Ներկանէին կարմիր ըզսանձս յարիւնախառն ի փըրփուր:
 Ասեն տեսեալ իսկ յահագին աղմըկի անդ զոք ի դից,
 Մըտրակ ի կուշտըս փոշելից երիվարացն առնելով,
 Վարէ ընդ ժայռս ահ ըզնոսա. ճռնչեալ լիսեռնըն բեկանի.
 Ինքն Իպպոլիտ անվեհեր դէտակն ի կառսըն խորտակեալս,
 Եւ ի բեկորս ընդ օդս ի թիռ, անկանի՛նդ սանձսըն խառն ի խուռն:
 Անողորմս այս տեսարան, ներեա խուժըս վըշտի,
 Լիցի աղբիւր ինձ յաւերժից լալեաց. տեսի, տէր արքայ,
 Տեսի զորդին քո հէք ձըգեալ ի ձեռասուն ձիւցն ի քարշ.
 Յետս ըզճիանըն կոչէր, նոքա սաստիւքըն սարտուցեալ
 Գնային սրարչաւ. թաթաւէր համակ ի վէրս իրանն ողջոյն:
 Հընչեաց դաշտավայրն յաղիողորմ աղաղակ մեր.
 Բուռն ապա թափ նոցին մեղմեալ ըզկայ առին ոչ ինչ հեռի
 Ի վազեմեացըն շիրմաց՝ ուր թագազոյնց հաւուց նորին
 Պահի աճիւն ցուրտ. դիմեցի ես անդր յոգւոց հանելով,
 Անդր եւ թիկնապահք նորս ըզհետ իմ հասին,
 Հետք ճապողեաց արիական արեանըն մեզ առաջնորդեալ.
 Ժայռք ի նոցունց կարմրաներիք, փուլք եւ մացառք արիւնաթորք
 Ըզկապուտ բոսորատիւ վարսիցն յինքեանըս բերէին:
 Հասի առ նա, ձայն ետու. եւ կարկառեալ նա աջ առ իս,
 Եբաց վայրիկ մի զառկայծեալ ակն եւ անդրէն փակեալ. ասէ.
 Երկինք զանմեղ կեանս իմ բառնան, ո՛վ սիրեցեալըդ Թերամեն,
 Յանձանձեսլիր յետ մահուս ըզվըշտացեալն Արիկիս.
 Եւ թէ երբէք հայրն իմ զերծեալ յաւուր միում ի պատրանաց,

Se roule, et leur présente une gueule enflammée,
 Qui les couvre des feu, de sang et de fumée.
 La frayeur les emporte; et, sourds à cette fois,
 Ils ne connaissent plus ni le frein ni la voix.
 En efforts impuissants leur maîtres se consume;
 Ils rougissent le mors d'une sanglaute écume.
 On dit qu'on a vu même, an ce désordre affreux.
 Un dieu qui d'aiguillons pressait leurs flancs poudreux.
 A travers les rochers la peur les précipite;
 L'essieu crie et se rompt; l'tutrépide Hippolyte
 Voit voler en éclats tout son char fracassé;
 Daus les rênes lui-même il tombe embarrassé.
 Excusez ma douleur; cette image cruelle
 Sera pour moi de pleurs une source éternelle:
 J'ai vu, seigneur, j'ai vu votre malheureux fils

Հիպսոլիտ եւեթ միայն, արժանաւոր ծնունդ քաջի,
 Զերիվարս կասեցուցեալ՝ հարկանէ բունն ի նիզակ,
 եւ աջով դիպածիգ շեշտեալ ըզսլաքն յայն վիրագ՝
 Անդ անդէն ի կըշտին գործէ խոցուած լայնավեր:
 Առ ցաւոցն եւ առ զայրուկս ի վեր վազեալ ճըւաղանն՝
 Անդր առ ոտս երիվարաց գայ թաւալի մեծամուռն,
 եւ ի գնալն ի գիլ՝ ածէ երախ հրաշունչ ի տեսիլ,
 Թաթաւեալ ըզծիս ի հուր՝ եւ ի ծըխախառն ապաժոյթ:
 Շըրտուցեալ ձիանն յահէն, եւ խուլք առ ձայն աղդարար՝
 Ըմդահկեալ կան վարչի, եւ ի սանձուց ապըստամբ:
 Յապիկար ճըզունս անդէն ըսպառի կար կառուղղին:
 Ի փըրփուր արիւնախառն հարկանեն ձիմք ի կարմիր:
 Պատմի եւս, ուրուք ի դից յայնմ ապշապի երեւեալ
 Մըտրակօք զփոշեթաթաւ զանդրուվարաց տանջել զկողս:
 Ահն եւ հոյն ընդ վէմ ընդ ժայռ ձի՝ ընդ կառաց թռուցանէ,
 Բեկտի ունըն ճարճատուն. Հիպսոլիտոս աներկիւղ՝
 Կայ իլնին շերտից կառացն ընդ օդս ի ցիր ցընդելոց,
 Մինչեւ ինքն իսկ ժըխորեալ շաղեալ ի սանձս՝ անկանի:
 Ներեսջիր ցաւոցս, տէր. անագորոյնս այս տեսիլ
 Աղբերակն ինձ եղիցի յաւերժահոս արտասուաց:
 Զի աջօք իմովք տեսի ըզչուառական որդին քո՝
 Գարշեցեալ յերիվարաց՝ զորս իւր ինքեան էր անուցեալ:
 Արկանէր առ նոսա ձայն, սակայն նոքա դիւրապախք՝
 եւս քան զեւս վարգէին, էր վերալից ինքն համակ:
 Հընչեցին ընդ դաշտավայրըն մերս ողորմ աղաղակք:
 Ուր ուրեմն ցածուցեալ ի բուն հորձից եռանդեան՝
 Առին զկայ երիվարք առ վաղեմի շիրմօքն հուպ
 Ուր նըշխարք արքայից՝ իւրոց նախնեացն՝ ամփոփին:
 Անդր եւ ես ընթանամ հեծեծախառն, ճեւ զիմ կնի
 Գըլխապահք նորին ըստ իս՝ ընդ հետս արեանն ազնուի:
 Վէմք ուղւոյն արիւններանգ, յարիւնակաթըն մացառս
 Փունջք փունջք կըռուեալ կային կապուտք հերացն արիւնոտք:
 Մօտ հասեալ առնա, ձայնեմ. ոյր կարկառեալ ձեռն առ իս՝
 Բանայ աչս օրհասական, եւ փակէ փոյթ վերընտին:

Traîné par les chevaux que sa main a nourris.
 Il veut les rappeler, et sa voix les effraie;
 Ils courent: tout son corps n'est bientôt qu'une plaie.
 De nos cris douloureux la plaine retentit.
 Leur fougue impétueuse enfin se ralentit:
 Ils s'arrêtent non loin de ces tombeaux aniques
 Où des rois ses aïeux sont les froides reliques.
 Je cours en soupirant, et sa garde me suit;
 De son généreux sang la trace nous conduit;
 Les rochers en sont teints, les ronces dégouttantes
 Portent de ses cheveux les dépouilles sanglantes.
 J'arrive, je l'appelle; et me tendant la main,
 Il ouvre un œil mourant qu'il referme soudain.

Ողբայցէ զանպարտակիր աղէտս որդւոյն, գողջիր նըմա
Առ ի զբողոք արեան իմոյ եւ զըստուերաց ցածուցանել,
Զի քաղցրութիւն արասցէ ընդ գերուհւոյն, տացէ նըմա...
Եւ աստ դիցազն անշնչացեալ՝ դիակն եւ թ անկերպարան
Եթող ի գիրկս իմ՝ յաղթանակ տըխրատեսիլ դիցըն ցասման,
Զոր եւ ոչ ակն հայրենի ըզնա կարող էր ճանաչել:

ԵՊՈԻԱՐԴ Վ. ՀԻՐՄԻԻԶ

« Զանմեղիս ըզկեանս, ասէ, յափշտակեն արդ երկինք.
Տըրտմազգեացն Արիկիեայ խնամ՝ կալջիր յետ մահուս.
Սիրելիք իմ, թէ յաւուր միում հասեալ ճըշմարտին՝
Ողբացէ հայրն իմ՝ զաղէտ որդւոյս յանդէպ բասրելոյ,
Առ ի հաշտ առնել զարիւն իմ եւ զուրու ողբական,
Գողջիր նմա՝ զի ողբով գնասցէ՝ նդ իւրում գիրուհւոյն,
Տացէ նմա... » Եւ՝ նդ բանին փըջեալ դիցազն այն զոգի՝
Դի աղճատ անկերպարան եւ թ թող ի գիրկս իմ,
Նըշաւա՛կ աւաղելի՝ յաղթանակի քինուն դից,
Արարեալ եւ անճանաչ եւ աչաց հօ՛րդ իսկ իւրում:

ՌԱՍԻՆ. ՓԵՐՐԱ

Տ. Ե.

« Le ciel, dit-il, m'arrache une innocente vie:
Prends soin, après ma mort, de la triste Aricie....
Cher ami, si mon père, un jour désabusé,
Plaint le malheur d'un fils faussement accuse,
Pour apaiser mon sang et mon ombre plaintive,
Dis-lui qu'avec douceur il traite sa captive.
Qu'il lui rende.... » A ces mots, ce héros expiré
N'a laissé dans mes bras qu'un corps défiguré,
Triste objet où de dieux triomphe la colère,
Et que méconnaissait l'œil même de son père.

ԱԶԳԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՍՅՈՒՆԵՐ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԾՆՆԴԱՏՈՒՆԸ

Առեւտրական ու համաշխային պտոյտէ
Պօլիս վերադարձած էի ճիշտ այն օր, ուր
լուր օրերէ տարբեր, Մեծազօր Փատիշահ-
ներու Փայթախատն իւր միահեծան Վեհա-
պետին Ծննդատօնը կ'հանդիսաւետէր: Օս-
մանեան կարմիր դրօշներ ծովուն ու ցամա-
քին ամէն բարձանց վերելէն՝ վեհափառ աջի
մը պէս կը բարեւէին հազարաց հազար եւ
բիւրից բիւր հանդիսագիր հպատակները,
որք հասարակաց իրախճանքէ վերադարձող

զուարթ կոշտականերու նման՝ Մայրաքաղաքին
ուճահանգաց մէջ միջիւնախոռոն կ'վստան.
կը մեծացուցանէին իրենց անհաշու փառի-
շահը աղօթքով, նուագով, լուսով ու
խնծիլով: Նա մանուկներ, այս տարի,
կայսերական թանկագին Շնորհքին երախ-
տապարտ Մամուլն ա՛լ աւելի բոցափետուր
պերճախօսութեամբ երկնքէ երկինք կ'բար-
ձըրացնէր իւր բարերար ու սիրեցեալ Սուլ-
թանին փառքը. որ իւր յարձր եւ փրկա-
ւար իրաւոյն—Հրովարտակով գ'ինքն ազա-
տագրած էր Փուլի երկարամեայ ու ծանրա-
նուր լուծէն: Ամէն ազգէ ու աշխարհէ իւր
միլիոնաւոր հպատակաց լուսաւորութեան
մասին տածած մեծ փափաքին ու մեծ ջանք

քին վեհափառ փառս ու փայլ մ'աւելի ըն-
ծայելով քաղաքակիրթ աշխարհին առջև:

Կանխագիծ ծրագրին համաձայն՝ դնացի
Մայր—Եկեղեցին: Պազի նախ Մայր եկե-
ղեցւոյն ու Ազգ. Հիւանդանոցին Հիմնադիր՝
Գրիստոսազօր Խազէզին, Սուլթանեաց սիրա-
կան Ամիրան, Նոյեան Տապան ու Ս. Գե-
րեզման բուրոյ Տապանաքարը. ապա կայ-
սերական վաղեմի վառօդապետ Ամիրան,
և ազգին երջանկայիշատակ բարերարապետ
Տատեան Պօղոս Պէյի Մատուռ շիրիմը, յե-
տոյ Ն. Շահնազարեան դպրոցի վերադա-
շիւ, Աստուածաբանութեան Ուսուցչիդ՝
Ներսէս Պատրիարքի հայրապետաբոյր խո-
րան-Վիժմափորը, ծուկ մը տղօթքով և
չունչ մը օրհնիւք: Հայոց Աստուածաբան ու
ճարտասան Պատրիարքը՝ Ազգին պաշտօնա-
կան թէ՛ անպաշտօն, աշխարհական թէ՛ Կը-
րօնական Աւագանին, երգեցիկ դպրաց դա-
սերն ու երկսեռ ժողովուրդն իր շուրջ բո-
լորած՝ կայսերական Մենդատօնին առթիւ,
բամբ ու թուռ դայնով, հռետորական
լեզուով, պերճաբան քարոզ մը կ'սօսէր, ու
գոհաբանական տղօթքով Վեհ. Կայսեր կե-
նաց արեւշատութիւն կ'բարեմաղթէր, և
մեր Հօրց ու Նախնեաց Աստուածը կ'փա-
ռաբանէր: Իսկ ժողովուրդը գլուխը բաց՝ ա-
ւանդական երկիւղած ամէններովը կ'համա-
պատասխանէր իւր ուրտաձայն Հովուապե-
տին մեծարաբառ գոհաբանականին:

«Օրհնեալք եղբորք» էն յետոյ՝ մօտե-
ցայ, համբուրեցի գոհաբան Պատրիարք
Հօր Ս. Աջը որ օրհնեց գ'իս, և անմիջապէս
Պալատ մեկնեցաւ կուռարչաւ, ես ալ ժա-
մուն սեմէն քայլ մ'անդին, մօտայ Պատրի-
արքարան:

ԱՄԵՆ Ս. ՊԱՏՐԻԱՐԻԱՐԷ

Հայոց արդի Պատրիարքին նկատմամբ
համարումս և համակրանքս աւելապատկե-
սկած են այն ատենէն ի վեր, երբ, Օր-
մանեան Սրբազան մեր Ս. Հուսաւորչայ ե-
կեղեցւոյ մէջ առաջին մեծ «Հրաժարիմք»ն
և առաջին «Հաւատամք»ը կարդալէն յե-
տոյ, Մեծ Հայրենակցիդ, ոսկեգրիչ հայկա-
բան, կարի ողբացեալ երանանորդ Ալէք-
սանեան Գէորգ Արք.—Եպիսկոպոսին վերա-
շինած Զարիափանին վանահայր և Անոր

վերահաստատած այժմեան Դպրեվանք կոչ-
ուած Ժառանգաւորաց վարժարանին վերա-
անսուչ ու Ուսուցչապետ կարգուեցաւ:

Օրմանեան Մաղաքիա Սրբազան, հոն իւր
սրբազրեալ ու նորատիւ Միութար Աբբայ,
վենետիկի ու վիեննայի ց'յաւէտ անմահա-
նուն ուսումնական ու գրագէտ վարդապե-
տաց մրցակից, և մեր ոսկեղէն գրականու-
թեան նախահայր՝ երանաշնորհ Ահարոնայ
աշակերտ, ոսկերեքան Թարգմանիչներն յի-
շեցնող Արմաշեան Առաքելախումբը ժմըն-
ցուց. — (Հոս ներէ՛, Վարպէ՛տ, տողընդմէջ
երկարաշնչտ ա՛խոսով մը ձայնարկեմ կուրծ-
քէդ, ախո՛ս, նոյնէն աւելի տիպար Առա-
քելախումբը Շնորհալիներու, Համբրոնացի-
ներու Ոստանին՝ Եւթի Տանն Կրկիկոյ այն-
քան սիրական Ժառանգաւորացիդ մէջ ժը-
մնցնելու հայրապետոգի փափաքդ կ'իսկա-
տար թողին թերակատար վեղարաւոր-
ներ.) — և ընդ ամենայն ծագս կրօնակա-
Հայ աշխարհին քաջ հովիւ Աւետարանիչներ
արձակեց գնալ ուսուցանել զամենայն բարի-
բան, զոր Աստուած, Յիսուս, հայ կրօնքն
ու հայ Հաւատքը, Ազգն ու Թագաւորը, ա-
ւելի քան երէք այժմ, կ'ակնկալեն ու կը
պահանջեն, իրենց տիրական պաշտօնին և
նուիրական կոչման համաձայն, իմաստուն,
պարտաճանաչ, իրաւախնդիր, հըռ ու հա-
ւատարիմ հպատակի արժանաւոր՝ իրենց
ծայրագոյն վարդապետի վայել Առաջնոր-
դութենէն: — «սրում շատ տուաւ շատ
խնդրեցի» կըսէ Ս. Գիրքը:

Իր բոլոր Տանգլու խտիողոսներէն և գը-
լուի գործերէն վեր, ներկայ Պատրիարքու-
թենէն, — թերեւ տալագոյ հուանական Կա-
թողիկոսութենէ մ'ալ. — վեր, եւ շա՛տ
վեր, Օրմանեան Մաղաքիա Սրբազանին
փառքն ու մեծութիւնը կ'յօրինեն ու պիտի
պատմեն, իր հեղինակած Ժառանգաւոր ա-
շակերտներն ու վարդապետները, իրենց հայ
եկեղեցականի վայելուչ ու պատշաճ հղող
գովանի վարմանց օրքանզօր ալ աւելի ար-
ժանանալներովը. և Դպրեվանքին մէջ վա-
րած իր ուսուցչական պատկեալ Պաշտօնը:
Պաշտօն, զոր այսօր իր նախորդին արժանի
գերազանցութեամբ կ'շարունակէ ողբացեալ
համակրելի բանաստեղծ բարեկամիդ եղբայ-
րը՝ Դուրեան Գեր. Եղիշէ Նորապետի եպիս-

կոպոսն իր տաղանդաւոր հմտութեամբն ու արդիւնաւոր դաստիարակութեամբն: Մաղթեմք որ Դպրեվանքը՝ Հայ դպրութեանց, մատենագրութեան, հայերէն գիտութեանց վերածնութեան վառարանը, ներշնչարանն ու Ակադեմիան եղող Վենետիկի ու Վիեննայի Ս. Ուխտերուն Միաբան, և Հայ Մամուլն անխոնջ ու հանձարեղ վաստակաւոր Ս. Հարց գրական ու գիտական փառքերուն, գործերուն ու համբաւին արժանի կրօնականներ հասցնելու վիճակին հասնի. և անոնց պէս, աւելի անկախ հասոյթի միջոց, ներով ապահովէ իւր ապագայ գոյութիւնը, զոր պահպանել կարենալու համար, Ազգն ստիպեալ չ'իլին միշտ Դպրեվանքին վերատեսուչ Սրբազանները Պոլսոյ Պատրիարք ընտրել, և օրին մէկն ալ չի յաջողած ատեն, մի գուցէ Դպրեվանքի ապագային գլխուն դար կամ ձուն գայ:

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԸ

Ազգային կեանքին վեց դարերու պատկերի յիշատակներովը լիցուն ու ներշնչուն՝ Ազգին պաշտօնական այս մեծ Տունը, Պատրիարքարանը՝ որ անցորդ ցուրտ անտարբերներու համար՝ պարզ յատուկ անուն մը, ատաղձէ ու շախաղէ պարզ զաննուն մը, ճամբորդին համար՝ անցագրաւորն մէ: Աղքատը զայն՝ կ'համարի ողորմատուն, կարգւելիք մանչերն ու աղջիկները՝ կ'նկատեն զայն նշանի ու պսակի պատգամատունը, նորեկուկ ճրագաչէջ ու Մօրման ամուսնալոյծները կ'երազեն հոն փոխնորդի սէս էրկան կնկան հինն հանելու նորը հագնելու ապահարզանաց մը. թերթերու բացբերուն կամ գոյքերան բանբերկեր կ'վարկանին զայն լուրերու հեռագրատուն կամ թղթատուն. տէր պապաներ գիտեն թէ իրեն վրայ առնելու կամ վրայ տալու պահարանն է, Ժողովական, Թաղական, Հոգաբարձու ևն. հոն կ'ղլմեն աթոռ տիտղոս, պաշտօն, Եկեղեցի, զպրոց, հինը ձգեալ, աղաւթն, գիւտնադիտական հազար ու մէկ կոորուելներով, ուր կ'վազէ սարկաւազը՝ վարդապետանալու, վարդապետը՝ ծայրագունալու կամ տեղապահանալու կամ Եպիսկոպոսանալու, Եպիսկոպոսը՝ Առաջնորդանալու, Առաջնորդը Պատրիարքանալու,

Պատրիարքը՝ Կաթողիկոսանալու հազար ու մէկ ողջումձեւերով: Կ'կործէ վերջապէս ազգային ամեն սեռի անդամալոյծ զԱյն Պրոպատիկէն, ամեն մեղաւոր՝ իր քաւարանը, և ամեն փախստական՝ իր Սրբաւանը: Եւ երբ տեսնեն թէ Պատրիարքարանն իր Արիսպագի սափորին մէջ Աթեմափ բուէն չէ նետած ի' նպատակ իրենց, կ'սկսին երևելան իրենց պաշտօն այսօր կամ վաղն այրել, խթանին դէմ կից արձաւոյն մարելու ու է փորձ Ազգը կուրցնելէ Սիրենք. յարգենք ու զօրացնենք Պատրիարքարանը, որ մեր Ազգային գոյութեան միակ պահարանն ու վառարանն է:

Մ Ե Մ Ն Ֆ Ա Թ Ի Հ

Ե ւ

Հայոց Պատրիարքութիւնը

Եւ երբ ա'յս սիրով, ա'յս յարգանքով ու համոզմամբ կ'մտնեմ Պատրիարքարան. միտքս ու երևակայութիւնս պատմական գաղափարներու զուգորդութեանց արծուէ թւերով կ'հոլովին դարերու վրտէն, կ'թռչին դէպ ուղիղ մինչև հեռաւոր այն փառաւոր ու բախտաւոր Անցեալ, ուր սուաջին անգամ կը հաստատուի մեր Պատրիարքութիւնը, և կ'ընտրուի մեր Առաջին Պատրիարքը:

Ընդահանուր Ազգաց պատմութեան մէջ այդ անցեալէն աւելի տիեզերական սքանչացման արժանի, պակուցիչ, շլացուցիչ յեղաշրջման թուական չէ տեսնուած. Սրբիւտն ու երկրազղորդ նոր Աշխարհակալ մը, ու անհեղաշուք ու փառայեղ պատմական դէմքին հանդէպ կ'գունատին գրեթէ հին ու նոր պատմութեան մէջ ցարդ տեսնուած ամեն ազգի աշխարհակալ դէմքերը. յաղթանակէ յաղթանակ արծուէթռիչ խոյանալով, 1453ին փայլատակ յարձակմամբ կ'առնէ նոր Հռոմը, Արևելեան կայսրութեան Մայրաքաղաքը, Ասիայի եւ Եւրոպայի այդ Միջնաբերդը, ու անոնց բանալին Հեփեսոսեան զրպանը կ'նետէ, կ'կղզէ Միջին Դարը. անվերջի թումբ եւ անառիկ պատուար արձանանալով Ասիան փարատող խաչակիր հրոսակներու արշաւաստոր ու յորձանուտ հոսանքին ընդդէմ: Իր յաղթական պղնձի

ձեռքով կ'ընայ նոր Ազգաց պատմութեան գուռը, իր աշխարհակալ սուրին ծայրովն աշխարհաւերելով հինը, հողագունտին նոր աշխարհացոյց կ'գծէ. Բիւզանդեան Ստորին Կայսրութեան լճացած, բարեկոնացած, գոմորացած կեանքը կ'ցամբեցնէ, եւ Սնոր տեղ նորատունկ գահակալ կ'բարձրացնէ իւր յաղթապան զայսրութիւնը. հին աշխարհի քաղաքակրթութեանց գանձերը չինական որմերով եւ Հերմեսեան փականքով բանտարկւած Կոնստանդինոսեան նախանձոտ ու քանքարաթագոյց թանգարաններէն դուրս կը թափէ, այնքան իմաստութեանց դարերէն Վեր մարդկային իմացականութեան վառած բազմաջահ Աշտանակները ծածկող խաւառումի գրուանները խորտակելով՝ ազգաց ու ժողովրդոց մտքերուն աշտարակաց վրայ լուսաւորութեան նոր փարոսներ կ'կանգնորոնք ծովէ ծով, կ'զգիէ կ'զգի, քաղաքէ քաղաք գաղթական ուղևոր ծաւալելով Եւրոպայի այսօրուան քաղաքակրթութեան այնքան փայլուն դարազուլները կ'կազմեն գիտութեանց, դպրութեանց և արուեստից Վերածնութիւն ու Յարութիւն կուտան:

Այս գուռ, բախտաւոր ու տիեզերասան Աշխարհակալն է երջանկայիշատակն ու գրախտաբնակն Ֆարխ Սուլթան Մէհմէտ Բ. որ մեր Ազգին համար նոր փրկիչ էր և նոր նախախնամութիւն մը կ'հանգիստանայ. Այս անմոռանալի ու ամեն օր խաչակնքելի ճշմարտութիւնը տիեզերական պատմութիւնն ինքն է որ կ'հռչակէ. Երբ աչքի առջև բերենք մեր Ազգին այն անցեալ ժամանակը, ուր Ֆարխ կ'աշխարհակալէ Պոլիսը, սոսկալի՝ ու ողբալի անտէրնչութեան մը ջրհեղեղին մէջ ընկելու գամիրձ կ'ալէ կոծինք. Օրթոտոքսութիւնն ու Լատինականութիւնը պատած պաշարած են մեզ. Յոյնք՝ «Ձեր Գրիգոր Լուսաւորիչը մենք կրթեցինք, մենք կարգեցինք յոյն պոսկով յոյն աղջիկ մը իրեն կին տալով. մենք զայն Կաթողիկոս օծեցինք յոյն մեռնով, յոյն Եկեղեցւոյն մէջ, ապա Լուսաւորիչ՝ հաւատքովը, կրօնքովը, կրթութեամբը, պոսկովն և ընտանիքովը Յոյն մէջ պէտքէ լուսաւորչադաւաններն ալ կամ օրթոտոքս ըլլան կամ փճանան», կըսէին. ու մեզ բռնի կամ կամովին իրենց տակաւի աւա-

ղաններուն մէջ կ'ընկելէին. Լատինականութիւնն ալ խաչակրներու հրոսախումբովը ու Բագերաներու ջոկատներով մեզ շրջապատած՝ Ասպետներն ասպատակապետներ դարձած էին, «Ձեր Լուսաւորիչը մեզ մեր Սեղբեսորոս Հայրապետին ծախեր լմնցուցեր է Դաշանց Թուղթով մը», կ'ըսէին բանչէին, զոր Լոյսոյաի նախնիք կարեր կարկտեր էին. Օրթոտոքսութիւնն ու Լատինականութիւնն երբ իրենց երկու սուրին մէջ մեզ պաշարած, կամ մեր գլուխներն երկանաքարին տակ աղաղու, կամ երկանաքարը մեր ճիտն անցնելով անդունդը նետելու վրայ էին. և ահա կայծակի արագութեամբ Աշխարհակալն Ֆարխ վրայ կ'հասնի. կը փրկէ զմեզ, մեր կրօնքը, մեր հաւատքը, մեր կեանքն ու մեր Ազգութիւն. մեր կոթողեան ջրհեղեղին մէջ Նոյեան Տապանը կ'հանգիստանայ, մեզ նորէն կ'ստեղծէ. և մեր քաղաքական ու կրօնական գոյութիւնը իր աշխարհակալած նոր կայսրութեան հետ շարունակելու համար. աշխարհի բոլոր կողմերէն, անտէր, անպաշտպան հայերը, թէ իր նոր Մայրաքաղաքին թէ իւր նոր կայսրութեան նշանաւոր գաւառագլուխներուն մէջ, կ'զետեղէ, հայրաքար անոնց առջև կը բանայ արհեստներու, վաճառականութեան դռները, Յոյն ու Լատին տարրերու տեղաւորութիւնը և հայ տարրին մակընթացութիւնը կըսկսի. եւ, ի վրումն հայերս պատեւելու, պաշտպանելու իւր նախախնամական բարեաց՝ կ'հաստատէ Հայոց Պատրիարքութիւնը, որուն կը պարտինք մեր Ազգային գոյութիւնն այսօր. եւ ահա այս պատմական ճշմարտութեանը դաւանելուս հաւատքովը, երբ Պատրիարքարանը մտայ, մտքովս ու սրտովս նախ մեր Ազգին փրկարար ու բարերար երջանկայիշատակ Ֆարխի բիւրիցս օրհնեալ յիշատակին առջև ծրագրելէ վերջ, վեր ելայ այն պատմական օրհնելուներէն, ուրկէ այնքան յիշատակելի պատկուռելի պատմական դէմքեր ու դէպքեր մեծաշունգ ելեր իջեր են. և որոնք մէն մի քայլիս, մէն մի ակնթարթիս, իրենց մամուստ սալորներէն ու պատանքներէն յարութիւն առած՝ սեւեւարիւր ու վեհաշուք դէմքով կ'արձանանային աչքիս առջև, պատկառանքի սարսուռ մը ու հիացումի

չլացում մը ներշնչելով: Այդ նահապետական ու հայրապետական դէմքերու մտաւոր սիւն, ահեղաշուք թափօրին առջեւն ու մէջէն դողահար, ապշահար անցնելէս յետոյ՝ կարծես թէ ա՛լ մարդիկ լոկ չընուն ստուերներ միայն պիտի երերան աչքիս առջեւ:

ՄԷՆՍԵ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆՆ ԵՒ ԴԻԻԱՆԱՊԵՏԸ

ԱՁՆ. ԲԱՐՔԱՂ ԷՍ. ՔԵԼԵԱՆ

Մայր-Դիւանատունն եւ՛, ուր բովանդակ կ'համառօտի ամբողջ Ազգին հետ եւ Հայոց Պատրիարքարանն իր պատմական կեանքով. ինչպէս ուղեղը՝ գլուխին մէջ, կամ սիրտը՝ կուրծքին մէջ: Հոն է խորհրդաւոր Դիւանապետը, զոր, վերջին նամակիդ մէջ, Վարպետ, սահմաններ էիք, սրբաւիտ Դիւանագէտ, Պատրիարքարանի աւանդապահ Ոգին, և Անոր ներքին պաշտօնէն ութեան շրջանակին մէջ՝ է՛ն համակրելի, է՛ն ներկայանալի, է՛ն ներշնչուն ու յոգե՛նակի դէմքը: Եւ Անոր դիմակից կամ Անոր հոգւոյն, մտքին ու սրտին է՛ն մտերիմ ու հաւատարիմ կողակից դասեր էիք Մայր-Դիւանի պետական լեզուին Արմէնո-Թուրք ուղիմ Բարտուղարապետ էֆէնտին՝ Տիար Կարապետ Խաչատուրեան. Դիւանագիտութեան այդ հայ Սկեզիլան: Եւ իրօք առնք երկոքին ո՛ր որ տեսնէք, փողոցին իսկ, քիթ քիթի, արմունկ արմունկի, պաշտօնատունէն մինչեւ տուն կ'քալեն ճամբան: Իրարու մէջ ընկղմած միտք, իրարու հետ կապուած, կարուած խօսակցութիւն, խորհրդակցութիւն. կը ճղեն կ'անցնին ժողովուրդին ժխորէն ու շուկայի Լամբիւրիներէն մէջէն: Արիագնէի դերձան թէլի մը պէս շարունակելով Պատրիարքարանը մինչեւ ի ննջարան. ճիշդ ինչպէս դպրոցի մը բարձրագոյն կարգի զոյգ մը սրտակից ու դասակից ընկերներ կ'շարունակեն վարժարանը դասատուներէն մինչեւ իրենց բնակատուն:

Իրարմէ անզատչելի այս ջուխտ մ'ա՛մուսին հոգիներ՝ միւսնոյն ուսին վրայ բուսած տեսակ մը երկսոյրադէմ Յանոս, կը կազմեն ու կ'ամբողջացնեն Պատրիարքա-

րանի երկուրեակ Պիւթեանը:

Տեսար թէլեանը գտի ի գլուխ իւր դիւանին. որպէս նաւապետն արթուն՝ ի խելս իւր նաւուն. կամ որպէս լուրջ ու խստապահանջ հրամանատարն՝ ի գլուխ իւր սպայա-կոյտին: Իւր շուրջ՝ դահլիճի մը խորհրդա-կանոց պէս ակումբ բոլորած են ժիր ու տաղանդալիր երիտասարդներ. Գառնիկ՝ գառնուկի դէմքով, Հրանտ՝ իր բոցափետուր, և Լեւոն՝ իր թաթով՝ գրչով: Ամենքն ալ լարուած ու, ծռած իրենց անծուկի գլուխներ՝ իրենց Պետէն տուն ու դաս տըր-ւածները կ'գրեն ու կ'գրեն. և ո՞ գիտէ ինչ ուրախալի կամ տխրալի պատգամներ, վճիռներ կ'արձակեն անոնց մէն մի գրածն ու գրելիք, թեր կամ դէմ այսինչ բարի կամ յոռի Առաջնորդին, կամ Ա. Տեղապա-հին, այնինչ պերճախօս կամ փճախօս Քա-րոզին, եկեղեցւոյ գանձը լեցնող կամ պարպող սա նա թաղականին, ծուխը հովող կամ կեղեքող Քահանային, դպրոցները բա-րեկարգող կամ խանգարող, վարժապետին ամասկանը վճարող կամ գրպանող Հոգա-բարձուն, շիտակ կամ ծուռ դատաստան տեսնող Խորհուրդներուն կամ Ժողովներուն, և կարգ մ'այս կարգի կարգաւոր ու անկարգ ստորագծեալ եւալյուններուն: (*)

Դիւանապետը մին է՛ մտքի ու սրտի այն մարդերէն, որք կ'ալեւորին բայց չեն ծե-րանար. անթառամելի երիտասարդ ութեան մը գարնանային աւիւնովը խանդավառ ու մշտութարմ են, ինչպէս իրենց գործոց, վարձանց ու շարժմանց մէջ, նոյնպէս և իրենց գրուածոց ու խօսուածոյն մէջ: Կըտ-

(*) Համընդհանուր ինքը կ'ծանօթագրէ որ այլևս կարիկին ցաւագար լեզուներ լոյսօլյա-րանիլէ ընդդէմ Սերաստիաի Հայրապետա-շուք ու Պատրիարքապետի Արք-Եպիսկո-պոս Առաջնորդին, նամանաւանդ ընդդէմ Որբանոցին, որուն հանճարեղ երիտասարդ Ուսուցիչը՝ տափակ լեզու տխրացուն չէ. Ստիքսի՛ն ու Վերնատա՛ն մը պողպատած ենք մենք Անոր լեզուն, որ, ինչքանային գոյն ու ձեւ ալ առնու, հեղինակութիւն մ'է՛, որուն դէմ, — ինչպէս ամեն կողմի իւր նմանի մերայնոց դէմ — պապաջել եւ ո՛չ ումեք բնաւ չեմ ներեր, ցորչափ կ'շնչեմ ես:

րուկ ու կտրիճ լնդու մ'է Տիար Թէլեան։
Թափանցող միտք, զգայուն սիրտ, անա-
չառ դատող մը. արժանիքը գնահատող.
տաղանդը քաջալերող. յարգանաց մէջ հա-
ճոյակատար այլ ո՛չ չողովարար. տիրողոս
ները յարգող այլ ո՛չ անոնց ետեւէն շոգե-
պինդ վազող։ Ոճը միշտ սեղմ, կուռ, ա-
ռոյգ ու կայտառ՝ սրտին պէս. պարբերու-
թիւնները կարակենա՛մ մտքին պէս. պաշ-
տօնին նման՝ ծեծւած, յետանւած պու-
պատեայ գրիչ։ ՄԱՄՈՒՐԵԱՆ Դիւանագի-
տական Դպրոցին լիակատար ներկայացու-
ցիչ։ Պատգամի պէս լակոնախօս մ'է, այլ ո՛չ
պատգամի նման երկայտի կամ բազմադիմի,
որպէս կ'բանդագուշէն ումանք։ Միակ թե-
րութիւնն է, Ստոյիկեանի մը նման՝ խիստ
բարոյականի տէր, խտապահանջ ու պար-
տաճանաչ լինելը։ Տեսակցութիւնդ Իրեն
հետ այցաքարտ մը ձգելու կամ նամակ մը
յանձնելու չափ, խօսակցութիւնդ ալ գլանիկ
մը ծխելու, սուրճ մը հրամմելու չափ
տեւելու է։ Սա փափկանկատ մտած-
մամբ թէ՛ նա, ամեն ըոպպէ՛ պաշտօնին բնու-
թեամբ, ամբողջ ազգին ու ժողովրդին ամեն
դասերու բազմաձղի գործերովն ու կեան-
քովը մշտադբաղ է։ Եւ իրօք Տիար Դիւա-
նապետն Իր բազմապատիկ պաշտօնով, ա-
մենուս մշտնջենի յարգանացն արժանի, յոգ
նակի, պատկառելի, համակրելի ու ներշնչ-
չուն Դէմք մ'է. գրածիդ պէս։ Երբ երե-
ւակայենք որ այնքան տարիներէ ի վեր՝ ա-
մենուս համար, և ամեն ատենի համար,
սիրելի, պատկառելի, պաշտօնական, պատ-
մական դէմքեր ու դէպքեր իրենց շուքովն
սւ շնչով զինք ներշնչած, Իրմէ ներշնչ-
ւած, բազմապատկած են զինք. կ'ընակին
Իր մէջ. կ'ընչեն Իր կեանքով։ Այդ երջան-
կայիշատակ, անվերադառնալի, բարեբա-
րոյ Դէմքերէն ու Դէպքերէն միտքող, պապա-
կուն կարօտս առի, տեսնելով Անոնց Աւան-
դապահ եւ Անոնցմով խնկաւէտեալ յոգնակի
Հոգին, Տիար Դիւանապետը։ Ծերունի գը-
նացի Մայր-Դիւանը, անտի պատանի ու
երիտասարդ վերադարձայ։ Ուրիշ առթի-
թողով Պատրիարքարանի միւս Դիւաններն
պցելելու յիշատակներս ու տպաւորումնս
գրել Ձեզ։ Մայր-Դիւանին առաջին Այցելու-
թեանս իբրեւ փանաքի յիշատակ, այս նը-
կարագիր կ'յղեմ Ձեզ, սիրելի Վարպետս։

Մ.

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԵՒ

ՏԿՆ. ԶԱՐՈՒՀԻ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ահա մեծ Դպրոցին արձակուրդի զան-
գակը կը հնչէ, ու յապաղանքս ինձ կ'յան-
դիմանէ։ Քանի մը քայլ շուտ. և ահա հա-
սած, այցորդ արձանացած եմ առջեւ այն
Դրան, որ կ'բացուի, ինչպէս ի հնումն կը
բացւէին Պղատոնի Ակադեմիան, Արիս-
տոտէլի Լիկէոնին, Զէնոնի Սոփան կամ
Բօր-Րուաեալի դռները, տանելու համար
մարդերն ու մտքերն ի տաճար Հանճարին
ու Ճաշակին։ Ուսանողներու թռչնեամբ
սկսած է ծիծեռնակի ձուողումներովը թռն-
դացնել Դպրոցին պարտէզը, սրահներն ու
դասարանները։ Այո՛, առջեւ եմ Պերպեր-
եան ներշնչատուն Վարժարանին, զոր դուք
Հայոց Լիկէոնը կոչած էք. և ուր՝ Դուք ալ,
Վարպետ, երբեմն Անոր ուսուցչական Ա-
կումբին կաճառորդած էիք, ներշնչելով
սիրտ ու միտք Պերպերեան նախանձելի Ու-
սանողաց։ Վարժարան, ուր ուսանելն ու
ուսուցանելն կրթական փառքի, գրական
պատուոյ ադամանդակուռ տիրոջս մը կ'ար-
ժեն։ Այլ ոտքս Դպրոցին սեմէն ներս դնելէ
առաջ, տխրանքի դողումը զիս կ'պաշարէ,
ծունկերս կսկծանքէս կթոտելու, և հոգիս
կենարարին դէմ սրտմտելու չափ։ Դպրոցին
Մայր-Թագուհի Հոգին՝ որ առտնին նա-
խախնամութիւն կ'թեւածէր ու կ'գրգար-
Պահպան հրեշտակը կ'սաւառնէր Իմաս-
տութեան ու Առաքինութեան այս մեծ Տա-
ճարին մէջ. լեցնելով, ոգեւորելով, վեհա-
ցննելով զԱյն իր տանտիկնոջ պատկառելի
շուքով, իր մայրենի խանդաղատանքով, իր
ամուսնական սիրով, իր սրբուհի շնչով, իր
ներշնչուն ներկայութեամբ, զԱյն լքած ու
անտի մեկնա՛ծ է անդարձ։ Իւր այս տա-
րժամ ու տարաբախտ բացակայութեան
ահաւոր ամայութիւնը յաւիտենական
տխրութեամբ լի անապատը տարածած է
մտքերու, սրտերու ծաղկաստան այս մշտա-
դալար Ովասիսին շուրջ։

Տրտմակայլակ այս տպաւորութեանց
տակ սարսուռն՝ ներս կ'մտնեմ. կ'փղձկի
սիրտս, աչքերս կ'պտղին. երբ աչքս կը

հանդիպի այն պաշտօնական խորհրդաւոր պատուհանին, ոյր առջեւ, իրեւ իր տա- ճարատան վեհարանի մը լուսավեղիկին առ- ջեւ, սովոր էր մէնանալ զարմանազան ձիւ- քերովն օժտեալ հարսանց հարս, տիկնանց տիկին Զարուհին, մերթ խանձարուր մը գիրկը, գոգն օրան ի ծնունդս կանանց մեծ՝ Պերպերեան արեւորդիներուն՝ Աննիկին, Մաննիկին, Օննիկին, Նուրհանին ու Շա- հանին։ Հոգի կուտար իր զուակաց վրայ, որոց ստնտուն ինքն եւեթ եղած էր. ան- չա՛փ զանոնք կ'սիրէր։ Մերթ գիրք մը, օ- րագիր մը, հանդէս մը, — հանդէսներուն մէջ Մամուրեան Մամուլն աւելի իրեն նա- խասիրելի ընթերցարանն էր, Աննիկին Գե- դօնդ և Օննիկին Օրօրդ փղձկուն աչքով հոն կարդալէն ի վեր։ — Տիկին Զարուհի՛ իր վսեմ ու աւարտեալ գրագէտ, իր ներհուն ու լիակատար իմաստասէր ակադեմական Ամուսնոյն սրժանի ու պատուաբեր՝ մշակ- եալ միտք, ծագկեալ տաղանդ, նրբացեալ ճաշակ, հարուստ հմտութիւն ունէր, օժտ- եալ զառաւարակութեամբ մը հանգերծ. և Անոր պէս յամառ ընթերցող ու սուր քնն- նադատող մ'էր. զի ոչ միայն Տիար Պեր- պերեանի պաշտելի Ընկերուհին՝ այլև Անոր սիրելի Աշակերտուհին էր ամեն օր։ Երբեմն ալ՝ թեւ մը դերձան արուեստագէտ մատին ու տնայէն ասեղին փաթտած։ Կարի, ձի, ձեռագործի առաջնակարգ ուսուցչուհոյ մը չափ վարպետ էր. էր նաեւ հանձարեղ տնտեսագիտուհին։ Իր տան մէջ ամեն բան իր տեղն ունէր, եւ ամեն տեղ բանի մը հա- մար էր։ Հոն՝ ի բաստեռունս գրգեալ ու դգւեալ փափկասուն Տիկին, ծնելատէր մայր, նոր Մուսայ, նոր Նիւփա, բանաս- տեղծի փափկաթեւ երեւակայութիւն, ի մաստասէրի խուզարկու միտք, միանձնուհ- ւոյ անձառապաշտ հոգի կ'թառէր, կ'թաղ- ւէր։ Շնորհաց եօթնարփին ճառագայթող գեղեցկութեամբը բոցավառ դէմքը մտափա- յէլավորձին պատկեր կ'առկալսէր թառած գրգարանին պատշգամ պատուհանէն, ուրիշ որոշ կ'տեսնուին ամեն անոնք որ « Ման- կանց սիրելի, ազգաց պաշտելի, մտքի ու ապագայի Զուլարան» վսեմ յարկէն դուրս կամ ներս կ'երթեւեկեն։ Փափկանկատ մտքին, զգայուն սրտին հետ իր իշխանա-

կան ու արգոսեան աչքն աւելի արթուն պահակ ու ժրագլուխ նաժիշտ կ'կարգէր հոն. երբ զպրոցական Տօները ժողովուրդի չա՛փ բազմաթիւ ու բազմադէմ հանդիսականնե- րու կարաւաններով ու այցելուներու թա- փօրներով կ'լեցնէին իր մեծափառ Ամուս- նոյն տանն ու դպրատանն ամեն յարկերը։

Սեւեռարիւր արձան, մտայոյզ խորհուրդ, ծնրագիր ու րոպկատարած աղօթք կ'կեդ- րոնանար, կ'մնար հոն, երբ էֆէնտին, Պերպերեան էֆէնտին, իւր արանց այր՝ սիրական Ամուսինը դուրս ելնէր, կամ Պոլիս իջնէր. իրեն համար ընթերցման նոր գիրք կամ դպրոցին համար նոր դասագիրք, հանրօգուտ նոր ու բարի խորհուրդ մ'աւելի նորէն կորովաբար տունն ու վարդապետօ- րէն դաս տալու համար պաշտօնակից կար- գեւած, անդամ ընտրած ժողովներուն. ճիշդ ինչպէս տունն ու դաս կուտայ իր դպրոցին սիրական ուսանողաց կամ խոր- հուրդ կուտայ բարեկամացը. միտք կ'Թժու- չէր Անոր հետն ի վեր. սիրտ կ'բարախէր Անոր կրծին տակ, սէրը կ'առտուածանար Անոր հոգւոյն մէջ. իտէալը կ'հորիզոնանար Անոր մտքին առջեւ, ու աչք կ'հալէր նէ հոն. եթէ նա քիչ մ'ուշանար։ Եւ երբ տեսնէր կամ լսէր թէ՛ անա՛, կուգայ Էֆենտին, եկա՛ն Էֆենտին, մութէն արեւն իր վրայ նոր կը ծագէր. նորէն նոր կուգար աշխարհք։ Բա- նաստեղծին խնդամուլ աղջիկը կ'վազէր Անոր ընդ առաջ, որպէս ընդ առաջ Յովսէփ Գե-ղեցկին կ'վազէր Սէլա, կամ կ'վազէր Վիր- գինէ խայտալիւր ընդ առաջ սիրական Պօ-ղին. ցնծագին Անոր ընդ առաջ կ'վազէր նէ նոր ու նռնաշուրթն Հարս, կ'վազէր Քոյրն ու Հարսն Երգ Երգոցին. նոր փեսայ ող- ջագուրեղով իւր սողմուն Ամուսինը։ Առա- յին Տերեւքի Հեղինակին. Պեպրիսի Եղե- րեղջին, Հերմանի ու Տորոգաի Թարգմանչին և իւր ցյաւէտ արտասուելի Տիկին Զարուհ- ւոյն ամուսնական սէրն ու կենցաղը Հովուեր- գութիւն մ'էր, զոր նկարագրելու համար, վարպետ, ներէ՛ ինձ ըսել, լինելու է կամ Աստուածաշունչ Արքայ-Իմաստունը, կամ Մանդուի օգոստափառ Կարափը։ Ո՛վ դափ- նեայ դարուցն, ո՛վ դափնեայ ու ոսկեդար փառացն անցելոց։

Տխրանքս յանկարծ բերկրանքն հազաւ,

երբ, Դպրոցին մեծ Սրահէն ներս մտած պահուս, դէմս յանկարծ լուսնկաներ ճառագայթեցան Մաննիկին, Օննիկին, Նուրհանին, Շահանին, իրենց նոյնայանգ ու ներդաշնակ ոտանաւոր անուներուն նման եւ իրենց ծնողամոյն, միագիծ, վարդավառ ու կայտառ դէմքերը: Զարուհին յարութիւն առած, նորաստեղծած, նշեհի, նռնեհի ծաղկած, շուշան ու վարդ փթթած էր չքքնաղագեղ ու մուսայածիրն Մաննիկին մէջ, Օննիկին, Նուրհանին ու Շահանին } դիմաց վրայ ու աչքերուն մէջ մորենի կ'ընդափռէր, նոր կեանք կ'ընչէր, նոր արեւ կ'առաւօտէր: Նոր աղւորութիւնը՝ նոր օփտի տէս հագեւր, չքքեր, հարս առագաստէն մատուռի յաւերժահարս թառեր, թերափուհի օծւել, սիրտ կ'խայտար, հոգի կը թեւաւորէր իր իւզաների կիսանդրի պայծառագեղ սլափերին մէջ, որ, հոգւովը, սրտովը, սիրովը ու յիշատակովը Իրմէն անգառնիկի հոյակապ ու վստմ Սմուանոյն, Տիար Պերպերեանի նոյնաչափ Պատկերին հետ, քով քովի, ամենէս վեր, և իր ոսկի չրջանակի երկնքին վերեւէն՝ ամենուս վրայ իշխանուհի կ'հայի, կ'հիանայ ու կ'հիացնէ: ամենքս ալ, Պերպերեան Տաճարին Աւագ Խորանը զարդարող բարեխօսուհի Տիրամայրն է: Իւր թագադրանքովը ու սամոյր վարսերը վարսամի ճաճանչներ սփռած, ծով ծով կ'փութփութնան դիցուհւոյ ուսերն ի վար, գեղուղէշ հասակն ի վար, և մեծափայլելուչ շուք, շնորհք, չլացում, սքանչացում կ'հոսին: Իր փղոսկրեայ ու աղամանդեայ լուսնթագ ճակատուն, գառնուկի վճիռ աչքին, մանուկի նուր շրթունքին շնորհալի ժպիտը ցնծում կ'ցօղէ ամենուն վրայ, խրախոյս ու ներշնչում կ'վառէ ամենուն մէջ, ճիշտ ինչպէս երբ կենդանոյն նստած դաշնակին առջեւ, կամ նոր հարսի պէս հագւած՝ Պերպերեան հանդէսներուն մէջ, կ'երգէր, կ'ողբէր ու կ'գլխալեցնէր:

Շար.

ՄԵՆՈՐ



ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Սրտի անհուն բերկրանօք կ'շնորհաւորենք իր տեսակին մէջ՝ նմանը ց'արդ պատահիլն ո'րքան փափաքելի նոյնքան և հազուադէպ Ազգային կամ գաւառային նշանախօսութիւններէն մին, յ'Անձինս Մեծ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԷՖէնտի Տէր Մատթէոսեանի և Ազնիւ Օրիորդ ԶԳՕՆՈՒՀԻ Մ. Շարապիսանեանի:

Երկու խօսեցեալներն ալ՝ Պոլսոյ հեռաւոր երկու թաղերն համարուող, Քաղաքականապէս Պրուսիա և կրօնապէս Նիկոմիդիաի Առաջնորդութեան վերաբերող գիւղաքաղաքացիներն են: Աստու կամ Աստուածատուր էՖէնտի, միակ արու զաւակն է օրթագիւղցի վախճանեալ, Արթ. Տէր. Մատթէոս Ներկարարեան Քահանայ Ս. Հոր. որ ի մանկութենէ անտի մեզ անձնուէր ու ընտանի բարեկամներէն էր, և իւր Զաւակին ալ խնամեալ կրթութիւն մը տուած է, Պոլսոյ Կալադա Սէրաի Սուլթանիէ վարժարանին մէջ, այնպիսի՝ դպրոցական բարեխօս չրջանի մը մէջ. ուր Մայրաքաղաքին և գաւառաց մէջ այսօր Պետական առաջնակարգ պաշտօնները վարող օսմանեան Աւագանոյն զաւակները իրեն դպրոցակից էին. և ինչպէս երբեմն իրեւ ուսանող. նոյնպէս եւ այսօր — անոնց ամենուն համակրելին հանդիսանալէ զատ. Սուլթանիէի է'ն հանճարեղ ուսանողներէն և է'ն ծափահարելի առաջնակարգ Շրջանաւարտներէն մին հանդիսացաւ: Հազիւ 17 ամենի՝ Սէլանիկի պետական Իտատիէ վարժարանի դէր—Տնօրէն և ուսուցիչ կարգւեցաւ:

Իւր Հօր մահէն յետոյ՝ հազիւ մէկ տարի անցած, հրաժարելով իր պաշտօնէն ու Ասպարէզէն Պոլիս վերադարձաւ, և կայսերական Հոգաբարձի վարժարանը մտաւ:

Մեր զաւակին չափ մեղ սիրելի Ազնիւ Աստու էՖէնտին ծանօթ է նաև իր կարգ մը գիտական, բանասիրական, քաղաքական յօդուածներովը զորս Ազգային թէ օտարազգի թերթերու մէջ հրատարակած է:

Աստու էՖէնտիի Նշանուհին կամ Խօսուհին ալ՝ Ազնիւ օրիորդ Զգօնուհի Մ. Շարապիսանեան, թէ՛ Հօր թէ՛ Մօր կողմանէ, Իւր Գիւղաքաղաքին առաջնակարգ Գերդաստան-

ներուն կ'վերաբերի: Խնամեալ կրթութեամբ ԲԸ փայլող գեղեցիկ ու ծաղկաւոր Դուստրն է Մեծ. Մարգար էֆէնտի Շարապխանեանի որ ոչ միայն իւր Մեծ—Նոր Գիւղի, այլ և թէ՛ ամբողջ Պրուսարի և Նիկոմիդիայի գաւառաց մէջ, նոյնպէս և Պոլսոյ ու այլուրի առեւտրական հրապարակներու վրայ ծանօթ է իր դրամական ու վաճառականական ընդարձակ գործունէութեամբ: և, թէ Ազգին թէ պետութեան պաշտօնական Շրջանակաց մէջ, գործօն ու ազդեցիկ դիրք, վարկ ու յարե կ'վայէ: Մեծ. Մարգար էֆ. Շարապխանեան որ պատուած է մեր Ասատ էֆէնտին զայն իրեն փեսայ ընտրելով, ինքնին փայլուն ապացոյց մ'աւելի ընծայած է: Թէ գնահատող ու քաջալերող է յարգանաց արժանի տաղանդն ու գիտնականը: Յորմէ յետէ չարաբախտ ու դաւաճան մահուամբ մը մեռած է իւր սիրական ու պատուական Եղբայրը՝ կարի ողբացեալն Շարապխանեան Առաքէլ էֆէնտի, թէ Հայերենիքին, թէ Ազգին, թէ Պետութեան պատիւ ու պարծանք աւելցնող, անզուգական ու հանճարեղ երկրտանարդ մ'էր, որուն կենսագրութիւնը՝ իր լուսանկար պատկերովն հանդերձ պիտի հրատարակենք, մեր Հանրագիտակի մէջ, կանգնելու համար մեր սիրելի Բարեկամին ու մեծ հայրենակցին արժանի յաւերժական յիշատակարան մը: Մարգար էֆէնտին ինքն է որ Ողբացելոյն պակասը լեցնելով, իրեն նման կարգ մը ուսումնասէր ու բարեոէր անձանց հետ, Նոր-Գիւղի դպրոցաց զարգացման, Եկեղեցւոյ պայծառութեան և իւր հայրենակցաց լուսաւորութեան համար կ'աշխատի, իր լուրջ ու ծանրախոհ բնաւորութեան յատուկ իւնաստուն, պահպանողական, հեռատես, Տիրասէր ջանքովն ու գովելի գործունէութեամբ: Եւ երբ Ասատ էֆէնտիի նման բարձրագոյն կրթութեամբ ու իմացական բազմադիմի ձերքերով օժտեալ ծաղիկ երիտասարդ մ'իրեն փեսայ ընտրել բախտաւորած է. Շարապխանեան համբաւաւոր ու նահապետական գերդաստանին ազդեցութիւնն աւելի զօրացուցած և Անոր փառքը պատուոյ նոր պատուաստով մ'աւելի օժտած է: Մեր երկու բարեկամ Ընտանեաց ալ մեր խնդակցութիւնն ու մաղթանքները:

Առ վաղեմի ու սիրելի տաղանդաւոր Սանն իմ Տիար Տիգրան Շալճեան, հատընտիր Ուսուցչապետն Ազգ. Վարժարանաց Պրուսարի:

Յօդուածք ընթերցայ, սակայն ինձ յանձնուած չէ: Շնորհակալի՛քս ու յարգանքս:

Հանրագիտակ կ'ընդհատէ Ս Զատիկը իր բոլոր Ընթերցողաց, և Ս. Յարութեան Տօնը՝ բոլոր Յարութիւններուն, սկսեալ Երուսաղեմայ Վեհապետեան Սմեռ. ՅԱՐՈՒԹԻԻՆ Սրբազան Պատրիարքէն, և Ազգ. Վարչութեան Ատենապետ՝ Տատեան Բարձր. ՅԱՐՈՒԹԻԻՆ Փաշայէն՝ մինչեւ Յարութիւն անուն յետին Հայը:

Վ Ր Ի Պ Ա Կ

Կարգալու է

երես տող

69, 4	ի կեռաց ը	ի ձեռաց
12	ի ծոցոյ երկրի ը	ի ծոցոյ երկրէ
19	հրէշ մուկ գին՝ ը	հրէշ մուկ գին
24	մռնչմանէն, ը	մռնչմանէն
25	վերագին ը	վերագին
35	infecté ը	infecté
71, 4	լայնավեր ը	լայնավեր
12	հարկանեն ը	հարկանին
13	ապշապի ը	ապշապի
15	ընդ ը	ընդ
19	ցաւոցս ը	ցաւոցս
24	զեւս ը	զեւս
	վերալից ը	վերալից
25	ուրեմն ը	ուրեմն
25	ցածուցեալ ը	ցածուցեալը
31	արիւնոտք ը	արիւնոտք
72, 8	յափշտակեն ը	յափշտակեն
9	Արիկիեայ ը	Արիկիայ
9	խնամ ը	խընամ
13	գիրուհւոյն ը	գերուհւոյն
15	թող ը	եթող
31	համաշխային ը	համաշխարային
34	Փայթախատն ը	Փայթախտ
65, 4	խցաբանակ ը	խցաբանակ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

1805ին հաստատուած առաջին եւ առաջնակարգ գրատոշնն է, իշր հաստատութեան օրէն ցարդ ունեցած անընդհատ ու անխախտ յարատւեցութեամբ եւ օգտաշատ ու բազմաթիւ հրատարակութեամբ հանրածանօթ եւ աննրցելի:

ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ ՈՒ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԷ

Ազգ. բոլոր վարժարանաց ամէն դասընթացքներու էն դիւրոշայց, էն դիւրագին եւ ամէն կերպով էն օգտակարագոյն դասագիրք եւ դպրոցական պիտոյք:

ԿԸ ԾԱՆՕԹԱՑՆԷ

Կարողագոյն եւ պատուաւորագոյն ուսուցիչներն ու ուսուցչուհիները:

ԿԸ ՎԱՃԱՌԷ

Ընթերցող հասարակութեան իր ձրի դրկած գրացոշակի հոմնաձայն Մեարիֆի եւ Մաթպոշարի հրամանով տպուած հին եւ նոր կրօնական, գիտական, գրական, պատմական, վիպական, բառերական, բանաստեղծական ու հնոսական ամէն սեռի գրքեր, լրագրեր ու հանդեսներ:

ՄԱՍՆԱԻՈՐ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

„Հանրագիտակ“ Ազգ. եւ Միջազգային լրագրի եւ անոր վերաբերեալ գրերուն ու տեղեկութեանց:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ԵՒ ԻՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կ'ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ պարբերաբար տխտղոսին համաձայն ամենազան ճոխ պարունակութեամբ:

Զ'ԸՆԴՈՒՆԻՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.
նոյնպէս եւ նմուշ ձրի յղելու աւանդական կամ սովորական դրութիւնը Ամէն թերթ սկիզբէն ց'վերջ՝ կանխիկ չ'ձեռնարկել, ապա թէ ոչ՝ անեղծ ետ դարձունելու քի Փափաքողներն ընդունելիք թերթին գինը կանխիկ կը յղեն, զրամը եւ կամ զրամարժէք զրոյմաթուղթն ու թղթադրամը:

Կ'ԸՆԴՈՒՆԻՐ Սատարողի դրութիւնը. երկու կերպով. Առաջին՝ անոնք որ Հանրագիտակի ուղղութիւնն ու օգտաւէտութիւնը գնահատողներ, եւ անոր անխափան ու յարատեւ ընթերցմանը սիրով ցանկացողներն, մեր այս նոր շրջանի առաջին թիւն ընդունած ատեն, յաջորդ թերթերու (որոնցմէ ոմանք արդէն տպագրուած՝ ոմանք ալ մամլոյ տակ են, եւ այս կանխահոգ նախապատրաստութեանց համար ուշացուցինք առաջին թերթը կանուխէն հրապարակ հանել.) մէկ կամ մէկէ աւելիին գինը կը յղէ: Երկրորդինչպէս սոյն թերթին հրատարակութեան առթիւ, կրօնական թէ աշխարհական ընթերցասէր ու ուսումնասէր կարող Աղքայինք ինքնայօժար կամօք ու վեհանձնօրէն ըրին, պարկեշտ գումարմը դնելով թերթին զրամագլուխն աւելի զօրացնելու, գործն ապահովագրելու համար, նոյնպէս ուրիշներն ալ կարող են, կանխավճար տրամադրելի գումարմը՝ մէկ կամ աւելի տարեգին յատկացնել Տնօրէն-Սմբադրութեան, որ զրամատուին կամաց ու փափաքանաց համաձայն՝ փոխադարձաբար մէկ կամ մէկէ աւելի թերթ կը յղէ առ Պատուարժան Տիար Սատարողն. կամ նշանակուած աղքատիկ դպրոցաց, որբանոցաց, վանքերու ու աղքային ու եւ է հանրօգուտ Հաստատութեանց ու Անձանց. նկատելով որ՝ եթէ բաժանորդական դրութիւնն ընդունած լինէինք, ամէն կողմի ընթերցողաց համար 60 դահեկան անձուկ դրամ տարեգին որոշելու էինք:

Կ'ԸՆԴՈՒՆԻՐ ամէն տեսակ հանրագի-

տական թէ մասնագիտական խնամեալ զբուսածներ, ծուծաւոր յօդուածներ, ուսումնասիրութեան հեղինակաց, Թարգմանչաց կողմէ հրատարակութիւններ, ամէն ազգի ծանուցումներ. անոնց գնահատելի կողմին ի վեր հանող բանադատականներով հանդերձ: Ամէն ծանուցումնք լրագրաց սովորական օրէնքին համաձայն կանխավճարելի են:

Կ'ՀՐԱՏԱՐԱԿԷ, Իբրեւ Հանրագիտակի յաւելուած՝ զրքի ձեւով, ուղուած ծաւալով, շատ գոհացուցիչ, չափազանց դիւրամատչելի պայմաններով, գրաքննութեան կողմէ ներուած, ամէն կողմի հեղինակաց ու Թարգմանչաց գրական գործեր, զորս արդէն պատրաստած են կամ պատրաստել կը փափաքին. եւ ամբողջը մէկանց հրատարակելու սովորական ծանօթ դժուարութեանց բաղխելով ամբողջապէս դատապարտուած են: Այս կարի մեծ պատեհէն օգտուելու խորին իմաստութիւնը ունենալու են մտքի ամէն բանւորներ:

Կ'ՀՐԱՏԱՐԱԿԷ նաեւ իր ընթերցողաց նոր հաճոյք մ' ու պատիւ մ' ընծայելու համար, անոնց լուսանկար-պատկերները իրենց կենսագրութեամբ հանդերձ. փափաքողներն անմիջապէս կը բանակցին: Ընդունելիք նամակաց թղթատարական կրկին ծախքը կանխիկ կը յղէ բանակցողը:

Կ'ՇԱՐՈՒՆԱԿԷ Հարցարանի, Մրցարանի դրութիւնն աւելի ընդարձակ ու հանրօգուտ կերպով:

ՅՕ երեսներէ կ'բաղկանայ սոյն թերթը. որուն գինն է 5 դահեկան կանխիկ: Երկրորդ թիւն ապահովապէս ընդունելու համար, Անոր գինն ալ յղելու են:

Կ'ԸՆԴՈՒՆԻՐ ամէն կողմի մեր բոլոր պատուական ու մեղուաջան Գործակալներէ որ ջանան մեր այս գծած պայմանները յարգել տալով պէտք եղածը պատշաճօրէն ի գործ դնել, իրենց միջավայրին օրինաց համաձայն: Մեր հասցէն՝

ՄԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մերձան Փողոց, բիւ 57

